

ԱՐԵ ՇԱՀՆԱԳՈՐԾԻՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԻ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԴՐՈՒՅՑ
ԵՐԵՎԱՆ ☆ 1933

卷之三

3-1257^a

№ 1

ՀԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆԻ ՊԱՏՎԱՐՆԵՐ

№ 1

ԱՐԴ. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՊԱՏՎԱՐՆԵՐ

ՊԱՏՎԱՐՆԵՐԻ ԳՈՂՎԱՍՈՒԻ

A 35628

□



Թիվ. № 22510

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱԿԱԳՈՒՅՑՈՒՆ
ՏԵՐԵՎԱՆ

□

1938

շառություն չի կազմում։ Բավական յուրահատուկ ե այդ կազմը։
վորովհետեւ հայ լիրերալիդը, վորսկես հայ արդյունաբերական-
կաղխտայի արտահարստէց, իր փողջ միտքն ի սպաս եր զնում նրա-
հասարակական խնդիրների լուծմանը։ Լիրերալ բուրժուազիսին
թերեստիկների հրմանական նպատակն եր փոխադրել հայ իրավա-
նության մեջ յևփրապակոն լուսավորված կապիտալիդը շառ-
ուորման ավելի կատարելադորձված ձեւերով։ Իրականում այդ թ-
ելիրվանդադեյի յերկերի հերոսների՝ հայրերի և վորսիների ժկումին
որյեկտը։ Կամ՝ հայ ասիստական վաշխառուական կապիտայի ու ար-
դյունաբերական կապիտալի, յևփրապական ցիլինդրացիայի պաք-
քարը։ Յեզրուական ցիլինդրացիային գրոշակակիրը հայ լիրերա-
լիդին որդան և լշտակն եր, փորը և առաջադրում եր բուրժուա-
զիայի հասարակական խնդիրները։ Հայ մանր-բուրժուական ինտե-
լիդնցիսաւի վարած պայքարը վաշխառուական կապիտալի ներկա-
յացուցիչների գեմ համարվում եր Մշակե-ի առաջադրած շահերի-
չետ և ատրիլում եր լիրերալիդը գրոշակի տակ։ Հակառակ էր
կամքի, այդ ինտելիդնցիան կանգնում եր կապիտալիդի զար-
դացման հողի վրա։ Նա նպաստում եր լիրերալ բուրժուացիայի
ապայքարին, նամանապանդ, վոր նա վոչինչ հնդամինտիկան չի-
պարունակում իր մեջ, և բնափ չեր դիսղում բուրժուական հասա-
րակության հիմունքներին, ավելին՝ այդ ինտելիդնցիան խնդիր-
հարար աղոթում եր նաև ցարի յերկարակիցության համար։ Այս
այն կամքը մական, վոր կապում եր հայ մանր բուրժուական ինտե-
լիդնցիային հայկական լիրերալիդի հետ։ Հայ մանր-բուրժուա-
կան զւմուկրատական ինտելիդնցիայի ամենասաղանդավոր ներ-
կայացուցիչներն անդամ չեն տեսնում արդյունաբերական կարի-
տալը և կապիտալիստական հասարակությունը։ Նրանց դրիշ-
ուղղված ե գերազանցապես վաշխառուական կապիտալի ներկայա-
ցուցիչների գեմ։

Իմ հա՛յընիքը տեսե՞լ ես, ասա,
Տեսե՞լ ես արդյոք այն րլուրները,
Ուր ճոփ ծաղկում ե մշտական գարուն,
Ուր թալանում են մերոնք ու այները,
Ուր հոսում ե միշտ արցունք ու արյուն։
Տեսե՞լ ես գյուղը Հովտի մեջ մենակ,
Ուր շուրջը փոված հին աղբակույտեր,
Տեսե՞լ ես վոնց են այնոնք շարունակ,
Կովում, կեղեգում քյոխլա ու տերտեր։

Եերգում ե թումանյանը։ Յեկ հայ մանր-բուրժուական գրոշ-
ների խոշոր մասը մնացին մինչեւ վերջ ցիլինդրավոր դյուզացիները-
և մավար աշխարհից վողջ դժբախոսությունն ըստ թումանյան-
քյոխլան ե, դյուղական ցեցը։ «Հառաչանք» պոյեմում նորից ըն-
թերցողի առջն յենում են աղնվականը, դյուղական մանր շահա-
գործողը, վաշխառուն, քյոխլան, շահագործման ասիսկան ա-

Հնահավայրենի ձևերով : Հայ մանր-բուրժուական ինտելիդենցիան իր խոշոր մեծամասնությամբ չեր տեսնում կապիտալիստական հասարակական հարաբերությունները :

Այդ ինտելիդենցիայի պայքարը վաշխառուների և գյուղական մանր շահագործողների դեմ վոչ միայն վտանգավոր չեր հայ լիրեա ցայլողմի համար , այլև նպաստում եր նրա ընդհանուր գործին :

Արշակ Շահնաղարյանն այն զյուղաղիներից մեկն և , վորոնչ ջինողանի գայլներով բնութագրել են վխավար աշխարհա-ի անհուսատի վիճ Շահնաղարյանի , ծուղուրյանի և Ագապյանի զըր-չած քնների մեջ այն և , վոր նրանք տեսնում են մանր գյուղացիու-թյան քայլայման պրոցեսի ամենից ավելի բնորոշ փաստերը , մարդիք ամերիկայի «մանր» ևն , բայց իրականում «խավար աշ-խարհա-ի աղքատ զյուղացիության քայլայման պրոցեսի իրական դոկումենտներն են : Այդ առաջերակությունները չունեն մեր խոշոր գյուղաղիներից շատերը , անդամ Ազայանն ու Մուրացանը , վորոնչ մնանդ , ակ Են այդ ամենարնորոշ յերեւություններին , վորոնչ գյուղա-շինության կյանքը դիտում են հեռվից , ինտելիգենտի իդեալական ակնօղներած . նրանց ամենի հետաքրքրում ե գյուղի կենցաղն ու հաւաքար-բարոյական կողմերը , նրա տգիտությունն ու հետամնա-ցությունը , վորով և պայմանավորում են հայ հին գյուղի սոցիա-յական վողբերգությունը : Արշակ Շահնաղարյանի նկարաղրած գեղքների ու փաստերի վրա ուշադրություն չի դարձրել և վոչ մեկ ակադեմիսա գրող , բայց ամենից բնորոշն ու հյականը հենց այդ փաստերն են . վորոնչ հշմարության մասին բնալ չի կարելի տա-քակառմէլ : Այդ առաջակետից Շահնաղարյանի պատմված քններն արժեքավոր են վոչ միայն մեր գեղարվեստական դրականության համար , այլև պատմության համար , վորովհետու այդ պատմված ք-ների մեջ կուտակված փաստերի խոշոր պաշարը կարող ե մեր հին գյուղի սոցիալ-անտեսական զիֆերենցիացիայի համար հիանալի նյութ ծառայել :

Արշակ Շահնաղարյանի «Խավար աշխարհի» պատմված քններից ամեն մեկն այդ առաջակետից ներկայացնում և պատմականորեն հմարիստ մի դոկումենտ հին գյուղի դիմիքներինցիացիայի մասին : Աշա այդ պատմված քնների շարքը՝ «Մացակի լուշը» , «Աղա բժիշկը» , «Սերոբենց ածերը» , «Ախակեր Քոմարդը» , «Մարանի գեղապետը» , «Զարացպանը» և գերամիր ճիպոտը : Այդ պատմված քնների մեջն ե Արշակ Շահնաղարյանի ստեղծագործությունների դրական-պատ-մական արժեքը : Մնացած զրոժերը , վորոնչ գրված են հեղափո-խությունից հետո , բնութագրում են Շահնաղարյանի ստեղծագոր-ծությունների մերկուրությունների վողլ արժեքը նրա «Խավար աշ-խարհի» մեջ : Այդ նոր զրուածքներն իրենց զրական արժանիքնե-ցակ նահանջում են հիշյալ պատմված քններից :

Քննենք Շահնաղարյանի «Խաղարծ» :

Այդ խորադիրն իրավամբ բերորշում և հեղինակի դադավառ-
քախոսությունը և նրա վեալիք աշխարհից արագեղիքան . Հենց այդ
վեալիքարն են, վոր փորձում եր ցրել մեր մանր-բուրժուական ին-
տելիքնեցիան իր լիրերալ ու ֆորմատորական զործունեցությամբ :

Շահնաղարյանը պատկանում և մեր այն ժողովրդական, բայց իր
աշխարհայացքով լիրերալ պահպանողական ինտելիգենցիայի
թվին, վորոնց ինտելիգենցիայի կոչումը տեսնում էին միայն
մանր գյուղացիության մեջ կատարելիք լիրերալ ու ֆորմատորա-
կան լուսավորական դրոծունեցության մեջ : Այդ մանր-բուրժուա-
կան ինտելիգենցիան, վոր իր զրոշակի վրա կրում եր պայքար
վաշխառուական կապիտալի ներկայացուցիչների ու զյուղական ցե-
ցերի գեմ, կազմում եր բավական ստվար մասսա և մեծ մտածք
դործում եր գյուղում : այդ մասսայից եր կազմված մեր հին դյու-
զի ուսուցչությունը : Զնայած իր լիրերալ պահպանողական հա-
յացիներին այդ ինտելիգենցիան կատարում եր զրական գործ, տա-
րածելով զրագիտություն այդ վեալիք աշխարհում և բուրժուա-
կան կուլտուրան, սակայն զրանով իսկ նպաստում եր, ուուց հա-
կառակ իր ցանկության, ժողովրդական մասսաների ինքնագիտակ-
ցության զարթեցման : Արշակ Շահնաղարյանն այդ ինտելիգեն-
ցիայի ընդունակ ներկայացուցիչն և անշուշտ : Նա ապրելով ու դոր-
ծերով վեալիք աշխարհում», իր զրիչն ուղղել ետիրող զասակար-
գերի ներկայացուցիչների գեմ, սակայն վրավես մանր-բուրժուա-
կան մտածող, այդ պայքարը վարել ետառ յուրադիվ ձևերով, և
վորպես միջանկյալ զասակարգի ներկայացուցիչ, Հանգես չի յնկել
կապիտալիստական հասարակության գեմ : Բայց Արշակ Շահնա-
ղարյանի վեալիք աշխարհ-ի որբինուիլ նկարագրությունը, այժ-
ման ընթերցողին պատկերացնում է հին դյուզի աղքատի հայր և
տնտեսական-հասարակական այն դիմիերենցիացիան, վոր կա-
տարվում եր 90-ական թվականներին դյուզի : Այդ դյուզը
թիրտում է ամենից առաջ վաշխառուական կապիտալի մազիլ-
ներում, իսկ վաշխառուական կապիտալը չի նպաստում արտադրա-
կան տուժերի պրոդրեսին : Կապիտալիստական հասարակությունն
իր թաթն և զնում նաև դյուզի հասարակական-ունասական զար-
գացման վրա . նրա զորեղ ազդեցությամբ և կատարիլում դյուզի
սոցիալական դիմիերենցիացիան : Նա յե սեփականաղբեկում ամենա-
վայրինի միջոցներով մանր արտադրողին : Հայկական դյուզը տա-
ռապել ե վաշխառուական կապիտալի նիրաններում, ուստի և
չափաղանց զանուար և նրա արտադրական ուժերը :
Վոչ մեկը մեր զգյուղադիմներից» այդ յերեւույթի սոցիալական-
արժանաները չի գտնում, նա տնտեսում է Հետեւանքը, առանձին
փաստեր, բայց չի կարողանում հասնել պատմական պրոցեսի ընդ-
հանուր որենքների ըմբռնմանը, վորովհետեւ այդ ինտելիգենցիայի
համար միտքն իշխում ե պատմության վրա, իսկ այդ առանձին
թիրտույթները պատկերանում են վորպես իրարից անկախ, վոչ

որինաչափ, առանձին դեպքեր, նրանք չեն տեսնում վողջ հաստ-
քական ֆորմացիան և այդ կոնկրետ յերեւություններից ընդհանուր
յեղակացություններ չեն հանում, ուստի և չեն պատկերացնում
թե ինչպես պետք և պայքարել: Միակ ճանապարհն ընդհանուր-
Հումանիստական մարդասիրական գատողություններ են և ի վեր-
ջո՞ քրիստոնեական բարոյախոսությունը, վորից վերև չի բարձ-
րանում այդ գրողների զգալի մասը՝ փրկությունը վորոնելով
նույն հասարակության հզրաներից, ապամինում են նորից բուր-
ժուական հասարակության, առանց ըմբռնելու, վոր այդ նույն
հասարակությունն ե, իրենց հաղարավոր հերօսների քրախափ ա-
նիվիթ խորտակման պատճառը: Արշակ Շահնազարյանը չափա-
զանց սրտաշարժ կերպով և նկարագրում մանր գյուղացիների վե-
ճակը և գաշխառուական կապիտալի ամենալայրենի չահագոր-
ծումը, վորն անարդում և աշխատավորի անձն ու պատիվը: Ավոն
Շահնազարյանի հերոսներից մեկն ե, նա ծույլ չե, ինչպես նկարա-
գրում են բուրժուական գրողները սովորաբար աղքատներին: Ընդ-
հակառակը, Ավոն առնչպարի մեծ համբավ ունի, սակայն Ավոն—
«Դումիջի խորթ վորդին ե».

Աղքատ ե, ուստի և պիայ չումի ես աշխարհից: Նրա ունեցած
չունեցածն արդեն մտել և վաշխառուի վորկորը, նա զուրկ և
արտադրության միջոցներից, և քաղցած ե: Ավոյի ապրումներն
ու այն սոսկայի տանջանքը, վոր նկարագրում և Շահնազարյանը,
փոքրիկ յեթեաների քաղցը, նրանց յերազը հացի համար, իրա-
վամբ ցնցող վողքերգություն և կարող և պատիվ բերել մեր
դրականության խոշոր զեմքերին: Խնդիրը լավ կամ վատ ապրե-
լու մեջ չե, —առում և Շահնազարյանը «Մացակի լույ» պատմված-
քում, — բանն այն ե, վոր քիսավար աշխարհ-ի գյուղացիությունն
ապրում և սովի թագավորության տակ, չնայած՝ որ ու գիշեր աշ-
խառում ե, առյերեւությ ազատ ե, վարում ու ցանում ե, բայց
զատարկ և նատում: Նա վաշխառուական կապիտալի ձրի բանվորն
և վոչ տնտեսատերը: Ավոնները վոչ միայն չեն կարողանում ապ-
րել, այլև իրենց հնձածից վոչինչ չեն ստանում և սովամահ են
իինում: Արշակ Շահնազարյանն այդ խնդրում իրավամբ նոր բան
և ասել: Նրա պատմվածքներում նաշապնտական գյուղացին հաս-
նում է կարիքի այն աստիճանին, վոր դուռում և իր համար ամենից
նվիրականը—նամուսը, վոր մահից ամելի վատ ե նրա համար: Ի՞նչ է անում Ավոն: Բոլոր տեղերից հույսը կտրած՝ նա ծախում
և կնոչ զատիվը մեկ տոպրակ ալյուրի համար: Այս արդեն կարիքի
ամենածայրահեղ աստիճանն ե: «Մեկ քանի լույի համար» գյու-
ղացին ծախում և իր համար ամենանիքականը—նամուսը, հայ-
տարարում և Շահնազարյանը, ահա թե ուր և հասցրել նրան քիս-
ալոր աշխարհից ցեցը: Այլևս ապրելու ճար ու հնար չկա, —հայտա-
րարում և Շահնազարյանը. վոչինչ չի կարող փրկել կործանվող
գյուղացիությանը: Յեթե ձուղուրյանն ու Ազապյանը փրկու-
թյան վրաց գեղատառմա ունեն, Շահնազարյան այդ միանդամայն

անհուսալի յե համարում : Դա Արշակ Շահնազարյանի անխռախտ համոզմունքն է : Ինչի յե հանդում «Մացակի լուր» պատմվածքի վերջարանը : Գյուղական նահապետական կինը զեռ քաղաքային պոստիկի աստիճանին չի հասել, նրա մեջ զեռ խոսում է ավանդական նամունը : Մահն ավելի զերազասելի յե նրա համար և վաշահառուն նպատակին չի հասնում, սակայն տրագեդիան սկսվում է հենց այն մոմենտին, յերբ զաղագած դինեվաճառը մտնում է Ավոյի տուն և վերցնում է սովորական յերեխաների ձեռքից խմորի պատրաստի զնդերը, վորոնց թվում և Մացակի Հուշը ու կոփկը տում և ցեխերի մեջ : Դրանից ավելի խոչոր տրագեդիա չի կարող լինել, յերբ սովորական յերեխայի ձեռքից խմոր է նրա յերազած չուշը » :

«Մակարը ժողովից բոլոր խմորը, ազա մոռեցավ սեղանստախատակին, վորի վրա դրված եյին փոքրիկների անվանական զնդերը : Ահա նա ձեռը մեկնեց գեղի Սարեթի գունդը :

— Աման քեռի ջան մի տանի, եղ իմն ա,—գոշեց աղջիկը ըալով :

Բայց Մակարը կասես իսկի շմեց և մի արագ շարժումով դունդը շպրտեց գողբը :

— Վայ մայրիկ ջան, իմն ել տարավ, — աղաղակեց Փափարը, բա յես ի՞նչ պիտի ուտեմ :

Բայց մայրիկը ստուել եր, հայրը՝ շշմել, քարացել : Փափարի զունդն ել զնաց Մակարի անկուչտ զողը . հերթը հասավ Մացակի լուրին, վոր զոնակած փուած եր սեղանստախատակի վրա :

Միկիտանչին ձեռը մեկնեց ու մի կողիտ շարժումով, աիսի մեջ այնպես ճմլեց տափակացրած խմորը, վոր Մացակի ճիշն աստղերին հասավ :

Եեվ հուսահատ մանուկների խառնիճաղանճ շիվանը լցրեց ժրոտ խրճիթը :

— Մակար աղա, վերև աստված, ներքեւ՝ դու, ել ճարու ճամբա չունեմ, բալաներիդ սազալից, մի քանի զունդ թող մնա, խղճա յերեխաներիս, նրանք սովոր կմեռնեն, տես ինչպես են մրմնջում, խղճա ես անմեղներին, դու յել զավակի տեր ես, զավակներիդ մեռնեմ յես . . . շատ բան չեմ ուղում, յերեք գունդ խմոր . . . :

Ահա գիսամար աշխարհական աղքատի հալը : Եերբ դինեվաճառն այդ նույն զնդերը տրորում է վոստիկ տակ, Ավոն սպանում է դինեվաճառին :

«Ավոն մի կատաղի վոստյունով հարձակվեց նրա վրա, չլուտ ձեռի սուր ճանկերը մեխեց նրա կոկորդը և սկսից վագրի նման իր վոստիկ հաստ գլուխն ատամներով կրծոտել :

Այս ցնցող դրաման կարող է դասվել մեր դրականության լավագույն դրաման շարքում . այնքան անեղծություն, վիշտ ու հուսահատություն և գեղարվեստական ճշմարտություն կա նրա

ժեզ: Քիչ չի պատահում, վոր 90-ական թվականների գյուղում Ալոններն սպանում են վաշխառուներին, յերբ աղքատի վրիժառու զնդակը կտրում և հարստի կյանքի թելը, և այդ գուժում և սոցիալական մնծ զբամայի սկիզբը: Ծովզությանը բերում և այդպիսի մի շարք զեղքեր: Մական լուծվում և դրանով խնդիրը. իհարկե վոչ, դա բժրուստություն չե, այլ մենողի վերջն նիզը, վորի Համբար ամեն ինչ կորած և այս աշխառում: Թե ի՞նչ կարու և ի՞նչ Հետեանքը, այդ արդեն պարզ և, և Հեղինակն այդ տրաղեղիացից Հետա վոշինչ չի ասում, վոչինչ չի ավելացնում, միանդամայն համոզված լինելով՝ «խամարհ»-ի դրությունը փրկելու անհուսալիության մեջ: Փրկությունը միայն մնում և յերկինքը այդ պահպանողական ինտելիգենցիայի հերոսների համար: Շահնապարյանն Աղասյանի նման չի առաջարկում միանալ ցեցերի ղեծ և վոչ ել կոչ և տնում մեր ուազնոչին ինտելիգենցիային: նա նկարուում և իր հերօսների քայլայման վողբերդությունը և դրանով ժակում և վարագույրը:

Բայց Համբանշականն այն և, վոր Շահնապարյանն այդ ցնցող դրամայից Հետեաղողական յեղակացություն չի հանում: Ավելին, Շահնապարյանի հերոսները յերբեք չեն դադարում «մարդ զանալու» իլլուզիաներից, նրան «կարմիր ճիպուտ»-ը պատմվածքի հերսուր յերազում և սեփական դութան, իր հասուն արտն ու դաշտը, ցորենի դեղը, և մեծագույն բարիքներ և խոստանում աղքատներին: Շահնապարյանի հերոսի համար հարուստն ու աղքատը յեղել են ու կմնան: խնդիրն այն և, վորպեսի այդ հարուստը քարիշ լինի և թողնի նաև աղքատին ապրելու: Շահնապարյանի համար շահագործումը մնում և վորպես առանձին յերեսույթ, վոր բնութագրիչ չե, վոր վոչնչով չի կապրված տիրող հասարակության Հետ, իսկ վայխառուները բարոյապես այլասեռված մարդիկ են: Մանր բուրժուական իշեալիստ մտածողի համար մարդկային հասարակությունն առանձին ինդիվիդումների հավաքածոյ յե, վորոնք վոչնչով կապրված չեն իրար հետ, ուստի մեր մանր-բուրժուական ինտելիգենցիան մերկացնելով տիրող զասակարդքի դիմակը, ընալ չի կատածում, վոր այդ յերեսույթները տիրող հասարակականութերի հասականիներն են և չեն պայմանավորվում առանձին ինդիվիդումների հավաքածոյ յե, վորոնք վոչնչով հասարակ թամբ: Ահա թե ինչու «Մացակի լույլ», չնայած իր զրական առավելություններին ու խոր սոցիալական բոլանդակության, այնուամենայնիվ իր զաղափարախոսությամբ պահպանողական և: Ահա թե ինչու այդ նույն վաշխառույի կողքին կան «սաստվածավախ» հարուստներ, քրարիխիզն» շահագործողներ, վորոնք ուղղում ենք աղքատներին «մարդ զանալու» և այդ քրիստոնեական բարոյականությամբ ոժուած հարուստը Շահնապարյանի իդեալն և, նա միավորում և իր մեջ նահասական պարզությունը, կրոնական ջնդմեսանդությունը և սերը դեպի աշխառանքն ու աշխատավորը: Այսպիսով «իսպար աշխարհ»-ի փրկության միջոցը բարոյական անշատն և, այդ նույն շահագործողը, իսկ շահագոր-

ծումն ինդիվիդուալ յերեսոյթ և, նաև հասարակական հարտք-
բություն չեն: Շահնազարյանի այլ իդեալական հերոսը «Սերուբնոց
ածերի» հերոսոներից մեկն և—թեսի Գոգորը: Սերորն աղքատ զյու-
ղացի յէ, բայց մարդ և գառնում չնորդիվ ևստովածավախ զյուղա-
ցու: Բայց ով փոք սոցիալ-հասարակական խնդիրների պատաս-
խանը վլորոնում և քրիստոնեյական վարդապետության մեջ, նրան
հասարակական իդեալները ուսակցիոն են ու պահպանողական: Մէր
մանր-բությունական ինտելիգենցիան իր հասարակական իդեալները
ժամը գյուղացիությունից գենը չեն անցնում, դյուլացիության, վլոր
մի կողմից կործանվում եր, մյուս կողմից՝ փորձում եր վմարդ գառ-
նարը և ի վերջո՝ նրան ցանկությունը «բարի» աղայից այն կողմը չեց
անցնում: Այդ ինտելիգենցիան ուսալիստորքն մերկացնում և շահա-
գործող գառակարգի զաղանային դեմքը, պատում և բոլոր դիմակ-
ներն ամենասպազիկալ գույներով: Մակայն նրա լիբերալ պահպանո-
ղական հայացքները նրան տանում են գեղի քրիստոնեյությունը,
իսկ լավագույն գեղքում՝ գեղի պարզամիտ պրիմիտիվ հումանիզ-
մը, վոր վոչչովի չի տարրելով քրիստոնեյությունից: Իսկ այդ
նշանակում և մերկացրած սուրբ նորից պատրանը դնել և նորից
պաշտպանել նույն տիրողներին, վող զժրախտությունը վերաբերի
առանձին շահնազործողների վոչ քրիստոնեյական վերաբերմունքին
և քարոզել քրիստոնեյական համբերատարություն՝ սեր, հաշուու-
ր յում հարստի և աղջատի միջն, ուստի և քարոզել ամենասեակ-
ցիոն տերսերականություն: Յեթե Հարություն Ճուղուրյանի ու
Սբապայանի յերիտասարդ գյուղացիությունը չի հաշովում իրակա-
նության հետ, զաղտնի կրակում և հարուստների մյա, և այդ հե-
րաներն ամեն ինչ աստծուն չեն վերադրում, այլ հասկանում են
նրա յերկրային հյությունը, Աքշակ Շահնազարյանի հերոսներն ու-
ղելի ինդեֆերնու ևն դեպի հասարակական խնդիրները, նրանք ա-
զելի չուտ Մոսիներ են, Մէջում ապիներ, վորոնք ամեն ինչ աստծու-
րանին են վերագրում, քան թե Հաննաներ ու Դիքոներ, վորոնք ար-
դեն զուրո են զալիս բնության անսահման իշխանությունից
և վոտք են դնում հասարակական պայքարի առաջին աստիճանի
զյա: Յեթե Հարություն Ճուղուրյանն ու Ակապյանն այնուամե-
նայնիվ հույսը զնում են ասպնուչին ինտելիգենցիայի վրա, նրա ու-
ժորմատորական գործունեյության մեջ են վորոշում իրենց մաս-
աների միջությունը. Արշակ Շահնազարյանի իդեալական հերոսը
քեռի Գոգորն եմ—մի կերպն աստիճանի աշխատանք, բայց կրոնական
մեկը, մորի համար ևստոված իր ասեղծածին չի կորցնում, միայն
եարկանոր և աշխատելու ահա քեռի Գոգորի փիլիսոփայությունը:
«Աշխատամիջը կի՞ արատի հոգու թափիծը և քրտինքը կլվանա սրտի
դառնուրյումը»: Բայց այլ քեռի Գոգորի քրիստոնեյական նստա-
ցիան, այլ և ուսալ իրականությունը: Քեռի Գոգորը և իր հեղինակը
հուալ աշխատանքի յերկրագու յեն, սակայն նրանց պարզ չի, վոր-
աշխատանքը կապիտալի թագավորության ներքո յերբեք չի կարող

աղասի լինել և «Ղվանալ նրա ստեղծողի սրտի դառնությունը» : Այդ
թղիլիքան, անկախ հեղինակի կամքից, ցնդում և հենց նույն
պասամվածքում, յերբ Սերորի և Գոքոր բիճի Հալալ աշխատանքով
անկած այլքին մեկ դիշերվա մեջ զառնում և ամայի տարածություն,
վաշխառու Մանուկ Աղայի Հրամանով, վորովհետեւ Սերորը նրան
կնության չի տալիս իր աղջիկը: Բնորոշն այն և, վոր իշխողներն
անդամ իրենց դիմային ծրագրերն իրավործելիս հենվում են հենց
այն առածու վրա, վորից ողնություն են խնդրում Շահնաղարյանի
հերոսները, և իդուր չեն, վոր այդին քանդիլիս, հենց նույն չարա-
գործները, վորոնք կատարում են վաշխառույի կամքը, չերմեռանդ
կերպով աղոթում են, վորպեսպի գտերն ամեն քրիստոնի բանն ա-
ջողաւ: Արշակ Շահնաղարյանն այդ բոլորից հետո այն տրամարա-
նական յեղրակցության չի հանգում, վոր Սերորների և քեռի Գո-
քոյավիճակը՝ Մանուկ աղաների տիրապետության աշխարհում:

Բայց Շահնաղարյանը նորից գիմում և յերկնքին.

«Այս բոլոր տեսնաւմ եր քարետու յերկինքն իր բյուրա-
վոր փայլուն աշխիկներով, տեսնաւմ եր և անզբարար լուսմ...»:

Դա մանր-բուրժուական այն կլասիկ անդորրությունն ե, վոր ար-
առաջայտվում և Շահնաղարյանի զրվածքների մեջ: Նրա հերոսներից
վոչ մեկը չի ըմբռատանում իր զրության ղեմ: Շահնաղարյանը տես-
նում և հին դյուդի սոցիալական կյանքի այնպիսի բնորոշ կողմեր:
այնպիսի փաստեր, վորոնք խորապես պարզում են սոցիալական
ներհակությունները և ցուցադրում են իշխողների գտղանային
ղեմքը:

Այդ պատմվածքների թվին ե պատկանում Շահնաղարյանի
«Մարանի գեղագիտաբը»: Նրա հերոսուհին ծանր հիվանդ է, իսկ հի-
վանդի գղեղագիտը կարմիր պամիղորն է, վորից ինչ զնով ել լինի
պետք և ճարել, չնայած նրա ֆունտն արժեն 5 կոպեկ: այժմյան ըն-
թերցողի համար զա զուցի անհայտ նաև այդպիսի «մանր» խնդրի շուրջ, սակայն
Շահնաղարյանի հերոսները նախ 5 կոպեկ չունեն, յերկրորդը՝
նախապաշտարյած են, ուստի զգեղագիտը մեռնողի վերջին հույսն-
ե: Մարանը տալիս ե իր ամենաթանդ նվերը՝ արծաթյա 15 կոպեկա-
նոցը, վորն ստացել է Հարությօց, վորպես իրենց սիրային դաշինքի
ամենաառաջին նվերը ու սրբությամբ պահում է այն: Սակայն
վորքան թանգ և այդ նվերը, նույնքան անհրաժեշտ և զգեղագիտը,
զա վերջին ամենաածայրահեղ միջոցն և մեռնող Մարանի համար:
Բայց այդքան թանգ նվերի գնով զնված կարմիր պամիղորը խլում է
մահամերձ հիվանդից վաշխառուն և հիվանդը մեռնում է առանց
զեղապետի: Մաղաչափ անդամ իղեալականացված չե այդ պատ-
մվածքի հերոսը և փաստը նկարագրված և Փոտոգրաֆիական ճրշ-
մարտությամբ: Սակայն այդ «մանրություն» մեջ նկարագրված ե մանր
գյուղացու տրապեզիան: Յեղ վորքան սրտառուչ և ու ցուղող հետե-
ցալ բնորոշ հառվածը —

«Ընդհանուր խղճահարության այդ միահամուռ արտահայտություններից հանկարծ փղձկվեց Հարութիւնը լցված սիրտը և նրա կոպերն սկսեցին այրվել աղի արցունքի վարար հոսանքից»:

Հարութիւն ամեն բան մոռացավ, բաց թողեց չուխի փեշը և, ձեռներն աչքերին մոտեցնելով, ուզեց թաղցնել իր արտատունքը՝ նայովների հետաքրքիր հայացքից, բայց տեսնելով, վոր չի կարստ, բոլոր թափով ասաջ անցավ և գյուղացիների կաղմած շրջագիծը պատառելով, վաղեց դեպի տուն։ Կովածագիկ գարձած առորինջանները Հարութիւնը դոդից թափէնելով՝ ու կեղաստ փողոցի հաստաշներա փոշիների մեջ թափառելով՝ դառնալան կողմիւր ցրվեին։

Յերեցիունը՝ կուղը կախ՝ սառնարյուն կերպով ժողովում եր հասած պորինջանները, նրանց վրայի փոշին ինսամքով մաքրում ու իր կարմիր աղջուխի մեջ զնելով, բեղի տակ առաւ։

— Դուք չեք իմանում, դրանց մի մին եսպես սիրուն դաս պիտի տաս, վոր խելքի զան։

... Մարանն աչքերը կիսով չափ բացեց և յերկար ժամանակ ապուշապուշ Հարութիւն նայելուց հետո, հարցրեց։

— Դեղասկեաը բերիր։

Ամուսինը լուռ եր ու ջարդված։

— Ինչո՞ւ պորինջանը չառար, հը, անիրավ մարք... Բայցում ես, վոր յես անզեղապետ մեռնեմ, հա, լավ, լավ... Դե յերեսս աղոթարան...»

Վերջին բառերը սառեցին նրա պապանձված չրթունքները վրա։

Յեկայ ամրող հողեկան տրագեդիան մեկ Փիունդ պորինջանի գամար։ Այսորվա ընթերցողի համար այդ գուցե անհամատալի թվա, բայց պետք ե դատել չին նախապաշարված դյուլացու տեսանելյունից, վորի համար այդ գեղապեսթը կարող ե փրկել մեռնողի կանքը։ Վոչ վոք գուցե այնքան բնորոշ բնութափիր տված շլինի վաշխառույին։ մանր շահագործողների գծուծությունն ու մանությունը հնեց յերեւամ ե այստեղ։ Արշակ Շահնաշարյանի վաշխառուն, վոր խորմ ե իր պարապանից մեկ ֆունտ կարմիր պորինջանը, նախապաշարված մահամերձ հիվանդի վերջին դեղապետը՝ վայրենի շահագործողի բնորոշ տիպարն ե։ Դա օմանրուց են, ասկայն այնպիսի մանրուք, վոր ստեղծում ե մի ցնցող դրամա, ինչպես «Մացակի լոշը»։ Այսուղ կարևորն այն ե, վոր առարգվում ե աշխատավորի անձը, նրա պատիվը, և բնութագրվում ե վայրենի շահագործման ամենայլանդակ ձևերը։ Յեթե Հարությունն ձուղուրյանի հերոսներից մեկը մի քանի արասու համար ծառայում ե յերեք տարի և չի կարողանում հատուցել այն, ապա Շահնաշարյանի Մարանի գնապատուն այնպիսի ճշմարտություն ե, վոր բացառել չի կարևի։ Շահնաշարյանի պատմվածքներից ամեն.

ժեկն այդ ամենավայրենի շահագործման, աշխատավորի անձի անարգման դոկումենտ և Շահնազարյանի գյուղացիությունը սաբ-սափում և անդամ վաշխառույի շվաքից, նրան տեսնելիս քթուքը չորանում և : Նրա դյուղացիներն ամեն ինչ կտային վաշխառու-ների գարշելի յերեսները չտեսնելու համար, բայց դորչ իրակա-նությունն ամեն մի քայլափոխում յերեռում և իր էսկական դեմ-քով : Այդպիսի պատմվածքներից մեկն և Շահնազարյանի լավա-դույն դրվածքը՝ «Ախսպեր Զոմարդը» : Ահա այդպիսի հանդիպման մի պատճեր :

«Աղայի վազիզան աչքերը մի բոնիքի չափ կանգ տուան Գալոյի վրա, վորին նա վոտից գլուխ այնպես եր զննում, կո-սես մի տարրորինակ ու զարմանալի բան՝ եր նկատել նրա շալ-վարի բաղմաղույն կարկատաների և արխալուղի ծլանքների մեջ : Դայոն այրվեց աղայի հայտքից, նրա դեմքն ամբող-ջապես կարմրատակեց ու քրտինքի խոչոր կաթիները յերեա-ցին նրա ճակատին : Դայոն սաստիկ վրդովված եր, նրա բե-րանը բացվել եր, հաստ չըթունքները դողդողում եյին և սեր-տրին անհանդիստ կերպով թթվուում եր» :

Շահնազարյանի դյուղացիությունը վախառուն տեսնելիս, գողում և ինչպես ուսուի տերեւը փոթորկի առջեւ : «Ախսպեր Զո-մարդ»-ի հերոսը ձի յե և նա Դայոն «առխտի անխին» եւ : Վառ-դույներով և նա նկարազրել բեռնակիր ձիուն :

«Նրա բոյ ու բուսաթը, բարձր ու վայելուչ կութքի յայ-նութունը, սաղրին՝ կըր ու լիք, զլուխը՝ փոքրիկ ու սիրուն, կասես մի կարմիր խնձոր, մի քաշած պատկեր լիներ Զոմարդը : Եւրը Զոմարդը փողոցով անցնում եր, բոլոր մարդիկ բերան-ները բաց նրան եյին մտիկ անում և զմայլում» :

«Դայոն ու Զոմարդն ամառ ու ձմեռ, դիշեր ու ցերեկ միտ-սին եյին աշխատում, առւնը պահում, յերեխաններին կերակ-րում : Այդ եր պատճառը, վոր Դայոն իր ձիուն միշտ ախսպեր Զոմարդ» եր կանչում» :

Իուս գրականության մեջ հայտնի յե ոուտական գրականու-թյան խոչոր սատիրիկ «Կանյագան», բայց Շչեղրինի «Կանյագան», բայց Շչեղրինի կանյաղան կիված և սոսկալի բնուան տակ . նա հիշեցնում և ոռո-սական պատրերիստությունը, ոռու գյուղացու աղքատությունը, իսկ Շահնազարյանի ախաղեր Զոմարդը՝ ուժի, գեղեցկության ար-տահայտությունն եւ : Նրա դեմքով Արշակ Շահնազարյան իղեա-ջականացնում և մանր գյուղացու սեփականությունը : Նա Զոմար-դին «ախսպորից» չի ջոկում, վորովհնտեւ նրա վրա յե հիմնած Դայոյի ամբողջ տնտեսությունը : Սակայն չխավար աշխարհաւ-րուր լավերը պատկանում են վաշխառուներին և «Ախսպեր Զոմար-դը» վելչնում և վա: իսուուն մեկ որով ու սպանում : Առաջին հա-յաքից թվում և թե, մեռնողը մի ձի յե, բայց այդ ձիու մահը նրա տիրոջ տրագեդիան եւ, ջարդվում և նրա «բախտի անխիլը» : Ենք «Ախսպեր Զոմարդի» մեջ Արշակ Շահնազարյանը տվել ե գե-

շարվեստական այնպիսի կտորի, վոր չի նահանջում մեր գրականության կլասիկների գրվածքներից։ Ամենից ավելի սրտաշարժ ու հուզիչ և Գալոյի և ձիու վերջին հանդիպումը։

«Այսուհետեւ դա Զոմարդն եր, վոր վոտները յերկար մեկնել եր, մինքը ծուել ու զլուխը մի տափակ քարի վրա դրել։ Սպիտակ կրաքարը, վորի վրա ընկած եր ձիու սիրուն զլուխը, ներկիւն եր մուգ կարմիր զույնով։ կենդանու բերնից բղիսած թանձր արյունը կեսիկ մեսիկ առվակներով քարի վրայից իջել եր գետի ցած և ապա ճանապարհի մեջանելում լճանալով, լերպացել։

— Զոմարդ ջան, ախալեր ջան, — զոռաց Գալոն դեռ ձիու յուս հասած։

«Ճին տիրոջ ձայնն խսկույն ճանաչեց, նա իր կիսախուի աշքերը լայն բացեց, վլինքը շարժեց, զլուխը մի փոքր բարձրացրեց ու վասքերը թափահարեց։ Նա ուզեց վոտի կանգնել, բայց ուժ չկար... Նրա վլինքը թուլացավ և ծանրացած զլուխը նորից սպիտակ կրաքարի վրա ընկավ։ Զին խորը անքաց ու աչքերը խփեց։ Փալոն ընկավ ձիու վրա և ամուր զրկեց նրա արյունաթաթախ դլուխը։

«Պյուղի կողմից լսվում եր ուրախ ամբոխի խառնիճաղանց զժվացը, վորոնց միջից պարզ համում եր Գալոյի ականջին կոստանդ աղայի զարշելի ձայնի անդուրնեկան կէլլոցը։

«Տէր արզարազատ սաստիած, դու անիրավ մարդու դիվանն անեա» — աղաղակեց Գալոն արտասվելի աշքերը զեպի յերկինք բարձրացնելով ու նորից իր զառնազին վողը շարունակեց։

«Ախալեր Զոմարդի դողացող շրթունքներն այդ վայրեկանին մեղմությամբ շարժվելով կասես մի բան մրմնացին արդյոք խոճուկ անսասունն ել անիծում եր մարդկային անիրավությունը, թե իր հոգատար տիրոջը մահի դունից մնաս բարեւ եր շնչնում»։

Վորքան հարազատ դույներով և նկարագրված Գալոյի ամբողջ հոգեկան տրատեղիան և վորքան գեղարվեստական ճշմարտություն կա այս փոքրիկ պատմվածքի մեջ։ Շահնաղարյանի պատմվածքների առավելություններից մեկն և նաև նրա պարզ ժողովրդական լեզուն։ Գալոններն ուրախ — յերջանիկ կլինեն ու կուշտ, իրենց ջոմարդներով, յեթե չլինեն անսաստված աղաներն ու բուջանները, վորոնք ջարդում են Գալոնների ու Զադոնների քրախու անիմից, վոտնահարում ու անարդում են նաև նրա արժանապատմությունը, ընտանեկան պատիվը, նրա ամենամնիբրական զդացմունքները — հայտարարում ե Արշակ Շահնաղարյանը։ Տեղի սղությունը մեղ հնարավորություն չի տալիս մեկ առ մեկ վերլուծել Շահնաղարյանի բոլոր պատմվածքները, վորոնք մանում են ներկա հրատարակության մեջ։ Այդ պատմվածքների թվին են պատկանում Վշարոսի հանախորդները, վորի մեջ հեղինակը փորձում է

բնութաղրել աղաւանքի բանմորների կյանքը, սակայն այստեղ
նրա զրին այնպես զորեղ չէ, ինչպես «Ախաբեր Զոմարդի՛ մեջ» իսկ
«Ձաղացպանը», «Եղաղար թէկչը», «Ակատաստանը», «Կարմիր ճիւ-
պոտը», փորոնք ամելացնում են նորանոր և մեկը մյոււսից ավելի
բնորոշ իրատութ մանր դյուլացիության վիճակի մասին, հարա-
վոր չե մեկ առ մեկ քննության առնելու: Մենք կասենք, վոր այդ
պատմվածքներից ամեն մեկը մի նոր փաստաթուղթ և ավելացնում
չխավար աշխարհին մանր դյուլացիության քայլայման սոցիա-
լական տրապեզիակի մասին, զառնում և նրա կենդանի պատկերը
և դրանումն և հենց Արշակ Շահնազարյանի գրական հասարակա-
կան արժեքը մեղ համար:

* * *

Բայց Շահնազարյանն ապրել և պրոլետարիատի հեղափոխու-
թյունն ու նրա ղիկաստատուրայի ընջանը: Ինչ դիրք եր բռնել նա:
Շահնազարյանը մենքն և մեր այն ինտելիգենտներից, վորոնք կանո-
նած են խորհրդային պլատֆորմայի վրա, վորոնք անկեղծորեն
աշխատաւմ են բժիշկնելու ու գեղարվեստականութեն վերարտադրել
սոցիալիստական տեսենության հակայական տեղաշարժերը դյու-
դում և քաղաքում: Արշակ Շահնազարյանը հետ չի մնացել այդ
հոսանքից և ամել և մեղ դրական նոր գործեր: Նրա «Անաստամ գելե-
րք» պատկանում և մեր հետականմբ բերյան դրականության: Ան-
չուշտ, դրական ստեղծագործական տեսակետից Արշակ Շահնազա-
րյանի պատմվածքների գրական վողջ արժեքը նրա անցյալ գըր-
մածքների մեջն և և արդ տեսակետից «Անաստամ գելերը» պատ-
մածքը նոր բան չի ավելացնում, սակայն նա բնութագրում և
հեղինակի ըրջազարձը գեղի մեր նոր հասարակական կյանքը:

Շահնազարյանն աշխատում է հասկանալ յերեսույթների առ-
ցիալ-համարակական պատճառները: «Անաստամ գելեր» պատմված-
քը ամենակարևոր արժանիքը հենց այդ և, վորը և բնորոշում և
նրա դրական հասարակական ըրջազարձը: Այդ պրոցեսն ավելի
քան բնորոշ և «Անաստամ գելեր» պատմվածքի մեջ, ուր հրապարակ
են իշխում գյուղի աշխատավորությունը և հին ցեցերը բոլորովին
տարրեր հասարակական պայմաններում: Բայց Շահնազարյանի
նոր տիպերը գեր բավականաչափ պասսիվ են: Այդ հերոսները բատ-
րակներ են, գյուղաբնորդուրդների նախագահներ, վորոնց Շահնա-
զարյանը ներկայացնում և իրենց հասարակական աշխատանքնե-
րում: Լավ ծանոթ լինելով գյուղական միջավայրին, նա բնորոշ
գյուղներով պատկերում և գյուղը: Սակայն նրա հերոսները զուրկ
չեն ուժանաբերությունը: Գյուղական պարզ նախագահի, Առոյի ճառը,
ավելի շուրջ մեր որերի խորհրդային ինտելիգենտի ճառ և, քան
իրեն՝ նախազակները: Խակ կուլակի ագենտները պատկերացված են
այնքան հիմար ու նայիլ, վոր յերբեմն ծիծաղ են առաջ բերում -
այդ վերաբերմունքը նրանց վերածում և սիմեաների:

Ժիրավունքս վորն ա, ախաբեր, միջամտեց Ագեքը ձեռք
բարձր զրոշի պես ցցելով, իրեք հարիր տուն զեղ ենք, կար-
գին միկյան չունենք, զուք վարժատուն եք շինում...»:


Հաղիվ թե մեր որերի զյուղացին այլպիսի բան կարողանար-
ասել հասարակական ժողովում զպրօցի դեմ, չունենալով ուրիշ
արգումենտներ : Այդ պրիմիտիվիզմը, ավելի շուտ ավելորդ սար-
զամուռը յունը, վոր Հաճախ հեղինակը կարծես դիտավորյալ
կերպով վերադրում ե իր հերոսներին, վոչ միայն վոչինչ չի ավե-
լացնում, այլև արժեքազրկում ե այդ իսկ հերոսներին : Դա հենց
սուրյեկտիվ մեթոդ է զրականության մեջ :

Սակայն Շահնազարյանն ավելի լավ է բմբանում զդիկերին սո-
ցիալական հողերանությունը և նրանց ոլոմագրությունը բնու-
թագրում ե բավական հաջող զծերով :

Արշակ Շահնազարյանն անշուշտ արժանի յե մեր խորհրդացին
ընթերցողի ուշադրության : Նա տիկի և հին դյաւդի՝ Փիտավար
աշխարհին պատկերը և խոչը նյաթ և տիկի վոչ միայն վորորես զե-
ղարվեստագետ, այլև վրազես զյուղական կյանքի լավագույն
նկարագիր, վորի տված նյութը նոր լույս և սփոռում անցյալ դյու-
ղի գիֆերենցիացիայի պրոցեսի վրա : Պետհրատը գնահատելի գործ
ե կատարել, անցյալի վուսուց վրկելով մի արժեքալոր հեղի-
նակի, վորն ամենամեծ իրավամար արժանի տեղ պետք ե զբավի մեր
հին զբականության ներկայացուցիչների շարքում :

Հ. ՄԿՐՏՉՅԱՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ



Ա Ղ Ա Բ Ժ Ի Շ Կ Ը

1.

Գյուղում տիֆը բուն եր զրել և աջ ու ձախ անսղորժաբար կոտորմած : Տուն չկար, վոր հեղանդ չունենար, սիրո չկար, վոր ուրախ լիներ, աչք չկար, վոր ցամաք լիներ :

Վոչ բարով բարիկենդան որեր եյին (դնա ու ել յետ չզա են- ուն բարիկենդանը) : Զահելների ուրախ յերգերի փոխարեն՝ լըս- վում եյին պատաժների սրամամաշ բայալիները և դափ ու զուռնի փոխարեն՝ վորբացոյ մանուկների հուսահատ զուռում-զուցումը :

Սուզն ընդհանուր եր : Փաղոցներում մեռելություն եր տի- րում : Միայն յերբեմն նկատվում եր տերտերի նորուս կերպարան- քը, վոր քիմ տակ, տկամա, ինչլոր տիսուք մեղեդի յեր մրմրե- ջում : Նրան հնակում եյին մի անշուք դապազ ու մի քանի մռայլ գեղեցիր, վորոնք սուս ու միւս, գլխակոր, ստվերի պես սահում եյին դեպի դերելոմանատուն :

Ցնությունն ել կասես համակերպվիլ եր մարդկանց տրամա- դրությանը : Գյուղամիջից վաղող չարաճի զետակը, վոր սովոր եր միշտ ծիծագկոտ դեմքով և ուրախ կչիչոցով դիմավորել ջրի յեկող յերիտասարդ հարսներին, այժմ մի տեսակ տիսրել, սոտվել եր : Խակ զետակի կողքին շարված ալեսոր ուռիները կասես թե լուռ լալիս եյին : Մտերն այլևս չեյին ծրլում : Յերկինքը մուլին եր, յերկիրը՝ մռայլ, առելք՝ կորած :

Ամեն վոյք և ամեն ինչ գյուղում տիսուր եր, սովոր : Թշվա- ռության և խալարի մեջ թաղված անողնական ժողովուրդը տանչ- վում եր, լալիս և միտար ստեղծողին փառք տալիս :

2.

Ցխուր եր Դարբիննց հին խօսմիթը, չառ ախուր : Մքաս ա- նաստաղի տակ, ու ոյտների մեջտեղում պարզած հին քուրսու չուրջը, հիմմաշ վերմակների տակ, կծկինը եյին չորս կիսակենդան

արարածներ : Ըստանիքի հայրն եր՝ իր ամուսնու և ջուխտ ազգիկների հետ :

Հիվանդների դվարվերնը նստած եր մի սեաղդստ պառակին : Դա Դարբիննեց տան քթուկն եր, մեծ մայրը, վորն ամենայն անձնիքը բարելությամբ գիշերցերեկ հակում ու խնամում եր իր քաղցր բալաներին : Խեղճ պատավ . նա քանի վոր արթուն եր, ու զողնոցը աւքին դրած՝ խուզում ձայնով անդապար բայաթի յեր մրմնջում, մինչև վոր ձայնը հետղհան նվազում և խապառ կտրվում եր : Այս ժամանակ պառավը նստած տեղը ննջում եր և միալար սարսափելի յերադների մեջ ընկնում : Հիվանդների հառաջանքը նրան արթնացնում եր . «Ճա՞ն», բալա, ջան» պատասխանում եր նա ծանր տքոցին և թառամած շրթունքներն այնուհետեւ ինչվոր բան երին մրմնջում աղոթք եր դա, թե բայաթի՝ վորոշելը գմիկար եր :

Պառավից մի քիչ հեռու՝ մեջքը սյունին դևմ աված նստել և տիսուր մտածմունքի մեջ եր ընկել Մինասը, տանտիբով մեծ յիշ-բայրը, վորը նույնպես հիվանդապահի դեր եր կատարում :

Խեճիթը նեղ եր և սաստիկ խոնավ : Աղքատությունն՝ իր դաշնակից ազատուության հետ միացած՝ բազմել եյին նրա չորս անկյուններում, ծանր ողն այն աստիճան ապականված եր թանձր գարշահուությամբ, վոր չնշելն ուղղակի անտանելի յեր զառնում :

3.

Հին խեճիթի սե դուռը ցավագին տքոքոցով կրնէի վրա պատովեց և շեմքի վրա յերեաց մի հաղթանդամ, սիրունատես տղամարդ : Դա թիշկն եր, վոր քաղցրից յեկել եր տիֆի առաջն առնելու : Նա շեմքի վրա կանդ առալ, դեմքը խոժոռնց, քիթը թաշկինակով բռնեց և սկսնց գոռզոսուալ :

— Թո՞ւ, սա ի՞նչ կեղաստություն ե, ինչ գարշահուություն-խոզի բո՞ւն ե, ի՞նչ ե . և ինչպես կարելի յե այս զժողքում չորս հոգի հիվանդ պահել . չե՞ վոր օրանք բոլորն ել այստեղ խողերի պես կշարդվեն :

Խեղճ Մինասը թժշկի ձայնը լսելուն պես հանկարծ տեղից վեր թռավ և սկսեց շվարած նայել նրա յերեսին : Նա լսել եր, վոր թժշկի ե յեկել դյուղը, և տանուտերին խնդրել եր, վոր անպատճառ իրանց տունն ել բերի նրան : Նա բոլորովին այլ կերպ եր պատկերացնում թժշկին, մեծ հույս ուներ նրա վրա և անհամբեր սպասում եր նրա գալուն : Նա կարծում եր, վոր թժշկը մի մարդակերպ հրեշտակ ե, վորը կդա, կքննի հիվանդներին և քաղցր խոսքով :

բարի վարժունքով, դեղ ու դարմանով կրուժի նրանց. իսկ հիվանդատիրոջ սրտին սյուն կտա, կըուսագրի, կմխիթարի...

Իսկ այժմ... Տե՛ր աստված, դեռ բժիշկը վուոր չեմքից ներս չի դրել, սկսում ե Հայույանք ու նախատինք թափել և թշվառ մարդկանց վիրավոր սիրտն ավելի խոցուտել... Դեռ մի շարաբ ել չկա, վոր այդ տնից յերկու սիրելի դիակ ե դուրս զնացել, իսկ հիմա յել՝ բժշկի պես հեղինակալոր մարդն ե բացարձակապես հայտնում, թե մնացող չորս հոգին ել վետովերի պես կջարդվեն...» Ո՛, վորքան անիրավ, վորքան քարասիրոտ մարդիկ են յեղել այդ բժշկիները...

Բժշկի կոպիտ վարժունքն այն աստիճան վշտացրեց Մինասին, դոր վերջինս անվատաճառ նրա կոնից կրոներ և կլոնդեր տանից, յեթե միայն Հետեանքից չվախոնար: Բայց նա լոեց ու բավականացավ միայն մաքում մարդկանց անիրավությունն անիծելով:

Բժշկը քիչ առաջ անցավ. հիվանդների անունները մին-մին դրեց տեսրակուռ, ապա հարցրեց, թե ո՞վ վորքան ժամանակ և հիվանդ և սկսեց անթաղցնելի զղվանքով քննել տկարներին: Վորի զարկերակն եր բանում, վորի ճակատն եր շոշափում, վորի կուրծքն եր թիկթիկացնում:

Սեաղգեստ պառավը, վոր նորեկի մոայլ գեմքից և դոսոցից վախինցած՝ մեռելի դույն և մանդաղի ձեւ եր ընդունել, այժմ միայն հասկացավ նրա բժշկ լինելը, դողդողալով առաջ շարժվեց և բժշկի վուների մոտ չոքելով, թախանձագին աղերսեց:

— Աղա չան, վոաներիդ մեռնեմ, բալաներիդ մատաղ լինեմ, — ապաչում եմ, մի ճա՞ր, մի ոզնություն արա իմ խեղճ գավակներին, ես նեղ տեղից նրանց փրկիր, աղատիր... Հույսո ու ապավենս վերին աստված ա մնացել, ներքեւ՝ դու. ձեռս քո ինչն եմ քցել, մի ճար....

Աղա բժիշկը խորին զդմանքով մի կողմ հրեց պառավին և հանդաստությամբ շարունակեց իր գործը: Բոլոր հիվանդներին քննելուց հետո նա զարձավ Մինասին և հարցրեց:

— Ի՞նչ եք տալիս հիվանդներին ուտելու:

— Եհ, ի՞նչ կա, վոր ինչ ուտեն, — պատասխանեց Մինասը ախրությամբ, — թե վոր ուտիս և լինում, թանե սպաս, չում ենք տալիս, թե պատ ա՝ հո քեղ ա, դոի ա, լորի, մախոխ...

— Գժվե՞լ ես, ի՞նչ ե, — Մինասի խոռը կտրեց բժշկը, — մի-թե կարելի յե հիվանդին այդպիսի բաներով կերակրել:

— Բա ինչո՞վ կերակրենք, աղա ջան, ուրիշ բան չունենք, աղա քատ մարդիկ ենք, մեր տան գտնվածն ել եղ ա:

— Ինչո՞վ, — վրա բերեց բժիշկը, առանց Մինասի վերջին խոսքերին ուշ զարձնելու, — այ, բժիշ, առավոտիրիկուն յերկու-յերեկու բաժակ թե՝ կաթով, կոնյակով և մի յերկու թերիաչ ձու, ճաշին լավ ճուտով չորդա կամ տաղակած դառան միս, իրիկունը...

— Լավ ես ասում, աղա ջան, բայց ախար չայն ու շաբարը, կոնյակին ու ատպուկածը, ճուտ ու դառները մեղ ո՞վ ա տվել, չունեմ, ասոված վկա, չունեմ.

— Չունե՞ն՝ զնիր, ո՞վ և մեղավոր, — զոռաց բժիշկը:

— Ա՞ի, ինչո՞վ, ինչո՞վ, — ասաց Մինասը խորին հոգոց քաշելով և նրա աչքերը դրակարվեցին, — չե՞ս տեսնում մեր որն ու ապրուստն ինչ ա:

Բայց բժիշկն այլևս խոսակցին չեր լսում: Նա թղթի փոքրիկ կտորների վրա արագ-արագ ինչպոր բաներ եր զբում: Յեվ յեր զրեց, վերջացրեց, գեղասոմուերը մեկնեց խողմ Մինասին ու ասաց.

— Այս թղթերը վաղն անօպատճառ պիտի քաղաք հասցնես և սրանց մեջ նշանակված գեղերը չուտով բերես, նրանք շատ թանգ չեն նստի, ընդամենը հինգ ուռւրի կարծմնաւ:

Այնուհետեւ նու յերկար բացառում եր, թե վո՞ր դեղն ում պետք ե տալ, ինչպես զործագրել: Բայց Մինասն այլևս խրատները չեր լսում: Նու միայն անթարթ աչքով բժշկի շրթունքներին եր նայում:

«Հինգ ուռւրի՛, — մատածում եր Մինասը, — բայց վո՞րտեսնից դտնեմ արդ հինգ ուռւրին: Ի՞նչու ա մնացել, վոր եկ ի՞նչ ծախեմ: ամբարումս ցորեն չկա, զոմումո՞ անառուն չկա... տանս՝ արժեքալոր մի բան...»:

— Ուրեմն հասկացա՞ր ինչպոր ասացի, — շարունակեց բժիշկը, — հա, ամենադլամբը յես մոռացա. նախ և առաջ հարկավոր և հիվանդներին այս խողի բնից հանել, պետք ե չոր և մաքուր սենյակ փոխադրել, հասկան՞ւմ ես, անսղատճառ:

Բժշկի վերջին խոսքերի վրա Մինասը հեգնորեն ժամաց և զվարվ բացասական նշան արեց, զորով ուռւրում եր տաել, թե դա արգեն միանգամայն անհնար:

— Ի՞նչ ես սեպերդ բաց անում, ավանակ, — հանկարծ բզավեց բժիշկը, թուքը չորս կողմը ցրելով և բարկությունից սաստիկ կարմբելով, — յես քեզ ասում եմ, վոր սրանք (և նա ձեռքով հիվանդներին մատնանշեց) բոլորն եկ մի շարաթում տաղարի պես կջարդվեն, յեթե իմ պատվերները կետ առ կետ չկատարեք: Այսուհետեւ, ինչպես կուղեք, ձեզ պես անառուններին բան հասկացնել չէ լինի: — Ասաց և արագ-արագ դուքս յեկալ խրճիթից:

Մինասը միքանի բռոյե մնաց մեջքը սյունին տված անշարժ կանգնած՝ դառն ու տխուր մաքերի մեջ ընկղմված։ Հետո նա հանց դրականից մախորկի յերկար տոպրակը, մի հաստ պապիրոս փաթթաթեց և սկսնց աղահությամբ կուլ տալ ծխի քուլաները։ Նա ծխում եր ու մասնում։

«Տե՛ր ասաված, ի՞նչ հիմար ու անիրազ եր այդ մարդը . . . դեռ անունն ել ուսումնական ա զրել . . . լա՞վ, ախաղեր ջան, վո՞ր ախամախը չի հասկանում, վոր ճուռն ու զատան միսը՝ լորուց ու քեղից անուշ ա ու սննդաբար, վոր բարձր ու մաքուր սենյակը՝ մրոտ խըր-նիթից լավ ա . . . Աշխարհում չատ ու չատ լավ բաներ կան, ո՞վ ամեղ տվազը։ Չզունես առա ասում ա սննաքանդը, ել չի հարցնում, ինչո՞վ . . . ել չի ուզում իմանալ, վոր տանս չոքքուանին միայն կատուն ա մնում, վոր ազիղ հիվանդներս մնացել են չոր խոտի վրա պատկած, վոր ալյուրը փեթակի տկն ա հասել ու պնդրաքատելն եւ որական յերեք անգամ դուռս ա կարում, բգիս չոքում . . . Բժիշկ, բժիշկ . . . առա ասում ա, ել չի հարցնում, վո՞նց առնեմ, ինչո՞վ առնեմ . . .»

Մինասը յերկուրէ պապիրոսը փաթթեց։

Հիվանդ աղջիկներից մինը զժվարությամբ կողքը լրջեց, խոր ընկած աչքերը բացեց, հայացքն ուղղեց առաստաղին և ճրաւլով յուր խնդրեց։

Մինասը, հասածելով, վեր կալավ քուրսու վրա դրած կավե ջրամանն ու հիվանդի պատկակված չրթունքներին մոտեցրեց։

Ա Խ Պ Ե Ր Զ Ո Մ Ա Ր Դ Ը

1.

Ասենք կային, լավ ձիեր եւ շատ կային այդ գյուղում, բայց
Զրպետենց Գալոյի կարմիր քուրակը, Զոմարդը, մի անման բան
դուրս յեկալ:

Հասակը բարձր ու վայելուչ, կուրծքի լայնությունը մի ար-
շինից ավել, վատները յերկաթի զես ամուր, սաղրին կլոր ու լիքը,
շլինքը հաստ և ուժեղ, ոլուխը փոքրիկ ու սիրուն—կասես մի
կարմիր խնձոր, մի քաշած պատկեր լիներ Զոմարդը: Յերբ Զո-
մարդը փողոցով անցնում եր, բոլոր մարդիկ բերանները բաց՝ նրան
ելին մտիկ տալիս ու զմայլում: Կուպչիկ փալանը մէջքին դրած,
գլուխը բարձր բանած, աչքի պոչով հպարտությամբ չորս կողմը
զիսելով՝ թեթև զորզայով այնպես եր նա սորորում, վոր կասես
վլոտները գետնին չելին առնում: Զոմարդը բերից վախեցող չեր,
նա խսկական և ընտիր բեռնակիր եր: Սովորական 10—12 փութ
ծանրությունը մեջքին առած, նա խաղալով եր որերով ճանապարհ
անցնում և յերբեք թույլ չեր տալիս, վոր մի ուրիշ ձի իր առջնից
դնաւ: Կարավանում Զոմարդը միշտ ամենից առաջինը պիտի լի-
ներ:

Գալոն իր ձեռուվն եր խնամել ու մեծացրել Զոմարդին և մի
քանի տարի շարունակ նրա հետ եր անցկացրել իր բոլոր լավ ու
վատ սրերը, նրա հետ եր բաժանել իր լացն ու ծիծաղը: Գալոն
մինունար տղա յեր ողնական յեղբայր չուներ, և Զոմարդը նրա
համար աշխատավոր յեղբայր դառնալ, թե ու թիկունք հանդիսա-
ցալ: Գալոն ու Զոմարդն ամառ ու ձմեռ, գիշեր ու ցերեկ միասին
ելին աշխատում, տուն պահում, յերեխաններ կերպակրում: այդ եր
պատճառը, վոր Գալոն իր ձիուն միշտ գախակեր Զոմարդը եր կան-
չում:

Յեկ խսկալես, շատ քիչ կդտնվեն հարադար յեղբայրներ,
վորոնք կապված լինեյին միմյանց հետ այնպիսի ամուր սիրով և

անձնվիրությամբ, ինչպես Գալոն ու Զոմարդը: Գալոն բերանը հաշ չեր զնի, մինչև վոր առաջուց չկերակրեր և չֆրեր Զոմարդին, նրա սրտին հանդսություն և աչքին քուն չեր մոտենա, մինչև վոր չհամոզվեր, թե Զոմարդը կուշտ ե ու հանդիստ: Ութ տարվա ընթացքում Գալոն իր պաշտելի Զոմարդին յերեք աչքաթող չեր արել, վոչ մի որ ուրիշի խնամքին չեր հանձնել, «ամանաթ» չեր տվել: Եատ անդամ եր պատահել, յերբ Գալոյին լավ վարձատրություն ելին առաջարկել այն պայմանով, վոր նա Զոմարդին «ամանաթ» տա, բայց նա միշտ մերժել եր և համաձայնվել ավելի խոքը վարձատրության, միայն այն պայմանով, վոր ինքն ել իր ձիու հետ յինքը: Այդպիսի դեսպանություն անդադար կրկնում եր պապից սովորած իր սիրելի առածը, «առլրանքն եթա՝ տերը հետը, վորդին եթա՝ հերը հետը»: Յերբ նախանձուու ընկերները Գալոյին նախառում ելին այն բանի համար, վոր նա իր ձիուն կուռքի պիս և պաշտում ու Զոմարդի պոչից պոկ չի դալիս», նա պատասխանում եր. «Ի՞նչ անեմ ախտեր, աստված վկա, չեմ կարողանում, հենց վոր Զոմարդն աչքից հեռանում ա, սիրտս տիրությունից պատռվում ա, բոպեն մի որ ա թվում, ժամը՝ մի տարի. մարմինս մի տեսակ ծանրանում ա, քունս ել չի տանում: Յես ի՞նչ անեմ, վոր մի անգամ սիրտս կտել ա ու չեմ կարողանում առանց նրան մնալ»:

2

Մաղկաղարդի կիրակին եր. գարնանային մի հրաշալի որ: Յերկնքի անրիծ կապտությունը, արեգակի մեղմ ու դուրեկան ջերմությունը, գյուղը շրջապատող ծաղկաղարդ ծառերի արբեցուցիչ բուրմուճքը, մանուշակով նախշած նորածիլ կանաչը, այս բոլորն ոյնքան մաքուր եր ու հրապուրիչ, վոր գյուղի բոլոր շնչավորները, յերկարաւան փակ կյանքից ժանձրացած՝ դուրս ելին թափվել իրանց մութ ու խոնավ խճիթներից և առատորեն վայելում ելին մայր բնության աննման գեղեցկությունը:

Կեսորը մոտ եր: Գալոն Զոմարդին գուրի եր քաշել բանկը և խնամքով մաքրում եր նրան, կամ ավելի ճիշտ և ասել՝ շոյում, փայխայում եր, վորովհետեւ այդ որը նա արդեն յերկու անդամ մաքրել ու քորել եր իր ձիուն: Գալոյի քեֆը դալիս եր, յերբ Զոմարդի լիքը սաղբուն շրբացնելիս՝ փափուկ միսը դղղղում եր: Նա գըկում եր իր ձիու վինքը, պաշում եր նրա աչքերը և այնպիսի անհկարագրելի բավարանություն եր դզում Զոմարդին փայխայլիս, ինչպես գորովագություն մայրն իր մինումար դալակին փաղաքշելիս:

Զին, կասես, հասկացավ իր տիրոջ գզվամնքը։ Նա ուղեց արտահայտել իր փոխադարձ սիրո զբացմունքները՝ բարձրացավ յետեի վլոտների վրա, առաջիններով փորձեց զրկել Գալոյին և համբույքի փոխարեն իր խոշոր առամներով բռնեց նրա թեից և կամաց թափահարեց։

— Ե՞ր, անշնորհնք, — կշտամբեց տերը ձիու կոստումյունը։

Զոմարզն խկույն լրջացավ, մի բոպե անշարժ կանգնեց, աչքերը Գալոյի յերեսին զցեց և սկսեց զլուխը առառենքել։ կասես՝ ուղում եր ներողություն ինդրել իր կոպիտ վարմունքի համար։ Գալոյի հաստիկ շրթունքները ճպվեցին, ուրախ ժպիտը փայլեց նրա արեավառ կոշտացած դեմքին և նա, չկարողանալ թաղցնել իր հիացմունքը՝ նորից համբուրեց ձիու սիրուն աչքերն ու վերջապես զնաց յննջա բերելու։

Զիուն կեր անզուց հետո, Գալոն ինքն ել մտավ տուն, յերկու կակուդ լու վերցրեց, չորս աակ ծալնց, մեջն ել մի քանի բուռ լուրեց լցրեց, փաթաթեց, մի փառավոր զուրում պատրաստեց ու զլիկցը կրծելով, ասենից զուրս յեկավ։ Եեր Գալոն անցնում եր ծոմարդի մոտից՝ ձին զրճզրճալով ծամում եր համեղ յոնջնն։

— Զա՞ն, ջա՞ն, ախաբեր Զոմարդ, կեր, իշտահիք մեռնեմ, անուշ արա, — լիքը բերնով առաց նա ու զուրս յեկավ փողոց։

3.

Բակի դուան առջեկց փողոցի մի կողքով սրբնթաց անցնում եր դյուզի մեծ առուն։ Առվի ափին լով արեղունի տեղ կար։ Մի խոմք ծերունիներ այստեղ մեջքերը պատին տված ու վոսները յերկարացրած զրուցում եյին։ Գարնան արևի ճառագայթները փոքր ինչ զողացրել եյին նրանց պազած արյունը և այդ պատճառով նրանց խստակցությունն անսովոր աշխուժով եր առաջ զնում։ Նրանք խսում եյին հին ժամանակներից, անցած զնացած բաներից, մտարեցում եյին իրոնց յերիտասարդությունն ու յերանի ատլիս վազեմի որերին... Ծերունիներից քիչ հեռու, մանրավաճառի խանութիւն առջեւ, մի քանի յերիտասարդ մարդիկ խոսում եյին վար ու ցանքից, տարվա պտղարերությունից, ցորենից ու խաղողից և այլ առորյա բաներից։

Գալոն, զուրումը կրծելով, մոռեցավ այս վերջին խմբին ու նոտեց խանութիւն առջեկի թմբի վրա։

Այդ ժամանակ փողոցի ծայրից յերեաց մի կարճահաստէ մարդ, զոր ձեռները քամակին զրած՝ հանդարտ քայլերով առաջ եր

զալիս : Նրա կիսայնգրուղական չորերը և ինքնահավան ու արհամարհական հայացքը միանդամից ցույց եցին տալիս, վոր յեկողը հասարակ մահկանացու չե : Դա կոստանդ աղան եր, գյուղի ամենանորպիի վաշխառուն և միննույն ժամանակ ամենասառաջին հուրուսոր : Փողոցում գտնվող գյուղացիներից չատերը նրա առջև վստի եցին կանգնում և յերկյուղածությամբ գլուխ խոնարհեցնում :

Այլան, իր մանրիկ ու խսրամանի աչքերը չորս կողմ պատեցնելով՝ զիմի թիմին չարմումով վողջունում եր վոտի կանգնողներին ու անցնում : Յերբեմն նա մասավ կանչում եր այս ու այն գյուղացուն և դանազան պատվիները ու հրամաններ եր տալիս նրանց վերջապես կոստանդ աղան մոտեցավ մանրավաճառի խանութին, վորտեղ յերիտասարդների խումբը տագ-տաք վիճում եր մի ինչ վոր յեղան մասին : Աղային տեսնելուն պես խկույն բոլորը պապանձնեցին և վոտի կանգնելով՝ տեղներում արձանացան : Գալոն ել գուրումի կեսը ծոցը զնելով՝ վոտի վրա անհամբեր սպասում եր աղայի անցնելուն, վոր գուրումի հետ իր հաշիվը վերջացնի :

— Բարի որ ձեզ, — ասաց աղան, կանդ առնելով խանութի առջեւ ու իր փոքրիկ աչքերը պատեցըեց :

— Բարով, հաղարի բարի, աղա ջան, — սրտալի պատասխանեցին աղերքը միտհայն :

Աղայի վազվան աչքերը մի բողեյի չափ կանգ առան Գալոյի վրա, վորին նա վոտից գլուխ այնպես եր զնոնում, կասես թիւ մի տարօրինակ ու զարմանալի բան եր նկատել նրա շալվարի բարձագույն կարկատանների և արխտլուղի ծլանքների մեջ : Գալոն այրվեց աղայի հայացքից . նրա գեմքն ամբողջապես կարմրատակեց ու քրտինքի խոչը կաթիլներ յերեացին ճակատին : Գալոն սաստիկ վրդովված եր . նրա բերանը բացվել եր, հաստ շրթումքները գոզզովում եցին և սիրտն անհանգիստ կերպով թրթուում եր : Աղան հանդիսավոր հանդարտությամբ հանեց զրավանից մի ուազիբոս և առանց վառելու դքեց բերանը : Խանութպանը մի վայրկյանում քսեց լուցկին ու կրակը մոտեցրեց աղայի բերանին : Պապիբոսը վառեւուց հետո, կոստանդ աղան աղահությամբ նրա ծուխը ներս քաշեց, հետո թանձը քուլաները դուրս փչեց ուղիղ խանութպանի աչքերին ու մի ակնարկ գցելով Գալոյի վրա՝ մտով կանչեց նրան ու յերեսը շուռ տվեց :

Գալոն դուրսումի կեսը ծոցից հանեց, ավեց մոտի գյուղացուն և ինքը մեքենաբար հետեւեց աղային : Նա զնում եր անհաստատ, դողդոյթյան քայլերով ու նրա սիրտ ինչվոր սարսափելի բան եր

նախաղուշակում : Յերբ նրանք մի քանի քայլ հեռացան՝ առջան կանգ առավ ու դառնալով դեպի Գալսն առաց .

— Այ տղա , մեր հաշիվը ինչո՞ւ չես վերջացնում , մինչեւ յե՞ր խարխելով ձգձգես , չե՞ս ամաչում :

Գալոն նորից կարմրատակեց , նախ աչքերը դետնին քցեց , ապա բարձրացրեց , կասես ուղում եր մի բան առել , բայց չեարողացավ : Նա միայն չորացած շրթունքները լեզվով թրջեց , նորից ուղուխը կախեց ու սկսեց իր հնամաշ տրեխներին մտիկ տալ :

— Մարդս պիտի մի քիչ ել նամուս ունենա , — չարունակեց առ զան ուղիղ Գալոյի աչքերին նայելով , — նամուսը , պատիվը ամեն բանից թանգ արժի , մարդ դետինը մտնի լավ ա , քան թե պարագատ-տերն որական տասն անդամ նրա ուղուը կտրի , կամ փողոցում նրա փեշը քաշի ու մի թռու խոսք , մէ անօպատիվ զբույց ասի : Բա զու հողը չես մտնի , յեթե յես եղուց-ելոր պրիստավ կամ տանուտնը բերեմ ու քո տան կճում-բժուղը , պղինձ-պղնձակալը , քչա ու կար-պետը , վերջապես քո կնկա շապիկն ու վարտիկը , զուրս քաշել տամ ու հրապարակով ծախսեմ : Ես ի՞նչ խայտառակություն ա , ախաղը , փող ես վերցրել , լատիկ-լակել , իսկ հիմքի չե՞ս ուղում վերադարձ-նել . . . չինի թե կարծում ես , զոր փող աշխատողը քո հոր ծառան եր ու դատել ա նրա համար , զոր գու տանես լափես , քեֆ անես ու յետ կարձնելու մասին ել չմտածես :

— Քեզ հետ եմ խոսում , ի՞նչ ես լալացել , — չարունակեց կոս-տանդ աղան ավելի ու ավելի բորբոքվելով ու ձայնն աստիճանա-բար բարձրացնելով , — ինչո՞ւ չես պարտքդ տալիս :

— Ի՞նչ պիտի ասեմ , զոր չտամ , աղա ջան , — վերջապես դող-դոջուն ձայնով արտասանեց Գալոն , — իմ լեզուս լալանա՝ թե յես մի որից մի որ եղ բանն ասած լինեմ : Հակառակը , գիշեր-ցերեկ յեռ դրա մասին եմ մտածում , թե . . .

— Յեթե մտածում ես , ո՞ւ ա տվածդ փողը , ամբողջ տառենը-մեկ ամսվա ընթացքում յես քեզանից մի սկ կոպեկ չեմ ստացել :

— Ի՞նչ ասեմ , աղա ջան , ներողություն կանես : Անցյալ տա-րիները գործո աջ եր գնում . լավից վատից մի բան մասին եյէ վերցնում , մի բան ել ձխովս եյի աշխատում , տունս մի կերպ պա-հում եյի ու պարտքատիրով առջնեն ել սևերես չեյի մնում , տոկուն իր ժամանակին տալիս եյի : Իսկ անցյալ տարի , քեզ ել լավ հայտնի յա , զոր ասուլած զլիներիս բարկացավ , յերկնքից կաթիլ չկաթեց , տարվա աշխատանքներս երվեց , պապանձվեց . արտիցը սերմ չկա-րողացանք վերցնել , այդին ել հո ցուրտը վառեց : Յերեխաներիս աչքը մնաց իմ ու ծիռւ յերեսին , մէնք ել յերկուսով տարեն-պատուս

աշխատեցինք, չարչարվեցինք, քարի հետ քաղվեցինք, ավազի հետ
մողվեցինք, հաղիվ կարողացանք մի կտոր չոր հացի փող վաստա-
կել, մի տաւ մանր յերեխաներ կերակրել, ել վո՞րտեղից կարողա-
նայի տոկոս տալ...

— Բա մենք մանր յերեխաներ չունե՞նք, — զոռաց զայրացած
կըստանդ աղան, մի նոր պապիրոս հանելով դրանից:

— Աղա ջան, յես ել գիտեմ, վոր վոտից-զլուկ մեղավոր եմ
քու տոջն, միայն ճար չունեմ. տղաչում եմ մի փոքր ժամանակ
տուր, կամաց-կամաց կաշխատեմ ու քո պարաքը՝ տոկոսներն ել
չեմը՝ կտամ:

— Ամրոջ տասնըմեկ տմիս համբերեցի, ի՞նչ ստացա, վոր
կես այսուհետեւ ել համբերեմ: Չե, ախայեր, ես ինչ քո անամո-
թությունն եմ տեսնում, մինչեւ վոր խայտառակ չլինես, խելքու
զլուխագ լի զա ու վոչ մի կոպեկ չես տա:

— Կտամ, աղա ջան, կտամ, են կապուտ աստվածը վկա,
կտամ, — առաց Գալոն, մեռը դեպէ յերկինք բարձրացնելով:

Գալոյի խղճալի կերպարանքը, կասես, մի քիչ մեղմացրեց տ-
գայի սիրուը:

— Ծև, ի՞նչ եմ տում, Գալոն, — շարունակեց աղան: — Յես դի-
մեմ, վոր շուտ կամ ուշ զու մի բան պիտի ծախես, վոր կարողա-
նաս պարտրդ տալ. առանց դրան՝ անկարելի յա, վոր զու պարտ-
րեց թեթևանաս, իսկ քանի վոր մի բան ծախելու յես՝ վորքան
շուտ ծախես, ենքան շուտ հոգիով կաղատես:

— Ախոր ի՞նչ ունեմ, վոր ինչ ծախեմ, աղա ջան, ունեցած-
չունեցած յերկու աչք կիսավելը հին տուն ա ու մի քանի թումբը
պապենական այլիք, են ել վոր ծախեմ, կմնա, վոր մի տուն կաթ-
նակեր յերեխաներիս տանեմ ջուրը լցնեմ:

— Ո՞վ ա մեղավոր, այ վորդի, մի՞թե զու կարծում եքիր, թե
փող տվողը պարտքը քեզ կրաշխի:

— Յես չեմ ել ուղղում, վոր բաշխես. յես մենակ խնդրում
եմ, վոր մի քիչ խղճմանքով վարզես ինձ հետ...

— Անխե՞զն ենք, բա՛ս, — վրա բերեց կոստանդ աղան, առա-
ջին բառը սաստիկ չեշտելով և շեշտի համաձայն դլուխը տմբաց-
նելով, — վոողը տալիս՝ խղճալի յենք, լավ ենք, իսկ յետ պահան-
ջելիք՝ անիրոջն ենք, անիրավ ենք... Ախ, տեղն ա ինձ: Ինչո՞ւ պի-
տի լայտղ անեմ քեզ պես անհամուսների հետ խոսել. մուրհակի
ժամանակը լրանալուն պես կգանդատվեմ, ողբիստավ կրերեմ,
տունդ ու տեղդ ել կծախեմ, քեզ ել կիսայտառակեմ ու իմ փողս ել

լիուլի կվերցնեմ, այ, են ժամանակ յես լավ մարդ կլինեմ:—
Ասաց աղան, ու մի քանի լոկիրը հայհոյանքներ ավելացնելով,
արագ-արագ հեռացավ:

4.

Գալոն մի քանի բոսկ մնաց լուռ, ձեռները խաչածե ծալած,
տեղնուահղն արձանացած: Միայն նրա հաստիկ շրթունքների
անդիտակացարար մրմնջացին Արասի խաղի հետեւյալ կոորը:

Պարագատիրոջ Հոդին կհանես,

Համ ել զարդալավարամ կանես.

Առանց թուխսի ճռւտ կհանես,

Թումանիդ՝ մի արասի:⁹⁾

Հետո Գալոն մի խոր, շատ խոր, հսդոց հանեց ու նորից գլու-
խը կախեց:

Եերևին նա յերկար կմնար դառը մտածմունքների մեջ թաղ-
ված, յեթե մոտից անցնող մի դյուզացու քարի որթը չսիրափից-
ներ նրան: Վերջապես Գալոն ուշքի յեկավ և առանց յերկար տա-
տանիելու, վաղեց Կոստանդ աղայի յետեկից:

Աղան գեռ նոր եր մտել բակը և սաստիկ հայհոյում եր ծառ-
ոտներից մելին՝ նրա դանդաղ կոտորթյան համար: Գալոն առանց
վախենալու համարձակ մոտ զնաց, չոքեց նրա առջեւ ու յերեխայի
նման սկսեց հեկեկալ: Կոստանդ աղան նոթերը կիսեց, դիմքը
խոժոռեց և ուղեց յերեսը շուռ տալ, բայց լացողը յերկաւ ձեռքով
ամուր բռնել եր նրա վեշերից:

— Աղան ջան, վոտներդ տաշեմ, զիսովդ պատվինմ, ինձ մի
խոյտառակի, իմ տուն ու տեղու մի ծախի, իմ անմեղ զայտեկինե-
րին դռնե-դուռ մի դցի...

— Վեր կաց, կըրի զվախցու, տառմ եմ, թե չե...

— Ի սեր տառմու, աղան ջան, ոջախոդ եմ ընկել, խղճա ինձ...

— Տե՛ր տառմած, քեզ մեղա... Տնաքանդի տղա, տիար վոչ
քարով պարուզ եմ ովկել քեզ, ելի եսպես յեկել եմ՝ ձեռ ու վոտու
եւ ընկել, ունի լսուր յես հանել, տառմու մեղնն ես դցել ու դնդին
ճշնկանկան վոսեկի յես տարել: առնելը լրավ ա, յես տալը՝ վա՞տ:
Դե տուք յե, ինչո՞ւ չես տալիս հասր:

— Կտա՞մ, աղան ջան, հսրու գերեզմանը միկա, կտամ:

⁹⁾ Տառը ուռւրունն ըստն կոպեկ (ամսական): Պարագի տոկոսների հա-
տին եռու, գոր կազմում է 100.քն 24 ուռւրու տարեկան:

— Դե տուր, ևս բոպեյիս ինձ փող ա հարկավոր... հանիք, —
ասաց տղան ձեռք Գալոյին մեկնելով:

— Ախօր չունեմ, վո՞րտեղից տամ ևս բոպեյիս :

— Ան ջշանհամից, — գուաց աղան, չկարողանազով այլէս
բարկությունը դաղել և, փորձելով վիշը Գալոյի ձեռքից աղա-
տել, — տունդ ծախիք, այդիդ ծախիք, ձիդ ծախիք...

— Վա՛յ զիսիս, — գուրս թօսավ Գալոյի բերնից, յերբ լսեց
աղայի արտասանում վերջին յերկու բառը:

— Անունն են ա, վոր յես փողատերն եմ, իսկ դու՝ պարաքատե-
րը: Ես բոպեյիս իմ գումում մի քոսոտ յարսու յել չկա, իսկ դու թա-
գամփորի վայել քահլան^{*}) ձի յես պահում: Յեթէ դու աղքատ ես,
քո ինչիդ ա հարկավոր հարյուր մանեթանոց ձին:

Գալոն լրու եր:

— Այ վորդի, յես քո լամին եմ ուղում, — հարունակեց աղան
ձայնը մեղմացնելով, — յեթէ ինձ լսես, դու ձիդ կծախօսես, պարտ-
քորդ կլամփիս, հողիդ կազմատես, հետո մի թեթի եժան ձի կառ-
նես, կամաց-կամաց կաշխատես, յերեխեքդ կպահես. յես քո
բարին եմ ուղում, դու ինձ լսիք, վորդի:

Կոստանդ աղան մի քիչ կանդ տամի, վոր նոր պապիրոս վա-
սի. Գալոն կասես պապանձված լիներ:

— Այ, որինակի համար, ինձ ձի յա հարկավոր, — շարունա-
կեց աղան, մի տեսակ սրտացավ յեղանակով, — իսկ դու 120 մա-
նեթ փող ես ողարս, Զոտարդին առուր, վորքան արժողությունն ե
ողարտքից դուրս արի; դեռ մի քանի մանեթ ել ավել հաշվի,
կորած տեղ չի, իսկ մասածի համար ել շատ չեմ նեղի, վոր որն
ունենաս՝ են որը կատա: Իսկ յեթէ կոպտություն անես, ձիդ
չտաս, եւ ել քո բանն ա, միայն իմացած կաց, վոր յես քո քե-
ֆին չեմ մտիկ անի, եղուց-ելոր գլխիդ կոտամ, որենքով ձեռ-
քիցդ կառնեմ:

Գալոն, վոր մինչեւ այդ ուլունս կախ, խոր մտածմունքների
մեջ եր ընկղմված, շանթահար յեղավ, նրա ամբողջ մարմնով սառ-
սուռ անցավ:

«Գլխիդ կատամ, ձեռիցդ կոտումն»՝, — կրկնում եր նա մըս-
քում, — են ել որինքով», բայց մի՞նչեւ նա սուռ չի առաւմ. մի՞նք-
որինքը թույլ կտա, վոր ախտերն ախտորիցը խլեն, չե՞ վոր Զո-
մարդն իմ թե ու թիկունք, իմ հարալ ախտերն ա...

* Բահ ան— ձիերք աղնեկ ցեղերից մեկն եւ

— Հը, Գալոն, ի՞նչ ես տառւմ, — հարցը աղան, — ինձ մի հաստատ պատասխան տուր, յես տոավոտը շուտով դնալու յեմ քաղաք, հազար ու մի գործ ունեմ, թե ձին տալու յե՞ւ ասս, թե չե՞...

Գալոյի թեքված դլուխը փոքր ինչ բարձրացավ, մարած աչքերը բացվեցին և նրա լուռ հայացքն ուղղվեց աղայի մանր ուխորամանկ աշքերին: Այդ միջոցին Գալոն իր հուսահատ դիմքով մարմնացած պաղատանք եր ներկայացնում:

Լուսիթյունը համաձայնության նշան համարելով, կոստանդաղան Գալոյի թեկից քաշեց ու դժվարությամբ վոտքի կանգնեցնելով նրան, ասաց.

— Կեր կաց, վորդի, վեր կաց. յես տեսնում եմ, վոր դու խելոք տղա յես. արի զնանք տուն, ենտեղ կվերջացնենք մեր խասելիքը: — Ենդ աղան շատապով սանդուղքներից վեր բարձրանալով, մտավ մի փոքրիկ սենյակ:

Գալոն ձեռները ծալած, սովերի պես հետևում եր նրան: Մենյակի դռան առջեն նա տրեխները սրբեց և միքանի րոպե կանոն առավ, չհամարձակվելով ներս մտնել. բայց, մերը աղան ներս կանչեց, Գալոն իր չոր տրեխները մեկ ել քսեց պատշպամբի տախտակներին, անհամարձակ քայլերով ներս մտավ ու դռան տակին ցրցվեց:

— Դեհ, Գալոն ջան, ասս տեսնենք, վո՞րքան արժի քո Զոմարդը, — ասաց աղան, ձեռնափայտը լուսամուտի մի անկյունում տաղավորելով ու ինքն ել մի կազ աթոռի վրա նստելով, — քառասուն մանեթ բավակա՞ն ա:

Գալոն նորից ցնցվեց:

— Զոմարդը, — աղա ջան, ծախու չե, — վերջապես խոսեց նա խուլ ձայնով, — նա իմ տունը, իմ յերեխաները պահողն ա, մի խոսքով... նա իմ ախտերն ա, յես չեմ կարող նրանից բաժանվել. աստված ինձ կպատժի, յեթե յես նրան ծախում:

— Հա՛, Հա՛, Հա՛, Հա՛, — լսվեց աղայի կեղծ քրքիջը, վորն ավելի տիրություն, քան թե ուրախություն եր արտահայտում, — ինչ հիմարն ես ելել գու, այ տղա, Հա՛, Հա՛, Հա՛: Ձե՛, վորդի, չե: Աստված միայն պարտքը չտվողին՝ ուրացողին ա պատժում, իսկ պարտանահաչ՝ նամուսով մարդուն, ընդհակառակը, քաղցր աչքով և մտիկ տալիս: Ձե, վորդի, չե, ինչ կանես արա, միայն թե պարտք մի ուրանա, բոլոր ունեցած չունեցածք, մինչեւ անգամ մանր յերեխաներիդ, ծախիր ու պարտք վճարիր, թե չե, ին աշխարհում չես կարող պատասխան տալ, մե՛զք ես, իսկ զն:

Աղասին լուս և պատասխանի յեր սպասում : Լուս եր և Գալոն :

— Զեմ ծախսի , աղա ջան , Զոմարդիս չեմ ծախսի , — ասաց նա վերջապես , — անկարելի բան ա , բանի վոր յես սազ ու կենդանի յեմ , նրա վոտն իմ տանիցը չի կտրվի . նրա գլուխն իմ տան չեմ-քում պիտի թաղովի : Միայն ...

— Հետո՞ :

— Միայն քո պատվի համար քրեհով կտամ , աղա ջան : Ամեն ժամանակ , յերբ վոր սիրտգ ցանկանա , նստիր , բանացրու-թուկ քրեհով՝ զու ու քու աստվածը , կհաշվես ու պարագից կա-մաց-կամաց դուրս կտաս , մինչեւ սմանենք , թե տերն ի՞նչ և ոռ-ջողում :

Կոստոնդ աղան ուրախությամբ համաձայնվեց և մինչեւ իսկ սկսեց դովիլ նրան :

— Ապրիս , վորդիս , այ , հիմա խելոք ես խոսում . յես ել Հո սո-նիրավ չեմ , վոր քեզ նեղացնեմ : Վնաս չունի , վորդի , գիտեմ , լավ ապրանք ա ձեռքդ ընկել ու մի անդամ ել սիրտգ վրան տաքացել ա , չես ուզում ձեռից քողնել : Յես քեզ չեմ մեղադրում : Թող ասա-ծըդ լինի . ամեն անդամ , պետք զալիս , քո ձին կտաս , կնսում ու քրեհը պարտփետ տեղը կհաշվիմ :

— Ուրեմն , աղա ջան , հավատա՞մ , վոր ել գանդատ չես անի . . . խպճա ինձ , վոտներիզ մատազ , իմ նամուսը ջուրը մի քցի , ինձ մի խայտասակի :

— Դու բանիզ , անհող կաց , վորդի . յես անտուված հո չեմ . . . իմ բարձր անունիս , իմ աղայությանս ի՞նչ ա յեկել , վոր իմ թշածու լիզիմ :

Գալոն արտօնությամբ սանկուլքներից ցած իջավ և , համա-րյու վազելով , անցավ լայն բակը : Նոտ այնպես եր շտապում այդ տան պատերից զուրս զալ , վոր կասես այլտեղի մթնոլորտը նրան խեղզում կամ այրում եր : Վերջապես նոտ իբան փողոց զցեց ու այլտեղ միայն իր ամբողջ կրծքով աղաս չունչ . քաշեց : Գալոն այնպես եր՝ ուրախացել , նրա սիրտն այնպես եր թեթեացել , վոր կտունս մի ահապին ջաղացաքար վերցրած մինեյին կրծքից : Ուրախ եր , վորովհետեւ այլիս նամուսը չի վեցնի , չի խայտառակվի , բա-ցի գրանից չի զրկվի իր անման Զոմարդից , իր ջան ու ջիղյար յեղբորից :

Գալոն ուղղակի վազեց տուն , վորպեսի որտի ուրախությունը մատիկների հետ բաժանի : Զին զեռես բակում ախորժակով ծո-մում եր յոնջայի մնացած կառասանքը : Տիրոջ վոտնաձայնը լսե-լուն պիս՝ նա ոլուխը բարձրացրեց , բաշը թափահարեց և ուկեց

37

Արշ. Շահնազարյան. Դյուլգակոն պատկերներ - 3



առաջ գնալ, վոր գիմավորի եր սիրելի ախտորը, բայց սանձը նրան
դսպեց : Գալոն յերկու քայլով մասեցավ ձիւմն, փարվեց նրա շին-
քով և սկսեց պաշողաւոն նրա սիրուն աչքիրը, նախշուն ճակատը :
Գալոյի վորք արջիկը՝ Սաթոն, վորը բակի մի ծայրում մատնե-
րով հողը վորփրում եր, տեսնելով Հորը՝ թողեց կիստա իր զոր-
քը, հողաթաթախ վաղեց նրա մոտ և ինքն ել վոտների ծայրերի
վրա բարձրանալով, սկսեց պաշողչն Զոմարդի կուրծքը : Գալոյի
սիրուը բլեց, կոկորդը սեղմալից, ու արտասունքն աչքերը լուից :
Նա ուղում եր լացել, բայց ամաչեց, մի կերպ իրան զաղեց, բնեց
աղջկա թելից ու հեռացավ ձիւոց :

Նա գնաց ինոշ մոտ, վորը խրճիլի դրան առջև արևում նստած
ճախարակ եր մանում : Գալոն ինքն ել նստեց նրա կողքին և սկսեց
մանրամասնաբար պատմել ամեն ինչ : Սովին, —այդպես եր Գա-
լոյի կնոջ անունը, —շատ ուրախացավ պատմության վերջարանի
լսելով և սկսեց յերկար ու բարակ որհնել ազայի ու նրա վորդիւ-
բանց կյանքը :

5.

Իրիկումը գեռ խավարը նոր եր յերկիրը պատել, յերբ Գալոն
հանդիսաւ սրտով անկողին մտավ ու իսկույն քնեց : Անուշ յերաշ-
ների մեջ եր նա, յերբ զռան թըսթըսիկոցն ականջն ընկալով : Գալոն
անկողինում նստեց, մթության մեջ շոշափելով՝ արխալուղը դասավ
ու վոտարորիկ դուրս յեկավ բակը :

— Ո՞վ ա, — հարցրեց Գալոն, մոտենալով դռանը :

— Յես եմ, —պատաժիանեց ձայնը վորոնցից, —զուռը բաց :

Գալոն ճանաչեց Կոստանդ ազայի ծառայի ձայնը և նրա սիրուը
մի առանձին անախորժ դղոցունքով լցվեց :

— Եհր ըլի, Մադո, —հարցրեց Գալոն, դուռը բանալով, —ի՞նչ
ա պատահել ես կես գիշերին :

— Եհր ա, փառք աստծո, —աղեն ասում ու ձիւն լով էշանց-
քու, վոր ես գիշեր աքլորականչին զնալու յա քաղաք : շատ վուազ
ուրծ ունի :

— Հենց ես գիշեր, —բացականչեց Գալոն շփոթելով :

— Ես գիշեր, աքլորականչին :

— Եդ շելավ, —ասաց Գալոն գլուխը պտուեցնելով :

— Վո՞նց թե շեղավ. աղեն ասում եր, վոր դռւ արդեն խոսք ես
ամիել . Կոստանդ աղի հետ հանա՞ք ես անում, ինչ ա :

Գալոն մնացել եր մոլորված կանգնած : Ինքն ել, ձիւ հետ
ոլիսի դնար . Զոմարդին ամանաթ տալ չեր կարող, իսկ

քաղաք դնալովան տոնվազն մի շարաթ կտեսը, այն ինչ յերեք
որից հետա նա իր հանգուցյալ հոր քառասունքը պիտի կատարել
տուր, նա տուածուց արլեն ամեն պատրաստություն տեսնել եր,
այնպես վոր ինքը մուչ մի կերպ չեր կարող մինչև ավագ հինգշար-
թի որը դյուզից հեռանալ, իսկ Զօմարդին ոտարի խնամքին հանձ-
նելը, ամանաթ տուլը հեշտ չեր. այդպիսի բան Գալոն իր կյանքում
յիրեք արած չեր: Բայց կոստանդ աղջայի հրամանը չկատարե-
մը, նրա խոսք կոտրելն ել հեշտ չեր: Գալոն վախենում եր:

— Հը՞ ի՞նչ ես ասում, — հարցրեց Մաղոն:

— Մի բազի սպասիր, տեսնեմ, — ասաց Գալոն, ու ինքն շտա-
պով տուն մատակ, վոր կնոջ հետ խորհրդակցի: Թեև նա, ընդհան-
րապես, ինոչ կարծիքին նշանակություն չեր տալիս, բայց այս
անդամ դժվար դրությունից աղատավելու համար, փորձեց դիմել
ամուսնու խորհրդին:

Սովին ֆնաթաթախ միքանի անդամ ծնկներին խփեց ու վըշ-
վլցաց, ինքն ել պարզապես չիմանալով, թե ինչ փորձանք ե պա-
տահել, իսկ յերբ Գալոն պատմեց բանի եյությունն ու նրանից
խորհուրդ հարցրեց, Սովին պատասխանեց.

— Ինչ ասեմ, այ մարդ, ինձանից ի՞նչ ես հարցնում, բախ-
տավոր դիմիս, յես ենքան խելք, ենքան հասկացողություն ունեն-
ցա, վոր կարգանամ տղամարդին խելք զնել, բան սովորեցնել:
Ի՞նչ ասեմ, այ մարդ, ելի դու մի ճար դոփիր:

— Ախք ի՞նչ անեմ, այ կնիկ, կլինի՞, վոր հորս քառասունքը
կատարել չտամ:

— Վո՞նց կլինի. շա՞տ բան ես արել ողորմածիկ յերախտի-
քի տակից գուրս գալու համար:

— Բա ի՞նչ անեմ, ձիս ոտարի ձեռը ուսմո՞ւ, աչքաթող անե՞մ . . .
Սովին միայն ուսերը վեց քաշեց, վորով ուղում եր ասել,
թե գու իր խելքի բանը չի:

— Հը՞ ի՞նչ ես պատասխանում, ի՞նչ վճռեցիր, — հարցրեց
Մաղոն, յերբ Գալոն խրճիթի դոնից դուրս յեկավ:

— Յես ի՞նչ դիտեմ, — կիսամայն պատասխանեց Գալոն:

— Վո՞նց թե՝ զդիտես. կամ հա, կամ չե, ինձ մի պատաս-
խան տուր դնամ ելի:

— Լավ ես ասում, բայց հեշտ չի: Յեկող հինգշարթի որը ու-
ղարմած հոգի հորս քառասունքը պիտի կատարել տամ. ես շաբաթ
չեմ կարող վոստ տանից դուրս դնել:

— Քեզ չեն ասում տանից դուրս արի, աղեն ձիդ ե ուղում,
դու պիտի չես:

— Զի՞ս, հենց գիտես ապրանքն ամանաթ տալը Հեշտ ա: Չեւ-
լուել, վոր առում են՝ առղբանքն եթու՝ տերը հետեւ, վորդին եթու՝
հերը հետք:

— Ասել կուզի, չե՞ս տալիս:

— Ե՞նչ առեմ, ախողիր, յեթե իմ կամքիս լիներ, չեցի տա . . .

— Ուրիմն զիտես, վոր քո կամքից չի կախված: Եհ, ողոքի
հորդ, ել խոսելն ամփելորդ ա:

Գալոն լուռ եր և սպավորի պես տիսուր:

— Դեհ, յս զնում Ֆմ, Գալոն, զու ել ձիուդ կշատացըսւ, վոր
լուսադեմին զամ տանեմ:

— Արի, ի՞նչ անեմ,—ակամա մրժնջաց Գալոն, ապա կրկին
հոգոց քաշեց ու ներս մտավ:

6.

Զառկի չարաթ որն արգեն արգեն մերեմեր եր, յերբ Կոստանդ-
աշան քաղաքից վերադառնալով, հասել եր ճանապարհի ամենա-
վլանդավոր ձորերից մեկին: Բայտ յերեւոյթին, ծիստուն ամեն-
ջանք զործ եր զրել, վոր կարողանա որ ցերեկով անցնել այդ յեր-
իյուղալի տեղից: Զամարզը, վորը մինչև այդ իր սազրու վրա չեր-
փորձել անգամ ճիշտուի ապդեցությունը, այժմ զալարվում եր
նստողի մտրակի ուժը հարվածներից և ամբազչ մարմնով քայլ-
ու քայլների մեջ կորած, աչքերն արյունակալած, բոլոր թափով
ուղանում եր ձորի քարքարոս ու զատկայր ճանապարհով: Կոս-
տանդ ազայի սիրար յերկուովց սաստիկ թրթում եր. նա ճախ-
ճեռով ամուռ բոնել եր ձիու սանձը, խեկ աշով, մերթ դրանի վաս-
կու տուղրան եր ամբացնում, մերթ նրա մոտ կախված ատրանա-
կի փղոսկը լոթն եր սեղմում. և ատամները կրծտացնելով,
ովանսում եր քարափների յետեւ թաղնված յերեակայական ավա-
գակներին:

Վերջապես նա ձորից զուրս յեկայի և նրա սրտի թրթուցը
վուքը ինչ մեղմացավ: Մնացած ճանապարհն արգեն անվանանդ եր:
«Եհ, վասոք ասաուծո», անցավ ազայի մտքով, և նու ձեռով չո-
յեց իրծքի ճախ մասը, վորանդ ուղիղ սրափ վրա կարված զաղա-
նի գրանում պահպած եր թղթաղբամների հաստ կապոցը: Մրա-
րակի հարվածները միքանի բարեկ զաղարեցին և հոգնած Զոմարդը
միուր առ վոքը քայլերը մեղմացընց:

Այդ ժամանակ ազայի ականջին հասավ մոտակա կիսալիքը
վանքի զանէերի զողանջոցը, վորը, կասես խղճայի ձայնով վող-

բում լիներ այդ հսկա ավերակի վաղեմի ձռխությունը : Կոստանդ աղայի սրապում մի անսպասելի ցանկություն առաջացավ . նա փափառ զգաց այդ աղիդ իրիկունը ժամ առաջ տանը զանվել և իր սիրելիների հետ միասին զատկական ընթրիքը վայելել : Աղան թամրի մեջ ուզգվեց , վոտներն ասպանդակներում ամրացրեց և ձիռ սանձը թափահարեց . միենայն ժամանակ մտրակն ողի մեջ վժժաց և սաստիկ շպացոցվ զարնվելով ձիռ փորատակին՝ կրծկրծեցնազ ցավ պատճառեց նրան : Խեղձ անասունը , վորի հետո դեսես չեր կարգել , անսպասելի հարգածից ծլունդ յեզավ և վերջին ուժերը հավաքելով սկսեց վաղել , բայց վոչ յերկար : Զոմարդի վաստակած վատները չեճին ուղում հնապանդվել նրա կամքին . և մոքքը առ փոքր զանդապեցնում ելին քայլերը : Մտրակը նորից ձնուում եր և սաստիկ շատաչյունով հարգածուում ձիռն . մզկտացնազ հարգածներից ձին պոչը պտանցնում եր , զլուխը թափահարում , փնչացնում : Աղան միքիչ ել իրան զսպեց և թույլ տվեց , վոր յերկու բողե ձին իր կամքավ գնա : Ուժասպառ անասունը զնաց , գնաց ու կանգնեց : Այդ ժամանակ աղան այլեւ չկարողացամի բարկությունը զսպել . նա առաջ մտրակը և սկսեց ջարդել ձիռն , սարսափելի հիշոցներ թափելով նրա տիրոջ զլիսին : Զին իր սովորական քայլերն ել չեր արագացնում . և , կասես , չեր ել զդում մտրակի պատճառած սոսկալի ցավը :

Արգեն մտիթը զետինը կոմիել եր . ընդամենը միայն յերկու վերսա եր մնուում մինչեւ տուն հատնելը : Հարկավոր եր բարձրանալ առջեկ դարի զաղամիլ , վոր հայրենի դյուոզի ճրազները յերեային : Կոռանդ աղան յերնակայուում եր , թե ինչորես հիմա իրանց տանը բոլորն անհամբեր իրան են սպառում և սաստիկ փափառում եր , վորքան կարելի յե չուա հատնել : Բայց Զոմարդը չափազանց զանդապ եր չարժվում : Աղան առաջվա պես անդադար մտրակում եր ձիռն և ասիրական սրածայր տափանդակներով այնպես եր խփում խեղձ կենդանու փորին , վոր քիչ եր մնուում կաշին ծակեր : Դարի ստորոտից մինչեւ կեսը բարձրանալով , ձին առաջին անդամ ծանը տնբաց ու տեղն ու տեղը կանդնեց : Նստողը մերթ մտրակի ուժով , մերթ սապանդակի հարվածներով , և մերթ գոռում-զոչյունով փորձում եր կոտրել ձիռ համառությունը , բայց անհաջող : Վերջապես աղան չըլունքները կրծոտելով իջավ ձիռւց և սկսեց անողոքարար հարգածել Զոմարդի գլխին , առանց աչք ու ականջ վարոչներու : Մտրակի զալող հարվածներից մեկը կզավ ձիռ ձախ աչքին , վորից սկսեցին զլուալով ցած հսկել պարզ արտասունքի խոչոր կաթիլները : Յերբ աղայի ձեռը հողնեց , նա նորից նստեց

ձիու վրա ու քչեց : Զոմարդը մեծ զժվարությամբ բարձրացար դարի գլուխիր . այսահեղ յերկրորդ անգամ ծանր տնիքաց ու ելեկանդ առաջ : Կոստանդ աղան զայրութիւնից փրփրեց և այս անգամ առանց ձիուց իշնելու , սկսեց իր բալոր ուժով մտրակի հարվածներ թափել թշվառ կենդանու վոստին ու զլսին , աչք ու ականջին : Զոմարդի աչքերից կրակ եր թափուում , նա շմինքը ծուեց , բերանը լայն բացեց , տեղն ու տեղը միքանի անգամ պառույտ զործեց , ճրբաց , և հանկարծ , անստանիլի արագությամբ սկսեց վաղել քարքարու ճանապարհով զարի գլխից դեսի ցած . նա սրանում եր բոլոր թափով՝ առանց առջեք տեսնելու , նա հարկանում եր , վոր նստողը պահանջում եւ վագել եւ իր ուժերի վերջին մնացորդները զործ եր ընում , վրապեսվի նրա կամքը կատարի ու զժոխային հարվածներից խռուափի :

Ահա և զյուղի ճրապները , ահա կոստանդ աղայի կարծիք սպաշտղամբը , ահա և գերեզմանապունը , վորի մոստից անցնելին՝ աղան մի տեսակ ճնշող յերկյուղ զզաց ու նրա մարմինը ամբողջապես միշտաքաղկեց : Կոստանդ աղան անընդհատ առողանդակում եր ճնուն և մտրակն ողի մեջ ճոճեցնում , իսկ Զոմարդը վաղում եր , վաղում բոլոր ուժով և արդեն իշնում եր զյուղի վրա , յերբ հանկարծ մի սասկալի գրմբոց լսվեց , վորին հաջորդեց նստողի հուսահատ քամանը : Զոմարդը փոված եր յերեսի վրա . . . Ահա մեղ անսառոնը , բոլորովին սպասուելով իր վերջին ուժերը , հանկարծ դերեղմանների կողքին չոքերի վրա վայր ընկալ ու նրա վլուխը սաստիկ գարնիւց ճանապարհի սուր քարերին : Խեղճ կենդանին մի բոսկ չշմած գրության մեջ մնալուց հետո , մեկ եւ աչքերը լայն բացեց , մինքը բարձրացրեց և զլուխը զետնին սյուն տալով՝ իրան թափահարեց , փորձեց նորից վոտի յելնել , բայց չկարողացավ : Նա վերջին անգամ ծանր հոգոց քաշեց ու կամաց կողքի վրա պառկեց : Տաք արյունը զլգլալով հոսում եր խեղճի ջարշմած քիթ ու բերնից :

Կոստանդ աղան այնքան ճարպիկ գտնվեց , վոր կարողացավ ժամանակին ձիուց ցած թոչել և իր զլուխը վերահսա փորձանքից աղասել :

Այժմ նա անսահման զայրությով լցված՝ կանդնած եր ձիու կողքին և չգիտեր , թե ինչ անի : Նա առաջ փորձեց մտրակի ուշ ժով ձիուն վլուքի կանգնեցնել , կամ զոռում - զոչյունով նրան . վախեցնել , բայց յերբ տեսավ , թե վորքան քիչ եւ աղղում այլ բռ-

լուրը Զոմարդի վրա, կամացուկ արձակեց ճիռու թարքից կապած ծանր խուրջինը, գցեց ուսը և ճիռու տիրոջ հասցեյին սարսափելի հայույանքներ ուղղելով՝ անքալով դիմեց զեալի տուն։

7.

Թաթախման Նիբրական իրիկունը զվարթ տրամադրություն և սաեղծել զյուղական խաղաղ մթնոլորտում։ Ամենն տեղից քաղցր խոսքեր, ուրախության աղաղակներ եյին լավում, ամեն յերդից քաղցրահամ կերակուրների անուշահօստության եր բուրում։ Ուրախ չեր միայն Ջրակնունց Դալսիկ անշուք խրճիթը կառի կարմիր զատիկը խոռոված լիներ այդ տանից։ Մալժլուղած ու սեացում թիթեղյա փոքրիկ ճրադր վախովիսելով պազել եր տան ոյունին ամբացրած ճրագթմի վրա և իր բաց կարմրազույն լեղ վայ մեղմ լույս եր սփուռմ խրճիթում տիրող անհրապույր մթության մեջ, իսկ յերկայնիկ լերի ծայրեց թանձր ծխի բարսկ ծորը վաղորմուր պատույաներով դեպի յերդիկն եր բարձրանում։

Արձիթի մթուղած ու ցածրում բորբոսնած պատերից մեկն մոռ փուած հին փալասի վրա բացված եր մի կարկատած սփուոց, վորի վրա հացի կուրբատնքների հետ միասին խառնիխուռուք թափթափած եյին կողակի փշեր, ձվի կճեպներ, չումի փշրանք, բրնձի հատիկներ և այլն։ իսկ մեջոնելում անբավական կանոնած եր հաբեանի տանից բերած մածնի զատարկ քերեղանը, վորը յերեխանները խնամքով լիզել եյին։ Ընթրիքը վերջացած եր։ Դալոյի կինը՝ Սոփին, ծալսապատիկ նատել եր սփուոցի կողքին և պողն եր դրել վոքրիկ Գամփոյին, վորը՝ մոր ծիծը բերանին բռնած՝ մշմշույզ քննել եր։ Իսկ մյուս յերկու յերեխանները՝ քույր ու յեղայր, խաղացնում եյին իրանց առնանների կարմիր ձիերը։

Գալոն տանը չեր։ Այն սրից, յերբ Զոմարդը տանից դուրս եր յեկել, Գալոն շշմածի նման եր, նա վոչ կորպին ուսում եր, վոչ խմում և վոչ ել խոսել ուղում։ Խեղճը լուսաբացին վեր եր կինում, զնում այզին, վոր աշխատի, բայց աշխատանքն առաջ չեր զնում, վորովհետեւ նրա ուշն ու միտքն ամբողջապես Զոմարդի վրա յեր կենարոնացած։ Գալոն նստում եր այդու թմրի վրա, զլուխը ջուխուննեների մեջ առնում ու մտածում։ գտեսնես հիմա ի՞նչ է անուշ ախպեր Զոմարդը. ուրախ են նա թե տիսուր, կո՞ւշտ և թե սոված. տեսնես վո՞րտեղ են նա ես բոպեյիս, արդյոք յե՞րը կդա...։ Բայց շատ կարելի յե նա յեկել և արդեն ու հիմտ տանը կանոնած ինձ ե-

սպասում . . . և Գալոն շտապում եր դեպի տուն , բայց Զոմարդը չկար ու չկար :

Այն ժամանակ , յերբ Սովին ու յերեխաները բոլորվել ենին դատկական Համեստ սեղանի շուրջը , Գալոն մի դուրսւմ առնելով բարձրացել եր կտուրը և աչքերը բաղաքից յեկող ճանապարհին ուղղած՝ ազոտ լույսում իր աննման Զոմարդին եր մորունում :

— Գալո՞ , ա՞յ Գալո , — լովեց բակի գոնից Մաղոյի զիլ ճայնը :

— Ի՞նչ կա , Ամազոն չան , Զոմարդո յեկա՞վ , — շտապով հարցը և Գալոն :

— Աղեն ասում ո՞ Զոմարդը հիվանդացել՝ զերեզմանատան կշտին՝ ճամբի վրա վեր ա ընկել . զնա ձիուդ տիրութուն արտ , — ասաց Մաղոն ու արագ-արագ հեռացավ :

Անսպասելի գումար քիչ մնաց Գալոյին կաթվածահար աներ : Նրա կուռն ու ճուռը թուլացան , աչքերը մթնեցին , սիրտը սետ-ցավ ու կես բոպեյի չափ նա մնաց անշարժ կանգնած . բայց հետո , հանկարծ զլուխը բարձրացրեց , աչքերն ու ճակատը շփեց և քամու արագությամբ փայտե սանդուղքներով ցոծ իջավ :

Գյուղի փողոցները դատարկ եյին . Գալոն կեռիկ-մեռիկ փողոցներով վաղում եր դեպի զերեզմանատան : Կոստանդ աղայի տան մոտից անցնելիս նա զզվանքով լսեց վաշխառույի խուզում ճայնը , վոր մի առանձին վողեռորությամբ պարսկական «շիքյաստի» եր յեղանակում :

Յերկու բոպեյից հետո Գալոն զերեզմանատան լսնջով բարձրանում եր դեպի վերև , նա աչքերը չուել եր , տեսողությունը լսրել և ուշի-ուշով իր շուրջը զննելով , լուսնյակի ազոտ լույսում մի բան եր վորոնում : Ահա նա տեսավ հեռվում փոքրիկ մատուի դեմ ու դեմ մի ինչվոր բան կարմրին և տալիս : «Ախ աստված , չլինի թե Զոմարդո ե՞ , մտածեց Գալոն ու քայլերն ավելի արագացրեց : Այս , զա Զոմարդն եր , վոր վոտները յերկար մեկնել եր , շլինքը ծուել ու զլուխը մի տափակ քարի վրա դրել : Սպիտակ կրաքարը , վորի վրա ընկած եր ձիու սիրուն զլուխը , ներկվել եր մուգ կարմիր գույնով : Կենդանու բերանից բղիսած թանձր արտօնը կեսպիկ-մեռիկ առվակներով քարի վրայից իջել եր դեպի ցած և ճանապարհի մեջտեղում լճանաղով , ըերգացել :

— Զոմարդ չան , ախալե՞ր ջան , — զոռաց Գալոն դեռ հիու մոտ չհասած :

Զին տիրոջ ճայնն իսկույն ճանաչեց : Նա իր կիսախուփի աչքերը լայն բացեց , շլինքը շարժեց , զլուխը մի փոքր բարձրացրեց ու վոտքերը բափահարեց . նա ուզեց վոտքի կանգնել , բայց ուժ

շկար . . . նրա շլինքը թուլացավ և ծանրացած դլուխը դրխելով
հորից սպիտակ կրաքարի վրա ընկավ : Զին խորը տնքաց ու տչ-
քերը խփեց : Գալոն ընկավ ձիու վրա և ամուր դրկեց նրա արյու-
նաթաթախ դլուխը :

— Ա՞խ , Զոմարդ ջան , ինչո՞ւ դու իմ մեջքը կոտրեցիր , իմ
յերեխաների շլինքը թեքեցիր . — մըմնջում եք Գալոն և արտասունքի
խոչոր կաթիները թրջում եյին խեղճ կենդանու ճակատը :

Գյուղի կողմից լովում եր հարբածների խառնիճաղանձ դըժ-
գրժոցը , վորոնց միջից ալարդ հառնում եր Գալոյի ականջին կոս-
տանդ աղայի գարշելի ձայնի անդուրեկան կլկոցը :

— Տե՛ր արգարադատ աստված , դու անիրավ մաշդի դիվանն
ունես , — աղաղակեց Գալոն՝ արտասվալի աչքերը դեպի յերկնե-
րարձրացնելով ու նորից իր գառնազին վողը շարունակեց :

Ախաղեր Զոմարդի գողացող շրթունքներն արդ վայրկյանին մեղ-
մությամբ շարժվելով , կասես մի բան մըմնջացին . արդյո՞ք խըդ-
հուկ անասունն ել անիծում եր մարդկային անիրավությունը , թե
իր հոգատար տիրոջը մահի դռնից «մնաս բարե» եր չչնջում :

ՎԱՐՈՍԻ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԸ

1

Մայիսյան առավոտ եր . որը շաբաթ : Բարիլույսը դեռ նոր ելքացվել : Գիշերվա թարմացուցիչ անձրեկց հետո , յերկինքը մուգը վերպիւլ՝ բաց կապույտ զույն եր ստացել : Թիեւ կողք դյուզին դեռ արե չեր դիսել , բայց Յաքովով լեռան գագաթի արևելյան մասն արդեն զարդարվել եր մի փունջ վոսկեփայլ ճառագայթներով :

Գյուղը վատի վրա յեր . յերիտասարդ հարսներն ու դեռահաս աղջիկները կմերն ուսած՝ ջուր եյխն կրում . տանտիկինը վիճաչերը վեր քաշած՝ փիսիփալով կովն եր կթում , իսկ հողագործն իր շուխտակ յեղների հետ զաշտ եր շտապում՝ նախորդ որվա կիրատ աշխատանքը վերջացնելու :

Այդ ժամանակ Եշակչոնց կենցն պաշարը մեջքին կապած ու սրակուց մուրնը դստիկն խրած՝ մտեցավ աղահանքի մուտքին : Նա յել ցավի ու պակասության տեր եր : Նա դնում եր աշխատելու , առ կտրելու :

Հանդի մուտքի առջև Խեցն կանգ առավ , յերեսը դյուզի կողմանց , միքը կրծքով ներս ծծեց անուշահասա թարմ ողը և ապա թեթև հոգոց հանելով , իջալ դեսպի աղահանք :

Ստորերկբյա ճանապարհը մութն եր , խոնավ ու լցված թանձր զարշահոտությամբ . վորքան Խեցն առաջանում եր , այնքան ել սաստկանում եր տիրող մթությունը՝ այնպես վոր , նա անակնկալ փորձությունից աղատ մնալու համար , սահմանի դանդաղեցնել քայլվածքն ու լարել իր բոլոր ուշադրությունը :

Խեցն հինգ բուպեյի չափ ճանապարհորդելով գետնափոք ծուռ ու մուռ անցքերում , վերջապես կարողացավ հասնել աշխատանքի տեղը : Նա հանեց զրաբանից լուցկին , քսեց և գտնելով վորքիկ թիթեղյա ճրագը , վորը գրաւծ եց պատաժակում , վառեց նրան : Ակացած ճրագի վողորմելի լույսն իր բոլոր ուժով սկսեց կռվել շրջան պատող խավարի հաստ շերտերի հետ : Բայց անողուա : Աև իսպարի առաջին շերտերը միքանի քայլ յետ-յետ զնացին և այն-

տեղ կիավելով մյուս շերտերի վրա, ավելի թանձրացրին նրանց
մթությանը :

Անչոն մուրճը դուռկից հանեց, պաշարի կապոցը գետնին դրեց,
որու տեր առավածք կանչեց ու դործն սկսեց :

Մուրճի համաշափ հարվածներն ուզդվում եյին հանքի առ-
ոտառաղբն, վրուեղից կեչոն ողիտի կարեր քառանկյունի աղի
կոտրներ և կոտրած աղաքարերի ծանրության համեմատ վարձա-
տրության պիտի ստանար հանքի կապնապուցից : Շատ աղ կըս-
ուղը՝ շատ փող կսանար, քէչ կարսով՝ քիչ : Խեչոյի աշխատան-
քը ծանր եր ու հողնեցուցիչ : Բայց ի՞նչ արած, ալյուրի փետակը
մի շարաթ առաջ եր դաստարկիվել, ցորեն առնելու փող չկար, յե-
րեխաները վոտարորիկ ու կիսամերկ եյին, փարա չկար նրանց
մարմինը ծածկելու. բաժբակի արար պիտի ցանվեր, փող չկար
սերմ առնելու...

Խեչոն անհող մարդկանցից չեր, վրունք եղուցվա մասին չեն
մտածում : Նա վաղուց դիմեր, վոր այս կարիքներն իր առաջն են
զալու, այդ պատճառով մեծ պատի հենց առաջին շարթից մուրճն
ուսին զրեց ու աղահանքը զիմնեց : Յերկու ամիս ու իհո նա շարու-
նակ աշխատել եր և մինչև այդ որը զեռ վոչ մի կողեկ չեր ստա-
ցել իր վարձի Հաշվին. նա մտադիր եր ամբողջ աշխատավարձը
միանդամց ստանալ, վոր կարողանա, իր բազմաթիվ պակասու-
թյունները հուզալ :

Խեչոյի մուրճն անդադար կտցահարում եր աղաժայոի հակա-
յական կուրծքը, չորս կողմը ցանելով աղի մանրիկ կտորներ ու
թեթե փոշի : Մուրճի հարվածների ձայնը, զարնվելով աղահանքի
վիթխարի սյուներին, խուլ արձադանցով վրդովում եր ահուելի
մթության մեջ մրափող լուսիցունը : Այդ բովեյին աղահանքը
նմանում եր մի հասպարյան մուալ զամբարանի, վորի անհյուրն-
կալ կամարների ստել հանդչող բարձաթիվ դժբախտներից մեկը
կասես Հարշտագով վոտի յեր կանգնել ու հուսահատությամբ չան-
դրուելով կարծրաքար պատերը, աշխատում եր մի անցք բանալ,
վոր կարողանա աղատվել այդ զարհուրելի բանտից : Յեկ Խեչոն
ուրախ եր, վոր այդ անցքը բացվելու մոտ ե : Իրիկունը նա կստա-
նա յերկու և կիս ամսվա ընթացքում թափած քրտինքի վարձը,
մոտ քառասուն ուրբի, և միաժամանակ կազառվի աղահանքի խա-
վարից, մինչև վոր անողոք կարիքն ելի կստիպի նրան նորից իր
վոտով զիմել այդ զարչելի զերեղմանը :

Խեչոյի գործն այսոր սովորականից աջող եր գնում և կտրված-
աղաքարերը մեկը մյուսի յետեկից առաստաղից զետին եյին պլոր-

շիում : Վեց քար կտրելուց հետո՝ նու մուրճը զետնին զրեց և աղու-
քարերից մեկի վրա նստեց, վոր համ մի քիչ հանգստություն տա-
իր վաստակած անդամներին, համ ել քաղցած ստամբուլ մի բա-
նով խարի : Ազի փոշիով ծածկված քրտինքը սրբելուց հետո, նա
բաց արեց պաշտրի կապոցը : Ճաշի սեղանը չափազանց պարզ եր՝
յերկու հատ թուլպիկ բոքոն ու մի կապուկ դառը բոխի . ահա այն
բոլորը, ինչով պիտի վերականգներ Խեջոն այլ գժոխային մթնո-
լորտում իր սպասած ուժերը : Թեե շտափով, բայց լավ ախորժա-
կով, կերավ Խեջոն դառը բոխին, վրայից խմեց մոտը զրված պուր-
պուլակի⁹) սառը ջուրը, հետո վոտի կանգնեց ու կրկնապատճի՛
յեռանդով շարունակեց իր աշխատանքը :

Յերբ վոր կտրված աղաքարերի թիվը տասներկուուի հասավ, և
Խեջոն իմացավ, վոր կեսորն անց պիտի լինի . վեր զրեց մուրճն
ու սկսեց շալակով աղահանքից դուրս կրել կոտորած քարերն ու
դարսել հանքի հրապարակում իրան պատկանող կիտուկի վրա :
Խեջոն շալակում եր յերեք-չորս փթանոց աղաքարերը և մթու-
թյան մեջ խարիսխնելով բարձրանում եր անգունդից գեպի վեր :
Նրա կարճ ու կլոր մարմինը ճռճում եր բեսսի ծանրության տակ .
բրոմինի խոչոր կաթիլները բղիում եյին արեւադառ ճակատից ու
բարալիկ առվակներ կազմելով՝ ցած եյին զլորվում նրա յերեսի
վրայով :

Վերջին աղաքարը դուրս բերելուց հետո, Խեջոն կանգնեց
Հանքի մուտքի առջեւ, արխարուղի թեռվ սրբեց ճակատի քրտինքն
ու խոր հոգոց Հանելով՝ փառք տվեց աստծուն : Այդ բարձր զիրքից
նա նայում եր զիմացում բացված դարնանային հրաշալի տեսարար-
նին և հոգու խորքում զմայլվում :

Մինչև իրեկուն Խեջոն կարողացավ բոլոր աղը կշռել, հանձ-
նել աղահանքի կառավարչին և իր յերկու ու կես ամսվա աշխա-
տանքի վարձը լիովին ստանալ : Վաղուց եր, վոր Խեջոն արդպիսի
դումարի յերես չեր տեսել : Ստացած փողերը զբանը զնելով,
Խեջոն մուրճն ուսն առավ և ուրախ-ուրախ զիմեց գեպի տռան :

Բայց նա զեռ հինգ քայլ ել չեր անցել, յեր յեսեփց լոեց ընկեր
բանվորներից մեկի ձայնը, վոր «Խեջո» եր կանչում :

Դա մի հաղթանդամ ու հսկա մարդ եր, Մկո անունով, վորի
արտաքինը պարզ ցույց եր տալիս, վոր նա կարող ե տասը մարդու
շափ աշխատել ու քսանի չափ . . . խմել : Յեզ խելապես, նա շատ
լավ բանվոր եր, լավ աշխատող : Մկոն չեր իմանում թե ի՞նչ է

⁹) Պուլպուլակ—նեղ բերանով փոքրիկ կափե ջըման:

Հաղնածություն ասած բանը և շնորհիվ իր յերկաթյա բաղակների աժդահական ուժի , միշտ ընկերներից յերկու-յերեք անգամ ավելի յիր որագարձ ստանում : Այս ի՞նչ կատես , վոր նրա ահազին աշխատանքից վոչ մի կողեկ յիտ չեր ընկնում , մի ուե վող անգամ նրա ընտանիքի պիտույքներին չեր դործադրվում : Մկոն սովորաբար աժդահական ուժում իր աշխատանքը մի գեշներում գիննվաճառին եր հանձնում ու հետեւյալ առավուն ելի ազահանք զնում , վոր մի շարաթ տանջվի ու չարչարդի՝ միայն մի քանի ժամ զվարձանալու հույսով :

Մկոն վազաց աչքաթող եր արել իր ընտանիքը , վոր այժմ շատ թշվաս ու անսպնական գրության մեջ եր : Երա կինն ու չորս աշխիկներն ամստոն իրանց աշխատանքով ելին ապրում , իսկ ձմեռը՝ բարի մարդկանց տոմած վողորմությունով : Թեև նրա խկական անունը Մկրտիչ եր , բայց գյուղացիք նրան կարաս-Մկո ելին անվանում , կամ ուղղակի կարաս : Այս «պատվարեր» տիտղոսը նա վաստակել եր շնորհիվ իր խմելու ընդունակության և նա , իհարկե , պարծենում եր այդ ախտազսով :

Կարասը սովորություն ուներ ամեն շարաթ գիշեր խմելու : Այդ որը շարաթ եր , նա յեկել եր մի շարաթվա վարձն ստանալու , մինչեւ անգամ ընկերներից մեկին ել քեֆի յեր հրավիրել . բայց հանկարծ նրան հայտնեցին , վոր այդ շարաթվա վարձը յերեք որ տատչ ային են կնոջը , վոր ցորեն առնի սոված յերեխաների համար : Այդ անսպասելի զույժը շատ զարմացրեց , շատ ել զայրացրեց Մկոյին : Առաջ , նա ուզեց զոռում-զոյզում բարձրացնել , թե ի՞նչ իրավունքով են իր վարձը կարում , կամ ինչո՞ւ յե իր աշխատած վորդն առանց իր համաձայնության ուրիշի ձեռքը տալիս , բայց վախից կատանցավ կառավարչի բարկությանց ու սկսեց միայն իր անզգամ կնկան և , այնուևնեաւ նա իր ուշունցներն ուղղում եր կնոջ հասցեյին , տամամները կրնացնում եր ու բառնցքները պինդ սկզբում : այդ բաղեյին նա պատրաստ եր պատառությունը կնոջը , յեթե միայն ձեռն ընկներ նա :

Շուտով Մկոյի բարկությունն անցավ , տեղի տալով խորմածմանընթերի : Այսոր նրա քեֆի որն եր , նա պիտի անպատճառ խմեր , առանց զրան զիմանալ չեր կարող : Նա մի ամբողջ շարաթը բարկությունը կաթիլ չեց առել , հույս ունենալով , ին այսոր յաջն որված միանդամելոց պիտի խմել . նրա կոկորզը ցամաքել եր , չորացել և սիրտն այրվում եր ծարտովից : Մկոն մնացել եր մտածունք-

ների մեջ ընկղմված՝ պատի տակ կանգնած : Նա մտքում վորոնում էր մեկին, վորի հաշվով կարողանար իր ցամաքած կոկորդն այդ դիշեր թրչել : Խեցոյին տեսնելուն ուստի, կարասի տիրությունը վայրկենապես անհետացավ . նրա կիսված հոնքերը յետ զնացին և ուրախությունը փայլեց նրա կնճռուաված գեմքի վրա :

— Աղա, Խեցո, ո՞ւր ես ծլիմում ետենց սուս ու փուս, — ուռաց Մկոն, — ջերդ մի քանի կոռքեկ մտավ, ել չե՞ս ուզում մարդի յերեսի մտիկ անես :

— Այ գլխամեռ, բա մենք ուկի եղ փողերիդ համը չպիտի տեսնենք, թե՞ վախնուում ես, վոր քա տված մի թաս զինին մեր վրա պարտք կմնա . սուս չի տած, «բոշան փաշա չի դառնա», ախր Եշակը լոռոն ես, բա ի՞նչ պիտի լինես, — վրա բերեց մի ուրիշ տարիեալոր բանվոր, վորին Մկոն քեփի յեր Հրամիլերել :

Դա Քաջալնց Սաքոն եր, մոտ հիսունհինդ տարեկան մի կարնահասակ ու զարդ մարդ, վորի մաղերը ներմակել եյին ողաճանքում : Սաքոն խիկապես խմիչքնեն չեր սիրում և խմածը մարսել ել չեր կարողանում, բայց և այնպես չատ եր խմում . խմում եր, վորովհետեւ խմում եյին ուրիշները, բոլոր դյուդուցիք, վորովհետեւ խմելը ողաճարդություն եր համարվում : Բայց դրանից, Սաքոն մի առանձին սեր եր տածում գեսպի թղթախաղն ու կորվը . իսկ առանց խմելու վոչ խաղան և սաղում և վոչ կովեյր : Սաքոն հինդ հատ հատած՝ ամուսնացած տղերք ունեն, վորոնք քուրին ել տաս-տասներկու տարեկան հասակում վախսել եյին իրենց հոր մոտից, չկարողանալով տանել նրա քացիների ու բառնցքների հարվածները : Այդ մարդն այնքան անտանելի յեր իր անվարժեցող ու կովարաց բնավորությունը, վոր տղաներից վոչ մեկը չեր համաձայնվում նրան պահել ու կերպակը ծերության որերում : Այդ եր պատճառը, վոր Սաքոն անտեր-անտիբական եր մնացել :

Ընկերների ձայնը լսնելով, Խեցոն հետ նայեց ու կանգ առավ : Նա զիտեր, վոր ընդունված ուզուրության համաձայն ամեն մի բանվոր, վարձն ստանալիս, սրարտալոր եր չֆրեշ, այսինքն՝ դինով հյուրասիրնել իր ընկերներին, վորոնցից վոչ մեկը մյուսի պարտքի տակ չեր ուղղում մնալ : Պատվելու կողմից Մկոն ամենից առատ, ամենից ձեռնարաց եր : Շարաթ իրիկոնները, վարձն ստանալուն պիս, նա հալագում եր ընկերներից մի քանիսին ու տանում դինետուն : Խեցոն ինքն ել շատ անդամ եր նրանից պատիվ ստացել և վաղուց մտադիք եր մի լավ հյուրասիրել Մկոյին, բայց պակասությունը թույլ չեր տալիս : Այժմ, յերբ Խեցոյի գրասանը լիքն եր, և յերբ Մկոն իր բերանով եր խնդրում, ի՞նչպես կարելի յեր մերժել :

— Իմ աչքիս, իմ դըլովիս վրա, ախողեր ջան, համեցեց եթանք, —
պրանց վրա բերեց Խեցոն, մի քանի քայլ առաջ դալով, — յես վոչ
ող ու հաց մոռացող եմ, վոչ ուստեւ խմելուց փախչող եւ վոչ եւ ախ-
ողի թիժյան շարքից հետ մնացող:

Խեցոն ձեռը դցեց Մկոյի գոտին ու սկսեց քաշել:

— Ո՞ւր ես տանում, — հարցրեց Սաքոն:

— Վերի միկիսանը^{*}), — պատասխանեց Խեցոն:

— Զե, ախողեր, յես չեմ դալիս. յես չեմ ուզում են շների
յերեսը տեսնել:

— Ազա, ես արևամենուը չի գտ վերի միկիսանը, — ավելացրեց
Մկոյ, — յերեկ ովեչեր ելի իբար զլում են ջարդել անակիտանները.
Համին են կլինի, վոր եթանք ներքեւ, վարսի միկիտանը:

— Այ, ի՞նչ եմ ասել, — հավանություն ավեց Սաքոն Մկոյի
առաջարկությանը, — եմանք, եթանք:

— Ախր... յես ուզում եմ տուն դիմչել... կմկմալով ասաց
Խեցոն ու շարունակեց տեղում կանոնած մնալ անորոշ դրության
մեջ: Նո զիտեր, վոր միկիտանում կարող եւ հազար ու մի տեսակի
շար ու բարի պատահել, ուստի ուզում եր փողերի մի մասը դըր-
պանում պահել, մնացածը տանը թողնել:

— Դես արի, հերդ լիս դառնա, վես... յես եստեղ ծաբավից
վառվում եմ, սա ել նոր զլիսիս նազլ ա սարքում, կասես ոխտը
տարի Ակոյի առջկա յերեսը չի տեսել... Ուր ա, թե կնիկն ել
կնիկ լինի... Ասովան տվել ա, յերեսին իսանի կերպարանք ել
չկա, կասես մարդաբել լինի տնաքանդի առջիկը...

Այս խոսքերի հետ Մկոն մի քանի քայլ առաջ դնաց, իր գաղ ու
կիսանց կուռը մնենաց և այնպես քաշեց Խեցոյի թելից, վոր վեր-
ջինը մեծ թափով առաջ վաղեց ու քիչ մնաց բերանքսիլար դետին
փովեր: Խեցոն ել չկարողացավ դիմադրել ու նրանք գնացին դեպի
յած:

2.

Գինետունը բաղկացած եր յերկու ընդարձակ սննյակներից,
վորոնցից առաջնում՝ տախտակեր վանդակապատերի վրա, շարված
ելին մի քանի փոշոտված շշեր ու զանազան տեսակի պալիրոս-
ներ: Վանդակապատի տակ՝ զետենից քիչ բարձր՝ մեկնած եր մի
տախտակ, վորի վրա պատկուտած ելին հաստափոր տկերը: Այդ-

*) Ակիկտոն—զենեռուն:

տեղ տկերի մոտ, զբաված եյին զանազան մեծության չափեր ու-
տաստասներկու հատ կեզառո բաժակներ։ Գիճնեան բաց տեղում,
դախլի դիմաց, զբաված եր մի յերկար ու կազ նստաբան, զորի
վրա բազմած եր Վարոսը յերկու այցելուների հետ. նրանք խմում
եյին ու աշխատժով զրուցում։

Վարոսը՝ տարբեքավ բավական ծեր եր, բայց գեմք ու կաղմած-
քով գեռ կատարյալ յերիտասարդ, հասավոր, կարմբաթուշ ու-
նիբունատես մի մարդ եր։ Տանիյոթ տարբեկան հասակից նա սկսու-
եր գիճնեվառառությունը և մինչեւ որս անընդհատ շաբունակում եր-
իր սիրելի տարբազմունքը։ Նա միշտ աշխատում եր հավատացնել իր-
այցելուներին, իր թե այդ առուտուրից բոլորովին չի ողափում։
Բայց ելի չի կարողանում վերջ տալ նրան, վորպես մի սիրահար,
վոր չի կարողանում բաժանվել իր սիրականից։ Վոր զինեվաճա-
ռությունից նա չեր ուղարկում, իհարկե, սուս եր ասում։ այդ ուղ-
արագմունքը նրան տալիս եր զուտ արդյունք տարբեկան վեց հարյու-
րից մինչեւ հազար ուռուի, նայած տարբա պատրաբերության ու-
ժողովրդի դրապանին։ Խոկ ինչ վերաբերում և արհեստի վրա սիրա-
հարվելուն, պետք ե ասած, վոր զա զուտ ճշմարտություն եր։
Նա միշտ խնդրում եր ասածուց, վոր մահը զտնի իրան գիճնեառա-
մեջ այն ժամանակ, յերշ՝ կվարտը մի ճեռում ու տիկի պաճախիր-
մյուսում՝ դինի մասակարաբելիս լինի իր մուշտաբիներին։

Նորեկ այցելուները ներս մտնելով, «քարի իրիկուն» ամփին նըս-
տայներին ու անցան առաջ՝ զետի մյուս սենյակը. միայն թեջուր
մի քիչ վստր կախ գցեց ու պատվիրեց դինի բերել։

— Աշապարակի վասկնզույն դինուց, —զուաց Մկոն մյուս ոհ-
նյակի շեմքից ու թուքը կուլ ավեց։

Գիճնեան մյուս սենյակը, վորը բաժանված եր առաջինից մի-
դունակով, չառ ընդպարձակ եր։ Այդ սենյակի բոլոր պատերի յեր-
կարությամբ շարլած եյին տախտակներ ու յերկուտանի նստարան-
ներ, վորոնց առջեւ մի քանի կետերում կանդնած եյին ուրագաչեն-
մերկ սեղաններ։ Սենյակը սաստիկ խոնավ եր և դինու դարշահո-
տությամբ լցված, նրա յերկու անկյունում կիտիքած եյին յերկու-
խոչը ապրակույտներ։ Սեղանների վրա և նրանց առակ զնացած դինու-
մեջ խառնիխուտն թափթիփած եյին հացի վշշանքներ, մեծ ու փոքր
վլուկորներ, պատասխանված խաղաթղթի կտորներ, ջարդված չշեր
ու բաժակներ։ Սեղաններից մեկի չուրջը բոլորված եյին չորս հո-
գի, յերեխ վաճառական գասակարդից և, չշերը սեղանի վրա շտ-

բաժ՝ յեռանդով վիալուն⁴⁾) եյին խաղում : Մի ուրիշ սեղանի մոտ նստած եյին յերկու հոգի, վորոնց յերեսն ու չորերը պատաժ եյին սպիտակ փաշիով . գրանք ել տառիկներ եյին՝ աղահանքում աշխատադիր : Նրանցից մեկը բարձր ձայնով շիքյաստի յեր յերգում, իսկ մյուսն անդադար ծափահարում ել ու խրախուսաւ ընկերութիւնը՝ ուսազ ուր կամ էկեցցեա բացականչություններով :

Մեր տղերքը պատաի տակ վեր դրին իրենց մուրճերը և նստեցին աղաս սեղաններից մեկի շուրջը : Շուտով ներս մտավ Վարոսը և դրեց սեղանի վրա յերկու շիշ դինի և յերեք հատ լայնարերան խոշոր դինու բաժակներ :

— Վարոս բիժա, ելի ես ծափ աչքերը մարդամեջ բերի՞ր, — ասաց Կարաս-Մկոն, ցույց տալով առջևի բաժակը, — իմ կալ, դեռ չորսիր, աստվածդ միրես թե չե, հանկարծ զինու հետ կուլ կեթա, խայտառակ կլինենք . լավ, դու ինձ չե՞ս ճանաչում, դու չե՞ս իմանում, վոր ուղարի դղակով չեն ջրում, վոր կարասը մատնոցով չեն լցնում . դնա, ողորմի ծնողացդ, զնա են լիստիկ բակալներից մինը բեր տեսնենք :

— Այ, արեգ թաղեմ, կարաս, ելի՞ դու լիս ընկար, — ներքին բաժակներությամբ ասաց Վարոսն ու մի բակալ բերնելով՝ դժու Մկոյի առջեւ :

— Այ, կեցցե՞ս, արժի սրանով խմելը . դոնիս մաքդու կատիլի կիթքնի, — անհամբերությունից ձեռները արտերլով ասաց Մկոն :

— Համեցեք, ախովեր Վարոս, Համեցեք, — Հրավիրեց Թեչոն, յերբ նա ուղարկած եր հետանալ, — ես մի բաժակն անուշ արա հետո դնա :

— Եբ կենացը, աղեք, աստված աջուղություն տա, աստված ձեր ախողերությունն անխողելի անի, — մաղթեց Վարոսն ու բաժակը դատարկեց — Ե՞ֆ, Ե՞ֆ, — բացականչեց նա բերանը սրբելով՝ դինի հոգ չո չի, մեռոն ա, մեռոն :

Խեչոն, վորաքն հյուրատեր, լցրեց բաժակներն ու մի փոքր բաժակ ինչը վերցնելով, ասաց :

— Տղեք ջան, վեր կալեք մի-մի բաժակ խմենք մեր ու մեր ախողերության կենացը, մի-մի բերան խնդրենք աստվածանից, վոր մեզ յերկար կյանք տա ու ախողերությունից անպակաս անի :

Մկոյի աչքերը խմելու ցանկությունից վառվում եյին ու պռուները դողդողում : «Ամմեն», ասաց նա ու բակալը միանգամից դատարկեց : «Ռիսա՞յ», չնչացին նրա թրջված ըրթունքները :

⁴⁾ Մի անսակ թղթախաղ:

— Անէո ջան, ինչ վոր բարեմաղթեցիր, աստված թող լոի ու կատարի. ամենակարողը մեղ իրար մոտ ամոթալի չթողնի; Տե՛ր, փառքը շատ լինի, —աչքերն առաստաղին ուղղելով առաջ Սաքո՞ն ու խեց:

Այնուհետև տղերքն ոկտեցին խոսել գինու վորպիտթյան մասին: Բոլորն ել համանում ելին նրան. մեկին դուր եր դալիս համը, մյուսին՝ գույնը, իսկ Մկոն գովում եր զինու թնդությունը, առելով, թե իսկական աղամարդի զինի յէ:

Բաժակները նորից լցվեցին:

— Մկը ջան, ես մի թասը խմենք մեր ախտեր Սաքոյի կենացը: Իհարկե, նա մեր մեծ ախտներն ա, ու մենք պարտական ենք ամեն ժամանակ նրան պատվել ու հարգել: Սաքո ջան, քո կենացը, քո աջողությունը յերկնային աստվածը տա, վոր ինչքան ապրես, լավ ապրես, լիքը բաթիլիկն առջեղ ու թասը ձեռիդ:

— Ամմե՞ն, —կարճ կտրեց Մկոն ու կուլ ավեց:

— Շատ շնորհակալ եմ, աստված կյանք տա, աստված ձեզ եւ աջողություն տա:

Բաժակները չընկչը իսկացին ու վայրկենապես դատարկվեցին: Այնուհետև հերթով խմեցին Մկոյի ու Խէջոյի կենացն ել: Ամեն կենաց բաժակի վրա թե ենչոն ու թե Սաքոն վորոշ բարեմաղթություններ ելին անում. իսկ Մկոն բավականանում եր միայն «ամմենք»-ով ու բակալը քամում: Տարորինակ ընալորսություն ուներ այդ գինու գերի մարդը: Գինին աեսնելուն պես նրա լեզուն կապվում եր, միտքը շիոթվում և արդ բանական արարածը մի բուղեյում փոխվում, դառնում եր կասես անլեզու անասուն: Նա ամբողջ ժամերով նստում եր զինու առջեւ սուս ու փուս, բավականանալով միայն ընկերների խօսակցությանն ականջ զնելով և ուրբաթախափ պես հաջարից մի անդամ հատ ու կտոր բառեր արտառանելով: Այս գրությունը շարունակվում եր, քանի զեռ զինին չեր ներզործել, իսկ յերբ վոր նա 15 բակալ դատարկում եր, կամ, ինչպես ինքն եր տում, «15 դրադուզն անցնում եր», նրա լեզուն փոքր առ փոքր սկսում եր բացմել: Լուրջ ժամանակ Մկոն յերբեք յերգած չկար. իսկ յերբ «15 դրադուզն անցնում եր», նրա յերդի տուան ել ինքն իրան բացվում եր:

Եշերը դատարկվել ելին: Խեչոն մի կվարտ գինի յել պահանջեց: Այս անդամ Վարոսի կենացը խմեցին: Սաքոն ցանկություն հայտնեց Վարոսի կենաց բաժակի վրա յերդելու և առանց ընկերների հավանությունն ատանալու: իր նվազած ձայնով սկսեց կըլկացնել մի պարսկական տիսուր բայաթի:

— Զա՞ն, ախազեր, ջա՞ն, —իրախուսում եք նրան Խեչոն, ծափահարելով։

Սաքոյի մեղեդին դեռ շարունակվում եք։ Նրա ճայնը հետզհետեւ բացիւմ եք ու բարձրանում։ Յերդի կարմրատակած յերեսը և բացախառվող աչքերը ցույց եյին տալիս, վոր նա զդաշվում է իր յերգից։ Նա յերդում եք մի վշտահար ծնողի յերգ, վորի վորդիքը նրան առւն ու աեղից աքսորել, սաս ու ճոր եյին դցել, իսկ տարարախոս ծնողն՝ անոնիրական, շան նման փողոցներում թափառելով՝ ստարի գուան վշրանքն եք ժողովում և աչքերը կապուտակ յերկնքին ուղղած՝ իր ասպերախոս վորդիների պատիժը խնդրում։ Դա Սաքոյի միակ սիրելի յերգն եք։

Այդ յերդը Մկոյին բոլորովին չեր զբավում։ Նա սաստիկ ցանկանում եք խմել։ Տեսնելով, վոր Սաքոն բանը շատ և յերկարացնում, նա լցրեց մի բակալ ու լուս կոնծեց. քիչ հետո մի բակալ եւ խմեց և այսպես մինչեւ Սաքոյի յերգի վերջանալը նա մի շիշը բոլորին դաստիրել եք, իսկ մյուսը՝ արգեն կիսին եք հասցըել։

Սաքոն վերջացը յերգը և սրտի ամենամռւթ խորշերից խորին հոգոց արձակեց, հետո նա վերցրեց գինու շիշը, գողովոջաւո ձևորդ լցրեց բաժակները և առաջմրկեց խմել են մարդի կենացը. վոր վոչ ասոծուց վորդի յե խնդրում, վոչ եւ սուրբերից՝ ցավ ու կրակ։

— Վորդի՛, — չեշտեց նա՝ բաժակը վերցնելով, — վորդի ասած բանը, վոր կա, գա՞մ մարզուս ջանի վորդն ա, նրա միսն ուստո՞ցեցը . . . առաջ պիտի աշխատես, քանի կարող ես, վոր եղ անիծոված ցեցը ծնունդ. ջառնի, իսկ թե տեսար յերեաց, պիտի ոք առաջ խոնդես, վոչնչացնես. թե չե, մնկ եւ տեսնես, վոր ջանդ ու ջիւղարդ բոլորը կրծսուել, սիրու ու թողք արյունլվա յեն արել . . . իմ հնք են մարդի կենացը, վոր վոչ վորդի կուպի, վոչ եւ վորդու աշխատանքի վրա հույս կդնի։

— Ամմե՞ն, — ասաց Մկոն ու խմեց։

— Ես եկ կիսմեմ, վոր ասուլած չար զավակը վերացնի, իսկ բարը զավակին յերկար կյանց տա, — նույնպիս չեշտելով արտասանեց Խեչոն, վոր այդ բուգեյին մտաբերեց իր փոքրիկ՝ հոգու շափ սիրելի Սամսոնին։

— Բարի զավա՞կ, — կը կնեց Սաքոն ատամները կը ճացնելով ու բռունցքը սեղմնելով, զավակին եկ սկի բարի կլինի՞, նրա հոգին եմ անիծնել յես։

Վերջին խոսքերն արտասանելիս, Սաքոն այնպիսի ուժով բռունցքը դարկեց սեղանին, վոր բոլոր բաժակները, կասիս սար-

սափելով, տեղներից վեր թուան և ուշաթափած կողքերի վրա վայր ընկան:

Անջոն տեսնելով, վոր Սաքոն արգեն «Ավել ե», և խմանալով, թե վոր աստիճան կռվասեր և նա հարրուծ ժամանակ, չուղեց հաւառակել:

Գինու շները նորից լցվեցին. նորից Մկոն մի քանի բակաւ ըսությամբ դասարկեց: Երա սառած դեմքի վրա փոքր տո փոքր կենդանության նշաններ ելին նկատվում է. նրա աչքերն ոկում էլին վառվել և լեզվի կազմանքները հետզհետև բացվել: Կենացների սովորական կարգը վազուց խանգարվել եր և ամեն մարդ իր ձեռով բաժակը լցնում ու խմում եր, յերբ ուզում եր: Խոկ յերբ շները վատարկվում ենին, Մկոն, ասանց Անջոյի կամքը հարցներու, վրատահորեն զինի յեր պահանջում: Անջոյի գլուխն ել արդեն տարացել եր: Թեև նա գինեսուն մտնելիս մտքում վճռել եր չափը չկորցնել, բայց չկարողացավ. քանի վոր լուրջ եր, քանի խելքը պիտին եր, յերեսը չբոնեց, վոր ընկերների պահանջը մերժեր; կամ նրանց նստած թողններ ու ինքը գինեսից գուրս զար. վերջապես այլ բանն ընկերական կանոններին ընդգեմ՝ նամարդություն կլիներ: Խոկ այժմ, յերբ նրա գլուխը կարգին տաքացել եր ու ինքն ել ուրախ տրամադրության մեջ եր ընկել, այժմ նա ել ինայտպության մտսին չեր մտածում: Վաղուց նա կորցրել եր պահանջած գինու հաշիվը. իսկ Վարոսը, սպազելով հյուրերի արամագրությունից, համ գինու հաշիվը մեկին մեկ ամելի յեր նշանակում, համ ել բերած գինուն մեկին յերկու ջուր խառնում: Ամողները վոչինչ չելին հասկանում: Նրանք չելին կարողանում նկատել, վոր առաջին վոկելույն, տղամարդի գինու փոխարեն, այժմ մի ինչվոր անդույն ու ջրահամ հեղուկ են խմում:

— Եւս կիսեմ լավ ախաղեր աղի կենացը, — ասաց Անջոն, — ա՞յս, լավ ընկերի գլուխն մտարազ լինեմ յառ. Համ ել իմ մեղադոր բերանովս կինդընմ ասածուց, վոր մեղ ընկերամիջի ամոթարի չանի ու մեր գուշամանի չար աչքը հանի:

— Տո բեր, մի բեր եղ սիրուն պոռներգ պաշեմ հ' ողոշեց Մկոն ու մոտ քաշելով Անջոյի փոչապատ գլուխը, բարձրածայն ըրպոցով համբուրեց նրա աղոտված շրթունքները:

Սաքոն՝ անաստամ բերանը լայն բացած՝ գլուխը տարուքերելով բարձր յերդում եր: Անջոն ձայն եր պահում և չուտ-չուտ՝ չաղ ու բացականչությունով խրախուսում նրան: Մկոն ել կամաց-կամաց սկսում եր գունդունալ:

— Այ, կեցցե՞ս, կեցցե՞ս, — պոռաց Խեշոն ծափահարելով, յերբ
Սաքոն յերգը վերջացրեց: — Մկո չան, տես ինչ եմ տառւմ, վեր կայ
միմի թաս խմենք ախպեր Սաքոյի կենացը: աստված վկա, անդին
մարդ ա, տեղովով կյանք ու հոգի ա, հոգի... .

— Պոռշափ յեմ ուզում, պոռշափ, — աղաղակեց Մկոն, հար-
ձակվելով Սաքոյի վրա և դրկելով նրա անմաղ գլուխը:

Երթունքների շրապշրպոցը գինետունը լցրեց:

— Համբերի, — պատ Մկոն, Սաքոյի ձեռը պիհոդ բոնելով, —
թասոց չխմեն, յսո պիտի յերգեմ քո կենացի վրա, — և իր ուժեղ
բանով սկսեց յերգել հայկական յերգերից իր ամենասիրելին: «Զա-
խորդ որերը»: Նրա ձայնն այնպես եր հնչում, վոր կասես յերգո-
ղը մի հոգի չլիներ, այլ մի ամբողջ խումբ: Մկոյին սկսեցին ձայ-
նակցել նաև Սաքոն ու Խեչոն: Թեև համ յերգի բառերը, համ եւ
նրա յեղանակը սաստիկ աղաղակաղած եյին ձախորդության այդ
հարազատ զավակների բերանում, բայց և այնպես յերգի ընդհա-
նուր իմաստը նրանց համար հասկանալի յեր մնում և նրանք յեր-
գում եյին դպացված:

8*

Գինետան մեջ գտնվող մյուս խմբերն եւ հետզհետե կենդանու-
թյունն եյին ստանում և ազմուեն ավելացնում: Չորս կողմից լըս-
վում եյին հայերեն ու թուրքերեն յերգի ձայներ, բաժակների
շրմակոց, բարձր ծափահարություն, ողմիկալի համբույրներ,
ուռաներ և հազար ու մի կեղանոս խոսքեր:

— Ողո ջան, Ողո, — պատ գեմ ու գեմ նստած յերկու տա-
սիկներից մինը՝ Բագոն, — չարդ տանեմ, վեր կալ ես մին եւ:
խմենք, վոր տեր տառածը մեղ մեր տեսած որից յետ չքցի:

Նրա լեզուն դիմու ազգեցությունից սաստիկ սոթ եր տալիս և
բառեր նրա բերանում կիսով չափ կրճատվում եյին:

Սաքոն լսելով Բագոյի առաջարկությունը, բարձր ձայնով
բրբջաց:

— Այ անձուն, — դիմեց նա Բագոյին, — ի՞նչ ես գլխիցդ գուրս
տալիս, քո տեսած որը վո՞րն ա, վոր ուզում ես տեսած որիցզ յետ
չընկնել: Տնաքանդի տղա, աչքու բաց ես արել, մուրճն ու աղա-
հանքն ես տեսել ու տարին տասներկու ամիս եշի պես տանջվել ես
ու չարչարվել: դըանից ել վատ՝ վո՞ր որը պիտի լինի:

Սաքոյի դառը քրքիչը նորից լցրեց գինետունը:

— Ի՞նչ ես անձաւամ ռեխտ բաց անում, քայլթառ շոմ, — բա-

շտկանչեց նույն կիսատ-պռատ բառերով կոտրված Բաղոն, —քեզ
ո՞վ և հաջացնում քովմատ շռէ:

— Նուն ել, շան վորդի ել, —վրա թերեց լրջացած Սաքոն և ան-
դից վեր թուավ, վոր հարձակվեր Բառոյի վրա, բայց Մկոյի յեր-
կաթյա բազուկը նոտարանին մեխեց նրա ջղոտ մարմինը:

— Դլուխոդ շան գլխի պես կը արդեմ, —սովորում եր Բաղոն,
բառնեցքը ցույց տալով, —յեթե տղամարդ ես, մի վոտ առաջ
արի:

Սաքոյի դեմքը բարկությունից գեղնեց. նրա շրմունքները
կապտացին ու ձեռ ու վոտն սկսեցին դողդողալ: Նու անդադար պա-
հանջում եր արձակել իրան, բայց անողուտ:

— Դե, քո հորդ... ճաց Սաքոն և կայծակի արագությամբ
տեղից վեր թուչելով, վերցըց վիշն ու բոլոր ուժով շարտեց դեղի
հակառակորդը: Բաղոն ճարտկությամբ դըմխը թեքեց և մահա-
րեր հարվածից ազատվեց, իսկ չեւը՝ կաչելով քարաշն պատին՝
փշրվեց և ապակու կառըները չորս կողմ ցրվեցին:

Բաղոն չեր կարող կուլ տալ այդ անպատճությունը. նու տե-
ղից կանգնեց, ուղեց հարձակվել թշնամու վրա, բայց դրաց, վոր
վոտները ճոճվում են ու չեն ուղարկմ հնարդանդվել իս կամքին. բացի
դրանից, Ռդոն ամուռ բռնել եր նրա վեհերից և աշխատում եր հան-
դարտեցնել: Ճար ջլար: Բալոն փոքինց շարտել շիշն ու միանդա-
մայն ջախչախել Սաքոյի գլուխը, բայց մեքը չեւը՝ նրա թուլացած
մատների արանքից դուրս պըճնելով, փոխանակ առաջ զնուլու,
յետ ու յետ թռալ և կոչելով յետնի պատին, նույնպես ջարդվեց:

Բադոյի այս անաջողությունն ընդհանուր քրքիջ առաջացրեց
դինետան մեջ:

Իսկ ուժասպառ Բաղոն վեր եր ընկել իր տեղում և թուլացած
անդամների անսորությունն զգալով, գլուխը սեղանի վրա յեր դըմ:
ու սատուիկ հեկեկում: Ռդոն, անսնելով իր ախալոր անպատճու-
թյունը և չորս կողմից նրա հասցեախն ուղղված հնդական բացա-
կանչությունները, չկարողացավ անտարբեր մնալ: Անզաշուպան
ընկերոջ արտասուզը տակն ու վրա արեց նրա սիրաը: Ախալերու-
թյան որենքը և թառիբը պահանջում եյին Թաշտանել ընկնըովը և
որբել նրան հասցրած անպատճությունը, իսկ այդ նոյսակեն կո-
րելի յեր հասնել միայն վրիժառությամբ:

— Դե, ձեր ծնողը: —դուռաց նա, չուխեն հադից հանելով և
Սաքոյի վրա հարձակվելով:

Խեցոն տեղից վեր թռավ, վազեց նրա առաջ և յերկու ձեռ-
քով ամուր գրկելով՝ կտրեց նրա ճանապարհը: Ռդոն նորի ուղեց

ազատվել Թէջոյի ձեռքից, բայց տեսնելով, վոր նա միտք չունի արձակելու, սկսեց կարկուտի պես բուռնցքի հարվածներ իջնցնել նրա դիմուն: Անջոն սկզբում յեռանդով պաշտպանվում եր նրա հարվածներից, բայց տեսնելով, վոր ուժեղ հակառակորդը զոռում ե իրան, ձեռը տարավ գրպանը, վոր դանակը հանի ու թշնամու փորը թափի: Այդ ժիջոցին Սաքոն ել վերցրել ել մուրճերից մեկը և սաստիկ չարչարվելով՝ աշխատում եր ազատվել Մկոյի ձեռից, վոր Ողոյի վեռուխը ջարդել:

Դուռը բացվեց և վրա հասավ Վարոսը:

— Ես ի՞նչ բան ե, ի՞նչ խայտառակություն, — զոռաց նա դուն շեմ քից, — դուք մարդիկ ե՞ք թե չներ:

Վարոսի ճայնից բոլորն սթափվեցին: Ողոն բովեապես յետ ու յետ քաշվեց. Անջոն հանած դանակը նորից գրպանը դրեց ու պատից կապավ. մինչև անդամ Սաքոն՝ կովի այդ թունդ սիրահարը, ձեռքի մուրճը կամացուկ դետին դրեց և սկսեց բարկությունից շրթունքները կրծուածել: Վարոսի յերեալը մի ակնթարթում հանդարակեցրեց կրքերը և վերականգնեց խաղաղությունը:

Վարոսն ահապին հեղինակություն ուներ իր այցելուների աշքում, նրանից համ ամաչում, պատկառում ելին, Համ ել վախենում: Գինետան պատերին մեջ նա ե՛ քննիչ եր, ե՛ զատավոր, ե՛ տանուտեր. այստեղ ծաղած բոլոր կոփիներն ու վեճերը նա մանրամասն քննության եր յենթարկում և ապա հայտարարում իր հեղինակալոր վճիռը, վորին ամեն մեկը պարտավոր եր հնազանդվել: Ծանր մեղք դործողները սովորաբար արտաքսվում ելին խանութից. ուա արդմն պատժի ամենախիստն եր: Յերբեմն ել պատիժը սահմանափակվում էր նրանով, վոր մեղավորն անաշառ դատավորի ձեռքից մի քանի ապահով եր ուսում: Խոկ հանցավորների ահապին մեծամասնությունը յենթարկվում եր միմիայն տուղանքի: Տուղանքը կայանում եր նրանում, վոր մեղավորը պարտավոր վում եր հաշվով զնել վորոշ չափով խմիչք և հյուրանիքել արդար հակառակորդներին, վորոնց հետ անախորժություն եր ունեցել:

Այս անդամ իմանալով բանի հյությունը, և համոզվելով, վոր կամի առեթը տվել և Բաղոն, նույնազես տեղեկանալով, վոր Ողոն ծեծել և միամիտ թեջոցին, յերբ սա ընկերաբ ուղեցել և կովողներին բաժանել, Վարոսը վճուեց, կուրած ամանների արժեքը՝ Հիսուսն կոպեկ, պահանջել Բաղոյից, իսկ Ողոյին պարտավորներեց յերեք կվարտ գինի առնել և Թէջոյին իր ընկերներով հյուրասիրել: Վարոսի վճեալը հիացրեց շատերին:

— Կեցցե՞ս Վարոս բիճեն, — զուշեց Մկոն, — ինձ մի բակալ առվելք յետ նրա կենացը պիտի խմեմ:

Փաստոն խաղացող սերից մնկը, հիացած Վարոսի արդար պյառի, բարձր ծափահարեց. իսկ մյուսները միաբերան մաշտիլառ արտառանեցին:

— Հը, ի՞նչ ես ասում, Բաղո, համաձայն յն ես, — հո, — հարցը եց Վարոսը:

— Համաձայն լինելը համաձայն եմ, բայց . . . կացուկամ պատասխանեց Բաղոն:

— Բայցը ծոցդ գիր, — ընդհատեց նրա խոսքը Վարոսը, — զո՞ի ի՞նչ ես ասում, Ողո, գինին բերե՞մ, — գիմեց նա մյուս մեղադրյալին:

— Տեր, Ելի, վոր ասում ես՝ ի՞նչ պիտի անեմ. յերեք կվարու գինին ինձ հո չի սպանելու:

Վարոսն իսկույն բերեց վեց շիշ գինի. մի հատ բակալ և համայնք հանցավորներին վերցնել իրանց բաժակները և մասնեալ այդ սեղանին: Նըսմանը կատարվեց: Վարոսն իր մեսով լցրեց առաջ Մկոյի և առաջ մյուսների բաժակները և մի բաժակ ինքը վերցնելով՝ ասաց.

— Մկո, ախաղեր Մկո, բակալը վեր կալ խմենք ծեծող-ծեծ վողների կենացը և խնդրենք աստծուց, վոր նրանց մի քիչ խելք ու հասկացողություն տա, վոր կարօղանան շնությունը մարդկությունից դանազանել ու մարդկության ճամբար՝ դնան: Կոխիլը, իւրաք խեղգելը, իրաք միս ուտելը, իրաք վրա հաջալը շան արհեստ ա, իսկ մարդկությունն են ա, վոր ախաղեր տղաներով նստես, ուտեսութեմքս; յերգես, ծիծագես և ընկերների հետ ջան ասես, ջան լսես: Դե, — գիմեց նա կովողներին, — մանդներէցդ վեր կաց եք, պոռշտի արեք ու ձեր քեփը շարունակեցեք:

— Այ կեցցե՞ս, կեցցես դու քո լեզվովը, Վարոս բիճա. ասու վկած վկա, յեպիսկոպոսից լավ ես խոսում: Ինչը վոր բարձմաղթեցիր, տերը թող լսի ու կատարի. վողորմած աստվածը մեր ընկերներին են խելք ու միտքը, են հասկացողությունը տա, վոր շնությունից ձեռք վերցնեն ու որանից հետո մարդկություն անեն. ուռուա՛, — վորոտաց Մկոն ու բակալը գատարկեց:

Կովողները տեղներից վեր կացան ու ձեռ-ձեռի տալով լուս համբուրությին. այնուհետեւ նրանք լիքը բաժակները վերցը ին և միմյանց անունն արտասանելով՝ իրաք կենաց խմեցին: Դրանով ել հաշտության հանդիսավոր խորհուրդը վերջացավ ու քեֆն ել իր սովորական կարդով շարունակվեց:

Կառավարչի պաշտոնը կատարում եր Մկոն։ Նրա լեզուն թվառէ
եր դառնել։ Նա կենացներ եր առաջարկում, անեկդոտներ եր պատ-
մում, սրախոսություններ եր անում և ամենից շատ ել յերգում
եր։ Կասես դա առաջիւ լուր ու մունջ Մկոն շիներ, կասես մի
զերնական զորություն նրա վրա իջած լիներ։ Վերջապես բանն
այնաեղ հասավ, վոր միտմամանակ որդեն յերգում եյին մի քանիսը
միտսին, բայց վոչ միւնույն յերգը։ Մկոն յերգում եր «Ձախորդ»
որերը, և իր ուժեղ բասով խեղզում եր մյոււների ձայները։ Ողոն
սկսել եր մի շիքաստի և կոկորդը պատում եր, վոր կարողանա
իր թույլ ձայնն այդ գոխսային աղմուկի մեջ լսելի դարձնել։ Իսկ
թեզոն, վորի գեմքն ու աչքերը սաստիկ կարմրատակել եյին, յեր-
գում եր մի ինչվոր հայկական ժողովրդական յերդ և տակտի հա-
մաձայն ժամաներով շրթիացնում եր։ Միայն Բագոն չեր յերգում։
Նրա սիրար խառնում եր։ Նա մոտեցավ անկյունի աղբակույտին և
մատը բերանը առարավ . . . Հանդստացնելով ստամոքսը, նա նորից
վերադարձավ և շարունակեց խմել առաջիւ կարգով։

4.

Այդ ընդհանուր տղմուկի ժամանակ վաճառականների սեղանի
վրա լավեց դրամների զրբնդպրնդոց։ Նրանք վերջացրել եյին փառ-
ունը և սկսել եյին ցլորա խաղալ։ Դրամների հմայիչ ձայնը լսե-
լուն պես, Սաքոն տեղից վեր թռավ և վագեց այն կողմը։

— Ինձ ել թուղթ տվեք, — ասաց նա չկըլված։

— Փողզ հանիր, հետո թուղթ ուղիր, — կոշտությամբ պատաս-
խանեց թուղթ բաժանողը։

— Առանց փողի հո չեմ խաղում, — պատասխանեց վիրավոր-
ված Սաքոն և հանեց վաթսուն կոպեկ ու դրեց առջեր՝ սեղանի
վրա։

Մկորում շատ լավ եր. թուղթը Սաքոյին ժպառում եր. Նրա հա-
նած վաթսուն կոպեկին աճեց, հասավ յերեք ոռուբլու և գեռ շարու-
նակում եր ալեւլանալ։ Այդ աջողության ժամանակ Սաքոյի տրա-
մադրությունը շատ լավ եր. նա ուրախ-ուրախ խոսում, յերդում
ու ծիծաղում և յերբեմն ել մի-մի բաժակ կոնծում եր։

Բայց Սաքոյի աջողությունը յերկար չտևեց. շուտով թուղթը
նրանից յերես թեքեց և նա սկսեց տարվել ու տարվել։ Կարճ միջո-
ցում նրա տարած փողերը, վորտեղից յեկել եյին, այնաեղ ել դնա-
ցին. գնաց նաև նրա գրպանից հանած ՅՈ կոպեկը։ Սաքոն քթի
տակ մի ինչվոր կեղտոտ բան մռմռաց, հետո լցրեց մի բաժակ։

Խաղը հետզհետե տաքացավ, առաջվա հինդ ու տաս կոպեկի անդ
ոկսեցին բռնել քսան, քսանհինդ, յերբեմն նույնիսկ քառասում կո-
պեկ: Սաքոյի հանած ութմուն կոպեկը խաղաթղթի անաջողու-
թյան գեմ յերեք բույն ել չերողացավ դիմանալ:

— Այս, քո կարս կտրողիդ հողին... բացականչեց նա ատամ-
ները կրծտացնելով և ձեռքի քսան կոպեկը տանողի առաջ զպրակց:
Հետո նա դուրս յեկավ փողոց, մի քար շրջեց⁸⁾ ու կրկն ներս
յեկավ: Նա հանեց դրավանում մնացած վերջին մի ուռըի յերեսուն
և հինդ կոպեկն ու մոտեցավ կարտի սեղանին, հուսալով, վոր դո-
նե հիմա թուղթն իրան կժպտա: Բայց իդուր: Զախորդությունը
կատարյալ եր. Սաքոն տարվում եր ու տարվում: Նրա փողերը
վերջանալու մոտ ելին. մնում եր միայն տամնհինդ կոպեկ ու
փող:

— Տուր ես կարաը, խալը հինդ կոպեկ, — ասաց Սաքոն, մի
ծածկած թուղթ բռնելով և սոսրին պոռչն ամուր կրծուելով:

— Թող գա, — պատասխանեց թուղթ բաժանողը: Վերջինս մի
ուսադեմ, միջահասակ վաճառական եր և միննույն ժամանակ չա-
փաղանց անիրավ վաշխուռու. նրան սովորաբար Սե-Սարոն ելին ան-
վանում, իսկ յերեսին՝ Սարերեկ աղա ելին իանչում:

— Ութ, — բացականչեց ուրբախացած Սաքոն, անդից վեր թու-
շելով և խաղաթղթերը բանալով:

— Ցիրա, — անլորով իերալով ավելացրեց Սե-Սարոն, իր
թղթերն ել սեղանի վրա փուելով: *

— Ենթեք անդամ տաներեք շահիս, յերեսունիննը շահի, յեր-
կու մանեթից մի շահի պակաս, — վաճառականական արագությամբ
հաշվեց Սաքոն, — ուղարկիր:

Սաքոն լուր եր և կատաղությամբ մինչև կոկորդը լցված:

— Ուղարկիր Սաքոն, փողն ուղարկիր, — կրկնեց Սարոն, խաղն
ընդհատելով:

— Լավ, կլինի՝ կտամ, բաժանիր, — հաղիվ լսելի ձայնով ուր-
տասխանեց Սաքոն:

— Լավին են կլինի, վոր հանես ու համրես:

— Բաժանիր, կտամ պսացի, — մեղմությամբ կրկնեց Սաքոն:

— Կտամ-մտամ չեմ խմանում, հանիր ու տուր:

⁸⁾ Քար շրջելն ընդունված թալիս և, վորով խաղացաղներն ուղարկ են խաղաթղթի հոջողաբարենն իրենց կողմէ գաբաներ:

— Ես բոլեյիս չունեմ, հոգիս հո չես առնելու, հետո կտամ տացիք:

— Չունե՞ս... Չունես՝ ուրիշից պարաք վերցրու, կամ չուխեղ հանիք:

— Ո՞վ չուխա հանի, —ասաց Սաքոն, աչքերը չուլով և վերդավանքից զողղողալով:

— Հրամանքը. ին վորդ չունեյիր, ոչուխու քարին ելիր տամիս, վոր խաղում եյիր:

— Գլուխու ել քարին տաս, յերեսու ել պատին...

— Չուխեղ հանիք քեզ ասում եմ, շան վորդի, —զոռաց Սև-Սար և Հարգակից Սաքոյի վրա, վոր նրա չուխեն հազից դուրս քաշի:

Հուսահատական եր Սաքոյի գրությունը: Այդ չուխեն նրա ծերացած վուսկարները տաքացնող միակ իրն եր: Թեև չուխայի տակից նա հագած ունեմ նաև մի կտավի շապիկ, բայց այդ կիսամաշ շապիկը շատ անգոր եր նրա ալեւոր անշամները ցրտից պաշտօնանելու. այս եր պատճառը, վոր Սաքոն չեր ուղում չուխայից բաժանվել և իր բոլոր ուժով հուսահատորնեն պաշտպանում եր նրան. նա յերիու ձեռով տմուր բունել եր չուխայի ոճիքը և պինդ ուղղմել եր կրծքին: Սաքոն դրում եր, վոր ինքը մեղավոր ե, գլաւեր, վոր Սաքոյի պահանջն որինավոր ե, հասկանում եր, վոր յեթե ինքն ել լիներ Սև-Սարոյի տեղում՝ այս դեմքում ելի նրա պես կվարվեր. բայց ե, այնողես նու չեր ուղում բաժանվել իր չուխայից, իր հալված ու մաշված մարմնի միակ օլաշտպանից և չեր ել ուղում Սաքոյի հարվածներն ու հայշոյանքներն անպատճախան թողնել. նու տմենաթունը ուշունցներ եր թափում Սև-Սարոյի դիմին և ստամներով ու վունեցով աշխատում եր պատասխանել նրա հասցրած յերբեմնակել հարվածներին:

Այդ աղմուկը գրավից բոլորի ուշադրությունը: Խեջոն ու Ալուն կիսատ թողեցին միասին սկսած՝ «Արի, սիրուն, զնա սիրու» ժողովրդական յերը և վաղեցին կոխվը դադարեցնելու: Այդ միջոցին Մկնն բերանով նվազում եր մի ինչը պարելու յնդանակ և իր ահազին մատներավ թմբկահարում եր սեղանին, իսկ Բաղոն, ատամնվելով ու կոտրամակելով պարում եր: Տեսնելով, վոր աղմուկը ստամիկանում ե, Բաղոն պարելով մոտեցավ վաճառականների սեղանին և ոկուց ստիպողաբար պահանջել, վոր բոլոր ծափահարեն: Բարոյի անտեղի պահանջն ընդհանուր քրքիջ աւաջացրեց:

Երափ սենյակի դուռը բացվեց և վրա հասավ Վարոսը : Կոմող
ներն անմիջապես բաժանվեցին :

— Եթէ կոփի , —գոչեց Վարոսը , աչքերը չուկով ու դեմքը
թթվացնելով :

— Դու դատիր , Վարոս բիծա , սրանից փող եմ տարել , բայց չէ
ուզում տալ , —բողոքեց Սև-Վարոն :

— Ի՞նչքան :

— Եերկու մանեթից մի շահի պակաս :

Վարոսը մի բոսե լուեց , աչքերն ուղիղ Սաքոյի յերեսին քցեց .
Նա սպասում եր , կասեն նա ուզում եր մեղադրյալի բերանից պաշտ-
պանության խոսք լսել , բայց տեսնելով , վոր Սաքոն միտք չունի
բերանը բանալու , հրամայական չեշտով ասաց .

— Անզգամություն մի անի , Հանի են մարդի փողը տուր :

— Զունեմ , վո՞րտեղից տամ :

— Զունեյիր , չխաղայիր :

— Եւ չեմ խաղա :

— Տարվածդ տուր , Հետո մի խաղա :

— Լավ ես ասում , Վարոս բիծա , բայց վոր չունեմ , վո՞ր-
տեղից տամ :

— Զհանդամից ու սե խավարից , անամոթ չուն , —գոռաց Վա-
րոսը , —չուխնեգ հանիք , չուսում Այս ասելով Վարոսը հարձակվեց
Սաքոյի վրա , վոր գոսով հանի նրա հագի կիսամաշ չուխնեն :

Սաքոյի սիրտը ճմլեց : Թեե նա չեր համարձակվում ընդդի-
մանալ Վարոսին , բայց զգում եր , վոր կորցնում և թօննագին ,
մի շատ սիրելի բան և այդ սիրելի տոարկայից բաժանվելու բովե-
լին նրա աչքերը ջրակալեցին , արտասուրքի միքանի խոշոր կաթիւ-
ներ գլորվեցին նրա թորշամած այտերի վրայով և այդ բյուրեղա-
նման կաթիւներից յերկուուր չողչողացին կիսախավար ճրագի թույլ
հառաջայթների տակ :

Խեչոյի սիրտը կարեկցությունից կտրատվեց , յերբ նա տեսավ
այդ հսկարա ու ինքնասեր մարդի աչքերում արտասուրքի , կաթիւ-
ներ : Նա մեքենաբար առաջ վաղեց , բոնեց Վարոսի ձեռը և դող-
դողջուն ձայնով ասաց .

— Համբերիր , Վարոս բիծա , վործ չունես , մի հանիր սրա
չուխնեն ասումած սիրես , սրա պարտքը յես կտամ :

Վարոսը բաց թողեց Սաքոյի թևը , իսկ Խեչոյն արագությամբ
ձեռը տարավ գրանին և հանելով քսակից մի հատ հինգ ոուրլիա-
նոց վոսկի , չըրտեց սեղանի վրա :

— Առաք , —ամիելացրեց նա հուզված ձայնով , —ստացեք Սաքոյը

տարգածը և ազելին հետ ազեք իրան։ Խեջոյի ուլուխը դեռ չի մեռէլ, վոր նա թույլ տա իր աշքի առջեւ ախզոր չուխեն հագից հանեն։

Սաքոն ըստ յերեսոյթին հանդստացավ։ Նու կըկին նստեց իր առաջիւ տեղում և բռունցքը սեղանին դարկելով՝ ասաց։

— Զմոռանաս, Սե-Մարո, ես բանը լավ պահիր մաքումք յևս քեզ մի որ կթվացնեմ։ Առ ես վոսկին, յերեսոնին շահիդ վերցրու, մնացածը յետ տուր։

Դրանով միջազհոր վերջացավ և խողն առաջվա կարգով շարունակվեց։ Աղոն ու Բաղոն կրկին մոտեցան Մկոյի սեղանին և շարունակեցին իրանց ուրախությունը, իսկ Խեջոն նստեց թղթախաղի սեղանի մոտ և սկսեց ուշադրությամբ հետեւ խաղին։

Խեջոն ել թղթախաղի սիրահար եր։ Քահել ժամանակ նա չառ դիշերներ եր թղթերը ձեռին՝ բաց աչքով լուսացրել և շատ ել վնաս եր տեսել։ Խեջոյի հոր տունը զյուղի շեն ոչափներից մեկն եր։ Մի ժամանակ նրանց գանից յերեսուն եշ միասին եյին գուրս գալիս։ Նրանց աշխատանքը ծովիր կկապեր։ Բայց լուսահոգի Գամապարը յերք մեռամ գ քան ատարեկան Խեջոն, տունն անտեր ու անտիրական թողնելով, զանազան զվարճությունների անձնատուր յեղավ։ Այդ ժամանակից Եշակոնց շեն ու լի տունը կարմաց-կամաց ոկսեց ուտարեկվել։ Խեջոն որ ու գիշեր զինետնից գուրս չեր դալիս։ Նա խօսում եր ու խաղում։ Խեջոյի բարեկամները աեսնելով, վոր ազեն որեցոր միշտում և, վճռեցին նրան ամուսնացնել, վոր «խելքը զլուխը զա»։ Յեկ խակապես, ընտանիքի ու զավակների տեր դառնալով, Խեջոն սկսեց հետզետե աշխատանքի կալչել։ Հորից ժառանգած կարգությունից այդ ժամանակ մնացել եյին միայն մի քանի կտոր ընափառ հողեր, վոր Խեջոն մշակում և լավ ել արդյունք եր սատանում։ Բայց ափսոս, վոր նա խմելին ու խաղալը վերջնականութես չթողեց։ Ամեն կիրակի ելի նա հաճախում եր գինետուն և ամբազ դիշերն այնտեղ անցկացնում։ Մի դիշեր նա տարգից իր արձաթե դուքին և ինքն իրան խոռք ամեց այնուհետեւ բոլորովին չխաղալ, բայց չկարողացավ իր խստումը կատարել։ Այդ գեղաքից յերկու շարաթ հետո, նա նորից խաղաց և այս անզամ տարգեց տասներկու փութ բամբակ, արտինքն, իր ամբողջ տարգա յեկամուտը, վորով պիտի ընտանիք պահեր ու յերեխաներ կերպեր։ Այդ որվանից արդեն Խեջոն յերգվեց այլես ձեռը կարս չառնել, իսկ հետեւյալ առավոտը՝ մուրճը վերցրեց ու դեպի աղահանք ուղեգործեց։

Այս շարտաբախտ որից անցել եր արգեն ութ տարի, բայց մինչև
ոյսը Խեջոն հաշվում ու տանջվում եր պարուժի սարսափելի տո-
կոսների և աղահամնքի մաշեցնող կամարդների տակ :

5.

Սաքոն տարվում եր ու տարվում ։ Նրա թղթերը շարունակ ձախ
եյին դուրս դալիս . նա տարվեց վերջին կողեկը և սկսեց սարսա-
փելի ուշոնցներ թափել բերանից դանաղան վորոշ և անորոշ հա-
ցներով : Նա հայոցոյում եր և խաղ հնարողին, և բախտ բաժանո-
ղին, և ինքն իրան, և սատանային և ավելի մաքուր եցակիների .
իսկ Խեջոն լուռ մտածում եր և տատաները կրծացնում . նրա ներ-
ում սարսափելի կոկի եր կատարվում :

— Ինձ ել թուղթ զցիր, — յերկար մտածելուց հետո խնդրված
ձայնով դիմեց Խեջոն թուղթ բաժանողին և հանեց գրասանից յերեք
ուուրիանոց մի թղթաղբամ : Այդ բովկիցին նրա յերդմաղանց
ձեռները սասառիկ դողդողում եյին : Խեջոն տաքացած եր և խաղում
եր ոփսիով : Ռիսկով եյին խաղում և մյուսները, վորոնք աչքի պո-
չով տեսել եյին Խեջոյի դրախնի վրակիները :

Խեջոյի բանը շատ ձախ եր զնուում . կասին Սաքոյի անալուզու-
թյունն անցել եր նրա վրա : Նրա հանած յերեք ուուրիանոցը շու-
տով մանրացավ ու հալից :

Խեջոն նորից մտածելունքի մեջ ընկավ : «Բավկական և, ասում
եր նրան մի ներքին ձայն, ճնուք վերցրու, Խեջոն, Հիշիր յերդում» :

Այդ անախորժ ձայնն ալեկիում եր Խեջոյի սիրաց և նա ջղա-
ձկաբար ճմլում եր յերեսն ու ճակատը :

«Ի՞նչ եւ զնատվում, ասում եր նրան մի ուրիշ՝ ավելի դաւրի-
կան ձայն, զա տղամարդություն չի . տղամարդն սկսած զործը ելի-
ստա չզմետք ե թուղի, մեկ ել կտնենեմ, թուղթը վորումից, աջողու-
թյան դուռը բացվեց . . . Են ժամանակ համ տարվածդ հետ կոտո-
հետ, համ ել բավկական տարած վորդ կունենաս» .

Խեջոն սկսեց հետեւ այս վերջին խորհրդին . իսկ առաջին ձայ-
նի խայթոցն անդպալի դարձնելու համար՝ վերցրեց կարմիր զի-
նու շիշը և մոտեցնելով չըթունքներին՝ մի հանգով դատարկեց
նրա կեսը :

Կաղի ամենասաք ժամանակը, յերբ ուուրիները կոպեկների
ովես եյին մեռից մեռ անցնում, հանկարծ Խեջոյի թուղթը փոխվեց
և սկսեց աջող բացվել . բայց այդ աջողությունը շատ կարճատէ
յեղավ, ու նրան հաջորդեց մի հուսահատեցնող ձախորդություն,

վոր տեսեց մինչև խաղի վերջը : Խաղը վերջացավ միայն այն ժամանակի, յերբ Խեջոն թափտ տվեց քառիկ անկյունները, չթողնելով նրա մեջ մի կողմեկ անդամ : Սաքոն, վոր մինչ այդ ժամանակ Խեջոյի կողքին նստած՝ նրա տալացուկի և անելացուկի հաշիվն եր պահում, խաղի վերջում մի քանի բաժակ խմեց ու անհկատելի կերպով ծկվեց : Խաղացող վաճառականները վոտի կանգնեցին, տանողաբարվողի կենացը խմեցին ու խմբովին դուրս յեկան դինեմից :

— Տղեք, լավ ոլլոկեցինք, — կամաց ասաց Ան-Մարոն, յերբ փողոց դուրս յեկան :

— Հազար մանեթ ել վոր ունենար, ես դիշեք բոլորը կտանեցինք, — ամիւլացրեց մյուսը :

— Կատարյալ եշ եր, ոկի բան չեք հասկանում, — ասաց յերբուրդը :

— Խելք մնացե՞լ եք դլիօն, վոր բան հասկանար . դինու մերը չմեռնի, — նկատեց չորսորդը :

— Ես նրա բոլոր թղթերը ճբադի լուսի դիմ տեսնում եյի, — որածեցավ Ան-Մարոն :

— Իսկ յես թղթերը սարքում եյի :

Այսուհետեւ մեր վաճառականները պարձենում եյին, վոր զանազան խարսախություններով խարել են միամիտ տառիկին ու նրան կողովունել :

Խեջոն մնացել եր մենակ, դինետան մի անկյունում, թղթասեղանի մոտ կծկված : Նա յերկու ձեռով ամուռ բռնել եր գլուխը և մտածում եր : Հազար ու մի դառն մտքեք պաշարել եյին նրա ուղեղը և սաստիկ ճնշում եյին սիրալը : Թեե կարծիք դինու հրաշալի զորությունը բավականաչափ մեղմացնում եր այդ մտքերի պատճառած սարսափը, բայց և այնպես, նա անկարող եր բոլորովին մոռացնել տալու հուսահանեցնող իրականությունը : Խեջոն տիսուր եր, սարսափելի ախուրը : «Լա՞վ եր, լա՞վ եր, յերեք ամսմաշ աշխատանքը մի քանի ժամում ծուրը զցեցիր, լավ յեղա՞վ», ասում եր նույն ձայնը ներսից : Խեջոն ատամները կը ճտացնում եր, բռունցքը սեղմում, կասես, նու ուզում եր բռնել այդ աներնույթ եակին, ուղում եր ուժեղ մասներով սեղմել նրա կոկորդը, սուր տուածներով պատառուել նրա մարմինը, վոր ել չհամարժակվի մարդու սիրտը մաշել : Բայց չեք կարողանում և որտի հերսից միայն մաղերն եր ձգձում :

Մկոն նստած եր իր առաջիւ տեղում և համարյա քանիներոք անդամ կրկնում եր «Ձախորդ որերս» ու մատներով չըթկացնում :

Ոգոն ել ձեռքն ականջին դրտծ՝ շիքաստի յեր յերգում ու ինքն իր ձայնով հրճում : Խոկ Բաղոն, զլուխը սեղանի վրա դրտծ, խորմ-փացնում եր :

Խեչոն Հանկարծ տեղից վեր կացավ, գլուխը թափահարեց, ու-բագությամբ մոտեցավ Մկոյի սեղանին և ասաց .

— Եսն ել պիտի խմեմ, աղեք, յեկեք խմենք, նորից խմենք ու քեփ անենք : — Նա վերցրեց մի ձեռքով Մկոյի տունի բակալը, իսկ մյուսով գինու շիշը և միմիանց յետեից յերեք բակալ դատար-կեց :

— Կեցցե՛, կեցցե՛ իր ախաղերը . սուրբ յերբորգության շնոր-դժի ստացար, — մեծ ուրախությամբ բացականչեց Մկոն, — բեր, մի բեր եղ սիրուն ճակատդ պաշեմ : — Նա յերկու ձեռք ամուր դրիկց Խեչոյի գլուխը և սկսեց պաշպէել նրա յերեսի դանապան մտաբը :

Խեչոյի քաջությունն Ոգոյի հիացնունքն ել շարժեց և սա իրան պարտավոր համարեց խոնարհվել նրա տղամարդության տոշե . նա պատկառանքով մոտեցավ իր նոտիկին թշնամուն, յերեք անզամ համբուրեց նրա ճակատը և շարունակեց իր շիքյաստին :

Ծուտով Խեչոն ել սկսեց յերգել : Թեև սկզբում նրա ձայնը դժվարությամբ եր գուրս գալիս և նա յերգում եր զոսով, բայց կամաց-կամաց ամեն բան կարգի ընկապ, հետպհետեւ վողեարսիլելով՝ նա սկսեց համ սրտալի յերգել, համ ծափ տալ, համ ել պարել :

«Յերբորգության սուրբ շնորթը շուտով իր աղղեցությունը ցույց տվեց . Խեչոն յերկար յերգելուց ու պարելուց հետո, վերջա-ռիս սաստիկ թուլություն զգաց, տեղն ու տեղը վեր ընկապ : Նրա յերեսը կարծրատակել եր, աչքերը սաստիկ ուռեղ եյին և ձեռ. ու վուր թուլացել՝ ուժից ընկել : Նա մի անդիմադրելի պահանջ եր զգում սրառկելու, բայց, վորովհետեւ նստարանը նեղ եր ու անհար-ժար, ոյզ պատճառով ավելի լավ համարեց պառկել սեղանի որակ, խոնավ գետնի վրա, հազար ու մի տեսակ կեղտոտությունների մէջ : Պառկեց և խսկոյն մրափեց :

Կեօ գիշերը վաղուց անց եր, աքլորները կանչում եյին : Ներս մտավ Վարսուը և հրամայեց այցելուներին հաշիվը տալ ու հե-ռանալ, վոր ինքը կարողանա մի քիչ աչքը կապցնել : Այդ հրամանն ինչքան ել վոր անսախորժ լիներ այցելուների համար, այնուամե-նայնիվ, պարտավորեցուցիչ եր և հարկավոր եր անպատճառ հնա-դանդվեց նրան : Ճարահասայալ, Մկոն ծանրությամբ տեղից վեր կացավ, բեզի տակ մի բան փրնթփրնթաց, հետո առանց շտապելու

վերցրեց իր թաղիքն գլխարկը, յափ տվեց ու ծանկեց։ Ողոն ել դուրս դալու պատրաստություն եր տեսնում։ Սկսեցին քնածներին զարթեցնել. Բաղոն շուտ զարթեց. նա աչքերը արորելով զնաց զեսի անկյունը և ազրակույտի վրա կռանալով՝ սկսեց վորձեալ. Նրա սիրոն ելի խառնում եր...

Մկոն յերկար ժամանակ աշխատում եր զարթեցնել Անչոյին, բոյց չեր կարողանում. վոչ նրա ահեղ զոռոցը և վոչ վոտի հարցածները չեյին ներդոքում քնածի վրա։ Ուրիշ Հնար չըտնելով, վերջապես Մկոն բռնեց նրա ականջներից և սկսեց բոլոր ուժով թափառարել ու ճմկթել։ Սասարկ ցավի աղղեցությունից Խեցոն իր կարմրած աչքերը կիսով չափ բացեց, մի շվարած հայացք դժեց չորս կողմը և կրկին աչքերը փակեց։ Այնուհետև Մկոն շատ չար շարվեց, բայց վոչ մի կերպ ել չկարողացավ Անչոյին ուշեւ բերել, վերջապես նա վճռեց քնածին շալակով տուն հացնել։

Բաղոն իր և իր ընկերի հաշիվը տվեց ու նրանք դուրս յեկան պինեանից։

Մնաց Անչոյի հաշիվը Վարոսը լուվ իմանալով, վոր Անչոյի քսակը բոլորովին զատարկվել ե և, վոր նա չի կարող վերցրած գենու փողը վճարել, առանց տատանվելու. Հանեց նրա հազի չուխոն և պահելով իր մոտ վորովես զրավական, քեած հաճախորդին Մկոյի շալակը ավեց ու դինեանից դուրս քցեց։

Դրսի սղը շատ հով եր. առոք քամին նեղ փողոցով սղալով անցնում եր. Մկոն կանց առաջ փողոցում, կենդանի բեռը վայր դրեց, Հանեց իր հին կարճլիկ արան, քնած ընկերին Հաղցրեց, ապա կրկին շալակելով ճամբան հանդարատ շարունակեց։

Անչոյի վիզը ձևորել եր. նրա գլուխը թեքվել եր դեսի ճախ և անդադար որորվում եր։ Կիսամայա կլորիկ լուսինն իր արծաթյան ճառագայթներով լիզում եր Անչոյի գունատ դեմքը և մեռելային կերպարանք եր տալիս նրան։ Խոկ Մկոն, իր միանման լայն քայլերով, Հանդարտությամբ առաջ եր զնում և քնի տակ մեղմիկ յերագում։

«Զախորու որերս, ճմբան նման, կուլան ու կերթան, և Հատելու չե, վերջ կունենան, կուլան ու կերթան...»

1900 թ.

ՄԱՐԱՆԻ ԴԵՂԱՊԵՏԸ

Ամառային շուշ որ եր . տոթը խեղդում եր : Մի ծառի տերեւ , մի խոտի թերթիկ չեր շարժվում . թեթև զեփյուռ անզամ չեր խաղում , վոր տոչորվող մարմիններին վայրկենական զովություն բերեր :

Յեւ այս ժամանակ , Մվիկենց բակի պատի սալիքրում , հնամաշ թաղիքի վրա փոված , աղքատիկ անկողնու մեջ , շնչառդառ արհցում եր մի հրվանդ կին : Դա ընտանիքի մայրն եր՝ Մվիկենց Մարանը :

Յերկու ամբողջ ամիս եր անցել այն որից , յերբ Մարանը դլուխը բարձին եր զըեւ : Մանը հիվանդությունն իսպառ հալ ու մաշ եր արել նրա վաղեմի առույգ կազմվածքը . նրա թուխ գեմքի կաշին փափկել , նրբացել ու գեղին մոմի գույն եր ստացել , իսկ հյուծված մարմնի բարակ մորթու տակ զանազան տեղերում գուրս ելին ցցվել սուր անկյուններով՝ հաշված վոսկորներ , վորոնց յերեսից նշարովում ելին կազուաակ յերակների բազմատեսակ ճյուղ զավորությունները :

Յերեմի կեսորից խեղդող տոթը շատ եր նեղում Մարանին . նա պատկած եր մեջքի վրա՝ խուփ աչքերով և բերանը լայն բացած արագ-արագ հեռում եր : Հիվանդի դրուիթը թույլ-թույլ ընկած եր կեղտակոլուր բարձի վրա . վոսկրացած բազուկները տարածված ելին վերմակից դուրս՝ աջ ու ձախ , իսկ կիսամերկ կրծքի չորացած տախտակը հեռցի հետ մեղմորեն բարձրանում եր ու ի՞նում :

Մարանի դիմավիերեւ , դդակը հոնքերին քաշած , նոտած եր ձարութը , նրա ամուսինը , վոր հիվանդապահի դեր եր կատարում : Ռւունու դալար ճյուղերից կարմած մի փունջ ուներ նա մեռին , վոր անդադար տարուրերելով հիվանդի յերեսի վրայով , թե ճանճերին եր հալածում և թե մեղմիկ քամի առաջացնելով , ցավատանջ առմուսնու տոթախորով դեմքին թեթև զովություն բերում :

Հուռ եր Հարութին ու տխուր . նրա կոսիտ արևատ դեմքը պատած եր վշտի խոր կնճիռներով : Ի՞նչ աներ խնդըլ , ակա հեշտ

բան չեր նրա պիս անճարը աղքատի համար ամբողջ շարաթներով
բան ու զործ թողած՝ տանը վեր ընկնել ու հիվանդի մոտ մաշվել,
որորինել։ Բայց նա արեց այդ զոհողությունը. արեց, վորովհետեւ
սիրելի ու թանգ եր նրա համար վերմակի տակ զալարվող հյուծա-
ված հիվանդը, վորովհետեւ շատ մեծ եր նրա տան վրա Մարանի
տնիցած հոգսն ու յերախտիքը։ Ենվ Հարութը ձեռքից յնկածը
լինայնց իր թանգագին կողակցին առողջացնելու համար։ Շրջա-
կայբում ել սրբավայր ու ուխտատեղ, ել ժամ ու մատուռ չեր
մնացել, վորոնք անմաս լինելին Հարութի ջերմնոանդ սրտից
քոյխող մոմ ու մատաղից, բայց մահվան հրեշտակի նիրաններում
առաւազող դժբախտ հիվանդին և վոչ մի կողմից փրկություն չե-
կալ։ Գավառում զտնիվող բոլոր հնարագեա դալլաքները, թժկա-
կան հմտությամբ հոչակված պառավներն ու մինչեւ անդամ զբաց
մոլաներն ու ողոմնագետ աիրացուները, բոլորն ել փորձել եյին
Մարանի վրա իրանց գիտության բուժարար ուժը, բայց և վոչ
մեկը չեր մնդմացրել սոսկալի ցավի տանջանքը։ Յավին անբուժելի
յեւ—այսուես եր նրանց վերջնական յեղբակացությունը։ Ենվ այդ
տնողոք վճիռը Հարութին հայտնողը յեղավ մի պատկառելի նե-
ապէր պառավ, վորը վերջում արտասուրը սրբելով, ամելացրեց.
«Մարանի փրկությունը մնաց դեղապետին. թե նրան ճար լինի,
դեղապետը պիտի լինի, թե չե, վոր կոխմանն ել գերեզմանիցը
գուրս գա, ելի չի կարող նրան աղատել»։

Պառավի այդ անսիրա, հայտարարությունը սուր կացնի հար-
վածի ներդրծություն ունեցավ Հարութի վրա. նրա վողնաշարը
կասես մնջուղից կոտրվեց, գլուխը քաշ ընկավ կրծքին և նա սկսնց
պառնազին հեկեկալ։ Գուժաբնը պառավը հեռացավ, բայց Հարու-
թի բորբոքված աշքերից բղխող աղի արցունքի խոշոր կաթիները
գեռ յերկար, յերկար թրջում եյին հնամաշ թաղիքի խունացած
նաշխերը և աղեկտուր հեկեկանքների ընդհատ հնչյունները մինչեւ
յերեկո լսվում եյին խարխուլ խրճիթի ևն խավարի մեջ։

Վերջապես, առաստ արցունքը փոքր ինչ հովացրեց Հարութի
արովող սիրտը. նա չուխի թևով աչքերը սրբեց և սկսեց ինքն իրան
մինիթարել ու սիրտ տալ։ Զե՞ վոր պառավը դեռ նրա որսում
հույսի մի փոքր կտոր եր թողել—դեղապետը՝ իր փրկարար զորու-
թյամբ. ուրեմն զեռ մնում եր ելի մի չուղ, վորից կարող եր բըռ-
նել վշտերի ծովում իսկողող թշվառը։

Ենվ այդ որվանից Հարութն ամեն կերպ աշխատում եր լսել.
Մարանի բերանից, թե ի՞նչն ե նրա սրտով ուզած դեղապետը.

ինչո՞վ կկամենար նրա բաղմատանջ կյանքի այլ հավատարիմ ընկերը վերջին անդում թրջնել իր այրված ու տարակված լեզուն՝ «Մարան ջան, անունիդ մեռնեմ, տիր մի առա, սիրոդ ի՞նչ ու զում, ի՞նչ կուղես ուտել, —բաղկալի սոլաս, լավ վսսալախաշու, կանաչ սղոլոնիկ, քաշախով դանդուռ, արձի շորվա, նոր խնձուծ ծիրան, կամ թթվաշ խնձոր. վո՞ր մնելից կուղես, արևիդ մասադ»։ Այս հարցերն որական տասն անդամ կրկնում եր հարութը և անթարթ այցերն ամուսնու յերեսին ուղղած՝ ամբողջ ժամերով նույնում եր նրան ու պատասխանի սպասում. բայց իզուր ... Մարանը չեր պատասխանում. նա յերբեմն միայն ցալվալի ճրոցով վսսկրացած մեջքի տեղն եր փոխում ու կարմրատակած աչքերը կիսով շափ բանալով, պատանձված չրթումներն եր կամացով լըսպատշանում. դա նշան եր, վոր հիվանդը չուր և ուղում :

Հարութն շտապով հիվանդի չորացած բերնին եր մոտեցնում սառը չրով լիքը փարչը, վորից հնոտ Մարանի գլուխը կրկնեն բարձի վրա յեր ընկնում. և հիվանդ կրծքից դուրս խուժող ոչի տառա հոսանքը մի որտամաշ շոփե եր առաջացնում։ Այսուհետեւ, ելի նույն սպանիչ լուսությունը, ելի հիվանդի միորինակ անշարժությունը և հուսահատ Հարութի խեղդվող հեկեկանքը։

Ահա այս զրությունն եր տիրում Մվլիկենց բակում, յերբ զորբատի ջախւախ դուռն աղմկալի շառաչյունով յետ դնաց ու փոքրիկ Ամիետը, կանաչ խոտը կանատակին, թռչկոտելով ներս յեկալ։ Դա Հարութի տղան եր, վոր իր քույր Սաթոյի հնոտ այլուց եր վերադառնում։

— Հայրիկ, —զուռաց Ամիետը գեռ բակի շեմքից, —ողորինչան են ծախսամ, պոքինջան, տեսե՞լ ես, կարմիր պորինջան. ե՞ն, վո՞ր անցյալ տարի քեռոնց այդում խորովեցինք, հա՞.. լավն եր, թըլվաշ.. Ենք յերեխան բերած խոտը բառաչող հորթի առաջն ածելով, սկսաց չոյել փոքրիկ կենդանու սիրուն ճակատը։

Կայտառ մանկան առողջ կրծքից դուրս թռած բարձր ճիշդ սթափեցրեց հիվանդին, նա կողքի վրա շրջվեց, ծանր ճրաց, հետո աչքերը բացեց ու փորձնց նոտել։

Ուրախացած Հարութը նստացրեց հիվանդին և նրա թիկունքը յետեւ մի կլորած թաղիք զրնց, վորին հենվել կարողանար Մարանի թուլացած մեջքը։

Մարանը մի քանի քերան անքաց, մեկ ել նորից հառաջնց, հետո իր լայնացած բիրերի սարսափելի հայացքն ամուսնու յերեսին հառելով գժվարությունը արտասանեց՝ —Հարութ...»

— Զանի՛, — սրտապատառ ուրբախությամն պատասխանեց Հարութը, — ի՞նչ ես ուղում, անունիդ մեռնեմ, բաղկալի սպաս, յավ վոսպախաչու, կանաչ պողոնիկլ... և այսպես նա պիտի վերծացներ իր սիրելի ուտելիքների ամբողջ ցուցակը, յեթե հիվանդի քրնախ զդանաք արտահայտող կնճիռները և ձեռքի բացասական շարժումը չստիպեցին նրան լուել: Բայ յերեւոյթին Մարանը չեր ուղում լսել հազար ու մի անդամ կրկնված այդ անտանելի բառը:

— Հարութ ջան, — կրկնեց նա վորքը ինչ բարձր և ապա, խոսքը շարունակելու համար, իր հիվանդ կրծքի բոլոր գործությամբ ողի պաշտը ներշնչեց:

Այս անդամ Հարութը լուռ եր և ականջը հիվանդի շրթունքներին մոտեցրած իր ամբողջ եյտելյամբ լսողություն եր դարձել:

— Պորին-ջան, — չնչասպազովելով վանկվանկ մրմնաց Մարտին, — կարմիր պորինջան, — կրկնեց նա զողոզոջուն ձայնով, և իր բորբոքված աչքերի աղերսական հայացքն ուղիղ ամուսնու ճակատին մեխնեց:

Հիվանդը զժվարանում եր յերկար խոսել, բայց նրա խղճալի հայացքը ողարշ ասում եր. «Հը», այս չորացած շրթունքներին կարող ես հասցնել իմ գեղապեսը, թե պիտի հոգուր վրա պարտք թաղնես իմ վերջին սրտուղեմիքը»:

— Ես բոպեյիս կրերեմ, — հուղմունքից զողացող ձայնով բացականչեց Հարութը, և տեղից վեր թռակ ու գեղի դուռը վագեց, բայց նա զեռ դռան չեմքին չեր հասել, վոր հանկարծ ձեռը գրառեց տարալ; և մնաց տեղում արձանացած: Խեղճի քամկը բոլորովին գտատրէ եր...

Այսպես մի բոպե նա մնաց ձեռը գրպանում շվարած, կանդնած, բայց հետո նրա զլիում մի հուսառու միտք ծալեց, — զուցե հաջողվեր ապառիկ բերել, և նա զառնառով վորդուն հարցրեց:

— Ավետ, այ Ավետ, ս՞վ եր ծախում պորինջանը:

— Իւնիննց Պատղիկը, Ենքան լա՛վն եր, — հրճվանքով վրա բերեց յերեխան:

Բայց պատասխանը զուր չեկալ Հարութին: Պատղիկն են պտուշեր, վոր ապառիկ բան ծախեր: Հարկավոր եր մի հնար անել. և նա յեղունդները կրծոտելով կանոնել եր զռան առջև ու իր ուղիղի ամբողջ ուժը լորած՝ աշխատում եր մի ճար զանել, վոր զեղապիտութեանը հիվանդին հասցնի:

Հիվանդն իր կախված դլուխը բարձրացրեց և հոնքերի տակից ամուսնու յերեսին նայելով, արտասանեց.

— Տերի՞ց :

— Հա, բերում եմ, և բովելիս — չկըվելով պատասխանեց Հարությը, և սկսեց կանգնած տեղում ինչվոր աննպատակ շարժումներ զործել. հետո դառնալով աղջկանը, ասաց.

— Աղջի Սաթո, ի՞նչ եյի ասում... Հա... մի շոր, պոբինջանի համար չոր տուր, չոր — Աղջիկը բերեց չորը, բայց հայրը զու չեր շարժվում :

Մարանը մեկ ել նայեց ամուսնուն, և տեսնելով նրա շփոթ-ժանքը հարցրեց.

— Հարությ, այ Հարությ, վոռուն, վոռուն,

— Փո՞ղ... տանք... հեշտ ա, հեշտ, մի տեղից կճարեմ, — ինպան ծամեմելով պատասխանեց նա, թեև վոչ մի տեղից վոռ ճարելու հույս չուներ :

Հիմանդի ճաքճըլտծ լրիւուքները միմիանց մատնցան, թե՝ բանի մկանունքները ձգվեցին և նրա այլակերպված դեմքի վոսկրու մակերևույթի վրա ժպիտի պես մի բան նշմարվեց. բայց վորքան դառն, վորքան կծու յեր այդ սպանիչ ժպիտը, կասեռ թույն եր կաթում նրանից :

Մարանը հառաջնց ու աչքերը յերկնքին հառելով մի բան մըր-մնջաց. անեծք եր դա, թե՞ աղոթք-չիմարվեց, բայց ցավուա թոքի խորքից դուրս վիժող յերկար հազի մեջ խեղզվեցին նրա վերջին բառերը :

Հաղալուց հետո Մարանը նշանոցի կանչեց աղջկանը, և նրա ականջին ծանր հեալով, ինչվոր բան ասաց : Սաթոն հեռացալ և յերկու բովելից հետո վերադառնալով, մի փաթեթ բերեց ու հան-ձեց մորը :

Հարությը ճանաչեց փաթեթը. դա Մարանի բաժինքի ամենաարագ զալշուղն եր, վոր կարված եր զանազան վառ դույնի շալերից ու մետաքսե զործ վածքների մանր կտորտանքներից :

Հիմանդն առաջ նախշուն դալվուզը, դանդաղությամբ շուռն-շուռ ամից իր ցամաքած ձեռների մեջ և որտե խորքից մի հոգոց արձակեց : Ո՞վ դիտե ինչ քաղցը հիշողություններ, ինչ սիրուն պատկերներ վերակենդանացան այդ վայրկյանին տարաբախու կնոջ մոլորված մաքում : Զե՞ վոր նրա անցյալի կտրմիր որերի հետ եր կտպված այդ նվիրական դավլուզի սիրելի պատմությունը :

Մարանն իր հալված մատների բոլոր ուժը լարելով, արձակեց շավլուղի կապը, յետ ավեց փաթույթը և նրա արանքից վարզա-գույն չթում կապած մի վորքը բան հանելով, մեկնեց Հարությին :

շէրջինս առավ, քանդեց նրա ամուսն կազը և ինչ... մի պատճեց շողշողուն արծաթի դրամ—մի հատ տաս կոպեկանոց :

— Տար, — մրմնջաց հիվանդը, հոգնած դլուխը բարձին դցելով, — տար ինձ համար սորբինջան բեր. ախ, սրտով ուղղում եմ, — ովելացը նա ու ցամաքած պոռչները լրովացը : Իսկ հարութը չեր շատուում. նա կանդնած եր նույն տեղում և փոքրիկ դրամը մատների մեջ խաղացնելով, կասնա զվարծանում եր նրա փայլով : Բայց իսկասելու նա տանջմում եր, դառը մտքերը խեղդում ելին նրան և վրդովիած խիճը չարաչար դալարվում եր նրա ներառում : Հարութը հիշեց, վոր այս դրամն ինքն եր ընծայել Մարանին նոր նշանիված ժամանակ և հենց այն որը, յերբ նրան հաջողվել եր տաշյն սիրոյին համբույրը քաղել սիրուն նշանածի արվարդ թշերից : «Ճե՞յ գիղի անցած որեր», շնչաց նա ատամների արանքից և ոյնուհետեւ մտաբերեց, թե քանի անդամ եր տեսել, յերբ ինդն Մարանն իր այդ թանգաղին դանձը հանում եր մեղուկից ; որբում, պապղացնում, մի փոքր զվարձանում և նորից սնդուկի ապահով անելունում թաղցնում :

Հարութի ձեռը չեր զորում այլ փողը ծախսելու . նրա խիղնը բողոքում եր, վոր տամնյակ տարիների ընթացքում այնքան խնամքով ու զորվութանքով պահված փոքրիկ դրամն իր մահամերձ տիրոջ վերջին սրառուղելիքի վրա զործադրովի : Վոչ, դա կլիներ Հարութի կողմից մի աններելի առերախտություն, մի անսիրա ու սոսար վարժունք, և իհարկե, նա վոչ մի կերպ չի հաշտվի այդ մտքի հետ, նա կհանի իր հաղի չուխեն, գրավ կդնի նրան, կծախի պդակն, ու նրա փողով իր բազմաշխատ ամուսնու համար դեղար պետ կդնի . իսկ այդ փոքրիկ պապղում դրամն ելի սնդուկի խոր անհյունում կովահոյի :

— Ա՛խ, պորբինջամա՞ն, — շնչաց Մարանը և լայնացած բիրերի սարսափելի հայացքը Հարութի յերեսին ուղղեց, — շո՞ւս արեք, — ավելացը նա, — թե չի անդեղապետ կմհանեմ...

Վերջին խոսքերը կասես ծակեցին Հարութի սիրու, այլև անկարելի յեր սպասել . նա արագությամբ յերեսը շուռ տվեց և շատուով բակից զուրս յեկավ :

Հարութի փոքրիկ տղան, սիրուն հորթուկը թողած, հոր յեւակայից թռչկուաելով գուրս վաղեց, իսկ Մաթոն սկսեց ոջախը վասել, վոր մինչև որորինջան բերելը, կրակը պատրաստ լինի :

Հարութը, փոքրիկ դրամը պտղնցում սեղմած, անհաստատ քայլերով առաջանում եր զեպի իլանենց Պապիկի խանութը և ճանապարհին մտածում . մենչ անեմ, ես բապեյիս յես ո՞ւմ դիմեմ .

վրա բառեղից մի յերկու դրվանքա պարինջանի փող զտնեմ . . . : Հանձնարծ նա կանդ առավ, մատոր բերանը զրեց և սկսեց մտքում այս պես զատել. «Բայց ի՞նչ պիտի լինի, յեթե յես ևս փողով պորինջան առնեմ, իսկ եղուց կամ ելոր, յերբ վոր մնու փող ընկնի, Մարանի դրամն իրան վերադարձնեմ. չե վոր միւնուցին բանը կլինի» :

— Ի հարկն միւնուցին բանն ա , — համարյա լսելի ճայնով արտասանեց Հարութը և այս անդամ հաստատում քայլերով մոտեցավ Պապիկին :

— Բարի որ, Պապիկ :

— Բարով, — կեսարձրան պատասխանեց խանութպանը, աչքի պոշով նայելով իր անյեղ մուշտարծուն :

— Պորինջան ունե՞ս :

— Շա՞տ, բայց քո ուտելու ժամանակ չի, ախոյեր Հարութը :

— Ի՞նչո՞ւ, դրվանքին քանի՞ն արժի :

— Հինգ կոպեկ :

— Ո՞ո, ինչ թանգ ես ծախում, — ակամա վրա բներեց Հարութը :

— Բաս, զու ի՞նչպես եյլոր ուղղում գլուխ հինգ կոպեկ, հա՞ , զե՞ , զե՞ , քաշվի զնա բանիդ, զուռը մի կտրի, շող ա:

Բայց Հարութը չեր հեռանում, ընդհակառակը, նա մոտեցավ պորինջանի սալային, և սկսեց ջոկջոկատել նրա միջի լավերը :

Խանութպանը զարմացած աչքերով վասից գլուխ չափչիում եր Հարութին :

Այդ ժամանակ, յերբ Հարութը գլուխը կախ՝ զբաղված եր պորինջանը ջոկէլով, խանութի զռանը մոտեցավ մի ալեղարդ ծերունի: Ծերեցփոխ Պետրոսն եր զա՞ գյուղի առաջնակարդ իշխաններից մեկը, վորը յեկեղեցական գումարների ուղիղ յերեք քառորդը գողացել եր :

Ծերեցփոխ Պետրոսը մի խստասիրտ ու հոգեհան վաշխառու յեր: Դա այնպիսի մի հրեշ եր, վոր ձեման ընկածին ել բաց չեր թողնի, մինչև վոր նրա արյան վերջին կաթիւը չծծեր: Ով նրանից մի քանիւ ուսւրյիւ պարտք վերցներ, տարիներով պիտի տառապեր ովորդեց-վորդի ովիտի հարվեր ու մաշվեր՝ նրա անիծված դավթարի սոսկալի ծանրության տակ: Այսպիս համարյա ամբողջ գյուղը անքում եր այդ անիբառ մարդու ահոելի ճիրաններում: Շիումանս Պետրոսի զավիշաբը չընկնի», ասում եյին գյուղացիք:

— Բարի աջսպում, Պապիկ, — ասաց յերեցփոխը խանութի շեմքից ներս մտիկ տալով:

— Այ հազար ու հազար բարով, — պատասխանեց Պապիկը գոազի յեկելով:

— Ես ի՞նչ ա, մեր տղա, ես նուրար ես բերել, հա՞ :

— Հրամանք ես, Պետրոս աղա, կարմիր պորինջան ա, — սուըր-իական ժողովը շրթունքներին պատասխանեց Պապիկը :

— Ի՞նչ արծի Փունաը :

— Հինդ կոպեկ :

— Պա, պա, պա, պա, — սարսափով բացականչեց յերեցիոիը և յերեսը շուռ տալով անսովոր արագությամբ հեռացավ այնտեղից : Բայց մի բոպեյից հետո նա կրկին յնու դարձավ և խանութի գուանը մոռնաւալով՝ աչքը ճեղած ներս նոյեց :

Հարութը՝ թիկունքը դունը դարձրած, դեռ շարունակում եր իր զործը. «Փունաը հինդ կոպեկ ա, հեշտ բան չի», մտածում եր նա, և աշխատում եր ընտրել պորինջաններից այնպիսիները, վոր համ կարմրած լինեյին, համ խոշոր, համ կլոր : Ավետը լուռ նա-յում եր հորը :

Յերեցիոին իր ծերացած րիբերի բոլոր դորությունը բարած՝ յերկար ժամանակ նայելով, աշխատում եր ճաճաչել Պապիկի մուշ-արուն, բայց չկարողացավ :

Վերջը նա Պապիկի վեհը ձգեց ու հաղիվ լսելի հարցրեց. «Եդ ո՞վ ա՞ :

— Հարութն ա, — պատասխանեց Պապիկը բավական բարձր ձայնով :

Յերեցիոիը աչքերը կուչ ածեց ու գլուխը հարցականորեն շարժեց, ովո՞ր Հարութը, ուղում եր ասել նա :

— Միլիկենց Վարդանի տղեն, — համարյա գոռալով պատաս-խանեց Պապիկը :

Հարութը յնու նայեց, տեսավ շեմքում ցցված Պետրոսին և նրա սիրաը մի տեսակ ալնկոծալնց : Նա զգաց, վոր յերեսը կար-մրատակեց ու ականջները տաքացան, բայց թե ինչու, չկարողա-ցավ իմանաւ :

— Միլիկենց Հարութը, — ծորելով կրկնեց յերեցիոիը և քթի տակ մըթմբալով հեռացավ գոմից : Նա նստեց առվի կողքին, ու-սենու շվաքում և շրթունքները կրծառելով մի հաստ ու կարճ պա-պիրոս փաթաթեց :

Շուտով Պապիկի խանութից դուրս թռավ Ավետը և զիրիդը յերգելով ու մորին բարձրաձայն թմբկահարելով առաջ վաղեց :

Վորդու յետեից զուրս յեկավ Հարութը, պորինջանը չուխի փեշում բռնած :

Նա հեռալից նկատեց յերեցիոիք գորշելի կերպարանքը. վոր

առաջի կողքին, ճանապարհի վրա պաղած, քուլաւառուա բաց երթազնում պապիրոսի դառը ծուխը:

Հարութին պատեց մի տիուր նախազգացում. և նրա սիրահ ոկտե անսովոր արագությամբ բարախել. վորքան տվելի յեր նուժունում Պետրոսին, այնքան սաստկանում եր որտի թրապացը և վուներն ակամա սկսում եյին թուլանալ:

Մեկ ել նա ժամանեց յետ գառնալ և ճռմապարհը ծոել, վորոշեսղի յերեցփոխի ատելի յերեսին չհանգիպի, բայց տեսավ, վորաքնն ուշ ե, քանի վոր շատ եր մատեցել Պետրոսին:

Նա դլաւխը կախեց, աչքերը գետնին հառեց և վորքան կարող եր քայլերն արւացացրեց:

Այդ բողջին նա սովորական անցորդների պես չը դնում, այլ ուղղակի վաղում եր, սրտապատառ փախչում, կարծես մեկը, հրացանը կրծքին սեղմած, նշան եր բռնել նրան:

Բայց ի՞նչ, չնայելով զործ դրած բոլոր ջանքերին, նա չկարողացավ խուսափել վերահաս վասնգից և դեռ նոր եր ուղում անցնել անողոք վաշխառվի առջևից, յերբ կողքից հնչեց յերեցփոխի խորխոտ ձայնը:

— Հարութը:

Ենի այդ մի հատիկ բառը կասես չանթահարաց Հարութին: Նա կուզեր շւսելուն տար այդ բառը, կուզեր յերեխայի պես վաղելով փախչել և վորքան կարելի յե չուտ տուն հասնել, բայց վատները թուլացան, ծնկները ծալվեցին ու նա մնաց անդում մեխած:

— Հարութը, — կրկնեց Պետրոսը, — եսուեղ արի, բայ եմ տառմ:

— Գամ, — խղճալի յեղանակով պատասխանեց Հարութը և հաւղմունքով գողացող ձայնով կանչեց իր առջևից վաղող Ավետիքին:

Յերեխան լսեց իր անունը և փողոցի վոլորանից յետ գառնալով ժինչն հոր մառը մի չնչի վազեց:

Պորբնջանը տար տուր մորդ, — կամացուկ տասց Հարութը վորդուն և չուխը միւշը մեկնեց գեղին:

— Էտով, լսով, — ազաղակեց յերեխան ուրախությամբ և իր թուղթն վոռքրիկ զդակը զվախից աւանելով բռնեց հոր առջեւ, վոր պորբնջանը նրա մեջ լցնի:

— Ե՞՛, — բղավեց յերեցփոխը, և իր հասակին անզատչած ուրագությամբ, աւղից ցատկելով վազեց դեպի Հարութը:

— Մի՛ զատարկի , — շարունակեց նա , Հարութի կուռը բանե-
ալ , — կաց , Հենց սրա համար եյի քեզ կանչում :
Պետրոսի բարձրացրած աղմուկի վրա Հազարքից պարագ
նարդիկանց մի պատկառելի բազմություն , վորոնք կլորիկ շրջան
կողմելով , ուշաղը բութամբ հետեւոմ եյին կենտրոնում կատարված
լործողությանը :

— Ես ի՞նչ ես առել , — շարցրեց յերեց վորոնք , պորին ջանները
աշախինելով :

— Ակի , մի պուճուր պորին ջան առա , — պատասխանեց Հո-
ռավին այնքան ցած ձայնով , վոր միայն Պետրոսին լսելի լիներ :

— Ի՞նչ ա , — բարձրաձայն հարցրեց յերեց վորոնք , արհամար-
տական կերպով քերանը ծովելով ու աչքերը սաստիկ կուչ ածելով :

— Պորին ջան ա , — ստիւլված յեղավ բարձր ձայնով կրկնել
Ալլըլով Հարություն :

— Թաներ՝ սովորաբ :

— Գրվանքին հինգ կոտղեկ :

— Հրո , բարձր խոսիր , չեմ լսում :

Հարությն աչքերը քամ քցեց և արենիսի քմով գետինը չական-
ով ավելի բարձր կրկնեց .

— Գրվանքին հինգ կոտղեկ :

— Լսեցիք , այ մարզիկ , — առաջ յերեց վորոնք կոմերը կողըն-
կանթելով և ունկնդիրների դեմքերի վրա զարմանքի արտահայտու-
թյուն վրանելով , — Փունաը հինգ կոտղեկ :

— Պա՛ , պա՛ , պա՛ , — բացականչեցին զանազան կողմերից : —
կոտղեկ զի՞ն ա , տո :

— Բա՛ , — շարունակեց Պետրոսը , — Միիկնց Վարդանի տղեն
քունառը հինգ կոտղեկով պորին ջան առնում , ուտում , տասված
կովեցնի :

— Տը՛ , տը՛ , տը՛ , — արտասանեցին մի քանի բնաններ :

Հարությը Հազար , հետո թուրք կուլ ավելց և գլուխը բարձրաց-
րեց , վոր մի յերկու խոսքով իրան արդարացնի , բայց , Հենց վոր
նրա աչքերը հանդիպեցին անողոք գատավորի այրող Հայացքին .
խեղճը բարորովին չփոթվեց , տաելիքը մոռացավ և քթի տակ մի բան
կմկմացնելուց հետո , ելի աչքերը քաշ զցեց և ուռենու ճյուղերէ
իրազացող ստվերներին նայեց :

Փոքրիկ Ավեար մնացել եր զդակը ձեռքին հոր վեհչի մոռ բըռ-
եած ու ջիրիգի յերգը շրթունքների վրա սառած : Նա իր պլած աշ-
քերէ յերկշառ Հայացքը Պետրոսի գեմքին ուղղելով , աշխատամբ

եր հասկանալ, թե ինչո՞ւ յեր բղավում չար ալեսը և ինչի՞ց են այնպես վախում իր խեղճ հայրիկը :

— Գիտե՞՞ք ով ասա, — վորոտաց յերեցվոխը չըջապատռղների ուշադրությունը զարութիւ վրա հրավիրելով, — լավ մարիկ արեք առ են ձարութեա ա, վոր տասներկու տարի սրանից առաջ փող պարտք արել, տարեկ պատկիւնը ու մինչև եսոր պարտքը չի տվել. ևսո՞ւմ եք, — ասաց Պետրոսը և մի վայրկյան լուց, համակրական ցույցերի սպասելով :

— Եհ, նամուսից զուրկ մարդ ա ելի, — ասաց մուխսի Մարգարը բռնոթու փոչին քիթը քաշելով, — եղ տեսակ մարդկանց յիշերսին կուպես որը տասն անդամ մէքիր, հենց կիմանան թէ անձքեա ա դալիս :

— Ախաղիր, չափը ճանաչելը բավ բան ա, — վրա բերեց մի ուրիշ ծերունի, վոր 33 տարի չարունակ դինելվաճառությամբ եր պարապել, — մի մարդ, վոր պարտք ունենա՞ն նրան չի սալի ուստի խոժել :

— Սիրուն կնիա ծոցին քնելն անուշ ա, հա՞, — դարձավ յերեց փոխը Հարութին, — իսկ պարտք տա՞լը . . .

Այդ լովիր խոսքերը Հարութի բոլոր ջղերը ցնցեցին. նա ոչ ցերը բարձրացրեց և մի խղճալի հայացք քցեց ունենդիր դյաւդաշիների վրա, կասես սղաշուսպանություն եր աղերսում նրանցից :

Բայց ամենքը լուռ եյին և խոսողն եղի յեղավ Պետրոսը :

— Պորինջանը լավ բան ա, — ասաց նա Հարութի յերեսին նաւելով, — համեղ, թիվալ, իմ սիրան ել ա շատ ուղում, ամեն միան ընկննիս՝ բնեանի ջուրը զնում ա, բայց ի՞նչ կանես, ուժու չի պատռմ, վոր մի քիչ առնեմ. իսկ դու, քննթիր չուն, գողերով եռաւուն տանում ու փողարիքոջ աչքերը հանում, եղ առածուն դո՞ւր ա դալիս :

Հետո յեշեցվոխը ձեռը տարավ իր չուխսի տակ, մի կարմիր աղլուխ դուրս քաշեց գոտիկից, և տաներից բռնելով, մոտեցրեց Հարութի վիշին ու ասաց.

— Ածիր, ածիր. եղ պորինջանը սրա մեջ ածիր, թող յես եր առանհմ նուրարն անեմ :

Հարութի ամբողջ գեմքը գարնան պուտի պես կասկարմքել եր. նրա ականջներն սկսեցին այրվել և քրտինքի խոշոր կաթիլները լայն ճակատից ծորան-ծորան հոսելով, թուխ միրուքի վրայով դեպի գետին հոսեցին :

— Պորինջանն եսունդ լցրու, անամոթ, — ըսոսալով իրինեց Պետրոսը :

— Ինձ համար չիմ առել, Պետրոս աղա, աստված վկա, յեւ և ուսելու... — զողի բերանն ամուր սեղմելով, մեքենայարար պատասխանեց Հարութը:

— Դիտեմ, վոր քեզ համար չի, յես ոլիտի ուստիմ, ասում եմ այլուն լուրու... — Յեվ նա քաշելով Հարութի մինչեց, ուղում եր դուռը խլել նրա զողի պորինջանը:

— Պետրոս աղա, ոչեղաղեմ ա, աստված սիրես, թող տաճեմ, — լայտակամած աղաչում եր խեղճ մարդը:

Բայց աղան չեր լսում. և Հարութին առամներին հուսվ տալով Հուսահատական ճիշ եր թափում զողի բերանը պաշտպանելու յերեցվոխի կատաղի հարցակումից:

Տեսնելով հոր հուսահատ զրությունը զորեղ հակառակորդի ճանեկերի առջն և նկատելով նրա անողնական խեղճությունը, Ավետը, բնազգորն առաջացավ պաշտպանելու Հարութին, և իր մատաղ ճեռների բոլոր զորությամբ ամուր բանեց հոր զողից:

— Կորի, շան լակոտ, — րուալեց Պետրոսը, կեռակառուց ճեռնամփայուր նըտ դիմին շարժելով:

Սարսափահար յերեխանն ճաց և արագությամբ փախչելով ամբոխի մեջ թաղնվեց:

— Հարութ, ասում եմ քո կամքովը տուր, թե չե... — ապառնաց յերեցվոխը:

— Պետրոս աղա, հիվանդի դնդաղեատ ա... — ջրակալած աչքերը յերեցվոխի զեմքին ուղղելով, աղերսում եր Հարութը:

— Ասում եմ զողիով պորինջանը տուր, թե չե, քո շուն հորք էլ, հիվանդիդ ել իրար կիսասնեմ, զիտե՞ս: Տե՞ր ասոված, քեզ մեղա:

Հարութը քարացել եր. լը լապատողներին տիրել եր ծանր ու հողեմաշ լուրթյուն: Լուր եյին նաև մուխսի Մարգարն ու զինեղամառ. Ալեքը. յերեկի նրանց ել դուր չեր զալիս չար յերեցվոխի անտիրու վարմունքը:

Յեվ ասանյակ բներաններից ծխի ամողեր եյին բարձրանում զեղի ուսոնու կանաչ կատարը:

— Եերեցվոխ Պետրոս, թույլ տուր թող տանի, զեղապես ա, — բան չկա, — չնչեց մոտիկից մի խորխա բառ ձայն:

Վաշխառուն հոնքերը կիտեց և դլուխը բարձրացնելով անկոչ պաշտպանին վորոնեց:

— Ետ դո՞ւ յես, խելառ. Տիկո, — խորին արհամարհանքով ար-

առանձնեց յերեցքոխը, — «Հման դնմանն սիրեսցեց, առում ու ավել տարանը, ախր զու յել բարի պառուղ չես:

— Այ անաբանդ, բա զու աստված չունե՞ս, — բորբոքվելու շուաց խելառը, — ո՞վ ա տեսիլ, վոր գեղապետը մարդու ձեռի իւմն, ինչ անենք, վոր քեզ փող ա պարտ, ախր վերելից կրակթափսի:

— Բնե զու սրտացալ, հոգեվախ մարդ ես, քո ջերից հանի արա պարտքը տուր, թե չե՞ լեզուդ քեզ քաշի ու ձենդ կտրի:

— Զեն վո՞նց կտրեմ, այ անասաված, ախր լերդաչոր հի վանդն աչքը ճամբին գեղապետի յա սրտառում:

Այդ միջոցին շվչապատող զյուղացիների շարքերի միջից լուսու եր Ամենի աղեխարչ վողը. իսկ Հարութը, ատամները սեղմած Հաղիկ եր զազում կոկորդը խեղդող արտասունքները:

— Բա են յերեխու աղի արցունքը սիրուդ չի՞ այրում, հոդի չի՞ ցավեցնաւմ, — չարունակեց խելառը, — եղ վլինքը ծուռ մարդ պաղատանքը քո զութը չի շարժում. պահ, պահ, պահ, եղքան և անիրավություն . . .

— Եհ, տիսդիր Պետրոս, խեղճ ա, թող տանի, — համարյա ժիածայն ասացին մուխովին ու դինեվաճառը, — խած դեղապեկու սառել չի լինի:

— Խեղճ ա, թող տանի, խեղճ ա, խեղճ ա, — լովեցին չորս կողմից տառնավոր ճայներ:

Ընդհանուր խողահարության այդ միահամուռ արտահայտություննից հանկարծ միջակից Հարութի լցված սիրու և նրա կոպերնոց ակսեցին այրվել աղի արցունքի վարար հոսանքից:

Հարութն ամեն բան մոռացավ. նա բաց թողեց չուխոի մեջը և ձեռներն աջքերին մոռեցնելով՝ ուղեց թաղցնել արտասունքը նաև յուների հետաքրքիր հայացքից, բայց տեսնելով, վոր չի կարող բոլոր թափով առաջ անցավ և զյուղացիների կաղմած շրջադիմ պատուելով, վաղեց գեղի տան:

Կովկածաղիկ գարձած պրոինջանները Հարութի դողից թափով լով ու կեղառոտ փողոցի հաստաշերտ փաշիների մեջ թավալելով, զանազան կողմեր զլորվեցին:

— Եերեցիոխը՝ կուղը կախ՝ սառնարյուն կերպով ժողովում եր հասած պրոինջանները, նրանց վրայի փոշին ինսամքով մաքրություն իր կարմիր աղլուրի մեջ դնելով, բեղի տակ տառ:

— Դուք չեք իմանում, դբանց պիտի մի մին եսպես սիրություն տառ, վոր խելքի դան:

Հարութը չիմացավ, թե ինքն ինչպես անցավ մի քանի ծուռ-
տիկ փողոցներ և մուսեցավ իրանց տանը։ Հասնելով դարպանի
ժողովուն նա կանգ առավ զո՞ան առջե ու ինքն իրան հարց տվեց՝
«մոնե»¹, թէ՝ վոշ։ Բայց ի՞նչ յերեսով մտնել չե՞ վոր Մարանն
աչքը դռանը քցած դեղապետի յե սպասում։ Ի՞նչ առել նրան,
ի՞նչպես խարել այդ յերդաչոր հիվանդին . . . Զե, լավ ե դեռ մի
քիչ նստել։

Յեկ նա նստեց առվի կողքին, ջրլիցքի մեծ քարի վրա։ Խո-
րունկ տուիլի վարար ջուրն ուժգին հոսանքով վազում եր առաջ ու
հին կամուրջի փիմած փայտերը հեալով լիովում։ Նրա պարզորակ
մեղմ ալիքները թեթև հործանքով զնում եյին զալիս ու դարնվելով
ջրլիցքի քարին, աշխումով պարում, խնդում, ծափ տալիս։

Առաջի կողքին, լեռ քարերի արանքում, բուսել եր ձմեռուկի մի
չիվանդոտ թուրի, վորի գունատ տերեները դողդողում եյին ջրի
հետ յեկող դուրեկան հովի թեթև շփումից։ Մի բոպե Հարութի
ուշադրությունը զրավեց կամուրջի ստվերում բուսած այդ արե-
գայուրի, զաշկացած բույար, վորի խզմալի տեսքն ակամա հիշեց-
րեց նրան իր հյուծված ամուսնուն։

Յեկ այդ վայրեկանին նրան թվաց, թե լսում ե դռան յետեից
դժբախտ հիվանդի ծանր անքորդ։

«Եկրեխի խեղճը գեղապետի յա սպասում», մտածեց Հարութը և
միենույն ժամանակ նրա պղտորված սրտում մի տարորինակ փա-
փառ առաջացավ։ Այս, ինչքան լավ կլիներ, յեթե կամրջի հովում
տնկած այդ հիվանդ ու նվազ բույարը սորբինջանի թուրի դառ-
նար, կանաչեր, փարթամանար և առասպելական արագությամբ
աճելով, հենց իսկույն ե եթ հոսներ, պատու տար ու նրա զալար
ճյուղերին կպած կարմիր ու կանաչ պորինջաններն առվի վրա
կախվելով, ստանորակ ջրի բյուրեղային կոհակների մեջ լողա-
յին . . .։

— Եղքան ել անիրավությունն . . . լսվեց հեռվից խելառի
բորժուագոչ ձայնը, վորը հանեց Հարութին մտքերի յերազական
աշխարհից։

Նա ճակատը շփեց, զով ջրով լվացվեց ու փոքր ինչ թարմո-
նալով սկսեց մտածել, թե տեսնես ո՞վ հավաքեց իր դոզից թափ-
ված պորինջանները, ինչ առաց իր յետելից յերեցփոխ Պետրոսը և
թե ինչո՞ւ դեռ մինչեւ հիմա այդպես բորբոքված խոսում ե խելա-
ռը . . . Ո՞վ, ի՞նչ անասոված մարդ ե եղ յերեցփոխը . . . Յեկ նրա
ժաքում վերակենդանացավ շարարախտ պարաքի բոլոր պատմաւ-
թյունն իր սոսկալի մանրամասնությամբ։

Բակի դուռը կամացուկ բացվեց և Ստթոն զլուխը շնմքից հա-
նելով, աժաշկոտովթյամբ հորը ձայն տվից :

— Գնա գալիս եմ, — մեքենայարար պատոխանեց Հարութը,
բայց ելի մնաց տեղում նստած. նրան զբաղեցնում եր այն միտքը -
թե ի՞նչ պիտի պատասխանի Մարտնին. սամլ, խարել նրան՝ չեր
ուղում, իսկ ճշմարտովթյունը կըտամել՝ ամաջում եր :

— Հայրիկ, հայրիկ, — բացականչեց լացակումած Ստթոն,
կրկին անդամ դուռը բանալով, — չուտ արա, հասի, յես վախճառում
եմ :

Հարութը նստած տեղից ծլունդ յեղակ ու շնչառառ տուն վա-
ղեց :

Մարանը կուրծքը բաց, գղղղված զլուխը դնողի հետ ըրջած՝
տաքության մեջ զառանցում եր. նրա զեմ ու զեմ ոչափի միջի-
թեժ կրակներից կանաչ ու կապաշտությունը բոցեր ելին բարձրանում :

Հարութը նստեց ամուսնու գլխավերեւը, իր նախկին տեղում
և սկսեց ուռենու շյուղերից կապած փունջը միուրինակ դանդա-
դությամբ տար ու բերել նրա այրվող ճակատի վրայով :

— Սաթո, Սաթո, — բացականչեց հիվանդը՝ առանց աչքերը
բանալու, — մնդուկն փակիր, ոպիտակ փաղա չդողանան... վա՞յ-
խաս զավլուղը ընկավ առուն, — ավելացրեց նա և ձեռները մեկնեց
առաջ ու լալազին ձայնով դոչեց՝ «բանե՛ք, բռնե՛ք»: Նա լուց և
մի վայրկյան արագ-արագ հետուց հետո, պոռշները չըլուզացը եց.
Նա ջուր եր ուղում: Հողասար ամուսինը կնոջ շանկությունը կո-
տարելուց հետո, մի չորսհին ել սառը ջրում թրջելով, Մարանի
այրվող ճակատին գցեց :

Մարանն աչքերը կիսով չափ բացեց և յերկար ժամանակ ա-
պուշտարուշ Հարութին նայեցուց հետո, հարցրեց :

— Դեղապեսը բերի՞ր:

Ամուսինը լուռ եր ու ջարդված, ամոթահար...

— Հարութ, պորինշանը բերի՞ր, դե խորովեց, չուռ, — առաց
նա և աչքերը խփելով շարունակեց հեալ:

Հարութը դդակը հոնքերի վրա իջեցրած՝ լուռթյամբ արտա-
սունքը կուէ եր տալիս և ուռենու ճյուղերի թոռումած փունջն ան-
ցնէհատ տար ու բերում :

Մարանն իր կարմբառակած աչքերը բանալով, ոջախի թիժա-
վառ կրակին նայեց ու բացականչեց.

— Ազդի Սաթո, երվե՛ց, երվե՛ց, պորինշանը կրակի վրա եր-
մից, վրա հասիր, չուռ :

Հարութելը, հեկեկանքը դժվարությամբ զսպելով փոխեց նրա դիմուն գրած ստուգը չորս:

Հիվանդն իր սարսափելի աչքերը մեկ և լ բացեց, նրանց թունառից Հայոցքը Հարութին ուղղեց ու կարկամելով ասաց.

— Անիրա՞վ մարդ... ուզում ես վոր անդեղապետ մեռնեմ հա՞յ, լավ, լավ... գե, յերեսս աղոթարան... վերջին բառերը սառեցին նրա պապանձված շրթունքների վրա: Հիվանդի այլակերպ գեմքն ավելի ու ավելի սպրդնեց և մեծ աչքերում վառվող կրակը կամոց-կամոց սկսեց մարել:

— Անիրավնե՞ր... մի անդամ ել շշնջաց Հողեարքի մեջ տառապող հիվանդն իր սեղմված ստամների արանքից, և ընդմիշտ լոկից... Հարութը մի ցավոտ ճիչ արձակեց և հեկեկալով կուացավ նրա ստոր զեմքի վրա:

Այդ բարեյին՝ լալով ներս վառեց Ավետը՝ մի փոշակոլու ոչորինջուն մնոքին:

1 9 9 1 թ.

ՍԵՐՈԲԵՆՑ ԱԾԵՐԸ^{*})

1.

Փոքը չեր Սերոբենց ընտանիքը, ութ հոգէ յեր ապրում նրանց աղքատիկ խրճիթի սևացած հարկի տակ՝ հայրը, մայրն ու վեց տղջիկ: Հեշտ բան չի դյուզացի մարդու համար ութ քաղցած բերան կերակրելը, ութ մերկ մարմին հազցնելը, մանավանդ, վոր Սերոբն ստիպված եր մենամենակ քաշելու ընտանեկան ծանր լուծը:

«Ա՛յս, ասաված, ի՞նչ կլիներ, վոր մի հատիկ՝ ախալեր ել յնունենայի, ի՞նչդ կաղակսեր, վոր մի յերկու տղա ել ինձ տայիր», ասում եր նա շատ անզամ աշխատանքի ծանր ժամանակ, կոշտացած ձեռով արևավառ ճակասով քրտինքը սրբելով:

Ասենք, Սերոբը հենց մանկությունից ձախորդության վիշտ գրիսում եր մեծացել: Դեռ տառը տարեկան եր նա, յերբ անողոք տիֆը ներս առաց նրանց խրճիթի շեմքից, մի ամսվա ընթացքում հանդցրեց պայծառ ոչարն ու Ծննդեց բազմանդամ ընտանիքը, թողնելով փոքրիկ Սերոբին ճակատազրի հաճույքին: Անողնական վորը շուրջը հանդես յեկան ինչչոր բարեհոգի խնամակալներ, վորոնք հետզհետե հալնցին ու կուլ տվին հայրենական ժառանդությունը, թողնելով միայն մի խարիսուլ խրճիթ, իսկ Սերոբին՝ աշարժքի համար՝ վերցրին իրանց մոտ հացախոր ծառայելու:

Վորը փաշած որն ու տրեմն ի՞նչ պիտի լինի: Միշտ բորիկ վոտով, միշտ կեղասա չորով ու բաց կրծքով որն ի բուն աշխատում, չարչարվում, աղը ու շեխի մնջ ծառայություն եր անում տարաբախտ փոքրիկը և այլ բոլորի փոխարեն մի ճոթ ցածաք հաց եր միայն ստանում, իր միշտ, միշտ քաղցած ստամոքսին բավականություն տալու համար: Այդ ժամանակն եր, վոր Սերոբի չարաճի ընկերները դրոշմեցին նրա ճակատին սոված մականունը, վորը և ամրող կյանքում կաղված մնաց նրա անվան հետ:

Անցան այդպես մի քանի տարիներ վերջապես նա կսմաց-

^{*}) Արարատյան դաշտի հոյ դյուզերում խոզողի դեռահան վազերով նորառություն այսին անվանվում ե ածեր:

կամաց խելքի հասավ, թողեց իր «բարեհողի» խնամակալներին և վարձով ծառայության մտավ մի ունեոր, աստվածավախ դյուզացու մոտ : Վորպես աշխատավոր, Սերոբն աննման եր . նրա բազուկների ուժը, անխոնջ ջանասիրությունն ու անսահման հավատարմությունը, կատարելապես հիացրին բարեպաշտ տանտիրոջը, վորն իր հոգու վարձքի համար վճռեց Սերոբնոց քանդված ոջախը վերահստատել ու պայծառացնել : Բարի ծերունին մի լավ հարսնացու ընտրեց, իր հաշվով Սերոբն ամուսնացրեց, բացի դրանից, մի թեթև տան սարք ու մի արտատեղ ընծայեց և որհնելով արձակեց, վոր ինքնազգութ ու ազատ ապրի :

Այդ որվանից Սերոբը վոտք գրեց իր հայրենական տունը և կիուավեր խրնիթի մի պատի տակ կծկվելով, սկսեց բերանի դոլով տաքացնել նրա ստու անկյունները : Յերկարատեև ծառայությունը հավաքած ու կողեկներն իրաք վրա կիսվելով, մեծացել, չառացել ու քառասուն ուռերլու չափ մի խոշոր զումար ելին կադմել : Սեփական ընտանիքի, տուն ու տեղի տեր զառնալով, Սերոբն իր խնայած ամբողջ զումարով մի լավ ճի առավ ու սկսեց բեռնակրությամբ դրազգել : Վորքան քաղցր, վորքան հաճելի յեր թվում ուսիսական աշխատանքի կարոտ Սերոբն այդ տաժանելի պարապմունքը, վորով նա որեն ապրուստ եր վաստակում ու ուսապնական քայլքայված՝ ոջախը կամաց-կամաց կարգի բերում :

Շուտով նորածին մանկան հմայիչ ճիչը քաղցր հնչյուններով տարածվեց նրանց անհրապույր խրնիթի ցուրտ անկյուններում : Անձագիլած ոջախը կամաց-կամաց տաքացավ ու աթարի գառը ծուխը նրա յերդկից քուլա-ցուլա բարձրանալով, ամպերի հետ խառնվեց :

Եւըշանիկ եր զգում իրան Սերոբը : Բայց վուչ աշխարհի վոչ մի անկյունում յերջանկությունն անվերջ էի լինում : Սերոբնոց ընտանիքի այս բախտավոր դրությունն ել յերկար չտևեց . նրանց ոջախի ամրապինու ոյունը, Սերոբի թե ու թիկունքը—հավատարիս ձին մի որ անսպասելի կերպով հիմանդացավ ու վայր ընկավ : Աեզձ կենդանին շատ չարչարվեց, դեմ-դեն ընկավ ու գալարվեց, տնքաց, անքաց, յերեք անդամ հողոց քաշեց ու անշնչացավ ...

Անողոք ճակատագրի այս սարսափելի հարվածը հիմքից ցընցեց տարաբախտ ընտանիքի կարճատեև բարորությունը, հուսահատության ու վշտի մեջ թաղելով խեղճ ամուսիններին : Այդ զըժքախտ դեմքից յերեք որ անցած, յերկորդ աղջկելը լույս աշխարհ յեկավ, վորն ավելի մռայլեցրեց ծնողների սպասար դեմքերը :

Սերոբը դառնությամբ լցված սրտով մոտեցավ ծննդկանին,

վորն ամոթահար կծկվել եր մի փալասի տակ և, խեթ-խեթ նայելով նրա դունատված յերեսին, խղված ձայնով ասաց :

— Ես ի՞նչ ես անում, այ կնիկ, մեր քանզված տունը քածանց շինելու միտք ունես, Հա՞, տեր աստված, քեզ մեղա... քիչ ամուս վոտներիս տակ աղցան շինեմ, — ըթունքները կրծոտելով տաց նա ու յերեսը խաչակնքելով, դուրս յեկավ տանից :

Յեղսանը վոչինչ չառարկեց — եհ, աղջկա որորոցը կրակ ընկենի՝ մըմնջաց նա, — կարդն եղպես ա, աղջիկ բերող մոր յերեսը միշտ թուք ու մուր պիտի գա, — ասաց ու զրինդով սրբեց գունատայտերից կաթկթող արտասունքը :

Ամուսնական կյանքի առաջին տարիներում Սերորը շատ բավար վարվում կնոջ հետ. նա վոչ միայն ուրիշների պես չեր ծեծում իր խելոք ու անարար ամուսնուն, այլ մինչեւ անզամ չեր ել Հայոց յում. «Յեղսան ջան, մի քիչ ջուր տուր, Յեղսան ջան, եղուց քաղաք պիտի դնամ, քեզ համար մի ջուխտ ուղ կրերեմ. Յեղսան ջան, չուխտ թիկունքը մաշվել ա, մի կարկատան զցիր», ահա թե ինչ-պես եր խոսում Սերորն իր կնոջ հետ այն ժամանակ, յերբ նրա գործն աջող եր ու սիրան ուրախ :

Իսկ այն որից, յերբ նրա միակ ողնականը, սիրելի ճին ստուկեց, Սերորի սիրտը սնացավ, ծիծաղն յերեսից փախավ ու ծանր վիշառ մի յերկու հաս բարակ ակոս քաշեց նրա լայն ճակատի հարթ մակերեւույթի վրա : Նա դառավիլ մուայլ, դյուրագրդիո, բարկաց-կոս, և վոր ամենից սարսափելին եր, սկսեց խմել : Նիհար դրս-պանի անկյուններում մնացած ոն կուպեկներն անխնայարար վատ-նը վում եյին գինետան զարշելի մթնոլորտում : Իսկ սպիրտի կորըս-տարեր թույնը, թմրացնելով ուղեղն ու անդրայացնելով սիրտը, տպատում եր Սերորին սրտամաշ վշակ տուր ճիրաններից :

Դէշնեները զինենանից նա վերագառնում եր տուն աքլորականն-էին, դդղզված մաղերով, ուռած դեմքով և կարմ բատակած աչքե-ըով : Այդ ժամանակ բավական եր արդեն մի ամենացնչին առիթ, մի անզգույշ խոսք, մի հաղի ձայն, վոր քացիների ու բունքքների կարկուար՝ կեղուու հայոցյանքների ուղեկցությամբ, թափվեյին զժրախտ Յեղսանի դլիսին :

Անընակն Սերորի գրապանը դատարկվեց և զինենան դուռը անօրոգ քսակի առջեւ փակվեց. նամարգ ընկերներն ել յերես դարձ-ըին ու նա ստիպված յեղավ այնուհետեւ միայնակ տանի նոտել : Հուսոհատությունն այնպես տիրել եր նրան, վոր ճենոր բան չեր բունում ու ը երանը խոսք չեր գալիս : Աստված այնքան եր վողոր-մաց ել նրա խեղճ ընտանիքին, վոր վոչ աշնանը պատրաստած բնա-

զունն եր վերջացել և վոչ հացի տաշտն եր դատարկվել, թե չե, վայն եկել եր ու նրա մանր յերեխաներին տարել:

Անցան մի քանի թունալից որեր դառն մտատանչության ու Հաղեմաշ վշտերի մեջ: Վոչ մի ժամանակ Սերբն այնքան մենակ ու անողնական չեր պատցել իրան, վորքան հիմա, յերբեք նրա հոգին այդ տատինան չեր կարուսել մի խթախուսող բարեկամի, մի բաջալերադ խրատի:

Վերջապես մի առավոտ Սերբնց գուռը բացվեց ու ներս մտավ քեռի Գողորը, բարձրահասակ ու լայնաթիկունք մի ծերուկ: Տանտերն իր թուլացած մեջքը սյունին դեմ տված ու ծեռները քներակներին սեղմած, դառը մաքերի ծովն եր ընկղմված: Իսկ տանտիկինը հիվանդ եր ու անկողնու մեջ պառկած:

— Բարի լույս, քմոր վորդի, ո՞ֆ-ո՞ֆ, — ասաց բարի ծերունին, պատկառելի հանգարառությամբ տռաջ դարձով ու անընդորմիսի ու համարելով:

— Ասածու բարին, քեռի Գողոր, — մի տեսակ դժկամությամբ պատասխանեց Սերբը, տեղից կանգնելով ու թախծալի աչքերը նորելի վրա ուղղելով, — համեցիր համերի:

Քեսի Գողորն առանց շատապելու, տեղավորվեց ոյունի տոջն փոռած հնամաշ թաղիքի վրա ու բռնօժամանը դրսանից հանելով՝ առաց:

— Ե՞նչ կա, քմոր վորդի, ինչո՞ւ յես եղանես տխուր:

— Եւ, ի՞նչ ասեմ, քեռի Գողոր, աստված ովլիս քար ոցեց, տունս քանդվեց, ճիս սատկեց... խեղդված ձայնով պատասխանեց Սերբն ու ցուցամատով սրբեց այտի վրայով ցած ուղրվող արտասունքի կաթթիլը:

— Վոչինչ, վնաս չունի, վորդի, փառք իրան, զա մի թեթև անաշողություն՝ ոչիմացիր, սիրող լայն պահէր, ոռւ դեռ ջահել ես ու առողջ: Մի հուսահատվիր:

— Ասում ես մի հուսահատվիր, քեռի Գողոր, ախր ի՞նչովես չհուսահատվեմ: Զե՞ս վոր մեր ամրող ընտանիքն են ճիռ յերեսին եր մտիկ անում ու նրա աշխատանքովին աղբում:

— Հասկանում եմ, Սերբ ջան, յես հասկանում եմ քո ներ գրությունը, աեսնում եմ ցավիդ մեծությունը, բայց ելի ասում եմ, վոր ախ ու վախը դարդիդ դարման չի անիլ. ո՞ֆ-ո՞ֆ, ես եր ված ու կրակված ջանը վեզ համար կենդանի որինակ, — ասաց քեռի Գողորը, աջ ձեռով ամուր խփելով իր դարդոտ կրծքի չոր վոսկորներին:

— Հապա ինչ անեմ, քեռի Գողոր, ասա, սովորեցրու, հորդ

հոգին լույս դառնաւ . զու մեծ մարդ ես , զու վորձված ես , քո
պլասվդ շատ չար ու բարի յա անցել . մի խելք զիր իմ դրսիս ,
վոտդ պաշեմ , մի ճամբար ցույց տուր այս սարսափելի դրություն-
նից դուրս գալու , թե չե , շուտով յես կիսեղդվեմ զարդի ծովում ,
յես կցնդվեմ , կդժվեմ կոկծի մեռից . . .

— Կդժվես , այս , կդժվես , վորդի : Այս , ճախորդությունն ա-
տեն բան կանի . ոֆ-ո՛ֆ , — վերջացրեց ծերունին ու խորը հառաջե-
լով , մի պատունց վերցրեց կծու բանոթու բուժարար փոշոց :

— Քեռի Գոզոր , աստված սիրես , ինձ աղատիր , վիշտն ուսում-
ա սիրտու ու մաշում հոգիս , ասա , ի՞նչպես աղատվեմ յես նրա-
ձեռից . ո՞ւր փախչեմ , ի՞նչ անեմ :

— Ի՞նչ անես . այ ասեմ , վորդիս , տեղիցդ վեր կաց , բահո-
դիր ուսիրդ ու ինձ հետ արի , — ամեն մի նախաղասության վրա ա-
ռանձին չեղտերով արտասանեց քեռի Գոզորն ու պաղունցում մնա-
ցած բանոթու կիսատը քաշելով , բեխերը սրբեց , մորուքը շփեց
ու տեղից կանգնեց :

— Արի , վորդի , — շարունակեց նաև գեղի զուռը զիմելով , —
արի զնանք աշխատելու : Որհնված աշխատանքը կիսարատի հոգուդ
թախիծն ու հալալ քրտինքը կը վանա սրտիդ դառնությունը :

Ցել Սերորը բահն ուսեց ու լուռ հնազանդությամբ քեռի Գո-
զորին հետևեց :

2.

Քեռի Գոզորն ել անիրավ բախտի խորթ դավակներից մեկն եր :
Նրա ծերացած սրաի հեռավոր խորքում թաղված եր մի անմոռաց
վիշտ : Լուսահողի Շուշանի , իր պաշտելի ամուսնու , անմոռանալի
հիշատակն եր դա , վորդ ամեն որ , ամեն ժամ նրա մաքով անցնելիու
դուրս եր թացնում սիրող շրթունքներից հոգեմաշ ոփերի մի յեր-
կար շարան :

Քեռի Գոզորը վերին աստիճանի ջերմեռանդ քրիստոնիս յեր
ու մոլի ծխաղաղաշտ : Զկար նրա յերկարատն կյանքում մի որ , վոր
նա ժամանացության ներկա չյիներ , և վոչ վոք չեր հիշում մի
դեռք , յերբ նա վորևէ պատճառով պասոց լուծած լիներ : Ամեն որ ,
բարիլույսը բացվելիս՝ առաջին անգամ նա յեր մոտենում ժամի
գուան սև խաչքարին ու խորին յերկյուղածությամբ համբուրելով ,
ջերմեռանդությամբ աղոթում մինչեւ տերտերի դալը : Հետո նա
յեկեղեցի յեր մտնում և ճախակողմյան զատում բռնում պատվա-
վոր տեղը : Որիկուն-առավոտ ամենայն ճշտությամբ յեկեղեցի հա-

հախելով, նա վաղուց ի վեր անդիբ եր արել բոլոր չարտկանները, մաղթանքները, փոխերը և մինչև իսկ Աստվածաշնչի մեծ մասը: Ենչքը ժամի ոյտնին հնաած և աչքերը Տիրամոր յուղաներկ պատկերին հառած, նա կիսաձայն մըմնջում եր ամբողջ ժամասացությունը մի ծայրից մինչև մյուսը և այդ բանը սիրում եր անել այնպէս, վոր ամեն մի աղոթքի սկզբի նախաղասության առաջին բառերն ամենից առաջ նրա ջերմեռանդ շրթունքներից եր դուրս թուզում, վորից հետ կրկնում եյին տերերը կամ տիրացուն:

Ժամում տիրացու չեղած ժամանակ քեռի Գոգորն եր համար սրբազն պարտք եր համարում կարեցածին չափ ունել զառամյալ քահանային, յեթե վոչ յերգեցողությամբ, զոնե փոխեր ասեղով: Յեվ նա թաշկինակը ծոցից հանելով, հանդիսավոր քայլերով մուտենում եր սեղանին: Այդպիսի բոպեներին նա կասես զղում եր ի՞ աչքի առջև աստվածության շշափելի գոյությունը, վորի որաւես հայացքից չպիտի խուսափեր նրա ամեն մի յերկուդած շարժումը և վորի լսողությանը պիտի հասներ ծերունի փոխասածի զողոցյուն ձայնի ամենաթույլ հնչյունը: Այս եր պատճառը, վոր աղոթքի ամեն մի կտորի ու նրա ամեն մի նախաղասության հետ զղացմունքի մի վտակ եր դուրս ծորում նրա վլտուս սրտի հեռավոր անկյուններից: Յեվ այդ ժամանակ զղացմունքների անսովոր առաւտքյունը խեղդում եր իր մեջ ջերմեռանդ աղոթքի զողոցյուն բառերն ու խափանում նրանց սահուն ընթացքը: Յեվ աղոթողն ստիպված եր լինում մեջեմեջ կանգ առնել, խեղդող զղացմունքների մի մասն ովեհրի միջոցով դուրս ցայտել, կոկորդը ճնշող ծանրությունից մի փոքր թեթևացնել և առա շարունակել:

Պատկառելի փոխասածի անկեղծ զղացմունքը ստատիկ վարակիչ աղդեցություն եր զործում ունկնդիրների վրա: Զերծ սրտից բղիսող ամեն մի «ով»—ը նախ յերերուն հնչյուններով արձականք եր տալիս հինավուրց տաճարի հոյակալ կամարների տակ և ազա անցնում աղոթող ծերունիների հավատառատ սրտերը:

«Ունարհեցո, տեր զունկն քո»—ով—ով... և լուր ինձ զի աղքատ և տնանկ եմ յես—ով—ով—ով», — արտասանում եր քեռի Գողորը և իր փառահեղ ճերմակ մորուքի վրայով հոսող արտասունքը խունացած թաշկինակով սրբում:

Գողորը ժողովրդի ամենասահելի տիրացուն եր: Նրան ամենքը սիրում եյին դեռ յերիտասարդությունից, յերբ նա «ով»—երով չեր տակին ու վրա անում ունկնդիրների սիրաը, այլ իր քաղցրահնչյուն ձայնի մելամաղձու յելենջներով եր շարժում նրանց հոգու ամենաքնքուշ լարերը: Այդ ժամանակ նա զեռ տիրացու Գրե-

գոր եր և ամբողջ ժակովրդի միաժայն հաշմանությամբ ընտրված տերտերացուն :

Տերտերությունը տիրացու Դրիդորի միակ տենչանքն եր : Նրա խորին հսկողունքով Փարաջա հաղնելին ու յնկեղեցու սուրբ ուղանի առջև որատարագ մատուցանելը՝ յերկնային արքայությանը մոտենալու ամենահավատի զբավականն եր, այն արքայությանը, վորի մասին նաև այնքան զբավիչ բաններ եր լույլ իր վարժապետ տերտերից և վորին այնքան փափաղում եր նրա յերիտասարդ վառ հոգին :

Բայց հակառապերն այլ կերպ եր անորինել : Տերացու Գրիգորին վիճակիված չեց տերտերական ուն Փարաջա հաղնելը : Հենց ոյն որերում, յերբ ոռուապում եր ձեռնադրության Ըստմանը, նրա կինը, ոնզեցի Շուշանը, Թոքիրի բոշբոքում ստացալ ու մի քոնի որից հետո վախճանվեց...

Հարվածը խիստ եր և նրա պատճեռած ցայր անհուն . հենց այդ ժամանակն եր, վոր ծանր վիշտը ստուիկ ճնշելով նրա թուլացած կուրծքը, ուրիշ թոցքը գունաս շրթունքներից առաջնի ռոփշը և զլութեց նրա մարած աչքերից արաւառնիքի առաջնի կոմիլը, վորոնք այնուհետեւ որեցոր շատացան ու հետուն սովորության շարքն անցան :

Ենհ, Աստծու վաստքը շատ լինի, յերին յեռ արժուն չեցի տերտերության յերեկի իմ մեղքերս շատ-շատ են յեղեք—մըմնջոց տիրացու Գրիգորն ու իր չունեցած մեղքերը քավերու համար, բոլոր սրտով անմնաառը յեղավ աղոթքի ու աշխատանքքի :

Շուշանի մահճից հետո անցան յերկար արքիններ : Ժամանակի ավերիչ ուժը մղեց նրա բազուկների զորությունը, հանգոցը բույս բոցավառ աչքերի կրակը, կորացրեց ամբակարդ մեջքը, ակուսից նրա կոռըիկ անկատն ու յերկայն աշեխառն մազերով ծոծկից նրա զեղեցիկ զեմքը, բայց չկարողացավ ստոցնել զունամ զլութունների ջերմ աղոթքն ու կարճացնել անճարին .մեկնած ողջան կան ձեռքք :

Քեոր Գողորին ուշեռուչով դիտում եր իրան չըջապատող խեղճությունը և կարէկից հայացքով հետեւում եր աղքատ հարմանների տանջակի կյանքին, և հենց վոր նկատում եր, թե նրանցից մեկը մնացել է անողնական, ձեռը ծոցին, շինքը ծուռ ու հաւառնատ, իսկույն վազում եր այն կողմը, բռնում եր նրա արորի մաճը, ցանում եր արտը, ջրում եր այլին, թաղում եր թուփը, մի խոսքով, կարեկից յեղբայր եր հանդիսանում անճար ու հուսահատ աղքատներին :

Սերոբն և լ շատ նեղ տեղումն եր . հուսահատությամբ ու վըշապիլ լցված եր նրա խարիսուլ խրճիթը , յերբ քեռի Գողարն իր որհնավանց վուաը ներս դրեց այնունշատ բահաց Սերոբին տալով , առաջ իր յանելից :

Գորիսանային առավոտ եր : Յերկար ժամանակ զնում եյին նրանք կոկոնաղարդ ծառներով հսկանավորված այլիների քարքարուա ու ծուռուիկ ճանապարհներով , մինչև վոր հասան Սերոբնց այն հողաբաժնին , վորը նրան վարձի համար ընծայել եր նախկին աստվածավախ բարերարը : Այդ հողի զիլիին ծերունին կանոն առավ , նստեց նորածիլ զալար կանաչի վրա , կորացած մէջքը բարդի ծառին հենեց , մի զույգ ծորալի «ովք»-եր արձակեց ու բանոթամանը պրալանից հանեց :

— Նստիր , Սերոր ջան , նստիր մի քիչ հանգստանանք ; — դիմեց նա կողքին կանզնած յերիսասարդին :

Վերջինս ուսի ոուր բահաց վասփուկ հողում անկեց ու քեռի Գոդորի վասների մոտ նստեց :

— Ես հողը քոնն ա կարծեմ , քվոր վորդի :

— Իմն ա , քեռի ջան , լուսահողի թաթռու ամուս ընծայածն ա :

— Ասաված հողին լուսավորի , քանի՞ տարի կլինի ինչ քահոքիդ ե :

— Կլինի վեց տարի :

— Հասկա ինչո՞ւ յես ծուլություն արել , ինչո՞ւ եռքան ժամանակ այդի չես քցել , տեսնո՞ւմ ես , չորս կողման՝ բոյորը անկած ա :

— Ե՞ և , քեռի Գոցոր , ինչ ես կորցրել ու ինչի՞ յես ման զայիս : Այդի տնկել , լավ ես տառմ , լավ յերադ ա , յեթե բարին կառարի : Բայց ո՞վ ա տվել մեղավորին արքայություն : Եսունզ ի՞մ մէջք կոտրվիլ , իմ սիրատ վորում սևացիկ ա , դու ել տառմ ես այդի տնկելիք , կառես Երամնեց տղերանց պիս վեց աժդահա աթօղեր ունեմ յետելիս կանզնած :

— Սերոր ջան , դիտե՞ս ինչ կա , — տասաց Գոդորը պազնուուշ մէխացած բոնոթու կիսատը քաշելով , — ծիզ աստվեց , վնաս չունի , մենակ աշխատիր : Դու դեռ յերիսասարդ ես և ուժեղ , ու քեզ պես առողջ տղամարդի համար գելար բան չե մի փոքրիկ գերդասաման կերակրելը : Բայց ոտարների գոներին աշխատելով , զու միննույն ժամանակ չպիտի մոռանաս , վոր առջեւդ կա ծերություն , կա հիվանդություն և հաղար մի տեսակ ձախորդություն , յերբ եղ բազուկներդ ել չեն կարող որեն ապրուստ վաստակել : Առայժմ մի

լավ այդին՝ այս հողի վրա՝ բարձական կլիներ քեզ համար : Ինչո՞ւ
չես տնկում : ողնական չունե՞ս : Այ, յես կզառնամ քո մեծ յեղ-
բայրը . թեև ծերությունն ու վիշտը մզել են բազուկներիս միջի
զորությունը , բայց ելի մնացած ուժն ել կարող և ոգոտակար լինել
քեզ համար : Մի բան ասեմ , հանար մի համարիր . արք հենց եսոր-
վանից սկսենք ես հողը ձեւել ու յեկող ամսին անպատճառ մի
ամախտակ⁸⁾ տնկենք : Մի ծիծաղիր , յես վստահ եմ , վոր ասոծուն
ել հաճելի կլինի մեր թափած քրտինքը :

Այդ խոսքերի հետ քեզի Գոգորը վեր կացավ տեղից , զղակը
ծառի ճղքին դրեց , չուխեն հանեց , թաշկինակը գլուխը կապեց ,
ու տօտծու անունը տալով , բահը վերցրեց :

Սերորը մնացել եր շիվարած , տեղումը նստած : Այնքան անըն-
պասելի յեր այդ բանը նրա համար , վոր չեր կարողանում աչքե-
րին հավատալ : Սոված Սերոր ու սեփական այդի . ինչքան տարբեր
բաներ , իբրարից հետու հասկացողություններ են : Յեզ այն ամենը ,
ինչվոր այդ բոպեյին կատարվում եր Սերորի աշքի առջև , մի
տեսակ հաճելի յերազի տպավորություն եր գործում :

Սուր բահը քեզի Գոգորի վարժ ձեռներում գործում եր աշխա-
զությամբ : Խոնավ հողի սև կունծղերը իբրար վրա զիզվելով , մի
բարալիկ թումբ կազմեցին , վորի վրա կաթկաթում եր ժրաշամ-
ծերուկի կնճռապատ ճակատից հոսող քրտինքը :

Ծեր անդամները չուտ են վաստակում : Առաջին թումբը կտ-
սելուց հետո , ալեոր բանվորը բահը գետնին ցցեց , կոշտացած
ձեռքով սբրեց քրտինքն ու բոնոթի քաշեցու պատրաստությունը տե-
սավ :

Սերորն իր պելացած աչքերի անթարի հայրացն ուղղել եր
նրա վրա և անսողության բոլոր ուժը լարեն , ուղինալով վարս-
չել՝ յերա՞զ եր տեսածը , թե՞ ճշդիտ :

— Վեր կաց , քվոր վորդի , — քաղցրությամբ ասաց քեզի Գո-
գորը : — զժվարությունն անցավ , հիմքը դրվեց , աչքը լույս , այ ,
տեսնում ես , արդուդ տռաջին թումբն արդեն պատրաստ ա :

Սերորն սթափվեց : Վոչ , յերազ չեր այս բոլորը : Այստ վոր
առաջին թումբն արդեն պատրաստ եր . նրա զարմացած աչքերն
այժմ շատ լավ եյին տեսնում այն սև կունծղերի յերկար շարանը ,
վոր ճանառիք⁹⁾) մեջքի աղես դուրս եր ցցվել դալար խոսերի միա-

⁸⁾ Խաղաղի այգում յեղած թմբերի ամեն մի շարքն առանձին տռած - կաշում և տակտոկի :

⁹⁾ Ճանառը ձաւկ եւ

սպազարդ կանաչ մակերեռութից : Այս, այդու հիմքն արդեն դրված էր : Սերորի սիրաը միղաց ուրախությունից . հանկարծ, նա զժի ողես վեր թռավ նստած տեղիցը, անխոս վաղեց դեպի ծերուկը : յերկու ձեռով ամուր բռնեց նրա աշն ու ջղաձղաբար մոտեցրեց իր այրվող շրթունքներին : Նա չերժ համբուլյոներ եր դբուշմում, նա լիզում եր այն հոգատար ձեռը, վորը նրա բարորության հիմքն եր դնում, բախատավորության ճամբան եր ցույց տալիս :

— Այս, քո ստեղծողիդ մատաղ, քեռի ջան, ես ինչ լավ բան սովորեցրիր, — բացականչեց Սերորը, — յես կաշխատեմ, կչարչաբ-իւմ, իմ քրտինքով կվողողեմ ես ամբողջ հողը ու յեթե աստված-աջողի, մի լավ այդի կկանաչացնեմ ես տեղում :

— Ռւրիմն, արի շարունակենք. վողորմած առուվածը ուժ կտու մեր բաղուկներին և կորհնի մեր արդար աշխատանքը, — ուրախու-թյան ժպիար յերեսին՝ առաց քեռի Գողորը :

Սերորը ծերունու ձեռից առավ բահն ու մեծ յեռանդով շա-րունակեց նրա սկսած գործը :

Այսուհետեւ մի ամբողջ ամիս Սերորն ու Գողորն իրանց քըր-տինքով թրջում եյին նորաբուս թումբերը, մինչև վոր կարողացան մի տախտակ զվանազուխ խաղողի զալար մատեր տնկել ու կանա-չացնել : Նորաբողը վաղերն իրանց դժարթ տեսքով միիթարու-թյուն եյին պատճառում յերկու աշխատավորներին և կը կնակի յե-ռանդ ներշնչում նրանց :

«Աշխատանքը կիարատի հոգուտ թախիծը և քրտինքը կլվա-նա սրտիդ զանությունը», — ամեն որ հաճությամբ կրկնում եր Սերորը քեռի Գողորի իմաստալի խոսքերը : Յեզ իսկապես, ձիու կորուստը շուտով մոռացվեց, Սերորի սիրտը նորից բացվեց, թո-խիծը կորավ ու վիշտն ել հալվեց... Կամաց-կամաց Յեղանի ար-տասունքներն ել ցամաքեցին ու Սերորենց խրճիթի սկաշած հարկի տակ անենքի ու հայհոյանքի փոխարեն նորից լսվեցին ուրախ ծի-ծաղի քաղցր հնչունները :

Անցան մի քանի տարիներ : Սերորենց նախկին անմշակ հողի տեղն այժմ փոխած եր մատաղ ծառերով շրջապատված մի գեղե-ցիկ ածեր, վորն ապագա բարորության քաղցր հույսերով լըց-նում եր տիրոջ սիրալ . և նա վոչ մի ջանք չեր խնայում իր նորա-տունկ այդին ինչպես կարգն ե մշակելու :

«Վնաս չունի, չարչարվիր, — աշխատանքի ծանր բոլեներին ինքն իրան սիրու եր տալիս Սերորը, — շատը գնացել, քիչն ա մնա-ցել. մի յերկու յերեք տարի յել ատամնեներիդ հուպ տուր ու աշխա-տիր և տինուհետեւ՝ հանգստությամբ վայելիր անինա թափած զա-

ուր քրտինքից քաղցր վաստակը ։ Անզ նա սկսում եր մտքում հաշվին թե վորքան խաղող կարող և տալ ամեն մի թուփը, ապա ամեն մի թումբը, ամեն տախտակը, և վերջապէս ամրող այդին, ու յերբ Նրա Հաշվով տարեկան սպառվելիք արդյունքը հանում եր Հարցուրների, քիչ եր մնում նա խենթի պես կանգնած տեղում թոշք-կոտար ու բացականչեր ։ Ան յերանի կյինի են որը... Են ժամանակ ել ինձ սոված Սերոր չեն տաի... .

Վերջապէս հասավ այդ յերանինի ժամանակը ։ Սերորնց ածերն սկսել եր արդյունք տալ, վորը տարեկան մի քանի տասնյակ սուրբներից արդեն հասել եր մինչեւ Հարցուրի բայց սա դեռ բայուրը չեր : Այդին նոր, նոր եր Հասունանում ։ վարթամ վազերի տուող կուտրակները⁹⁾ դեռ կատարելապես չեյին զարդացնել, տարիների համար համար զուգընթացաբար պիտի ավելանար նաև ածերի արդյունքը ։ Մի խոսքով, այլու վրա վոսկե հույսեր շատ կային : Յազ Սերորն ուրախ եր :

Նա՝ իր կյանքի այս աջողակ տարիներում, դանդասավելու մի հասելի առիթ միայն ուներ ։ — արու զավակի բացակայությունն եր դա՞ վորն սկսել եր արդեն լուրջ մտահոգություն պատճառել յերկու ամռութներին : Ճիշդ անզում հղիությունից տպատիկ եր Յեղասանը և վեց առջիկ եր բերել, վեցն ել սիրուն, սև մտղերով, թուխաչքներով, վեցն ել կայտառ ու տոռջլ :

Պետք ե ասել, վոր Սերորի անուեսական դրությունը հիմա բավական յայլ եր ։ Լավ ասածն այն ե, վոր Հայր տաշտից ու ցուց բենը՝ պարկից չեր պակասում ։ Բացի զբանից, նա մեռք եր բերել մի կով, վորի շնորհով առաջվա կաթի կարոո մերեխաները կարողանում եյին պատճ ուտինից դանաղանել ու կուշա փորով մտծուն ուտել : Եհ, փառք ասածո, ել ի՞նչ պիտի լիներ : Զախորդ տարիներից մնացած մանր-մունք պարտքերն ել բովորովին մաշքել եր Սերորը, այնպիս վոր նրա փեշը քաշող, դուռը ծեծող չիար այլնեւ :

Այժմ տների վերաշխանաթյան մասին եր մտածում Սերորը ։ Իր համեստ յեկամուտից ավելացած կոպեկներն իրար վրա հայտքելով, նա մի փոքրիկ գումար եր կազմել, վորով մտազիք եր առաջիկա ամառը՝ պապենական փլփլուտած խրճիթի տեղ՝ մի հատ սիրուն սենյակ չինել :

⁹⁾ Կուտրակ անվանվում են խոզողի վաղի ստորին հոսա թերքը:

«Համակ, շահութ լավ, Սոված Սերոբ. դու լավ արիր, վոր իմ ու-
զարկած խնամախոսին սևերնս յնտ գարձրիր, իմ բարձր անունը
զետեսվը ավիր ու պատիվս հողի հետ հավասարացրիր» :

Մի իրիկուն այսպես զայրացած խոսում եր Մուխոսնց Մա-
նուկն իր նորացն տան գեղեցիկ պատշգամբում մենմենակ արա-
գությամբ շրջելով ու պապիրոսի ծուխն ազահությամբ ծծելով :

«Ես Մուխոսու թոռը լինեմ, — շարունակեց նա հետզհետե տա-
քանալով, — ութ այդի ունենամ, վեց աչք ջրաղաց, յերեք ձեռք
տուն, ու Սոված Սերոբի պես մի չուն...»

Նա մի բոպե լրեց, տաքացած ճակատը ձեռով տրորեց ու պա-
սիրոսի ծուխը կուլ տաշով, չարունակեց .

«Դյուղի մեծ մասն իմ պարտքերի տակ տնքա. տարին տաս-
ներկու ամիս զատած աշխատանքն իմ սնդուկը լցնի, իմ անունը
Մանուկ ազա լինի, կարողությունս տասնյակ հազարների հասնի,
և ևս բոլորից հետո սոված Սերոբի պես մի եւ զյուղացի իմ ուղար-
կած խնամախոսին քարի*), իր աղջիկը ինձ չտա, թե յերկու կի՞
ո թաղե՞լ...»

Այս խոսքերի հետ նու մի կողմ չպրաեց պապիրոսի կոթուկն
ու ձեռները տրորելով ներս մասվ կես-ասխական ձեռով կահավոր-
ված մի փոքրիկ, բայց վայելուչ սենյակ, վորտեղ տարածված եր
կարտոֆիլի մոմի գուրեկան ու յերկուս լույսը :

Մենցակի պատվավոր անկյունում հարարտությամբ բաղմել եր
մի զեղեցիկ ու մեծ զբամարկդ, վորի մեջ պահպում եյին տանտե-
րոջ փողերն ու բազմաթիվ պարատուրհակները :

Մանուկ ազան, բալանիների մի մեծ կապուկ գրավանից հանելով,
մոտեցավ զբամարկդի դիմացի անկյունում կանգնած պահարանին
ու այնանդից հանելով մի շիշ բարազ ու մի արծաթե բաժակ, որեց
լուսամուտի առջնի կլոր սեղանի վրա : Հետո, նա կրկին մոտեցավ
պահարանին, վերցրեց այնանդից ափսեյով զուրկելն ու մեկը մյու-
սի յետեկց կուլ տվեց մի քանի բաժակ թունդ արադ, ամեն մի
բաժակից հետո անուշ անելով զուրկելից մի համեզ կտոր : Չորս-
հինգ բաժակ լուսությամբ կոնծելուց հետո, Մանուկ ազան, հանեց
չալ-տրիսալուդի վրայից հաղած մոխրագույն արնջակը և զցեց
մոտիկ դրած ու պարսկական թանգարին վորդով ծածկված փա-
փուկ տախտի վրա . տպա նու վերցրեց բուխարական աղնիվ մոր-
թուց կարած սև զդակը, չարտեց տախտի վրա ու քթի տակ մըրթ-

*) Աղջկա տիրոջ կողմից խնամախոսին տված մերժողական պատառ-
խանը, մողովք զական լեզվով. կոչվում է քարել

մըրթալով, սկսեց թաշկինակով սրբել կնճռառած ճակատի քրրտինքը:

«Սոված շան վորդի, — շարունակեց Մանուկը, ձեռները քամակին գրած արագությամբ անց ու զարձ անելով սենյակում, — դու հնացան սիրա ունենաս, վոր համարձակվես ևս խայտառակությունն ինձ հասցնել... ի՞նչ պիտի ասեն եղուց գյուղացիք, հը...» :

Այդ դառը քրքինը բերանին՝ Մանուկ աղան մտաեցավ սնդանին, մի բաժակ ել արազ դցեց ու կրկին շարունակեց իր մենախոսությունը:

«Զե, չե, Սոված Սերոր, հենց վոր ածերդի հասավ ու քաղցած փորդ կուչու հացի յերես տեսավ, դու ել արդեն չափու կուրցիր, խելքդ թոցրիք» :

Նա մի բոպե կանդ տռավ սենյակի մեջ տեղում ու ձեռը ճակատին գրած խորը մտածմունքի մեջ ընկավ: Այդ վայրկյանին նրա գլխում հըեշային ծրադիրներ եյին կազմակերպվում:

— Շատ լավ, — հանկարծ բացականչեց նա ամուր ծափ տալով ու սատանայական հըճվանքով դեպի դուռը թռչելով.

— Կարո, — բզավիեց նա կոկորդի բոլոր ուժով:

— Համմե՞ր, — լսվեց ստորին հարկից ծառայի զիլ ձայնը, վորին հաջորդեց փայտե սանդուղքների շտապ թպթպացը: Մի քանի վայրկյանից հետո՝ սենյակի դռան ամբողջ բարձրությամբ՝ ցցվեց Կարոյի յերկար հասակը:

— Աղա, — առաց աղան, — ես բոպեյիս վորանող ել վոր իինի, կըտնես ու ինձ մոտ կըրեես Զախարենց Սերույին, լորում ես, դեմոնի տակին ել վոր լինի, պիտի գտնես, հաօկանո՞ւմ ես, թե չե, գլուխու կըարդեմ: Դե, ել մի կոնդնիր, չուտ արա, թռիր: Այ, գետնին թքեցի, մինչև թուքս ցամաքելը թե վոր չես յեկել, հոգիդ կհանեմ:

— Աւքիս վրա, առաջ չեմ, — առաց Կարոն ու թռավ :

Իսկ Մանուկը, դիվային ժպիաը ըլթունքներին, մոտեցավ կըոր սեղանին, մի բաժակ ել արազ կոնծեց ու ձեռները տրորելով շարունակեց խոսել:

«Դու զեռ ինձ չես ճանաչում, Սոված Սերոր, այ, յես քեզ կճանաչացնեմ, յես քեզ ցուց կտամ, թե Մանուկ աղային քարելն ինչ անշահակում: Շատ չի քաշիլ, հենց նըլուց առավոտ լաշակեց շան պես կլի՛ցմաննս քո արածը...» :

Մանդուղքներից բարձրացող վոտնաձայներն ընդհատեցին

Մանուկի մենախոսությանը և նա շտապով դուրս վագեց պատրէ-
զամբը :

— Հը՞ , զտա՞ր , —անհամբերությամբ հարցեց Մանուկը ծա-
ռային , վորի գլուխը դեռ նոր եր յերեսում սանդուղքների վրա-
յից :

— Դաս , աղա , հրես հետո բերել եմ , —ոչառասխաննց կարոն ,
ցույց տալով իրան հետեւող յերթասարդի վրա :

— Դե լով , աղբիս . թող Սերդոն եստեղ մեա , իսկ դու քո
բանիդ դնա , —հրամայից աղան կարոյին ու ձեռը նորեկ յերթաս-
արդի ուսին դնելով , տարավ սենյակը :

Զախարինց Սերդոն մոռ յերեսուն տարեկան մի կարճահասակ
ու լոյնաթիկունք տղամարդ եր , վորի կլոր դեմքը զարգարված եր
յերկու խոշոր ողիներով : Նրա խիտ Հոնքերի տակ պլազմացող կտ-
սպատակ աչքերից սաստիկ չարություն եր կաթկթում :

— Գիտե՞ս ինչ կա , Սերդո ջան , —կիսամայն ասաց Մանուկ
աղան , սենյակի գուռն ամուսը վակելով ու ձեռը խոսակցի ուսին
պնդեալ :

— Ի՞նչ ոլիստ լինի , կամ դեղ կա կըսակելու , կամ այդի կըս-
պելու , կամ մարագ կա վառելու , վերջապես , տուն կա քանդելու , —
պատասխանեց Սերդոն , ձեռները դուկին խրելով ու իր պլազման
աչքերն ոճորքին ուղղելով :

— Այս սատանա , տես ինչ ձեռաց գլխի ընկալ , —ժպտալով
ասաց Մանուկը , Սերդոյի մեջին կամացուկ խփելով ։ Հա , դե
լովիր , թե ինչ եմ ասում , —շարունակեց աղան դեմքը սաստիկ լըր-
ջացնելով ու ձայնն ավելի ցածրացնելով , —Սոված Սերոբի ածերը
ահած կլինես , չե՞ :

Վորպես պատասխան առաջարկված հարցին , Սերդոն հեղնորհն
ժողովագ , վորով ուզում եր հասկացնել , թէ այդպիսի միամիտ
հարցը շատ անպատճառեր ե իր համար : Ո՞վ չդիտե , վոր Զախա-
րինց Այորի տղին իր հինգ մատի պէս և ճանաչում գյուղի բոլոր
այդիները և աչքերը խուսի ել կզտնի նրանց մեջ յեղած լավ տեսակի
խաղողներն ու ամենաընտոնիր ծառապտուղները :

— Քանի՞ տախտակից ա , —շարունակեց աղան տուջվա լըր-
ջությամբ :

— Զորս : Բայց ինչ ածեր և շան վորդու ածերը , առենք ոռու
չկա , ամեն մի թուժը մի հատ հարյուրանոց արժի , —պատա-
խանեց Սերդոն ելի աչքերն առաստաղին սեպելով :

— Տես ինչ եմ ասում , Սերդո , —բոպեական լոռությունից հետո
ակսեց Մանուկ աղան , —ես պէտք մի յերնք հատ լավ տղա կզըտ-

նեռ, միւմի սուր ետոց^{*}) կտօսս ձեռներն ու Սովորի ածերն ենդին կնդել կտօսս, վոր չորս տախտակից մի հատ կուտրակ ել կանուչ շմհու:

— Վայ, զու սխալ ես աղա. կընդելը լավ չի, կնդածը շուշափ նոր նյուլեր էտօսս: Կուլենս ենպես քոքահոն անեմ, զոր են փարթամ այզու տեղն եղուց ելոր բողէ ցանեն, — հրեշտային չաշախնդությամբ վրա բերեց Սերդոն, իր կապույտ աչքերն աղայի ճակատին հառելով ու այնպիսի վոգեռությամբ չուփի թեքերը յետ ծալեց, վոր կասես հենց այդ վայրկյանին նա պատրաստվում էր սկսել իր ավերիչ դործողությունը:

Վորքան ել Մանուկ աղան քարտսիրու եր, վորքան ել նա սուզոր իր անտարերությամբ նայել իր վաշխառուական ճիբաններում թողլացող աշյունաքամ զոհերին, այնուամենայնիվ, նա մի տեսակ սորսում զգաց Սերդոյի արդ գիվային վոգեռության առջև:

Թեև յերկու խոռակիցներն ել համեմատաբար չար եյին, յերկուուն ել արնախում ու տնաքանդ, բայց և այնպիս տարրեր եր նրանց չարության դրզտպատճառն ու նպատակը: Մեկը՝ մզկաւցնում, բացացնում, հոգի յեր հանում՝ դուռ շահադիտական կամ վրիժաւական նպատակով, իսկ մյուսը՝ ուրախությամբ քանդում, ավերում, տակն ու վրա յեր անում ամեն մի լավ բան, վորովհետև որդ զժոխային զործողությունը բոպեական հաճույք եր պատճառում նրա սրաբին:

Ահա այս աննպատակ՝ կամ ավելի ճիշտ՝ անշահասներ չարությունն եր, վոր սոսկում ազդեց Մանուկ աղային, «կուլենս ենպես անեմ», վոր այդ նորահաս այզու անդն եղուց-ելոր բողէ ցանենք, նորից հնչեց նրա ականջում Սերդոյի վերջին հարցը, վորին նա չկարողացավ իսկույն և եթ պատասխաննել:

Մանուկ աղայի ներսում վազուց ի վեր մեռած խիզճն արդ գոյրկյանին չունչ առավ:

Մի բոպեաչափ անորոշ դրության մեջ մնալուց հետո, վերքապես Մանուկ աղան վճռականությամբ ձեռները թափահարեց ու կոր սեղանին մոտենալով, ջղային շտապողությամբ յերկու բաժակ արագ գցեց:

— Անուշ ելալ, աղա ջան, — վրա բերեց Սերդոն, աղա թեւքերը նորից վեր քաշեց ու կոկորդը մաքրեց:

— Լավ ասացիր, Սերդոն, շատ լավ կլինի: — խորհրդավոր կլ-

*) Ատացը մեծ ու կեռ զանակ ե, վորը սովորաբար գործ են ած, և մազնպահները:

սահմայնով փափաց Մանուկը, խոռակցին մոտենալով, —արմատա-
հան կանեա, չորս տախտակն ել գլխիղութիւն. ենպես կանեա, վոր
ել կանաչի նշան չերեւ. հասկացա՞ր: Թե՛ ծառեր ել կան, բոլորը
փրթնեք...

— Ասում ես բողկատնդ շինում, հա՞ ես աչքիս վրա, — մեծ
հաճույքով պատասխանեց Սերդոն, աջ ձեռը կապուտակ աչքին
դնելով:

— Եւ, շատ ազրեն աչքը վարդի վրա, դե վոր եղաղես ա, առ
մի թաս արադ տամ փորդ տաքացրու. զիտնմ, աղիքներդ սառած
կլինեն Հիմի:

— Տուր, տուր, ողորմի հորդ հողուն, վաղուց ա, վոր կա-
պիկս չեմ թրջել:

Մանուկ աղան վերցրեց մի մեծ թեյի բաժակ, պոնկե-պոռունկ
լցրեց արազով ու մեկնեց Սերդոյին: Վերջինս առավ բաժակն ու
սկսեց բարեմազթել:

— Ազա ջան, քո կենացը, վողջ մնաս, կյանքի յերկար լինի,
ինչքան ապրես՝ յավ ապրես, միշտ աջողության մեջ լինես—ջանո
առողջ, սիրոտ ուրախ, ճակատու բաց: Բարերար աստվածը քեզ
վողջ պահի ինձ համար ու քո շվաքն իմ զիլսից անպակաս լինի:
Տեր, ուռ յել ամեն քրիստոնի բանն աջողաս, —ասաց ու բաժակը
շրթունքներին մոտեցրեց:

Նա խմում եց մանր կումերով ու հանդարտ, աշխատելով վոր-
քան կարելի յե յերկար պահել արազի իմասը չրթունքներին սեղ-
մած: Վերջապես, նա զատարկ բաժակը մեկնեց աղային ու աշ-
քերն առաստաղին ուղղելով, սկսեց բնղերը սղայել:

— Հը, մեկ նշ կիմմեա:

— Դու զիտնս:

Յերկրորդ բաժակն ել զատարկվեց:

— Դե բավական ա, ել չեմ տա, թե չե կհարբեդ ու դործից
յետ կը լինենս:

— Ո՞վ հարբի... մերը մեռնի Սերդոյի...:

— Լավ, լավ, պարծենալու ժամանակ չի, առավոտը կիմա-
նանք քո տղամարդությունը: Ծուտ արա, դիշերն անցնում ա:

— Բա տղամարդ համար չուր ու մուր չե՞ս տա:

— Ինչպես չե: Կարոյին կամիշիր:

Մի բուզեյից հետո կարոն իր յերկար ու կորացած հասակով
կանգնած եր դուն շեմքում:

— Ազա, յերկու չափ արադ, մի տկնոր գինի տուր Սերդոյին
թող աանի:

Աղայի հրամանը կոտարվեց, Սերդոյի ընկերներն իսկույն շախաբլեցին, տարած դինքն ու արտղը կուշտ ու կուռ խմեցին և հողման առնելով, Սերոբնց ածերը զնացին։ Չորս հոգի եյին նրանք, չորսն ել ուժեղ ու յերիտառարք։

Այդուն հասնելով, նրանցից ամեն մեկը մի տախտակի ծայրին կանգնեց, «յա սուրբ Կարառիւտ», կանչնցին ու ավերմունքն սկսվեց։

Գարնանային սքանչելի գիշերներից մեկն եր, յերկինքն տառապայի, յերկիրը՝ ծաղկաղարդ։ Ողբ լցված եր զալար կանաչի անուշ բուրմունքով։ Լուռ եր ամեն ինչ, հանգիստ ու խաղաղ։ և համատարած խաղաղության մեջ լսվում եր միայն մատաղ վաղերի թույլ արմատների ցավալի վողբը։ Զարքաշ դյուղացու գառը քըրտախն քով մնված թուփերը դաժան ճնոների վարժ շարժումներով մի ակնթարթում պոկլուսմ եյին հողից, կամ ետոցով կորատվում ու պլատված թռչունների պես՝ ողբում թողրուսմ և ընկնում գնտին։

Այս բոլորը տեսնում եր բարետու յերկինքն իր բյուրամուր գայլուն աչիկներով, տեսնում եր և անդթարար լուսւմ... Միայն ամսէլուս սիրուն լուսինն եր աշխատում իր արծաթափայլ դեմքը ծածկել շուրջը լուղացող սպիտակ ամպերի բարալիկ քողով, վոր պիսզի ակամա հանդիսանես չլինի ցածում կատարվող բարբարա ասկան ավերքությանը։

5.

Այդ չարարախտ դիշերը Սերոբի վաստակած անդամներին քաղցր քունը մոտ չեկավ։ Տիուր մտքերը պաշարել եյին նրա թրմածք զլուխն ու մի տեսակ վատ նախաղղացում իր ճնշող ծանրությամբ խեղզում եր նրան։ թվում եր թե այսոր բարձը շատ կոչա և ու անկողինը վերին աստիճանի անհարմար շըրջվում եր այս ու այն կողքի վրա, վորպեսզի կարողանա մի կերպ ավելի հանդիսու գրություն զոնել, բայց չեր աջողվում։ Խեղճի կողքերի տակ կասես վշեր լինելին ցցված, վորոնք անդաղար ծակծկում եյին մարմինն ու փախցնում քունը։ Իսկ հնաց վոր նա փորձում եր մի վայրկյանով աշքը խփել, զանազան ահոնելի տեսսիներ իրենց այլանդակ կերպարանքով պատկերանում եյին նրա բորբոքված յերևակայության մեջ ու նա յերկյուղից՝ շտապով բառ նում եր քնահարած աշքերը։

Մրհիմում սիրող թանձր խավարն արդ բոսեյին չափաղանց անտանելի յեր թվում Սերոբին։ Վերջապես նա զդուշությամբ յե-

շամի անկողնուց, մթության մեջ չոչափելով գտավ լուցեկին ու վառեց
այս նին ամրացրած փոքրիկ ճրադր, զորի արձակած յերկշուա
շողերը ուղացան զեսի տղբատիկի խրճիթի մութ անկյունները։ Հետո
նա պատկեց, իդուր հուսալով, թե հիմա արդեն ոչքը կկտէն։ Նույն
անհանգստությունը ասնցում եր նրան և նա ակամա նա-
խանձում եր ամռունուն, վր իր կողքին, մինույն վերմակի տակ,
անուշ յերազների մէջ եր բնկղմված։

— Յեղասն, այս Յեղան, —կանչեց Սերորը, իր կնոջ կողքին
թւթե հրելով։

— Հր, ի՞նչ կա, —մի քիչ վախեցած հարցրեց Յեղանը, իր
ժնաթաթախ սե աչքերը լայն բանալով։

— Ակի, հենց ենպիս... ասացի տեսնեմ քնա՞ծ ես թե դար-
ֆուն, —ասեց Սերորը։

— Դու ինչո՞ւ չես քնում։

— Ենպիս, քունս չի տանում, սիրոս մի տեսակ տիսուր աւ

— Քիիր, քիիր, աստված սիրես, —ասաց Յեղանն ու յերեսը
Փողակցից շրջելով, շարունակեց մրափիկ։

— Յեղան, յերեսզ ևս կողմն արա, տես ի՞նչ եմ ասում։

— Հր, ասա։

— Ասում եմ, յավ չարինք, չպիտի քարեյինք Մանուկ աղա-
յին, ոլիսի աղջիկը տված լինելինք։

— Այ մարդ, ամոթ ա, հացգ յերկաթ կդառնա. ո՞վ ա տեսել,
զոր տառներկու տարեկան անմեղ յերեխային՝ քառասուն տարե-
կան վորրեվայրի տպամարդին կին տան... թաղեմ նրա թիկունքը,
յերկուսի դրախը կերավ, չկշացավ, զեռ ելի՞ աղասի աղջիկ ա ու-
զում, — տաքացած վրա տվեց Յեղանը։

Սերորը վոչինչ շպատասխանեց, այլ ճակատը կամաց շիեց ու
մի թեթի հոգոց արձակեց։

— Եհս զիտիմ, զու նրա անունովն ես խարովում՝ շարունա-
կեց իինը, ավելի տաքանալով, —մի տեսնեյիր իրիկունը խեղճ յե-
րեխաս ինչ եր անում. քիչ եր մնում սիրոը բնընովը դուրս գար-
այս նի շիտքում կձկված՝ զոդով արցունք եր թափում։ Զիդարիս
ծերը փորումս մղկամում եր, յերը մտիկ եյի տալիս յերեխուս աշ-
քեռին... կամ թե շի ինչո՞ւ յեմ վոազում, փառք աստծու, ուրիշ-
ների ոյես աղջիկու չի պառավել՝ տանը մնացել. ևս տարի շեմ մար-
զու տա. կաւահեմ յեկող տարի կտամ, մի կտոր հացը հս զմակցա-
չի կորիկ։

Տիրեց բռպեյական բռություն։

— Զե՞, Յեղան, յես փոշմանել եմ. խաչը վկա, փոշմանել եմ, — յերկար մտածելուց հետո՝ ասաց Սերոբը:

— Դե լավ, վոր և գովես ա, եղուց աղջկանդ կոնիցը բռնիր առար Մուկսոնց Մահաւելի տաւնը կոխիր, — անդոր զայրություն առաց Յեղանն ու նորից դժգոհությամբ յերեսը դեպի սպառը ըլքուից:

— Իմ ասածը դու չես հասկանում, այ կնիկ, ինձ փոշմանեցն սողը վոչ Մահաւելի հարստությունն ա և վոչ նրա աղայությունը, այլ իմ սրտիս յերկյուղը... Գիտե՞ս, անիրավ ու անխիղճ մարդիկ շատ կան աշխարհում, ի՞նչ չարսություն ասես, վոր չանձն, ի՞նչ վնաս ասես, վոր չտան մարդու...»

Այդ վայրկյանին յերկու ամուսները միաժամանակ մտարերեցին թե ինչպես մի քանի որ առաջ չար ձեռով զցած կրակն աղահարար լափում եր իրանց հարեանի խոտի զեղը. Հետո նրանց մըտքում պատկերացավ կտրատված ծառերի ու արմատահան արած վաղերի մի յերկար շարք, վորոնք բոլորը նենդամիտ թշնամիների ստոք վրեժինդրության արդյունք եյին:

— Բա՛, անիրավությունն աշխարհը պատել ա, — չարունակեց Սերոբը, — ամեն տեսակ չարություն, ամեն տեսակ անհատվածություն կարող են անել. ո՞վ ա նրանց կուռը բռնողը...

Յեկ Սերոբի լնդուն չեր զորում արտասանելու այն սարսափելի գործողության անունը, վոր այդպես անդիմարդեցիւ. յերկյուղեր աղջում նրա սրտին ու ալեկոծում հոգին: Ասենք, պարզ տանը կարիք չկար, քանի վոր Յեղանը լավ եր հասկանում, վոր ածերք և ամուսնու մտահոգության առարկան:

— Եհ, մեր աստվածը վողորմած ա, այ մարդ: Նա չարը կիսամիանի, նա մի առուն կաթնակեր յերեխաները ջուրը չի լցնի: Քնի, քնի, եղանակ վատ-վատ բաներ մի մտածի:

Յեկ միամիտ Յեղանը, հույսը զննելով աստուծու վողորմության վրա, ինչվոր պառավական աղոթքի միքանի աղավաղված բառեր մրմնջաց ու հանդիսա սրտով քննեց: Նրա ամուսնն եր, վոր մինչեւ աքլորական չը չարչարվեց իր կոշտ անկողնում՝ տխուր մըտքերի խեղչող ծանրության տակ ու ամեննեին կուլը-կոսլին չկպցըց:

Բարի լույսը դեռ նոր եր բացվում, յերբ Սերոբն շտապով չորերը ճիտը քցեց ու մտավ գոմը տավարին ակը տալու: Հետո նա դուրս յեկավ փողոց, առվի վրա կոանալով, սառը ջրով լվացվեց, չուխի փեշով յերեսը սրբեց ու կրծքին խաչ հանելով իրճիթը մտավ. Յեղանն ու իր մեծ աղջիկը՝ Սաթոն, արդին վոտի վրա-

Այլն : Սերորն անխոս՝ որվա պաշարը մեջքը կատեց , բահն ուսեց ու զիսի ածերը դիմեց :

Նրա գլուխը թմրած եր , քներակները տաքացած ու ամբողջ ժարմինը չարդված , թուլացած : Վոչ ճանապարհի կողքերին չարդված ծառերի ծաղկապարզ տեսնքը , վոչ կարկաչահոս առվի՛ անուշի՛ յերդը , վոչ նրա յեղերքի զալար կանաչը , վոչ այդիների ափերի արմելոս զառիվայրում կուչարած մանուշակի նորարաց ծաղիները և վոչ նրանց արձակած յեղեմային բուրմունքը—վո՞չինչ , վոչինչ չեր զրավում նրա ուշադրությունը : Նա շտապում եր ու արտասովոր լայն քարշերով անընդհատ առաջանում :

Աչա Սերորը մստեցավ ճանապարհի այն վորորանին , վորտեղից սպազմաբար տուածին անդամ տեսնում եր ածերի զլիսի ծառակրի շարքը : Նա սրուցմեց վոլորանն ու անմիջապես աչքերն ուղղեց զեպի իրանց այդին : Բայց ինչ... ծառերը չեն յերեսում . չի յերեսում մինչև անդամ բարձրահասակ խնձորենու ծաղկապարդ գաղաթը : Ենք աստված , այս ինչ հրաշք ե : Սերորը մնի քինարաբ վագեց կողքի այդին ու լերդապատառ վասղությամբ բարձրացավ այսունզ կանգնած մեծ քարակույտի վերի կատարը : Նայում ե ու իր աւքերին չի համատում : Նա տրորում ե կարմրատակաւ կողմերը . շիռում ե ճականն ու նորից նայում : Այս ինչ բան ե , տեր աստված... մատաղահաս ծառերի ծաղկապատ գլուխները կուացել , զետնին են կայել , այս , խեց գետնին : Նրա լայն չոսած աշքերը շատ լավ են տեսնում այդ բանը :

Այնուհետեւ Սերորն ինքն ել շիմացավ , թե ինչպես այդին հասավ :

Աչա վերջապես նա անխոս կանգնած է ածերի զլիսի ակում և շիզարած հայացքով առջեն և նայում : Նա ուժ չունի առաջ զնաւու . ծնկները ծալվել , վոտները թուլացել են... Այսի կանաչ ծածկոցի զբան խառնիխուռուն թափված ելին պատղատու ծառերի մատաղ զաղաթները , իսկ զլիսատված տունկերի տեղ կարդով շարժած ելին յերկար ու կարճ բնենչերի⁹) սուր-սուր ծայրերը , վորոնք թունավոր նետերի պես խոցուում ելին Սերորի սիրտը : Յևկ ինչպես չցավին խեղձի սիրտը . ախր ամբողջ ութը տարի նա հալ ու մաշ եր յեղել այդ ծառերի չուրջը . նրանց քնքույշ արմատների համար շարակով աղք եր կրել , շատ անդամ կժով եր ջրել , զողերով քրոսինք յեր թափել , մինչև վոր մեծացրել , պատվաստել ու բերել պատղի յեր հասցըրել : Խսկ հիմա...

⁹⁾ Բենչ—կարգած ծառի բնից զետնի յերեսին մասցած մասը :

Ախ , յերանի դրանով ամեն բան վերջանար :

Բայց ահա թմրերի վրա ու նրանց մեջերում ցաք ու ցրիլ փրառ
ված են արժատահան արած վաղերի փարթամ կուտրակները : Տեսա
այս մեկը՝ իծապուկն ե , վոր ոստար թմրի կրծքին սեղմված , խոս-
նակ արժատաները գեղի վեր և բարձրացրել . այս ել յեղնաչքն ե ,
մեջտեղից ջարդված , միջնակում⁹⁾ ընկած . Են ել այլշարին , են
ել հալաղին , են ել քիշմիշին—բոլորն ել ջարդված , արժատով հան-
ված , հարաղառ հողից հեռու շպրտված ...

Սերորը կանգնած տնզում քարացել եր : Նա դիտում եր այս
զժոխային տեսարանը և նրա կարկամած լեզուն անդադար կրկրնա-
վող ուլայք բացականչությունով եր միայն արժահայտում որտում
կուտակված անսահման վիշտը :

Վերջապես նա զլուխը բարձրացրեց : Դեռ արև չկար : Անամոց
յերկնքի բաց կապտության մեջ մեղմիկ վայրում եր պատավան
լուսնի սղրդնած դեմքը :

— Անիբավ , աս՝ յեր քո արդար դաստանոանը , քո վլողորմատ-
եռությունը,—բացականչեց Սերորն ատամները կրծտացնելով ոռ
թունալից հայացքը գեղի վեր ուղղելով :

Ենի կարծեն նրա հայացքից եր , վոր յերկենքն այլայլիեց , լուս-
սին ամոթից փայլը կորցրեց , զողաց , զունատիկոց : Սերուկ Մար-
սիսի բարձր կատարը սիրուն արևէ մատաղ շողերով , կամաց-կա-
մաց վոսկեղութիւնց :

Սերորը թուլացած թևերով կամացուկ արձակեց իր հնամաշ ,
յերկայն զոտին , հանդարտ մեկնեց կանաչ անգում ու սկսեց դար-
սել նրա վրա մատաղ տունկերի խզնուկ մասերը : Նա առաջ ուղեց
բոլորը համացել , բայց տեսնելով , վոր այդ բանն իր ուժերից վեր
կլինի , ջոկեց լնատիրները զիխատված ծառերից , նրա վրա ավելաց-
ըց փարթամները կուտրակներեց , այս բոլորն ամուր կապեց , շա-
բակն առաջ ու տուն դիմեց :

Հենց այդ բոլուխին նորածին արևն իր վառ շողերով լուսա-
վորեց Սերորի թախծաղատ դեմքն ու իր վոսկեկիացլ շրթունքնե-
րով զորովագին համբուրեց , լիզեց նրա շալակի դաշտը ծառերի
խոնավ վերքերը :

— Կորիր , —ասաց Սերորն , աչքերն արևից թագցնելով , —այ-
սուհետեւ խավարիր ինձ համար , չեմ ուղում քո լույթը :

Սպազրի սև սրտին՝ կարմիր արև չի սաղի :

Սերորն իր թանգաղին բնոր շալակին՝ հանդարտ քայլերով

⁹⁾ Այսու ատխատակներն իբրեւց բաժանող անցքը անվանվում է միջնակը .
86

առաջ եր դնում, մեղմ որորվելով: Հանապարհին նրան հանդիպող զյուղացիները կիսարերան որարիլույս եյին տալիս, հետո կանգ առնում, շալակին նայում, մի քանի կարենցական բացականչություններ արձակում ու ցավալի դեպքի տիսուր մանրամասնությամբ հետաքրքրվում: Սերորը կասեն վոչինչ չեր լսում ու չեր ել զգում: Նա շարունակում եր ճամբան առանց կանդննլու, առանց վորեն մնելին պատասխաննելու, սուս ու փուս, ինքն իր անհատակ վշտի մնջ թաղված:

Դյուղամիջի մարդաշատ հրապարակը հասնելով, նա կսնդ առաջ, շալակի բնոն զդուշությամբ գետնին զբեց ու ճակատի սառ քրտինքը չուխի մեջով որբեց:

Հրապարակի շուրջը շարված եյին դյուղի նշանավոր խանութներն ու ամենալավ չինությունները, վորոնց մեջ աշքի յեր ընկնում Մանուկ աղայի սրբատաշ կարմիր քարեն յերկհարկանի բարձր տանը՝ իր նորամեն սիրուն լուսամուտներով ու գեղեցիկ պատըշվամբուզ:

Մի բուղեյում ոժքախոտ Սերորին իր խղճուկ բնոով շրջապատեցին աղքատ գյուղացիք. մոայլ ճակատով, արևվառ գեմքով ու կոչտ ձեռներով, վորոնց կրակված չբժուռնքներից դուրս թուզող ցալակցական բացականչություններն իրար խառնվելով մի խմբովին, աղեկուուր վազը կազմեցին:

Առավոտաժամբ վերջացավ, և ալեոր ծերուենների կորացած մարմիններն յերերուն քայլած քով հրապարակ հասան ու անհետացան սովոր ամբոխի սովլար շարքերում: Վերջապես, ժբամի ծուռտիկ փողոցից, դուրս յեկան յերկու ծերուենի ևս ու քաղցրաւթյամբ զրուցելով, հրապարակին մոտեցան: Դեռի Գողորն եր, մնէլ եւ աերտեցը:

— Ճամբառ տվեք, ճամբառ բացեք, — լուլեցին մի քանի խեղքված ճայներ:

Ամբոխը ճեղքվեց և պատկառնի ծերուենների աշքի առջև պատկերացան բարբարոսական անդթության վողորմելի դոհերը: Մատաղ ծառերի ծաղկալատ վլուխներն և առողջ վաղերի հաստիկ կուտրակներն անկարգորեն թափված եյին շրջանի կենտրոնում, հող ու փոշու մեջ: Իսկ Սերորը, ձեռքը խաչած, շինքը ծուռ, դեմքը դունած՝ կանգնած եր լուռ: Վոչ աղաղակ, վոչ աննծք, վոչ արտասունք...

— Ոֆ-ո՛ֆ, — մըմնջաց քեռի Գողորն առաջ անցնելով, — ես ի՞նչ լան եր, քվոր վորդի, ես ի՞նչ կրակ ու պատիժ եր, ո՛ֆ, ո՛ֆ,

— Յեվ նա իր վոսկըցած մատներով սկսեց շոշափել մեռած բռւյսերի դեռ թարմ վերքերը :

— Այ ժողովուրդ, — սկսեց տերտերը պիմելով ամբոխին, — ևս ի՞նչ անասովլածություն ա, վոր դուք եք անում. Ե՞նչ անիրավություն, ի՞նչ կոտորածություն ա սա. ինչո՞ւ յեք իրար տուն քանդում, իրար միս ուսում... բավական չեղա՞վ... ես քանդված զյուղը Սոգոմ-Գոմորը դարձրիք, ախր յերկնային կրակից վախցեց: Չե՞ վոր վերև աստված կա, չե՞ վոր այնտեղ արդար դաստան կա, — վերջացրեց նա, դողդոջուն մատը դեռի յերկինքն աւղղելով:

— Հա՞, տերտեր ջան, կա՞ վերև աստված կա՞ արդար դաստան ել կա՞, — բացականչեց Սերորը, դժի սկս վեր թռչելով:

Քահանան մի վայրկյան չփոթվեց Սերորի անսպասնիվ հարցից, բայց հետո, ձյունափայլ մորուքը չփելով, մեղմությամբ ոլուսախանից :

— Մեղք ա՝ վորդի, եղանակ բաներ մի հարցնի, դա աստծուն ոչեմ կը ա:

«Ենդա՛ աստծու, մեղա՛ քեզ տեր», լովեցին ամբոխի հետ խառնված բարեալաշու ծերուկների ջերմեռանդ շրջունքներից:

— Դե, տերտեր ջան, աջիդ մեռնմ, շխտակն ասա, են վերեւ վում արդար աստված կա՞ նատած:

— Հանդոսացիր, վորդի, մի վորովվիր, կա՛, այս, կա՛, և նո կպատճի չար մարդին, կրակ կթափի անիրավի դիմին:

— Հա՞, զե վոր եղանակ ա, թող ես բողեջիս են քարաշեն մեծ տունն-աշքիս առաջին փէչի, — բղավեց Սերորը, ցուցամտով Մուխասոնց տունը ցույց տալով, — թող նրա հիմն արեղակին դառնա... զու խնդրիք, տերտեր ջան, զու բարեխոսիք յերկնեքի տոջեւ, վոր Գարբիել հրեշտակի հրեղեն սուքը ներս մտնի են. կարմիր չեմքից. թող Սոգոմ-Գոմորի կրակը լափի են ահազդին շինությունը... Տեսնո՞ւմ ես են բալիկոնում կանդնածին, են կուապաշտի զավակն ակա բոլորի պատճառը, են սատանի ծնունդն ա իմ տունը քանդողը, հասկացա՞ք... Դե, աղաջիր, տերտեր ջան, զու արդար մերանով ինչըրիք, վոր կործանվի են բարձքը պալատը, վոր բոցերի մեջ պլատան են սիրուն նախշած բալիկոնն իր վրայի նենդ ոճով... Դու յիշ բարեխոսիք, քեոի Գոգոր, զու աստվածավախ մարդ ես, զուք ել աղաջեցիք, այ ժողովուրդ, այ գյուղացիք, այ ախսկերտինք:

ասուլած սիրողը թող միմէն բերան խնդրի, դուցե մեկիդ արդար ձայնը լուելի լինի յերկնքին . . .

Սերորը լուց :

Աւնկնդիրների խոնարհված դլուխները բարձրացան ու հարյուրավոր աչքերի հանդիմանական հայացքներն ուղղվեցին Մուխտանց սպիտակ պատշտամբին :

Մանուկ աղան, վոր ձախ ձեռքը կողքին կանթած՝ աջոյ վոր լորում եր բեղերը, Հանկարծ կարմրատակեց, կրնկի վրա պատվեց ու պրոշները կրծուելով արագությամբ տուն մտավ :

Մի զարված չչուկ մեղմ ալիքներով հանդարա բոլորվեց ամբոխի կազմած շրջանի վրայով :

Ենրկու բոսն չանցած՝ Մուխտանց տան կամարապատ դարբասից դուրս թռավ Մանուկը, վորին հետեւցին յերկու բարձրահառակ աղամարդ՝ Հաստաղուեի մահակները ձեռներին :

— Գլուխն ոճի դլիսի պես կջարդեք, — բղավեց աղան, ինչը հեռու կանոնելով, — կտրորեք, վոաներիդ տակ աղցան կը ինք, կտառկացնեք եք սոված շան վորդուն :

Ակավեց մի աննկարադրելի իրաբանցում : Մահակների անուզորմ հարվածները, Սերորի սրտակտուր աղաղակը, քեռի Գոզորի հողիմաշ Շոփերը, ամբոխի կարեկցական բացականչությունները և Մանուկ աղայի լսիրչ Հայհոյանքները, թանձր փոշու մեջ իրար խառնվելով, մի դժոխային համերդ եյին կազմում, վորի աններդաշնակ հնչյունները՝ փոշու ամպի հետ քուլա-քուլա բարձրանալով՝ անհնառում եյին յերկնային անսահման կապառն մեջ :

1902 թ.

ԿԱՐՄԻՐ ՃԻՊՈՏԵ

Հունիսի վերջերն եր, որը կիրակի է Կեսորյա արել վառում, աժաժացնում եր: Գյուղամիջի տոթը մարդ եր խնդրում: Թե գաղան, թե թոշուն, թե սողուն, բոլորն ել ձեն ու ծպտունները կտրել, ծակ ու ծուկերն եյին մտել: Անդործությունն ու թմրությունը կաշկանդել եր ամենքին: Մինչև անգամ դյուզացի յերկրագործը, վորի համբերատար անդամները սովոր չեն խույս տալու վոչ ամառային արեղակի կիղիշ ճառաղայթներից և վոչ հունվարի հապտացնող ցրտից, աշխատում եր ողովնել կիրակնորյա աղատժամերից, վոր մի փոքր հանգիստ չնորհե իր վաստակավոր ու շարդված անդամներին:

Մի շարաթ եր, ինչ հունան ընկել եր: Դա դյուղացու այն ժամանակն ե, յերբ, ինչզես ասում են, փայտի դլուխը չոր են փաթաթում ու բանեցնում: Հնձի ժամանակ դյուղացու վոտի տակ կրակ և վառվում, նա մի բոպե դադար չի առնում: Արտերը մեկը ժյուսի յետերից հասնում, հնձող են կանչում: Բոպեն թանդ ե, պետք ե շառապել, յեմե վոչ արտը կիծդղի^բ), դյուղացու տարբեն ապրուստը ձեռքից կղնա, նրա թափանձ արյուն-քրատինքն անողութ կիորչի, կվոշնչանա: Յեկ ահա յերկրադործը կրկնապատկում, լուրում ե իր ուժերն ու յեռանդը և որ ու գիշեր գերանդին ձնոքից վայր չի դնում: Ուրիշ հարց ե, յերբ այդպիսի նեղ ժամանակ կիրակի յեմել ընկենում: Կիրակի որն աստծուն ե և ջերմեռանդ հայ գյուղացին չի համարձակվի պատկենական այդ սուրբ որինքը խախտել, թեկուղ ինչ ել վոր մինի:

Ահա մի արդակսի կիրակի որ եր: Պարագ դյուղացիներից մի քանիսը մանգաղ ու գերանդի եյին սրում և կարդի դցում, ուրիշները խանութների հովերում նստուած՝ դեսից-դենից զրույց եյին անում, իսկ շատերն ել՝ քնահարամությունից շշմած, դլուխները մի պատի շվաքում վայր եյին դրել ու անուշ քուն մտել:

Տասմոր Սիմոնն ել քնահարամներիցն եր: Նա փափախը զվա-

^բ) Ցերք վար հասած արտի հնձերու ժամանակն անցնում ե և հատիկներն սկսում են հսկերից թափվել, ասում են արար կծզել եւ

տուկն եր դրել ու իրանց մութը տան խոնալ դեսնին պառկել: Ո՞ւ վորքան քաղցր, վորքան անուշ և ջարդված ու վաստակած յերկրաս գործի քունը, մանավանդ մի քանի անքուն դիչերներից հետո:

Սիմոնը խոր քնի մեջ եր. նրա դեմքը խաղաղ եր ու վերին աստիճանի հանդիսաւ: Վշտի ոս հոգսի՝ աղքատի այդ յերկու անքաման բնկերների, հետքն անդամ չեր նշանրգում Սիմոնի անխոռվ դիմքի վրա: Ընդհակառակը, յերեմն, թեթև ժպիտը վայրկենապես փայլում եր նրա արևառ այտերին ու անմիջապես անհետանում:

Ծերեւում եր, վոր քնողը յերջանիկ յերազների աշխարհումն եղանակում:

Յեկ խկապես, վորքան մեծ բախտավորություն կլիներ Սիմոնի համար, յեթե մի գերբնական զորությամբ իրականանար այն բոլորն, ինչվոր այդ ըստելին նա տեսնում եր յերազում: Մկըրում Սիմոնին թվում եր, իր թե դարուն ե և ինքը դաշտ և դուրս յեկել վարելու. նա աշխատում ե մեծ յեռանդով, բայց վարում ե վոչ թե առաջիւա պես ստարի զութանով. վոչ, այժմ զութանը Սիմոնի սեփականն ե: Այդ զութանին լծված են յոթ զույզ՝ նույնապես սեփական՝ յեղներ. այն ել ի՞նչ տեսակ յեղներ՝ ամեն մեկը մի մարդ. մարդ ուղում ե վոչ ուտել, վոչ խմել, այլ միայն որերով կանգնել ու այդ սիրուն կննդանիններին նայել: Սիմոնը հասել ե իր խկական նպատակին. սեփական զութանը՝ յոթ զույզ յեղներով՝ նրա միակ տենչանքն եր կալմում: Սիմոնն իրան կատարելապես յերջանիկ ե համարում, նա քաղցր ձայնով հորոլո յե կանչում և մեջնմեջ ծովացնում ե յեղներին ու փայրիայում. «Դե, մեռնեմ Զեյրանիս: Մաղիկ ջան, մեջ արի, Մաղիկ... այ, դըլին մատաղ. Արարիս, Հորոլո՛... Յեկ վորքան լավ են քաշում անիրավ կենդունինները... Ահագին զութանը լինուուրի թեթևությամբ ե առաջ լուս և փիրուն հողի հասուլի չերտերը շարեւշար դիղում:

Փամանակը յերազում զարմանալի արագությամբ ե սլանում:

Մեկ ել տեսնում ե Սիմոնը, վոր արտը հասել ե, ոկնենել ու նրա տուող հասկերը վոսկու պես չողջողում են նորածին արեկ թույլ ճառագայթների առջե: Յեկ այնքան մեծ, ընդաշմակ և արտը, վոր նրա մի ծայրից մյուսը չի յերեսում. այնքան լավ ու այնքան բարձր ե ցորենը, վոր յեղը նրա մեջ կորչում ե: Սիմոնն անմիջապես վերցնում ե գերանդին ու սկսում է հունձը: Գործը դարձանալի արագությամբ ե առաջ զնում: Մի քանի վայրկյանից հետո, ծեծած ցորենի հսկայական թեղը կալում պատրաստ ե: Պյուս զացիք բոլորը, մեծ ու փոքր, մեր ու մանուկ, հավաքվել են կալե:

շուրջն ու բերանրաց զարժանքով Սիմոնի կալսած ցորենի թեղին ճն մտիկ տալիս : Ահա փչեց արևելյան մեղմ քամին . Սիմոնը մի ակնթարթում ահապին թեղը քամուն տվեց և սրուռ ու սպիտակ ցորենը դարձանից զատեց : Նայում և Սիմոնը ցորենի հսկայական էռայուն , հրճվում և նրա օլքոն ու լեզոն , փառք և տախտ աստծուն :

Ահա կալը շրջապատեցին ոյլուղի աղքատներն ու շրջիկ ժուրացկաններն իրանց պարկ ու տոպրակով : Սիմոնը մի ակնարկ դցից այդ թշվառ արարածների վրա և ի՞նչ տեսավ . ցնցոտիների մեջ փաթաթված՝ մաշված ու վոսկրացած մարմիններ , մարտած ու անվայլ աչքեր , նիհար ու գժգույն դիմքեր , մի խսոքով՝ շարժուն ու խոսուն դիակներ , վորոնք՝ որհնության մրմունջը շրթունքներին՝ իրանց դողդոյուն ձեռքերն անվատահ կերպով մեկնել եյին Սիմոնին : Սիմոնի ջիղյարի ծայրը մզկտաց . նա բոյորի պարկ ու տապահելը պոնկեպուռնկ լցրեց ու բարձրածային ամելացրեց .

— Տարե՛ք , խնդ ախաղերներս , տարե՛ք . ասսված սիրողը թող ատնի տոպրակի դատարկի ու մեկ ել , յերկու յել , տասն անգամ ել պա բաժին ատանելու : Գիտեմ , սիրելիներս , աղքատի յերեսը ու մ ձեռը կարճ ալինում , բայց յես ձեղ խնդրում , աղաչում եմ , մոտեցեք աղատ ու համարձակ և տարեք ամեն մեկդ ննջան , վոր բավականացնի ձեղ ու ձեր յերեխաներին մի ամրող տարի : Ա՛յս , աղքատության տերը մեռնի . յես ել եմ եղ որը տեսել , եղ ցավը քաշել , տարե՛ք , աղքատ ախտերներս , տարե՛ք , փառք աստծու , ենքան ա տվել , վոր մենակ կալիս տականքն ինձ տաս տարի կրավակացնի :

Մուրացկանները դարմանքից շմարել են ու չփետեն , ինչողեն արտահայտեն իրանց դոհունակությունը . նրանք հաղար ու մի խոսքերով , բարձատեսակ դարձվածներով որհնում են իրանց բարերարի ծնունդն ու կյանքը , իսկ Սիմոնը , ձեռները կանթած , կալի մեջ կանգնած՝ ժպտալի դմեմքով ցորնին և նայում ու վլողորմած անրոջը փառարանում . . .

Վորքան բախտավոր կիմներ Սիմոնը , յեթե այս բոլորն յերադ չլիներ :

Լուռ եր խըճիթն ու խաղաղ : Տանը վոչ վոչ չկար : Սիմոնի կիմնը յերեխաներին ժողովել ու հարեւանի տունն եր զնացել , վորապեսի փոքրիկներն իրանց զալմաղալով հոգնած ամուսնու քաղցր քունը շխանդարեն : Խթճիթում մնացել եր միայն ու կատուն , նա յել Սիմոնի դլիավերել կծկված՝ իր կիսախուփ աչքերի թույլ հայցը տիրոջ յնընսին եր ուղղել ու մեղմ մոռում :

Արճիթում տիրող խորհրդավոր լոռության մեջ լովում եր միայն քողովի միակերպ ու հանդիսա չնշառությունը :

— Շրիկ, շրիկ, շրիկ, — լովնց Սիմոննց բակի դրան ամուբ թակոցը :

Սիմոնին յիրաղում այնուևս թվաց, թե կալի հարևանը մուրճով ամրացնում է կամերի վրայի թուլացած վործաքարերը և նա մնաց բնկղմված յիրաղի մեջ :

— Շրիկ, շրիկ, շրիկ, — ավելի ուժվեն կրկնվեց գոան հարվածները, վորով հետո, բակի հին դուռը մի աղեկտուր ճիշ արձակելով, կրնկի վրա պատվից ու թակողին ներս թողեց : Իս զգիր Գևոն եր, յիրկար ու բարակ մի մարդ, ունրամաստի⁴⁾ ծուռ հիպատը ձեռին :

Կասեմ խուիր ա ընկել ավերակ դառածը, մարդահոա չի զալիս, — բեղի տակ մրթմրթաց նա, մոտենալով խրճիթի գոանը :

— Տատմոր տղա, Հե՛յ, — զզրին հատուկ սուր ու ծիռ ճայնող զոռաց նա, զուռը ծերպ անելով :

Սիմոնը պատկած տեղից ծուլ յելալ ու ջղաժշական շարժումով սկսնց քնաթաթախ աչքերը տրորել : Քաղցր յիրազների գրավիչ տեսարաններ մի ակընթարթում խորտակվեցին, չքացան ու նրանցից մնացած վողորմելի ավերակների վրա իսկույն վոտի կանոննեց՝ զտոն ու տիսուր իրականությունն իր բոլոր ինեղճությամբ : Ահա նրա սուսած ու կիսաբաց աչքերին յերեսում են պապենական հին խրճիթի հարյուրամյա ուն սյուները, բյրլուտած պատերն ու մրուտ առնաստաղը : ահա խրճիթի մի անկյունում պաղպած՝ հացի դատարկ տաշտը, իսկ մրուտում՝ ալյուրի սովատանջ փեթակը, յիրկուն ել շլինքը ծուռ՝ խեղճացած, աղաչական հայցքով՝ նայում են Սիմոնին ...

— Իսկ ի՞նչ յեղամի գութանը, — մտածում եր Սիմոնը, — ի՞նչ յեղան իս սիրուն յեղները, իմ կալը, իմ դեղը, ցորենի ահաղին կույտը, մի՞թե ես բոլորը յիրաղ եր, — ինքն իրան բարձրաձայն հարց-քեց նա:

— Այս, ի՞նչ ես արջաքուն մտել, — զոռաց զզիր Դեռն, դռան չեմքից դլուխը յիրկարացնելով, — մեռելի պես ես չնթրկում, տնաքանդ, բա դու սկի ցավ ու կրակ չունե՞ս : Հլա մի տես, վո՞նց աշարժվում, վո՞նց, կասեմ կուն ու ճուռը կարմիր քամի ընկած լինի : Վե՛ր կաց, իշխ դլուխ, վե՛ր, տանուտնը կանչում ա, չո՞ւս :

Սիմոնը դեռ նոր եր ուշքի գալիս : Թարմ յիրազն այնքան դրամիկ եր, ու նրա թողած տպավորությունն այն աստիճան խոր, վոք-

⁴⁾ Վայրի ծոռ ե.

նա չեր կարող հեշտությամբ հաշտվել նրանից բաժանվելու մտքի հետ : Բայց զդիր Գևոյի տառելի յերեսը, նրա ծուռտիկ զերամասութեանպատճ, վորի մդկատացնող հարգվածները շատ անդամ եր կերել Սիմոնը և մեկ ել տանուտերի ահեղ անունը, վերջնականապես սթափեցրին նրան ու միանդամայն մոռացնել տվին յերջանելի յերազի քաղցր հիշողությունը :

վակիներիդ մեսնեմ յես... շտա բան չեմ ուղում, յերեք դունդ
խմոր...

Շամամի ճայնը խաղվեց և սանձարձակ հեծելուանքը լիքը սրբ-
ուեց դուրս ժայթքեց :

« Տանուտերն ողացված եր. նա մինչեւ անդամ կռիորդը մաքըց
և ուղում եր մի բան խնդրել միկիստանչի Մակարից, բայց վերջինս
չսովասկց, ճեմի ուժեղ հարվածով մի կողմ հրեց Շամամին և բեղի
առակ վիճակնետալով, արագ—արագ դուրս զնաց : Տանուտերն չտա-
պով հասավ նրա յետեց և կիսաձայն մի ինչվոր բան փափաց :

7.

Ավոյի որտին վոր դանակ տայիր, արյուն չեր կաթի : Նա ձեռ-
ները կըծքին խաչած, շինքը ծուռ, սիրտը կոտրած, մեացել եր
խրճիթում, ողաբեն հենված, չորացած :

Շամամը կամաց զուրս յեկավ բակը : Խսկ սովատանչ մանուկ-
ները մոր վեշերից կոխավնըով, աղիուղորմ լալիս եյին ու հաց եյին
պահանջում :

Մարդուս ջլոյարի ծայրն եր մոմում...

Յերբ Մակարը բակից փողոց զուրս յեկավ, տանուտերը բունեց
նրա թեկցը և կիսաձայն աղաչեց :

— Մակար ախորեր, եղ խմորից մի քանի դունդ ինձ բախչի :

— Զե՞նդ, ձե՞նդ, չի՞ լինի, — վորոտաց միկիստանչին :

— Զե, պիսի ասս, թե ախորեր ես, պիտի ասս, — ընկերական
վստահությամբ պահանջեց տանուտերը և Մակարի վեշի ծայրից
բռնելով, ճեռը կոխաց նրա զովքը, վոր մի քանի դունդ հանի :

Այդ բապեյին չուխի վեշը տիբոջ ձեռից դուրս պլծավ, զովքը
քանդվեց և խառ խմորի փխլիկ գնդերը շեխոտ փողոցի դետնին
թափովեցին...

Երկիտանչու տռուղ զեմքն ամբողջովին սպրդնեց և ճոթոված աչքերը կատաղությամբ փայլեցին : Տանուտերը կուչ զալով կտաց-կամաց յետ քաշվեց : Խեղճ Շամամը վախիսիկով մոռեցավ, վոր աղտատված նշխարքը ցեխի միջից հավաքի . չե՞ վոր դա սրբություն եր :

— Ե՞նչ ես անում, անզգամ , — բղավեց միկիտանչին ու դարբույթից սկսեց ցեխի միջի խմորը կատաղությամբ տրորել և անզադար կրկնել . — ցեխին կտամ , շան բաժին կանեմ ու ձեզ չեմ թողնի, հարա , չեմ թողնի :

— Մեղա աստծու, մեղա աստծու, — հաղիվ լսելի ճայնով մըքմընջացին մի քանի յերկրուղած ծերունիներ, վոր աղմուկի ձայնին հավաքվել եյին, — խիղճու մեռնի, մեղքում կորանք, ո՞ւ երտեսել, վոր նշխարքը ցեխսերի միջ տրորեն, մեղա քեղ, աեր մեղա՝, մեղա :

— Այ ձեզ խմոր, այ ձեզ հաց, — մռնչում եր Մակարը, ամեն անզգամ բիբր վոտներով շարմաղ դռնդը կոխելով, — հիմա դուք շան ոկս սովոր սատկեցեք :

Մանուկների վայնասունն ու Շամամի հեծկլտանքը քարերն եյին լացացնում, իսկ զյուղացիք տիտոր հառաջում եյին :

— Ո՞ւՓ Ես ի՞նչ ա, ժողովուրդ, վո՞ր աստվածը մեր կունկի . — լովեց բակից մի մռնչոց և մեկն արագ մոռեցավ այդ տիտոր տեսարանին : Դա Ավոն եր, ապրդնած, այլանդակված և աշքերի խնձորներն իրենց քնից դուրս ցցված :

Գյուղացոց մեջ խուլ փափսուկ տարածվեց և բոլորի հայացքները դարձան զեսի նորեկը : Ավոն կանգնած տեղում մեխալից և մի վտյրիյան իր ճոթուած աչքերով տնդղեց Մակարի վոտի տակ՝ կեղառ ու ցեխի միջ հաղախված խմորը :

Մանուկների վայնասունն ու Շամամի հեծկլտանքը քարերն եյին լացացնում . իսկ Մակարը, բիբր վոտներով շարմաղ խմորն եր կոխրճում ու հետն ել զայրույթով գոչում .

— Շան բաժին կանեմ, ցեխին կիսանհմ ու ձեզ չեմ թողնի . բա՞ , չեմ թողնի . հիմա անովի սովոր սատկեցեք :

— Ո՞ւՓ, քար յերկինք, բա չե՞ս տեսնում, — Հանկարծ մռնչաց Ավոն և մի ծերունու ձեռից հաստագլուխ դավադանը փայլով, տառբավ-բերեց և այնովին ուժգին հարված հասցրեց միկիտանչու գաղաթին, վոր մահակը կոտրվեց :

Հարվածն անակնէալ եր : Մակարն հանկարծակի յեկալ . նրա գեմքը բուռերազես կապուտակեց . բունքերի յերակները ճիպուտ-

Յիսուս կանդնեցին, չոված խոշոր աչքերն իսկույն կարմբառա-
կեցին և ճակատից ցայտող բալի արյունը կարմիր բծով նախշեց
ցեխոտ խմորը :

Միկիտանչին մեռնող արջի պես վորոտաց և կտրված կաղնու-
նման՝ շառաչյունով վայր ընկալ . . .
— Ոխա՞ . . . — ՀՀնչաց ամբոխը միաձայն :

1909 թ.

«ԱՆԱՏԱՄ ԳԵԼԵԲԸ»

ԲԱԼԱԲԵԿԸ

Բալաբեկ . . . բերնով ևս տոում՝ Բալաբեկ : Մի ժամանակ ամպագոռ եր տալիս նա . գյուղամիջին ման զալիս դետինը տակին դուզում եր : Նա յոթ տարի իննը գյուղի ստարչինա յեր յեղել և տառ ներկու տարի յել՝ ամբողջ շքջանի միրազ : Մի զալառ եր մի Բալաբեկ : Նա շարունակ շինուվնիկների շրջանումն եր լինում, պրիստում, դաստավորի հետ եր նստում վեր կենում : Մարդն առյուծ եր, ամդպահանակ և աջ ու ձախ անխնա միշտ չուփում : Եր, կողոպատում : Ով յոթ ճյուղանի սիրո ուներ, վոր ձեն ու ծպտուն հաներ . ո՞վ եր գլուխ ճեն քաշել, վոր նրա զեմ բողոքեր : Իշխանությունն ու ուրենքը նրա պաշտպաններն եյին, նրա թե ու թիկուհը :

Բալաբեկն հն ժամանակ շարս ճենանի յեր դառնել . նա մի կողմէ իր ինքն եր հնձում անդադար, մի կողմէ իր վորդին եր ճոթի խառնութ բաց արել և գյուղացոց քերթելով, տղբուկի պես միալար ծծում նրանց արյունը : Հայր ու վորդի շատ տարիներ կլանեցին ու կեղեցիցին խեղձերին : Ել լավ հողեր, ընտիր մլքեր չմնաց, վոր իր բննցով չանեյին : Գյուղի կեսն արդեն Բալաբեկին եր և նրա շենովախը ծովի նման ծփում եր հազար ու մի բարի քով :

Են ի՞նչ կը անք եր քաշում նա . . . Են ի՞նչ վայելչություն եր . . . Արական զառնով փլազ, քաղցր ու անուշ կեր ու խում, անվերջ քնիքեր, խնջույքներ, զուռնա ու պար, ծափ-ծիծաղ . . .

Խողճ գյուղացիք հեռվից-հեռու նայում եյին նորանձով և փոյինքը շաղ տալին՝ Հազար յերնեկ ուղարկում Բալաբեկի Հասցեային :

Բայց ամ Են ինչ վերջ ունի այս անցողիկ աշխարհում :

Հանկարծակի անակնկալ մեծ փոթորիկ բարձրացավ : Արարաշխարքը թնդաց, յերկիրն Հիմքից սասանվեց . . . Հին ու փթած սրենքների խարխուզ շենքը խորտակվեց՝ բլքերի տակ թաղելով յերկը նախկին տերերին :

Այդ որվանից Բալաբեկի բաղդի կծիկը հետ դարձավ : Հողե

գրիմին եր յեկել . սարի նման սրաշտպանները կորել եյին , կործանվել : Ել վոչ ուրեղնիկը կար՝ իր սրով ու մտրակով , վոչ կատաղի բիդ-բեղակոր պլրիւտակիր , վոչ սար ու ձոր թնդացնող առևտն դաւառապետը :

Այժմ ընկերներն եյին կառավարում յերկիրը :

Հիմա անթե ու անթիկունք մնացած աղի մեջքը շարդվել եր , վողնաշարը հաղար անդից փշրվել : Անպատճելի զուլում եր յեկել զլիսին : Նրա վորդին ընկել եր բայլշեիկների կովում . ինքը վոչ պաշտոն ուներ , վոչ առևտուր կար ձեռին . յեռհարկանի մեծ տունը խլել եյին ու գուանը կարմիր գրոշակ անկել : Էավլավ հողերն առել եյին՝ չունեցողներին ավել , ամբարները դատարկել՝ թալանվածներին բաշխել ... են ծով կարողությունից , անթիվ մալ ու մէքերից յերկու այդին յեր մնում , յերնք աչք ջրաղաց ու մի քանի արտառել :

Են առողջա Բալարենին ել չկար : Ուսած փորը խչկել եր , լի բարախը թառամել , վողնաշարը կուացել և կուզը գուրս եր պրծել : Վազի ասած՝ փաշանն ընկել եր փորը :

Բալարեկի սիրտն այրված եր , հաղար անդից խոցոտված : Նա կուղեր քարձը ճչալ , աշխարհով մեկ քլամիլ ու բողոքել բայլշեիկի «անխողճ» որենքների զեմ , կուզեր աջ ու ձախ հարձակվել , յեղունենքնութ պատառատել «անիրավ ընկերներին» , բայց վախում եր , ատամը մուտ չեր անում . ահը շատ եր , քանց մահը :

Անդոր դայրույթից կոկորդը փակվել եր , լիզուն բերնում չորացել : Դառը մազցը տարիներով կուտակվել եր նրա մեջ ու զիշեր ցերեկ յիսում եր կըծքի տակ , բայց յելք չեր գտնում ժայթքելու , թափիկելու . . .

Եկի թևաթափ միրավը ներքին բացից վառվելով , ինքն իրան կրծուում եր , հալվում , մաշվում միալար :

Յերեք որտակից ընկերներ ուներ նա . մեկը սուղիս Մարգարն եր , մյուսը՝ զրադիր Դրիշը և մեկելը՝ քահանան : Բոլորն ել զաղված , խորոված մարդիկ : Դրուշի նախկին իշխաններն եյին գրանք , նրա զեկավարները , վոր յերջանիկ անցյալի հուշերով եյին ապրում և հին որերը տեսնելու քաղցր հույսով սփոփլում :

Աշխարհիս բանը տեսնք : Են ժամանակ , յերը աղեքի գործն առջողակ եր զնում , վոչ ժամ եյին ճանաչում , վոչ սրբերին միտ բնորում , բայց հենց վոր գործը ձախվեց , բայլշեիկի զարք ու զուլումն հենց տեսան , իսկույն հավատի յեկան : Նրանք ամեն առաջատ անխախտ ժամ եյին զնում , ուր միաձայն խնդրում եյին աստծուց . «Արդար դատապատճն անել , բայլշեիկի վիզը տալ , իրանց հոգին ազատել :

Յոթ տարի յեր ինչ մարդիկ անվերջ կուրծք եյին ծեծում և ժիշտույն աղոթքը հազար ձևով թարս ու շիտակ կրկնում, բայց յերկինքը միշտ խուլ եր նրանց թախանձանքներին: Ընկերների թիվն որեցոր աճում եր, թե ու թիկունքն ամբանում, տեղերն ավելի պնդվում:

Յեզ ամեն որ, ժամն արձակվելուց հետո, նրա դավթի մեծ շինարու ստվերում, այդ մտերիմ խմբի մեջ միշտ միենույն կարճ գրուցն եր կրկնվում:

— Տերաեր, բա ես վո՞նց բան ա,—զանդատվում եր Մարդարքը, — ախր մի որ ել անցավ, բա ջարդված բայց եկի վերջը յերբ պիտք ալինի:

Բաշարեկը չեր խոսում: Սրտի խորքից խոր մոխնչ եր արձակում և շրթունքները կրծելով, թութունի տուփը հանում: Գրադիրը տեղոր գլուխն որորում եր ու ասում:

— Կլնի՛, կլնի՛, պաղածդի, տառված մեծ ա, չուտ կլնի:

Տեր Մահակը՝ չալ մորուքը չփելով, կշտամբում եր թերահագատ սուդիին և համոզված յեղանակով խրատում:

— Ե՛, արարչի սիրոը լնն ա, կտանի, կհամբերի, բայց վոր ջանին հասցրին, մեկ ել ենպես գլխի վրա կործ կանի, վոն տե՛ղն ել չի յերևա:

— Ախ, բա ո՞ւր ա, ախր յե՞րբ, մենք վառվեցինք, մեռանք, ե՛, — միաբերան կանչում: Եյին բոլորը և ժամի բակից յեշում:

Իսկ դարավոր սազարթախիտ չինարին, ծեղ կատարը սվավալնն շարժելով, կատես նրանց ականջին ինչլոր բան եր մըմնջում: Թը վում եր թե ասում ե: «Կաղասեք, շատ կսպասեք, կկուրանաք, բայց եղ որը չեք տեսնի»:

ՓՈՐՎՈՐՆԵՐԻ ԵՐՃԱՆՈՒՄ

Գարնանային անուշ որերից մեկն եր: Գյուղի նեղիկ մոռղոցների ցեխը դեռ չեր չորացել, սակայն տեղակաց, պատերի մոտ, արևոտունի լանջերում, զետինն արքեն ցամացել եր ու քիչ զեղնին եր տալիս: Զահել արեց վերելից իր կենսատու ժամփառվ զարդարել եր յերկիրը և դուրավի ջերմությամբ լցրել արար աշխարհը: Վողը ընությունը կատես արքի զեմ ծունկ չոքած անպատմելի ցնծությամբ նրա դովքն եր յերգում: Ծեվ սար ու ձոր, ողձնված միւթունայոր ծաղկումքով, ցածից զետ վեր անմահական բուրմունք նյին խնկարգում:

Գյուղացիք մրջունի պես գժվժում եյին դուրսը՝ այդիներում:

զաշտերում : Աշխատանքն ամենուրեք յեռում եր . հալալ քրտինքը վոսպում եր հողը :

Այդեփորի ամենաթեժ շրջանն եր : Զքավորներն իրանք եյին իրենց փոքրիկ այդիները մշակում , իսկ լավ կերած , թոռ մեծացած և անհոգ կյանքի սովոր աղեքն ու քեթխուղեքը բանվորներ եյին վարձում :

Բարարեկն ել այդ որը բանվորներ ուներ այդում : Յերեք բովլը⁹⁾ վարձած եյին դյուղի չքավորներից , իսկ մի բովլ՝ փոխարավոր միջակ դյուղացիք եյին . մեկը խնամի Խեցոն եր , իսկ մյուսը՝ Մակարը : Այդեաերը նրանց վերակացուն եր . նա հսկում եր , վոր զործն արագ լնիանա և արդյունավետ լինի , վոր աշխատանքի ժամերից վոչ մի բովլ չկորչի :

Ենք բեղարած բանվորները ծաղկաղարդ տանձենու տակ՝ անքեռապործ թափշյա զորդին նստուտած՝ ախորժակով խրփշտում եյին խաչուն մի բնդհանուր ամանից : Իսկ ձորակից յեկող անուշ զեփյուու՝ անթիվ սիրուն ծաղկեթերթիկ բերելով , կասես պսակ եր Հյուսում աշխատանքն մարտիկների արևախիաշ գեմքերին :

Վոսպախտաշուն վերջանալու վրա յեր , յերը խոր ձորի են ափից մի խուլ աղաղակ լսվեց : Գդաշները մի վայրկյանով ողի միջին կանդ տուան և բոլորի հայացքները թոան աղմուկի կողմը : Այնտեղ , հեռվում , քար ու քարափնիքի մեջ , հարյուրավոր դյուղացիք լնուան յանջը սպասուելով ճանապարհ եյին հարթում : Տանյակ մարդիկ կուրծք տված մի ահապին լեռ քարի փորձում եյին պոկել այն ու զլորն զեպի ցած : Բանվորները յերեք կողմից մեկ ել կաղան քարափին , ճենճենին տաշըն զուռացին , ու աղապամն յերերաց , խոր տքոցի միջից անսեծք տրամակեց և դարավոր սպատվանդանից պոկիվելով , մոնչային իջամ զեպի անդուները : Բանվորները լիաթոք ուռաներով առնեցին այդ փոքրիկ հաղթանակը :

— Զա՞ն , չա՞ն , — մայնակցեցին տանձենու տակ ճաշողներից չառերը , — համա լա՞վ պոկեցին , հա՞...

— Դե՛ , ձեր գլխին մեռնեմ , հա՞ , — ավելացրեց Մաղկատարենց վարդանր , — ճամրա բացեք , վոր մենք ել քաղաքի հոտն առնենք յե՞... քանին փթնեք ես խուլ ու խավար տեղում :

— Ճամրեն լավ բան ա , բա ի՞նչ , — վրա բերեց Մանասարի Սուռ կուչը շրթունքները սրբելով , — ճամրա պես մի բան ա , ենքան ա , վոր աղքատներին զոռ չանեն , ուժից ավել չքարձեն :

— Զոոր վո՞նց կլինի , ախալեր , — միջամտեց խնամին , — եղ

9) Փոքրաբների այն զույգը , վարդնց աշխատամ են միենալոյն թերէ վրա

զահքումար ճամբի վրա յես չորս հինգ որ բանել եմ, հյա ելի ձեռ
չին քաշում ինձանից. բա ես աստված վեր կունի՞ :

— Վիաս չկա, մեր ոգուտի համար ա. ամեն մեկս մի շարաթ և
զոր բանենք, մեջքակոտոր չենք լինի՞ — պատասխանեց Վարդանը,
զույլասարի թութունի մեծ քսակը հանելով:

— Լավ ես բրթում, — բացականչեց ցնցուապատ մի բանվոր,
վորին Լամ ելին կանչում, և վեհերի ծլանքները թափահարելով
ասաց, հյա իմ որին մտիկ... յես մի շարաթ կոռ անեմ, բա իմ
առան ո՞վ կպահի. ախր չորս հինգ կաթնակեր լակուտ-լուկումներ
ունեմ:

— Եղ ասա, հա՞ — վայերացրեց խնամին, ախողեր, մեր ես
նեղ որին ճամբա շինելս վո՞քն ա: Մինչեւ որս, վոր լեն ճամբա չենք
ունեցել, չե՞նք ապրել:

— Ապրել ենք, բայց շան որով, տավարի չարչարանքով ենք
ապրել: Սելլ վեղից մինչի քաղաք հասնելը քառասում տեղ չուռ եք
դույլ: Տո, ճամբի պես բան լինի, նրա բարաքաթին մեռնեմ, — վո-
գևորչած պատասխանեց Մակարը:

Բայարեկը, վոր մինչև այդ համբերությամբ լսում եր, ել չկա-
րաց դիմանալ և միշտակեց վենին:

— Հողը մեր սարսաց դիմին. իշեւ պես խնդմնդում եք, չեք դի-
տում, վոր ճամբա շինել տվողն իր մասին ա մտածում, վոր որա-
կան ֆայտոնով դնա ու դա քեմի քաշի: Շոշի ճամբից խեղճ գեղա-
ցուն ի՞նչ ուղուտ: Նա ինքն ա՝ իր ջուխս վոտը. ենքան շալակ պիտի
կըի, վոր ճոները ուն ջուը իշին:

Լաճն ամանի պակի վոստերը սրեց և դումը շպրենելով ավե-
լացրեց.

— Ե՛ղ առաջ, հա՞... ոտ, թող վորս կուշտ ըլի, ճամբեն յես ի՞նչ
Եմ անում: Թե աղքատին ողնող են, թող մի ել տանեն տան ինձ,
վոր սարերը եթամ դամ, ինձ համար աղըրուստ անեմ, տունս, յերե-
խեց պահեմ. թե չե ֆայտոնի ճամբեն իմ ինչին ա հարկավոր:

— Այ ճարբ, խելքդ չի կարում, — պատասխանեց Վարդանը, —
մինչի վոր ճամբա չինի, զեզե առաջ չի դնա: Մարիկ արա տես
ելի, վորտեղ լուսավոր գեղ կա, բոլորն ել լավ շոշ⁹) ունեն: Ճամ-
բեն ելում՝ ուսումնարան ել կըլնի, կոռուերատոր ել կըլնի, զե-
զում բանկ ել կրացլիմ, վոր քեզ իշի վոր կոտա...

— Բա, բա գոզդ բաց արա, թե չե վոսկին կթավովի, —
ընդհատեց Բայարեկը, — վայ, հողերը ձեր ովախն. հնաց ով-

⁹) Խնուղի:

տեք, թե են ճոճուան ճառող թաղի թուլեքը քուն քնում են ու յերազում եղ գեղացոն են տեսնում... Կորչե՛ն, կորչե՛ն, դը-
րանցում խիզն ու խղճմանք չկա:

Վարդանը, վոր կոմբջիջի նոր ընդունված անդամ եր, կա-
կուղ պատասխան տվից.

— Ասելու չի, մարդը դիտի. զորքաներին դեղել են, աղքատ-
ներին յեղել են...

Բալարեկն աչքի պոչով ծուռը նայեց Վարդանին և դդաղով,
վոր զա «նրանցից» կէնի, ինքն իրան քիչ հավաքեց:

— Տո, թողեք ասաված սիրեք, են ճանձն ի՞նչ ա, ճանձից ել
են յեղ քաշում... թողեք երլեմ, ել բերանս մի բացեք: Վերեք
դործի, վերեք, որը ճաշ դառավ, — և նա կանդնեց իր տեղից:

Տուրբը վոտքի յելան և աշխատանքն սկսվեց:

— Համա փոթոթված ա, հա՛, — ասաց Մուկուչն իր բո-
վակցի ականջին, աչքի պոչով Բալարեկին ցույց տալով:

— Երված տեղերն այսու դալի. Համա հալա վո՞րտեղ ա-
զեռ շատ պիտի փոփոթվի, — պատասխանեց Վարդանը և թափ-
շակին⁹) այնպես ամուր հարվածեց, վոր սուր բահը մինչև բու-
կը թաղվեց փխրուն հողի մեջ: Կասես ուզում եր ասել, վոր այդ-
պիսի հարվածներ Բալարեկների համար դեռ շատ ու շատ կան
պահված:

ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՐԱՍՈՒԹՅՈՒՆ

Մի տարի յել գլորվեց:

Կիբակի յեր: Գյուղամիջում արտասովոր իրարանցում եր
տիրում. Համայնական ժողով եր նշանակված՝ գյուղխորհրդի հաշվեառ զեկուցումը լսելու, գալիք տարվա աշխատանքի ծրագի-
րը հաստատելու և խորհրդի նոր կազմ ընտրելու համար: Մի քա-
նի պատանիներ քրտնամիսած շրջում եյին ոլորմոլոր փողոցնե-
րով և գյուղացց հրավիրում ժողովի:

Այդ միջոցին Բալարեկենց տանը լավ կեր ու խում կար:
Կապույտ սփոռցի շուրջը շարված եյին վեց հոգի: Հացերի մեջ
անկարդ թափթիված եյին խորովածի վոսկորներ, աղած կողակի
փշեր, ճիլ պանրի կտորտանք, բողկի կենակ և այլն:

Հյուրերի շարքում եյին Բալարեկի սրտակից ընկերները և

⁹⁾ Բահի գլխի փայտյա ոկանն ե, վորէն վատքով զարկում են:

Արշ. Շահնազարյան Դյուլդ. պատկերներ-10

յերկու և լ դինեմու ու լեզվանի աղքատներ՝ Տոլուրաշենց Ալեքս
ու Լավագանենց Թարաղը: Վերջիններն այնպիսի ժարդիկ ե-
րին, վոր մի թառ վիճու համար տմեն որբություն վորի տակ
կտային:

Բալարեկը շատ խորամանկ, հաշվով ՀՀԿ եկած ժարդ եր:
Մինչև վոր մեկն ու մեկից սպասելիք չունենար մի թառ սառը
չուր չեր տա: Նա լավ գիտեր, վոր այլորվա ժողովում յերկու
կարենոր հարց պիտի քննվեր, վորոնք նրա անձնական շահերն ե-
տին շոշափում: Մեկը՝ դպրոցի կառուցման խնդիրն եր, վոր
միաք ունեցին շնորհ հայրեկի այլու մեջ, և մյուսն ել՝ ծրադըր-
վոր ելեկտրական էարյանը, վորն ուղարկ ելին կառուցել նրա ջո-
շացառնում:

Բալարեկը ձայնազուրկ եր և ինքն անձամբ ժողովին ժառ-
նակցել չեր կարող, վոր իր դստեն իր թերանով պաշտպաներ:
Պետք եր զրոից վասահելի պաշտպանություն պատրաստել: Յեզ
արք որվա կեր ու խումբ նպատակը ՀԵՆց գա յեր: Բալարե-
կի մեծ հույսը Ալեքն ու Թարապն ելին, վորոնք դյուզի աղքառ
դասից լինելով՝ իշխանությանը հարապատ ելին հաշվում ե-
կարող ելին ժողովում ճակատները լայն բացած՝ ազատ, հա-
մարձակ խոսել ժողովրդի անունից: Նրանց հանձնարարված եր՝
հանուն խնդիրի շահի՝ վիճովել և խանգարնել հանրության ձևա-
հարկնելը:

Հյուրերի տրամադրությունն աշխուժ եր: Նրանք առք-սառք
խոսում ելին, բայց բնավ չելին վիճում: Մաքերն համերաշխ
ելին: Բալարեկի խոսքը միշտ հավանություն եր դտնում և միտ-
մայն ընդունվում բոլոր հյուրերի կողմից:

Յերայթների ծրագիրը պատրաստ եր: Դերերն արդեն
բաշխված ելին ու սերտված: Բալարեկը պատվիրում եր, վոր
ժողովում իր անունն ամեննեին չէլչեն, այլ միշտ խոսեն աղքառ-
ների, մեշվաճների շահերից:

— Դու ի՞նչ քործ ունես, աղես, — պարծենում եր Ալեքը,
Տոլուրաշութուն եմ յես, քառսուն թերան կճշեմ: Ասենք...
ոչըսկ դովալը լավ չե, համա Ալեքիդ հունարն որն եսոր կանո-
նին:

Թարաղը, վոր շարունակ գալին եր թափեթափ տալիս և
ողալով նրա թեթևանալը, չուտ-չուտ իր թասն եր լցնում, նո-
րից առավ բաժակը և լայն թերնից առատ վսիկնքը թափելին,
հարսար լեզուն բաց արեց.

— Միավակ աղա, քո կինացը, հոգուտ ժաման, գարք չա-
թ 30

Նեռ, քանի մարտադղ սալ ա, ժազիդ դիպչող չի ընկի: Ոխուր գը-
յուշո ունենամ, ոխտն ել մատաղ կտամ քեզ: Մին ել եմ խում կե-
նոցդ, աղա ջան, քու շվաքը թող մեր գլխից չպակասի: Ե՛ ...
զուր բան ա, ինչ ուղում են թող հաջան, մեր մհալի ճրագն ես:
Բու շրագվան կենացը... Ախտեր Ալեք, «Հոռոմը»...

Ալեքը վերջին անգամ փորձեց յերգել «Հոռոմը», բայց ելի
արդելցին և նա միայն մտքում կամաց դունդունաց: Դավին ար-
դեն զատարել եր: Տերտերը սեղանն ուշնեց ու հյուրերը պատ-
րաստվեցին յենելու:

— Դե վերե՛ք, մատաղ, վերե՛ք, — ասաց սուզյին կանոնե-
ամ, — վերեք տեսնենք ասաված ինչ ու աշողում:

Ալեքը բայսը թասերի թերմածքն իր գավաթի մեջ քամնց ե-
րաժակը շրմունքներին մասեցնելով, մբմնջաց..

— Դուքմանահար չանես, տե՛ր:

— Ալեք ջան, անուշ ելավ, — ասաց մարտադղ
պայմանի մեկ ել ցնցելով, հառաչնելն վեր կացավ:

Յերբ հյուրերը սուվիրին լիությունք մաղթելով դուրս յե-
կան, Բարձրենք գոչեց նրանց հետեւից:

— Տես, մեկ ել եմ ասում, հա՛, թե դործն աջողակ զնաց,
իրիկունը մեղ մոռ զոնադ կինեք: Թոների չաղ բողբաշ ունենք,
բակական քեֆն են ժամանակ կինի հա՛:

— Աստված աջողի, աստված աջողի, — պատասխանեցին
հյուրերը միաձայն և զնացին մասնակցելու ժողովին:

Յետ մնացին յերկու ձայնադուրիները՝ հյուրընկալն ու տեր-
աները:

ԴԱՄԱՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Մատաղ դարնան ծիծակուտ սիրուն որերից մեկն եր:
Դյուզխորհրդի մեծ բակը լցված եր ծովածավալ բարձությամբ:
Քանի դիմաց՝ պատշաճամբում գրված սեղանի առջե՝ ատենակալն
եր նատած: Նու քաղաքից եր յեկել և ծանոթ եր գյուղացոց
ընկեր Մացակ անունով: Բարձրահասակ, չոր մարմնով, դեղնած
ու տանջված մեջքով, քառասուն տարուն դեռ չհասած մարդ եր
նու, վորի դռնատ ճակատին, հոնքամիջի ակոսում գրոշմված
եր յերկարատե տառապանքի կնիքը: Ընկեր Մացակի ձախ կող-
քին նստած եր քարտուղարը, իսկ աջակողմը՝ կանչնած եր զեկու-
ցողը: Դա Ասիկն եր, գյուղխորհրդի նախազահը, նորածիլ,
թուփ բեղերով մի կարմրաթուշ դյուղացի: Նա հինգ-վից տարի

առաջ սովորական բատրակ եր : Լիկկայանի առաջին ունկնդիրներից մեկը, շատ ընդունակ և ուշիմ, վորը վերջին տարիներում այնքան եր առաջացել, վոր վոչ միայն գյուղացու թերթն եր կարդում, այլև փոքրիկ թղթակցություններ եր զրկում լրագրին՝ իրանց գյուղի ցավերից :

Արդեն տարին լրացել եր, ինչ Ասիկը գյուղխորհրդի նախագահ եր ընտրված . հիմա հաշիվ եր տալիս իր կատարած աշխատանքների մասին : Նրա անպաճույժ ճառն այնպես պարզ եր ու սահուն, ինչպես լեռան աղբյուրակից ժայթքող դուլալ ջրերը, և աչքերը փայլում եյին այնպիսի վեհ խնդությամբ, կասես գժվար հաղթանակից դարձող քաջ մարտիկ լիներ :

Զեկուցումը վերջանալու վրա յեր, յերբ Բալարեկի հյուրերը հասան ժողովատեղին և ամբոխի խիտ շարքերը պատռելով դեպի առաջ ձգվեցին :

— Ես ա, ախարեր, մեր արածը, — յեղրափակեց Ասիկը, — անցած տարին մեր մեջքով իրեք գործ ենք կատարել : Առաջնոր մեր հողերի բաւանքն եր, վոր վերջապես զլուխ բերինք, թե խաթրով եր, թե զոռով : Ենթարկորդն են ա, վոր քաղաքի սելի ճամբեն ենք շինել : Իսկ յերբորդը՝ վոնց ասեցի՝ գետի վրա մի լավ հիմնավոր կամուրջ ենք պատրաստել : Խոստովանում ենք, քիչ ա, շատ քիչ ա մեր արածը, բայց թե ներող պիտի լինեք, դե, մենք խամ ենք ու անփորձ, մը ուժն եղքան ա պատել, մեր խելքն եղքան ա հասել : Թե շատ ա, շատ համարեք, քիչ ա՝ ելի շատ համարեք :

Ասիկն ավարտեց ճառը և մի քանի ջահելների վողելորված ծափերի տակ կամաց նստեց իշուկին⁸⁾ : Պաղ քրտինքի մարդարտաշաղ ցողերն այնպես եյին պսակել նրա խանձված ճակատը, վոր կասես նոր եր զդում կրած բեռան տանջալի ծանրությունը :

— Այ լակուններ, ծափն ի՞նչ ա, եստեղ հարսանիք չկա, — հանդիմանեց սուզյեն, աչքի պոչով խեթ նայելին դեպի ձախ :

Ջահելները ներողաբար ժպտացին :

Տիրեց մի կարճ, վայրկյանական լոռություն, վորն ընդհատվեց ընկեր Մացակի խոսքով :

— Նու, ընկերներ, — ասաց նա, ժողովրդին դիմելով, — դուք լսեցիք գյուղխորհրդի նախագահի զեկույցը և իմացաք, թե ինչպիսի մեծ նվաճում և արված և վորպիսի արժեքավոր աշխատանք և տարված շինարարության ճակատում : Գուցե հար-

⁸⁾ Հասարակ, յերկար նստարան:

շեր կտայիք զեկուցման վերաբերյալ։ Յեթե հարցեր կան, կարող եք։

Նորից կարճատեև լուսություն իջավ ժողովի վրա, վորի ընթացքում լսվեցին բռնազբոսիկ հաղոցներ, և խուլ, խեղդված փսխուեկ։ Այդ միջոցին սուլյեն կամաց բղեջ ֆարազին և ականջին մի ինչվոր բան փսխուաց։

— Հարցեր չկա՞ն, — կրկնեց ատենակալը։

Ֆարազն իրեն թափ տվեց, յերկու քայլ առաջ անցավ և իր ահապին բերնից թուքը չորս կողմ ցանելեն, վրա տվեց տաքացած։

— Ախաղեր, թե ես բանվորի ու աղքատի որենք ա, մի իմանանք, տեսնենք, խի՞ յեն քյասիր-քյուսութին նեղում։ Ինձ պես տղքատ անճարին վեց-ոխտն որ կոռ են տարել. բա ես ատված վեր կունի՞։ Ես ել ելավ աղքատի, խեղճի կառավարութուն։

Սկսվեց մի խուլ աղմուկ, վոր հետզհետե զուսպ վեճի ձեզ քննուենց։ Ներկաների մի մասը հավանության կոչերով պաշտպանում եր ֆարազին. մյուսն՝ ընդհակառակը, վրդովված եր անտեղի և անարդար տրաունջից։

— Կոռ ել կտաս, հա, բա վո՞նց, շլիքո՞ ել կերկարի, դուզ ու դուրան կակուզ ճամբով եթալ-գալը լավ ա, հա՞՝ պատասխանեց Ծաղկատարենց Վարդանը։

Տոլուբաշենց Ալեքը վրա պրծավ, վոր ֆարազին պաշտպանի, բայց ժողովի նախաղահաջը կանգնեցրեց և բարկացած պահանջեց, վոր առանց թույլտվության վոչ վոք վոչինչ չխոսի։

Ալեքը խիստ կուրչից։ Նա բերանում ծամծմորեց խոսքերը և բեղերը կրծելով, քթի տակին մի ինչվոր բան վնիթինթաց։

— Լսեցեք ընկերներ, — խոսեց ատենակալը, — սա ժողով ե, բաղար չե, վոր ամեն մարդ՝ յերբ վոր ուզի զուգոռա։ Ակքեր վոր հարցեր ունեն, թող առաջ ձեռք բարձրացնեն, ձայն խնդրեն, հետո իրանց հարցը տան։

— Հենդեր ջան, — աղաղակեց Ալեքը, աջու ձեռն ոդի մեջ դիմից վերև ցցելով, — յս ճափեցի, թող խոսամ։

— Հարց, հարց, այժմ հարցեր պեսոք ե տալ. յեթե հարց ունեք, խնդրեմ։

— Հա, հա, դլխիդ մատաղ, հարցում ունեմ անելու։ Տեսնենք ես վո՞նց բան ա, վոր հընդեմ Ասիկն ու իր բարեկամները ժարգագլուխ տասը կտոր բուզ հողեր են ձեռք քցել, համաինձ պես աղքատին, յերկու կտոր քարքարուտ, անպիտան հող են տվել։ Ես ել ելավ խորութի, աղքատի իշխանութո՞ւն, — աղա-

շակեց Ալեքս., վորի մազու բազուկն ամբողջ ճառի ընթացքում
ողի միջին ցցված եր:

— Եխտա՛կ ա, դուրս ա, — լսվեցին նրա կողքից մի քանի
խոպոտ ձայներ, վորոնք սակայն խեղվեցին հոգ բազմության
բացասական գոչերում:

Հերթը հասավ զբաղբին: Սա անցյալում տարիներով ողիս-
տավի մոտ քարտուղար լիներով, ինքն իրան առաջնակարդ ուսւա-
ղատ եր համարում ու թեև լավ ծանոթ եր իրանց զյուղի բար-
րարին, բայց իր պատվին, նախկին փառքին ու զիտուրյանն ահ-
քայել եր համարում խոսել գոհհիկ լեզվով. խոսելիս ել բառերի-
շատը ուսւերեն եր ասում: Խոկ այսպիսի հանդիսավոր որերին
նա սիրում եր ամբողջովին ուսւերենով փայլել:

— Պազմուտն դովորիս ողո ուսւեկի ու դիմեց նա ատենակալին:

— Բայց ինչո՞ւ և ո՞ւմ համար. չե վոր այստեղ ձեզ հաս-
կացող չի լինի: Լավ և խոսեք հայերեն այնպես, ինչպես կարող
եք:

Վիրավորված Գրիշը մին մտածեց չխոսել, մեկ ել կը ինին
փոշմանեց և կոկորդը մաքրելով, ձեռք զրեց դատկի վրա, ա'յն
անոր, ուր վազեմի արծաթապատ խոնչովի կոթն եր բռնում.
առաջ խոսեց համարժակ.

— Նեռմելի, — ասոց նա, — ևս ահսակ ժրեր կլինի, վոր
զեղականի մի պարտին վասկու ովես հողերն ընկենի, իսկ մեկելին
հնապես խլամ, վոր նի իշորտու նի զաղից... թե վոր ժրեր =
զակոնով, սովորով ովիտի լինի:

— Դուզ ա, օտք ի՞նչ, զակոնով ա խոսում. — Ֆորեցին և ժաման-
ակից մի յերեք չորս զուսող ձայներ, բայց Սահասարի Մուկուցը
նեփեց նրանց ընթանը:

— Տո, ի՞նչն ա զուզ. տեղով սուտ ա: Յես խօ հողին, մեր
հողերը շտո խզնով ա բաժանված. եղ ա, վոր ցեցերի ուեթն
և մի հետը բան չե ընկել, դրա համար ել սանջուն նրանց վորը
բանել ա:

Նախականը կանկնացրեց Մուկուչին:

Մուխոին դլուխոն որորեց և Մուկուչի հասցեյին ինչուս
ուշունց ուղղելով, մի հարց ել ինքն հարուցեց.

— Անցած աշնանը հողաշտիկի համար հինգ խալվար ու կեռ
ցորեն ա համաքել, վորից մենակ իրեք խալվարն են հասցրել
ևն մարդին. բա մհացածն ի՞նչ ելավ, անսնենք ո՞ւմ փարը մը-
ավ: Քանի՞ աղքատուցությունն վոտերի ատկ արորեն, ոխոր-
իկն ել լավ բան ա, ժողովորդը կոտորվեց:

— Փաղովրդիք տոմիը քանդպի, նրահում եւ ի՞նչ մնաց . գեղազովի քանդվեցինք . — խոսից Լաճը կամացուկ, իբ վոչիարի և այլացքը չորս բոլորը սփոնելով :

Այս ու այն կողմից լովեցին մի քանի նվազ ձայներ :

— Էավ են ասում մարդիկը, մեր ողումն են պաշտպանում . . .

Բայց սեղանի թխկթխկացը լոկցրեց բոլորին :

— Մասնավոր խոսակցությանն ու վեճերին վերջ տվիք : Կրկնում եմ, ով Հարց ունի՝ թող ձայն խնդրի, նոր խոսի, թէ թէ կարգը խանդարողին կհեռացնեմ ժողովից :

Յարազը ձեռքը ցցեց ու զոշեց .

— Հրհնկեր ջան, հաղուտ մեռնեմ, կարմունջի հաշիւն ենք ուղում, կարմունջի :

— Ես ա, հա՛, կարմունջի հաշիւնը բերեք . դիտե՞ս ինչեր են սովորել են անուերի տակովը, — վոզեռոված վրա տվյալն ուղյան ու Ալեքը, վորոնք համոզված եյին, վոր այդ կամուրջի տակին պիտի խեղզեն Ասիկին :

Իսկ զբաղիքն ավելացրեց .

— Վո՞տ տակ . . . տաշո՞տ ենք ուղում, տաշուա . . .

— Հայ մեր մերը չմեռնի . եղ զո՞ւք չեք, զո՞ւք, — կարմատական վրա պրծան գյուղխորհրդի յերիտասարդ անդամներից յերկուուր, բայց Մացակը զապեց նրանց զայրույթը :

Ել նոր հարցեր չկային : Ասոն սեղից բարձրացավ : Նրա զեմքը զաւատ եր, շուրթերը քիչ գողղոջյուն եւ ձայնը մի քիչ խաղված, իսկ աչքերում՝ ցոլում եր ճշմարսության բոցերից հյուսված շքնուղ ծիածառի :

— Ախողեր ջան, — սկսեց նա, աշխատելով լինել դուսպ, մարմանը ծովի պես ծանր :

— Ճամբը համար իմ՝ պիտի մեզ քարկոծեք, մեր վճիռն ամուաց՞ք : Հերու ես չախ զուք պարտք դրիք մեր վզին, վոր բանվորը զեղյու տա, ինչիները՝ չքջանը ու մենք եւ նամբեն չինենք : Մենք մեր պարտքն ենք կատարել . . .

— Աղքատի մեջքովն եք լինել, աղքատի՝, — բացականչեց Ալեքը, բաղուկն ողում ցցելով, — բայց սեղանի թխկացը խոսքը բերնում սառցրեց :

Զեկուցողը ներողամարեն ժպտաց, առավ սեղանից մի թուղթ և մինչեւյն խաղաղ անոնց շարունակեց :

— Չե, սիալ ես, Ալեք բիճա, այ ցուցակը ձեռիս ու Դու չորս յանձնոր ես ավել : Տեր Սահակը — ասօներկու, Բալաբեկը — ասո-

Նյոթ, Բոշի թոռը—մենակ մի, իսկ են անճար աղքատներից՝ տառներկու տուն. ազատ են, սկի մեկն ել չեն տվել: Ամեն մարդից իր տամարի չափով ենք արուն առել...

— Ճշմարիտ ա... .

— Ետենց ա, մարդը շխտակ ա խոսում:

— Դուզ ա, դուզ արդարն ետ ա:

— Շխտակ ա ախտեր, չնորհակալ ենք: Բակի բոլոր ծայրերից բացականվեց ժողովը:

Ֆարազն իրեն թափ տվեց և բերանը մի թղաչափ բանալով ուղեց մի բան առարկել, բայց Մացակը՝ ցուցամատի սպառնական չարժումով վայրկյանապես նրա լեզուն կաշկանդեց:

— Հողի բաժանքն ել ասեմ, — շարունակեց Ասիկն ավելի հանդարտ ձայնով, — Հերու մարդ ի մարդանա, գեղի ելած հողերը ծանդը ու թեթև ենք արել ու վիճակով չնչի վրա բաժանել: Նախարշատ ու հողադուրի աղքատների մերը տղա յա բերել: Նրանցից շատ շատերը բուլք* հողեր են ստացել. իսկ հողաշատ, չնչից պակաս տները՝ իրանց հողի մի մասիցն ել զրկվել են: Տրտնջողը դրանք են: Համա զուր են նեղանում: Խորհրդային արդար որենքն սահնց ա: Ալան-թալանի դովրանն անց կացավ: Գեղի հողը հալալ զուլալ վիճակով ա բաժանված: Ասենք դուզ ա, ես անզամին քեթխուղեքի հարամ ձեռը չի մոտեցել մեր վիճակի բղուղին, բայց նրա գլմին կանգնել են դյուզխորհրդի յերիտասարդ անդամներից յիրեքը: Մեր դործն արդար ա ելել. ճակատներու լեն բաց ա ու յերեսներու՝ միշտ պարզ: Կեղտուր բամբասանքները մեր փեշերից չեն կըպչի:

— Բա, բա, ասա դուք սուրբ եք ելի, թող դանք վեշերդ համբուրենք... — վորձեց հեղնել սուրյեն; բայց տասնամյոր հուղումնալի գոչերը նրա խոսքը կիսատ թողին բերանում:

Ու յերբ ատենակալը խաղաղություն հաստատեց, Ասիկն առանց հուղվելու, շարունակեց իր խոսքը:

— Հողաչափի վարձի հարցն են մեջ բերում: Ճշմարիտ ա, գեղականից հինգ խալվար ու կես հաց ենք հավաքել, վորից մենակ յերեք խալվարն ենք տվել հողաչափին: Բայց մնացած հացովը ձորի կամուրջն ենք չինել:

Գրադիրը վորձեց բոնել Ասիկին և բարձր ձայնով դոչեց.

— Կարմունչի մատերյալը կաղոննի յեր, կաղոննի:

— Շխտակ ա, վետն ու կիրը կառավարությունն եր տվել,

(* Զազ, պարարտ:

բայց դեւ, ախր քարերն իրանք իրանց չեն շարվել. վարպետների, բանվորների փող եր ողեաք, մանը ծախսեր ենք արել: Հաշիվները մի առ մի ես գրքի մեջ զրված առ մանրամասն ստուգված: Ով ուղում ա հաշիվ տեսնի, համեցեք: Յերկու մանեթ ութ կոռուկներն ել պակասել եր, են ել ՓՈԿ-ից պարտք արինք: Մեր հաշիվը շատ պարզ ա. իսկ են մարդիկ, վոր ասում են, թե կարմունջի տակավ բան ա սողացել, սողացողը նրանց փորի ոճերն են, վոր ես ա ութ տարի յա կուտապ-կուտապ անելեն շանթմնթում են նրանց սիրոն ու. ջիղյարը, բայց չեն կարում լիս ընկնեն ու չեն ել կարա զուրս դան, ամեն մի ոճի գլուխն քառսուն չափուջ վեր կղա... .

Հետո ինչվոր բան ել ասաց, չլսվեց: Նրա վերջին բառերը փոշիացան, հալվեցին ջահելների փոթորկալի ծափերում:

Առոն նստեց կամացուկ և մի պապիրոս վառեց: Նրա դեմքը հանդիսաւ եր, հայացքն ուրախ ու ժպառուն:

— Ո՞վ իսոսէլիք ունի զեկուցման առթիվ, — հարցրեց ատենակալը ժողովրդին դիմելով:

Բալարեկի հյուրերը պարտված եյին գլխովին, բայց դեռ ելի չեյին ուղում հաշտվել այդ վիճակի հետ: Նրանք փսփսում եյին: Գրադիրը տաքացած ձեռ ու գլմի շարժումով ինչվոր խրատ եր տայլիս Ալեքին ու Թարաղին:

— Ուրեմն խոսող չկա, — կրկնեց՝ ատենակալը:

Առաջ անցավ Զալացպաննենց Սիսակը:

— Ախողեր, եսուեղ յերկար խոսալն ինչ պետք ա. նախադաշին մենք շատ լավ ենք ճանաչում. նա մեր աչքի առաջին ա աշխատել ու մի տարում դեղի համար իրեք ճրագ ա վառել, իրեք զործ ա կատարել, մինը մնից գովական: Անցած տարին լավ շարչարկեց. չնորհակալ ենք, կյանքը յերկար, ով ինչ ուղում ա խոսի. նա զարդարեց, ծաղկացրեց, մեր զեղը: Հիմի թող ասի տենենք՝ եկող տարի ինչով պիտի պայծառացնի զեղը:

— Ուրեմն աշխատանքի ծրագիրն եք պահանջում, — հարց-քեց ընկեր Մացակը:

— Հրամանք ես, ես նոր տարվա անելիքը թող ասի:

Առոն քցեց պապիրոսի կոթուկը և վոտի տակ տրորելով վեր կացավ: Նրա դեմքը պայծառ եր և աչքերը վառվուն, վորպես զույդ չքնաղ ասուղեր, կապույտ, խաղաղ յերկնքում:

— Եերկու զործ կա կատարելու ես տարի, մեկը մեկից գըշ խավոր: Առաջինը՝ ուղումնարանի չենքն ա: Դուք զիտեք, վոր ժամի բակի վարժատունը քանդվում ա. մենք ուղում ենք ես տա-

բի մի նոր, լավ գողրոց շինենք : Փետք, կիրը և վարդեսի փողը
յթանը կատ, իսկ բանվորը՝ մեր գեղը :

— Մի իմանանք, ուսումնաբանը վորտեղ եք շինելու : —
հարցրեց սույնու Մարդարը, Գրիշի կողքին բանլու : —

— Եստեղ, գեղի կենաբոնում, մեր Բալտարեկի բաղչում, —
պատասխանեց Առիկը, ձեր բառը խիստ շեշտելով :

— Զե՞նք ուզում, չե՞նք, —աղաղակեց մարտզը, —աղջառ
ուղցուտին վարժատումը պետք չի . մեզ կալ քըոզ, Հոռողիներ
են հարկավոր.....

— Սույն կաց, լոի՛ր, —ասաւեց տանեակալուր, սեղանին ողինու
խիելով, —քեզ իրավունք չեմ ավել :

— Իրավունքս վո՞րն ա, ախազեր, —միջամտեց Ալեքը ձեռը
բարձր դրոշի պես ցցելով, իրեք հարիր տուն զեղ ենք, կարովն
միկիտան⁸) չունենք, զուք վարժատուն եք շինում.... :

Յեկ դյուղացց միահամուռ քրքիչը խեղդեց Ալեքի ձայնը :
Մացակը վոտքի յելավ և այնպիսի սուր շեշտով կարզի կո-
չեց ժողովին, վոր բոլորը միանդամից սսավեցին և Ալեքի շեց
մատը կամաց կամաց խոնարհվեց :

— Շարունակի՛ր, ընկեր Ասիկ, —խոժուռ զեմքով ձայնեց
տանեակալուր, ապա ինքը կրկին իջավ իշուկին :

— Ախազեր, խի յեք նեղանում, զարոցը ձեղ համար ա : Մենք
ուզում ենք, վոր ձեր վորդիքն ել ձեզ պես խեղճ ու խառար
շման : աշխատում ենք, վոր նբանց աչքը բացվի, լուսավոր
կյանք ունենան : Ե՛ւ, զուք զիտեք, զոռ չկա, Հոժար չըլնեք, չընը
շինի :

Ասիկի խոսքն ընդհատվեց հարյուրավոր դոչերով :

— Հոժար ենք, հոժար :

— Շինե՛ք, լույսի ոջաղ ա :

— Ուզո՞ւմ ենք, ուզո՞ւմ :

— Կազենք, թե վոր չըջանի փողօվ շինոյի . ժողովը զայտում հայէ
ու հարացյաթ չկա, —ավելացրեց սույնին, չիբիսի վուշին դրնողի
ժեղ թոփ տալով :

— Կանեչնու, —վրա բերեց Գրիշը, —հենց զակոնով եղագես =
ես կազոննի չկալ ա, կազնեն պիտի շինի . բա՛ս :

Մացակն ընդհատաց նրան :

— Ժողովուրդը մենակ բանվար պիտի տա :

8) Գիւետան:

— Հսժար ենք, Հոժար, — կը կին դոչեց ժողովուրդը և ողջ ժեղ բարձրանալով՝ շարժվեցին Հարյուրավոր կոշտ ու կոպիտ բազուկներ, վորոնց շատերի ծայրին ծածանվում եր դդակը։ Զաւրովները կազմում ենին մի անհշան փոքրություն։

Ատենակալն առաջարկեց Ասիկին անցնել Հետեյալ Հարցին։

— Սերկրորդ Հարցը դեմու⁹⁾) առուն Հանելն ա, — շարունակ Ասիկը, բայց նրա ձայնը խեղդվեց Հրճվանքի դոչերի ժեղ։

— Այ, ե'տ ա, Համ։

— Խ'նէ եմ առել։

— Մեր մուրազն ետ առո՛ւն ա։

— Հաղար աարի շատ կընի, — շարունակեց Ասիկը, — վոր եռ զեաը զորգուալնն անց ա կենում մեր ձորով, իսկ վերեւում ջրի հարսա արաերը պատանձվում են ու մծրվում ծարավից։ Իեմու առուն Հանելը մեր պապերի մուրազն ա, ու ետ աարի, թե ուժ տաք, վոնց վոր ըլի, ջուրը հանդը կհանեն։

— Այս ս'ւր ա, ս'ւր, բերնիդ մատագ.....

— Մեր փրկությունն առան ա։ — Բղազնցին չորս կոզմից Հարցուրազոր կոկորդներ ու մի ուրախ, անական որամադրություն առաջնորդուց։ Կատու ծիածան կապեց բազմաշարչար ոչյուզացոց քառնքախաչ գեմքերին։ անուշ ժպիտը խաղաց նրանց վառվող աշ-քերում։

— Դիտե՛մ, պիտե՛մ վոր կուզեք, — շարունակեց Ասիկը, — մենակ ուզելը քիչ ա. պետք ա քոմակ անեք մեղ, թե ու թիկոնք պետք ա տաք։ Ոխտ-ութ հարյուր բանվոր կուզի, հանաք մաս-իսրություն չի։

— Կատե՛նք, կատե՛նք, հաղար բանվոր ել կտանք, յերկու հաղար ել կտանք, առօյի համար գլուխներս կծախսնք, — աղաղակեց ամ-բախը։

— Հրամանք ես, կտանք, բա՛ռ... Ամժ ունեցողը ավեց, բա-սրա պիս ազքատ-ուզբուան ինչ անեն, — վրա բերեց սուզյեն կող-քին կանդնած Լոճի թեր թափ տալին։

Լամը մի քիչ շփոթվեց, հաղաց, կոկորդը մաքրեց և ուզեց մի բան խոսել, բայց սեղանի ջղայնապին թիսկոցը լուցըրեց բոլորին։

— Հարուսանե՛րդ, կտաք զբանց փոխարեն, — կծու շեշտով զատասխանեց Ասիկը և անցնելով զեկուցման, հայսարարեց, վոր մտադիր են առվի հետ միասին շինել նաև մի պստիկ ելեկտրա-կան կայաբան, վարը պիտի լույս առ բոլոր գյուղացոց։

⁹⁾ Անջրագի հազեր։

Վերջին հայուարարությունն անակընկալ նորույթ եր մեծամասն նության համար, այդ պատճառով չորս կողմից զարժաշական գործերով դիմավորեցին նրան: Կասկածանքն ու հրաժանքը խառնվել ելին իրար: Վումանք հանաք ելին կարծում այդ բանը և դլուխներն որորելով, մեղմ ժպտում:

— Եստեղ հանաք չենք անում, —խոսեց Ասիկն այնպիսի աղողությամբ, վոր բոլորն զգաստացան և հետաքրքրությամբ վառվող հայրուրավոր հայացքներ ամեն կողմից ուղղվեցին զեկուցողի յերեսին:

— Ելեկտրական մաշինը գալվործկոմում պատրաստ աղեմու առուն վանանց ձորի գլուխը հասցրինք թե չե, են մաշինեն Բալոյենց ջաղացներում կսարքենք:

— Չենք ուղում, չե՞նք, — հանկարծ գոչեց Ալեքը, ձեռն ողում ցցելով:

— Տրաքտրաքանը մեզ պետք չի, —վրա բերեց Ֆարազը՝ թուքի անձրև տեղալով:

— Մեր բասմեքին ու աթարի դեղերին հենց տրաքտրաքանն եղ պակաս, վայ հողը ձեր պահած գեղի գլխին, ե՛յ, — պախարակեց սուրյան և բարկությունից չիբուխը վառելով աղմուկի մեջ մրթմրթաց, — գեղի մասին ցավող եք, մեր ժամը շինեք, ժամը, վոր ես ոխտութ տարի յա զանգակատունն իջել ու մնացել խանգարված...

— Ժամը մեզ հարկավոր չի, —լսվեց ամբոխի միջից մի համարձակ ու սուր ճիչ:

Աղմուկը բակը լցրեց: Բոլորը միանդամից սկսեցին դուռընուալ:

— Տո, մեզ հաց ա պետք, հաց, հաց, — լսվեց Լաճի դիմիչը, — լիսն ընչիս ա հարկավոր, մարդիս փորը կուշտ ըլի՛ ասաղալիսով ել կապրի:

Մացակը մեծ ճիգ թափեց, մինչեւ վոր կարողացավ խաղաղություն հաստատել: Այնուհետեւ նա շատ խիստ եր, անուղոք կարդ ու կանոն խանգարովների նկատմամբ: Մի անգամ քի: մնաց, վոր հեռացներ Ալեքին, բայց Ասիկի միջնորդությանը դիմեց:

Բարձրեկի հրուրերը պարտված ելին, ջախջախված: Լայ ընթրիքի, կեր ու խումբ հույսն արգեն կորչում եր և դա սասարի զայրացնում եր նրանց: Տեսնելով, վոր ժողովն Ասիկին և պաշտպանում ե, վոր իրանք անկարող են հոծ բաղմության տրամա-

գրությունը փոխել, նրանց խումբը վորոշեց գեթ խանդարել, պայմեցնել ժողովը:

Գրադիրը թասընկերների ականջին փսփսաց և բոլորը դուդուռալով դեպի դուռը շարժվեցին:

— Եկեք կորչենք, այ մարդիկ, վոր մեր խոսքը չվանի չեն դնելու, եւ իսի՞ յենք զուր իշխ պես եստեղ ցցվել, մնացել, — մարդկանց շարժերը ձեղքելով աղաղակում եր սուդյին:

— Հենց ասում եք իշխանությունն աղքատինն ա, — բղավում եր Ֆարազը, — յես իմ աստված, սուտ ա, սուտ:

— Տո, բանց խափխափելով աղքատներին վառեցին և, — վրա բերեց Ալեքը, վորի սիրտն այդ վայրկյանին իսկապես վոր վառվում եր Բալաբեկինց կարմիր գավի կարոտով:

Գրադիրը սուսերեն մի ուշունց եր ծամծմում, բայց յերկյուրից լույս չեր ընծայում նրան:

Յերբ վոր սուզյեն մեծ գարպասից հետ նայեց, նրանց խըմ-րին հետեւում եյին հինդ հոդի՝ մեկը լաճն եր, մեկը՝ Ալեքի յեղ-բայրը, մեկը՝ սուզյի ինամին և յերկուան ել՝ Բալաբեկի փեսքը, բոկ մնացած ժողովուրդը տեղն ու տեղը ծովի նման ծփում եր:

— Բալաբեկին աչքալուսեք կտանեք, — գոչեց նրանց հետելից մի կոլոտիկ գյուղացի, վորի խոսքին հաջորդեց ժողովրդի քըր-քիջը:

Սուզյեն դռնից հետ նայեց և թունտ չեշտով ասաց.

— Յանի դո՞ւք եք գեղի կառավարիչը... Վայ քանդվե՛ս, յերկիր, քանդվե՛ս...

ՄԻ ՆՈՐ ՀԱՐՎԱԾ

Աքեն արդեն թեքվել եր, յերբ Բալաբեկի հյուրերը փոր ու փոշման լքեցին համալական ժողովը և գյուղամեջ դուրս յեկան: Հյուրներնկալը տերտերի հետ կանզնած եյին փողոցում, առվի ա-փի ալեւոր, փիտուկ ուրենում հենված և մի ինչվոր լրագիր ջղայ-նարար գես ու դեն եյին շրջում: Դա գյուղացու թերթի վերջին համարն եր, վոր հենց նոր եր ստացվել: Բալաբեկի քենակալն եր փակ ծրարսվ այն ուղարկել քաղաքից և դրել եր, վոր նրա մեջ շատ խայտառակ բաներ կան, թե պատվավոր իշխաններին «ցեխ» են կոխել ու թողել:

Նրանց հոգին վառվում եր անգուստ հետաքրքրությամբ: Ու-զում եյին իսկույն և եթ իմանալ, թե ո՞վ վորին և ինչպես են

զաղեթում խայտառակել : Նրանք թերթը խլում եյին մեկ-մեկից ,
անվերջ չուռեցուռ տալիս , բայց բան չեյին հասկանում :

Դե , Բարաբեկն իր անվան տառերն եր միայն ջոկում , իսկ տեր-
տերը՝ գիր կապելով , դեսից-զենից մի յերկու բառ զուով իրաբ եր
պցում , ապա թերթը չուռ տալին՝ կորոծ տկնոցի համար ծանր
ու բարակ հառաջում :

Աղեն այնքան եր տարվել այս նոր խայտառակությամբ , վոր
մինչև իսկ ժողովի մասին ել եր մոռացել :

Ցերը հյուրերը նոթոս դեմքով որորանից դուրս յեկան , Բա-
յարեկը թերթը խլեց տերտերից և մեկնելով Գրիշին , աղաղակեց
անհամբեր .

— Այ տա , մի տես չուն շան վորդիքն ի՞նչ են զրել մեր ու-
ղից : Ազում են շատ խախկալ ու խայտառակ բան կա :

— Նո՞ւ... բացականչեց Գրիշը , ակնոցը հին չերքեղիուն^ո վազմատեղից հանելով :

Մինչ Գրիշը մրթմրթալեն թերթն եր չուռեցուռ տալիս ,
Բալաբեկը թեթեակի տեղեկացավ սուզյից , վոր ժողովի տրա-
մադրությունը վատ եր : Նա ել աղելի տաքացավ և պահանջեց
գրագրից խելույժ կարդալ չարաբաստիկ հողվածը :

— ԲՀԸ^Շ , մին եղ եր պակաս , — վրա քերեց սուզյին կայծա-
քարին խելով , — ախալեր , ևս ինչ մեր ժուռ ու մուռ^{ո՞յ}) ջահելըու-
հուներն են , հայ շատ բան կտեսնենք :

— Որթնած , դու յել քոռացմ^{ո՞յ}ր , — բացականչեց տերտերը
զբաղըին զիմելով , — կարգա եղ զահըումարը , տեսնենք ինչ են
հաջացիլ :

— Կարդա , կարդա , — աղաղակեցին բոլորը և ֆարազի վը-
լինքը կաթիւ-կաթիւ նախաշոտեց թերթի ճճուց եջերը :

— Պաստոյ , պիտի գտնեմ , զա՞ , ես Հո բոյախանա չի , — պա-
տասխանեց Գրիշը և թերթն ելի լրջելով , կիսաձայնով մինթփըն-
թաց , — չորս պարերի , ո՞ւր ո յե՞... Զա , ես կլնի , զտել եմ...
վոտ սլուռչ , տես ինչ անուն են դրել՝ «ԱՆԱՍՏԱՄ ԳԵԼԵՐԸ» :

— Ի՞նչ , ի՞նչ... վո՞նց ասացիր , — աղաղակեց Բալաբեկը թեր-
թի վրա կդվելով :

— «ԱՆԱՍՏԱՄ ԳԵԼԵՐԸ» :

— Պա՞հ , անաստված շան վորդիք...

— Յանի եղ ո՞ւմ են ասում , — դոչեցին չոքս բոլորեց :

^ո) Զերսեղի ձեռք կարված չուխու:

^{ո՞յ}) Դեսահաս մեռած :

— Բալաբեկը բարձրացրեց պլուխը և դեմքը խոժոռելով հրամայեց տաղ անել : Բոլորն իսկույն սստվեցին և գրադիրն ակնոցները շակելով, հազար ու սկսեց կարդալ :

Նա կարդում եր սովորաբար յնրդելով, կարճ բառնըը բավական հարթ ու սահուն, իսկ յերկար բառնըի առջեւ՝ չարունակ կանգ եր առնում, առաջ թուրքն եր կուլ տալիս, ապա մի ը դնելով, յնըկար-յնըկար ծորում եր, մինչև վոր մաքում կառպեր հայորդ տառերի շարքը :

«Մեր զեղում մի քանի հին, թեակոտոր իշխաններն կան նրանց աչքը բար չի բռնում, վոր ժողովուրդը միս տեսնի, առաջ դնա ...

— Միրայլ աղա, լավ հասկացի . թեակոտոր իշխաններն եւ ներք ենք հա՛ ... Եղ քարը մեզ են զցել, — բացատրեց սուդյին :

— Հասկանում եմ, տաղ արա :

«Առնց վոր զելը խավար գիշերն ա սիրում, ենակեա ել մեր քեթիւնուդեքը : Նրանք ուզում են, վոր ամեն մի լուսավոր դործ խօսիանիի ...

— Գել ել չինեցին . տեսա՞ր, վայ նզովվե՞ք դուք, ջարդվե՞ք : — անիծեց Տեր Սահակը :

Բալաբեկը լուռթյան նշան ավեց և Գրիշին բղելով՝ հրամայեց շարունակել :

«Որինակ, զեղն ուզում ա դոլրոց չինի, առու հանի — խանդուարում են . ուզում ա ճամբար բացի, կամուրջ չինի, ելեկարական զիս բերի — բամբասում են, զրաբարտում ու միամիտ ժողովրդին զրդում : Նրանց նզատակն են ա, վոր զեղացիք առաջվա պես միշտ խուլ ու խավար մնան ու իրանք ել միալար զեղի արունք չենք ...

— Հլա տե՛ս, հլա տե՛ս, հարամ զաղա շան վորդեք . արունք չծովն ել մենք ենք հա՛ ... Առսեց սուդյին պնչերից ծխի քուլեք հանելով :

— Սուս, թող կարդա, վերջը տեսնենք, — հրամայեց Բալաբեկը, վորն յերեխ ել ավելի վատ բաներից եր վախում :

«Բայց դուք բան ա, նրանց դովբանն անց կացավ, — շարունակեց Գրիշը, — ժողովրդի աչքը հիմի բացվել ա . նա լավ դիմի, վոր միքային ու տերտերը, դրադիրն ու սուրյեն, իր հին թշնամիներն ենք :

Հնիթերցողը կանգ առալ . և ակնոցի վերեփց չորս բոլորը նաւ-

յելով, դլուխը մեղմ որորեց, ապա քրտինքը որբեց և անորոշ հասցեյով մի թունդ ուշունց ուղարկեց:

Տեր Սահակը, վոր մինչեւ այդ հանդիստ եր, հանկարծ ցընց վեց, վեր թռավ ու բռնազրոսիկ հագով ուղեց ջնջել իր անուննունկիրների մտքից:

— Թաղի-թուլա շան վորդիք, — ծորեց մուխսի Մարդարը:

— Հա շա՞տ կա, վոր պրծնի, — հարցրեց Բալարեկը բեղերը կրծոտելով և փոթոթված կրծքի խորքից մրգիաշունչ ծանր հառաջ արձակեց:

— Քիչ ա մնում, լսեք, վերջացնում եմ, — պատասխանեց Գրիշը և շարունակեց կարդալ.

«Մեղանում մի լավ խոսք կա՝ շունը կհաջի, քարվան՝ կըս չի...»

Խոցված ունկնդիրներն անհանդիստ շարժումներով նորից իրար նայեցին, պատրաստվելով հարձակման, բայց Բալարեկը զսպեց:

«Ո՞նչքան կուլեն աղեքը թող վոռնան ու կոնդոռնան. ճեռներից ըստ բան չի գա: Ես ա ութ տարի կընի նրանց արնոտ ատամները քաշել ենք. գրանք անառամ գելեր են, վոր մենակ կվոռնան, կմըթմըթան, բայց կծոտել չեն կարող:»

ՍԵՎ ԿԱՐԻՃ»

— Սու-կին-սին, — ավելացրեց գրագիրը և ակնոցը քթի ծայրից առնելով, ուշի ուշով : Որս բալորն աչք ածեց:

Նա ուղում եր լսողների դիմքերին կարդալ նրանց ներքին դարսումները:

Մի բոպեյով բոլորը սստվել եյին, պապանձվել և նրանցից վոչ մեկը խոսք չեր գտնում ասելու:

Կարմիր արեն ել չկար, նա փախել եր, չքացել: Իսկ ալեռը Մասիսը, ծեր գլուխը թաղցրած մուղ-զորչազույն մշուշում, սառը ծոցում ծալքերով ամպի գուլեք եր հյուսում և ճեղընթաց քամիներին բառնալով, իրար քամակից հերհեւ քշում եր, սփուռմ հոգիղոններում:

Յեվ ալեռը ուսենին նորաբողբաջ կատարն որորում եր զայրագին ու փչակի խորքերից բութ խոխոց արձակում: Դա մի ուրույն հնչյուն եր, վոր նման եր թոքամաշ և հուսարեկ հիվանդ վերջին խղաղոցներին:

— Նզովվեք դուք, նզովվեք, կծոտող ել շինեցին, տեսա-բալարեկ աղա, — տիրող ծանր լոռությունն ընդհատեց Տեր-Սահակը, տերողարժու ծանր ու խոշոր հատերը ջղայնաբար իրար դլահիքարկելով:

Բալարեկը մինչեւ կոկորդը լիքն եր։ Նրա ղեմքն այբվում եր կրծքի տակի հրդեհից, իսկ աչքերը վառվում եյին անզոր զայրույթի բացով։ Նա դեռևս չեր խոսում, այլ ծծում եր ու ծծում պաղիբոսի դառը ծուխը և պեղացած նայում դարշիլ թերթին։

— Պա՛հ, պա՛հ, պա՛հ, ես ի՞նչ դուլում եր, այ մարդ։ ասդ գաղափում խաղք ու խայտառակ ելանք։ Գրողն ո՞վ ա, դըողը, մեծ զրոյը որա բկիցը բռնի, —խոսեց սուրչյա Մարդարը։

— Թուլի մեկը, Ան կարինը, —բացատրեց Գրիշը։

— Յաղաշ, վո՞նց թե՛ Ան կարինը… Կարին ետենց հարամառութուն կանի, —զարմանք հայտնեց Աշեքը։

Աւնկնդիրներից վոմանք դառն ու կծու ժպտացին, իսկ Գրիշը վրդովմունքից հայհոյից։

— Պաղէի՛ց… Լա՛զ, ցեխն ես կոխում, կոխի։ Դե մի անունու տուր տեսնեմ, մեղնից պաշտոնի մարդ ես, թե՛ մի դյադա, սու կին-սին…

Բալարեկը, վոր մինչեւ այդ առջած, շշմած ձեն ու ծպտուն չեր հանում, հանկարծ թերթը խլեց Գրիշի ձեռից և հեալին արարադ հեռացավ։

— Եղ ո՞ւր, Բալարեկ աղա, — ճայնեց տերտերը հետեից։

— Հիմի կդամ, —շշնդաց նա կամացուկ և քամու պես սլացավ դեսի զպլրցի շենքը։

Նա տանում եր Մարդիս վարժարետի մոտ ստուգելու այդ խայտառակ հողվածը։

Վ Ե Ր Զ Ւ Ն Կ Ր Ա Կ Ո Յ Ը

Ժողովն արդեն վերջացած եր։

Եերը զյուղացիք խմբակների բաժանված՝ բարձր բարձր խոսնելով՝ ցրվում եյին զյուղի մեջ, Բալարեկը թերթը ձեռին դուրսում արած հետ զարմավ։

Նա ստուգել եր այդ խայտառակ հողվածը և բացի այդ լսել եր նոր վերջացած ժողովի վորոշումների մասին։ Եերեց ծանր հարվածը միանդամից եր իջև նրա դաղված ջիգյարին ու նա խոցված արջի պես մին զալարվում եր հեռում, մին մռնչում սուր ցավից։

— Կացե՛ք, կացե՛ք, —դոչեց նա բարտվեները տարածած՝ ժողովական դյուղացոց հոսանքի դեմն առնելով, —ասովիած սիրողը մի բոսք ինձ լսի։ Ա՛յ ժողովուրդ, ա՛յ հընդեր-հարեւաներ, ասեք տեսնեմ, վորի՛դ ոջախն եմ քանդել, վորի՛դ վորդին եմ մորթել…

Սակայն պատասխան չկար : Գյուղացիք լուս ուսերն եյին
թափ տալիս և կամացուկ իրադ տկանչի խռոսում :

— Տո, դեղացուն հողի-հավատ չկա, հա՛, —խռոսց սուղյեն
բորբոքված, —թիկուզ տասը մատղ մոմ անես վառես, ելի քեզ
խաչ կհանեն . . . ժողովողին խղճմանցն ո՞վ ա տվել . . .

— Տո խռոսք ե՛, անխիղննե՛ր, մի պատասխան ամիեք ինձ :
Վորի՞ո վորդին եմ մորթել, վորի՞ո արինն եմ խմել . . .

Ալեքն յեկավ պարասալելու յերախտամոռ դյուղացոց :

— Ինչ կա ախողեր, չկամութուն, ոճվորութուն ա ելի :
Քոռանում են . չեն ուղում, վոր ես գեղում մի անունով, մի պատ-
վավոր մարդ ըլիկ :

— Զհարկս հարկավորաց, զպատիվս իշխանակորաց, —այլ-
տարանի խռոք ա, ա՛յ ժողովուրդ, աստծու ճամբից դուրս դալով
կկոլեանեք մեց գեղը, —հեղինակավոր չեշտելով վրա բերեց տեր-
տերը :

Յարաղը, վոր շարունակ մտածում եր Բալարեկենց անմտ-
հական բողբաշի և են զուլալ, վոսկեղույն դինու մասին, ինքն ել
ուղեց պաշտպանել Հյուրընկալին և վսլինքը ցանելն՝ յերախոսվ
մեկ բղավից .

— Ես են Բալարեկ աղեն ա, վոր մհալը բոկ միջին եր որո-
ւում, վոր վոտը զնոտնին տալիս՝ զնդ ու գալառ զոռում եր . Հիմք
ես ի՞նչ պատահեց, վոր ամեն դյաղա դյուղա մարդին քացի յեն
քցում . . .

Բալարեկն այդ խռոքերից ել ավելի դղացվելով, աղաղակեց .

— Ախողեր, ձեր վոտը պաշեմ, ասեք տեսնեմ, մեղքս ի՞նչ ա-
յինչ եք տվել, վոր չեց կարսում հետ առնեք . . . Տո խռոք ե՛,
անհոգիք, ծպտուն հանեք, անխիղններ . . .

Սակայն պատասխան չկար . . . Մենակ պառավ ուսենին եր,
վոր կատարը քամու հետ անվերջ տանում եր բերում և իր ավելը
կրծքի խորունկ խորչերից են ցավագին բութ խոխոցն արձա-
կում :

Ժողովից դարձող դյուղացիք, վոր լցրել եյին փողոցը և լճա-
ցել նրա մեջ, կասես պապանձիկ եյին : Յեկ նրանց այդ լուս-
թյունն ավելի յեր զրգում Բալարեկի զայրույթը : Թող խռոհն,
թող հայնոյնն, միայն թե պատասխան տան : Նրա հողին վառվում
եր . նա ուղում եր մաղձը թափել, նա կովի կոչ եր անում, բայց
ներկաներից վոչ վոք սիրտ չեր անում վերցնել նրա նետած ձեռ-
նոցը : Նրանք չեյին մոռացիք Բալարեկի նախկին կատաղությունը .
հին գաղանի ուրվականը գեռ ապրում եր նրանց հիշողության մեջ :

Այդ վայրից առնեն ամբոխի մեջ խուլ քչիչոց տարածվեց : Բոլոր յիս նայիցին : Դալիս եյին Ասիկը, Մաղկատարենց Վարդանը, Անհատարի Մուկուչը և մի քանի ուրիշ յերիտասարդներ : Հնկեր Մացակը չկար, նա մեկնել եր մի այլ գյուղ :

Հենց վոր աղի աշխատավ ջահեների այլ խմբին, նրա ներսի մատձը մեկնեն փրփրեց ու պճառաց :

— Ձեր խի՛զը մեռնի, ձեր զատաստա՞նը սեանա, — աղաղա-էնց միրավը, կարմրատակած աշքերը նորենկներին հառելով, — զուլումին և լշափ ու սահման կունենա, քանի՞՝ քանի՞ մարդի հոգի կը ակի մեջ փոթովեք...

— Հը, ի՞նչ խարար ա, եւ ինչի՞ յս տաքացել, — հեղնական ժպիսով խոսեց Ասիկը, — ո՞վ ա հողիդ փոթովել :

— Դուք, զո՞ւք, — բացականչեց Բալաբեկը բաղուկները թափ առարով, — ութ տարի յա ինձ վասում եք ու խորովում՝ անկրակ, ութը տարի յա ինձ խեղզում եք անպարան, թալանում եք, կողոպ-քառմ...

Նախակահը թթված դեմքով ընդհատեց Բալաբեկին :

— Դե լա՛վ, լա՛վ, խոսքերը մի մեծացնի, թե չե շուը ուուրա կդաւ :

— Մենք հին ավաղակների թալանածն ենք հետ խլում ու բա-ժանում աներենին, — ավելացրեց Վարդանը, — առաջ դո՛ւ յես ժողովրդին կողսպատել . մեծ թալանչին դո՛ւ յես, դո՛ւ...

— Ըստ թալանչի՞՝ դոչեց աղեն՝ բռունցքով կրծքին ամուր խոփելով, — այ ժողովուրդ, դուք ձեր խի՛զը, ձեր աստվա՛ծը, հոգով խոսեք, յս վորի՞դ ևմ թալանել, վորի՞դ տունը կողսպատել :

— Մինն հենց իմը, լծկան յեղս կաշառք չառա՞ր, տունս, ոջազս քանուցիք, — լսվեց ամբոխի միջից մի գեղջուկին նվազ ձայն :

Դա ջուհարդար օրի ուժեղ հարվածից ավելի ծանր բան եր : Ամրուխի մեջ մի զուսպ քրքիջ վաղվզեց : Բալաբեկը շշմել եր ու օդապանձվել : Նա՝ աշքերը չորս արած՝ մարդկանց ծովում վորո-նում եր իր հանդուղն վոտինին :

— Կերա՞ր, — հեղնեց Ասիկը :

Բայց Բալաբեկը պատասխան չդտավ. նա շուրթերը կրծուտե-ցին աջ ձեռով ջղայնարար իր կոկորդը ճմրեց, կասես այնտեղ մի ինչվոր աներենույթ խցան կար, վորի ամրությունն եր ու-զբամ ստուգել :

Սուշյն փորձեց մի կերպ ողնել միբավին և ուրիշ բան չդըտ-նելով մռմռաց :

— Նոյի տարվա հին բաներն են մեջ թերում :

— Կերա՞ր, — կրկնեց Ասիկը, — դե տա՞ղ արա ու լրի:

Բալաբեկի Համբերությունը հատավ և նա բարձր բարձր թագավորեց:

— Ել լոկու տեղ չկա, յնս խեղավեցի լոկուն: Թաղավորեց թայ տղիս սպանեցիք՝ տաղ արի, պալատի պես տունս ձեռիցս խեցիք՝ տաղ արի, վոսկու նման հողերս ձեռիցս տուաք՝ տաղ արի, ամբարներով Հացս տարաք շուն ու զելի բաժանեցիք՝ պատուանձվեցի, տաղ արի, ասի իրանցով սև ծովը, Բոզ ձնո քաջեն ինձանից: Բայց ձեղանում խիզճ ու խղճմտանք չկա: Են ծով կողովությունից յերկու այդիս ա մոռում, մեկ ել ձորիս ջաղացը, աշքներդ ծակում ա, են ել եք ուղում խլեք. ել վո՞նց լուս, անառագածներ, վո՞նց Համբերեմ, տաղ անեմ: Ներսս կրակ եք դցելութ տարի յա ինձ խանձում եք, խորովում, դեռ ելի ձնո չեք քաշում... Բա ե՞ս ինչ եր, անհոգիք, ե՞ս ինչ եր, հը... Հիմի յեց գաղեթով եք խայտառակում մարդի, հա՞...

Այս խոսքի հետ նա բացնց իր ծեփ գուգումամեմ լիտերի և ճմուտորված թերթը նախադահի աչքի առջև թափ տալով կարմրատակած ըղալինց.

— Սնատամ գելեր ենք, հա՞... Ունող ու կոնդունող ե՞նք...

Սառը քամին սուլում եր և զայրադին հարվածելով ամբոխին, դրոշի պիս ծածանում այն չարարաստիկ թերթը: Իսկ ցավազարունունին աղեկտուր մռնչում եր քամու մտրածների տակ և միալարխոր փշակից հեծկլտանքներ արձակում:

Ասիկը, վոր մինչեւ այդ՝ արհամարհական ժամեր յերեսին՝ Համբերությամբ լսում եր, իսկույն հիշեց իր ուղարկած այդ առնունով հոդվածը և թերթը թեակոտոր աղի ձեռից խիլով, սկսեց մտքում կարդալ: Զահելները չորս բոլորից կուսան թերթի վրապայշառ ժայռու խաղաց նրանց անմաղ շուրթերին:

Գյուղացիներից շատերի հետաքրքրությունը վառվեց և ժողովուրդն ամեն կողմից խոնվելով՝ մոտեցավ կարդացողների խըմրին: Ծեկ ամեն մարդ ուղում եր մեկն ու մեկն իմանալ են ճմուտված թերթի միջիք դրվածը: Բոլոր ընթերցողները լուսու հրճվանքի միջ եյին: Բալաբեկը նկտում եր այդ բանը և ինքն իրան կրծուառմ: Նրա դեմքը կապուտկել եր զայրուցթից, աչքերին արնոտել եյին և բիրերը դուրս ոլրծել: Նա հեռում եր շնչառապահ ամբողջ մարմնով գողդողում:

— Կեցնե՞ մեր Աև Կարինը, շատ տեղին ա բռնացրել, — գոչեց քաղաքում ուսանող մի տղա, վորն ամենից շուտ ավարտեց. հոգվածի ընթերցումը:

— Շատ տեղին ա՞ռ չուն , շան ցղնած^{*}) , — կամաց հայհոյեց
առողջեն , — ասել կուպի մենք զելեր ենք , թալանչի յենք , ժողովրդին
քշնամի . . .

— Բա ինչ , նոր ես իմանում , — յեղալ կարճ պատասխանը :

